



**НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА  
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМЕНИ Р. АЧАРЯНА**

**ВАЗГЕН Г. АМБАРЦУМЯН**

**ИССЛЕДОВАНИЯ  
ПО ЛЕКСИКОЛОГИИ И  
ЭТИМОЛОГИИ  
АРМЯНСКОГО ЯЗЫКА**

**ЕРЕВАН  
ИЗДАТЕЛЬСТВО «ГИТУТЮН» НАН РА  
2012**



**NATIONAL ACADEMY OF SCIENCES OF ARMENIA  
H. ADJARIAN INSTITUTE OF LINGUISTICS**

**VAZGUEN G. HAMBARDZUMYAN**

**ESSAYS ON LEXICOLOGY AND  
ETYMOLOGY OF THE ARMENIAN  
LANGUAGE**

**YEREVAN  
“GITUTYUN” PUBLISHING HOUSE OF THE NAS RA  
2012**

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՎԱԶԳԵՆ ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆԻ  
ԲԱՌԱՔՆՆԱԿԱՆ ԵՎ  
ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՐԵՎԱՆ  
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
2012

ՀՏԳ- 809. 198. 1  
ԳՄԳ- 81.2  
Հ 205

**Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի  
գիտական խորհրդի որոշմամբ**

Պատասխանատու խմբագիր՝  
բանասիր. գիտ. թեկնածու, դոցենտ **Ն.Մ.Սիմոնյան**  
Գրախոսներ՝  
բանասիր. գիտ. թեկնածու **Մ.Ա.Աղաբեկյան**  
բանասիր. գիտ. թեկնածու **Ա. Հ. Մուշեղյան**

**Համբարձումյան Վ.Գ.**

Հ 205 Հայերենի բառաքննական և ստուգաբանական ուսումնասիրություններ/ (Պատ. խմբ.՝ Ն.Մ.Սիմոնյան).- Եր. ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2012, 224 էջ:

Աշխատությունը նվիրված է հայերենի բառաքննական և ստուգաբանական ուսումնասիրության առանձին հարցերի, որոնք մեկ ամբողջության մեջ որոշակի հետաքրքրություն են ներկայացնում հնդեվրոպական, այլև նոստրատիկ լեզվաբանության արդի վիճակի տեսանկյունից: Հարցերի քննարկման ոլորտի մեջ են առնված գրական հայերենի և բարբառների, ինչպես նաև այլ լեզուների տվյալները՝ հնչյունական և ձևային համակարգի, արմատի կազմության և բառապաշարի վերաբերյալ:

ՀՏԳ- 809. 198. 1  
ԳՄԳ- 81.2Հ-3

ISBN

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2012 թ.

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայերենի համեմատական և տիպաբանական ուսումնասիրությունը գիտության զարգացման ներկա պայմաններում ունի կարևոր նշանակություն ոչ միայն ինքնին, այլև հնդեվրոպական մյուս լեզուների հետ ունեցած ծագումնային առնչությունների հետ կապված առանձին հարցերի քննարկման և ըստ հնարավորին իրականին մոտ լուծման առումով:

Ըստ այդմ ավելի լայն վերլուծության առարկա կարող են լինել հայերենի հնչյունական համակարգի, բառային կազմի և քերականական կառուցվածքի այն իրողությունները, որոնք առավել կարևոր են լեզուների տարբերակային (վարիատիվ) ուսումնասիրության տեսանկյունից: Ընդհանուր առմամբ լեզուների ծագումնային առնչությունների, ցեղակցային ժառանգորդության, ինքնուրույն զարգացման ընթացքում ժառանգված հատկանշական գծերի պահպանման խնդիրները լուծելի են ոչ միայն նախկինից եկող համեմատական-տիպաբանական, այլև ներկայումս հնարավոր տարբերակայնության (վարիատիվության) սկզբունքների և մոտեցումների գործադրման պայմաններում:

Լեզվական տարբերակները պատմականորեն զոյանում են ոչ միայն ի հաշիվ մեկ լեզվի ներքին՝ ժամանակային, տարածքային և գործառական հատկանիշների դրսևորման, այլև մեկից ավելի լեզուների ծագումնային, ժառանգորդական, ընդհանուր գծերի պահպանման և փոխանցման հիման վրա՝ անկախ զարգացման ընթացքում ձեռք բերված այս կամ այն կարգի առանձնահատկություններից:

Հատկապես անցյալ դ. 70-ական թթ. սկսած՝ բավականին մեծ աշխատանք է կատարվել համեմատվող լեզուների ստուգաբանական-տիպաբանական ուսումնասիրության բնագավառում, որոնցում որոշակի տեղ է տրվում նաև հայերենի փաստերին: Իսկ վերջիններս ավելի լայնորեն կարող են գործադրվել, եթե նկատի ենք ունենում լեզվի բոլոր տարբերակներում առկա փաստերը:

Ըստ այսմ առանձին ուշադրության առարկա են այն հարցերը, որոնք այս կամ այն չափով իրենց լուծումն են ստանում ոչ միայն ավանդական համեմատաբանության և տիպաբանության ձեռքբերումների օգտագործմամբ, այլև հաշվի առնելով նորագույն ուսումնասիրությունների տվյալները ինչպես հայերենի, այնպես էլ ցեղակից և ոչ ցեղակից լեզուների ուսումնասիրության բնագավառում:

Համեմատաբար նոր ուսումնասիրությունների տվյալները ցույց են տալիս, որ հնդեվրոպական ընդհանուր վիճակի համար գրեթե անհնարին է վերականգնել այս կամ այն արմատն առանց հաշվի առնելու վերջինիս հիմքում ընկած հասկացության հասարակական, մշակութային, դիցաբանական և այլն պատկերացումների տարբերակվածությունը: Ուստի հնդեվրոպական ծագման հայերեն արմատների տարբերակային վերականգնման և տիպաբանական հավաստագրման (վերիֆիկացիայի) վերաբերյալ քննարկումը դառնում է արդի գիտության զարգացման հանգուցային խնդիրներից մեկը:

Ըստ այսմ աշխատանքում անդրադառնում ենք բառաքննության և ստուգաբանության տեսակետից որոշակի կարևորություն ներկայացնող մի քանի հարցերի:

Հնդեվրոպական ծագման զգալի թվով բառ(արմատ)ներ ներկայացնում են իմաստային որոշակի խումբ, որի հնչյունական համապատասխանությունների և իմաստային համընկումների ուսումնասիրությունը հիմք է ստեղծում բառաքննական և ստուգաբանական որոշակի ճշգրտումների ու լրացումների համար, ընդ որում թե՛ հայերեն գրական հուշարձաններում պահպանված և թե՛ բարբառներում այս կամ այն չափով տեղ գտած միավորների ընդգրկումով:

Լեզուների նոստրատիկ ուսումնասիրության ձեռքբերումները գնալով ավելի լայն հնարավորություն են ստեղծում ինչպես այլ լեզուների, այնպես էլ հայերենի տվյալների նոր համեմատությունների համար, ընդ որում ոչ միայն ներընտանիքային, այլև միջընտանիքային զուգադիպումների նկատառումով:

Այս բնագավառում հայերենի վերաբերյալ կատարվածը

բավականին սահմանափակ է, քիչ թվով փաստերի է վերաբերում, այնինչ երևույթը կարելի է քննության առնել ավելի մեծ թվով փաստերի վերլուծության մեջ, որի արդյունքում ունենում ենք տվյալների անհամեմատ լայն շրջանակ, բացահայտվում են հայերենի հնագույն և վաղնջական ժամանակներին վերաբերող առնչությունների շատ փաստեր, որոնց հիման վրա էլ ավելի են ընդգծվում հնդեվրոպական լեզուների մեջ հայերենի տեղը և կարևորությունը: Ըստ այդմ վերլուծության է առնվում նախկինում կատարվածը, այլև համեմատության մեջ են դրվում նոր տվյալներ՝ վերցված ինչպես գրական հայերենից, այնպես էլ բարբառներից:

Հայերենի և միլերենի ծագումնային առնչությունների հարցի մեկնաբանման առումով համեմատվող նյութը հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ առհասարակ հայերենի և հինանատոլիական լեզուների (ավելի կոնկրետ՝ միլերենի) միջև գոյություն ունեն ծագումնային որոշակի զուգադիպումներ, որոնք ավելի հավաստի և անառարկելի կարող են լինել հետագա աշխատանքների շարունակման և ուսումնասիրության ոլորտի ընդլայնման դեպքում, մանավանդ որ նախկինում այս հարցում չի եղել որևէ ձեռնարկում:

Երեմիա Մեղրեցու «Բառգիրք հայոցը» եղել է բանասիրական և մանավանդ ստուգաբանական ուսումնասիրությունների համար առանձին առարկա: Գրվել են առանձին աշխատանքներ նրանում տեղ գտած «կասկածելի և անստույգ» բառերի վերաբերյալ: Սակայն դեռևս կան շատ բառահոդվածներ, որոնք մնում են չբացատրված, առավել ևս՝ չստուգաբանված: Մույն աշխատանքում անդրադառնում ենք մի քանի տասնյակից ավելի նման բառերի քննությանը, որով ավելի է մեծանում այդ բառարանի գիտական-բանասիրական արժեքը հայոց լեզվի ընդհանուր բառապաշարի ուսումնասիրության համար:

Ներկա աշխատանքում ընդգրկված նյութերի մի մասը ամբողջությամբ կամ համառոտ տարբերակով լույս է տեսել գիտական հանդեսներում («Լեզու և լեզվաբանություն», 2003, № 1, «Ձառուկյանական ընթերցումներ», 2010, «Պատմաբա-

նասիրական հանդես» 2010, № 3, 2011, № 3, «Էջմիածին», 2012, № 1 և այլն):

Հեղինակը հայտնում է իր խորին երախտագիտությունը բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Ն.Մ.Սիմոնյանին, բանասիրական գիտությունների թեկնածուներ Մ.Ա.Աղաբեկյանին և Ա.Հ.Մուշեղյանին աշխատանքի ձեռագիրը խմբագրելու և գրախոսելու համար:



## ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ՀԱՅԵՐԵՆ ԱՐՄԱՏԻ ՏԱՐԲԵՐԱԿԱՅԻՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Վերջին երեք-չորս տասնամյակներում լեզուների ցեղակցությանը և հնատիպությանը վերաբերող շատ հարցեր դարձան վերանայման և վերագնահատման առարկա: Ինչպես հնդեվրոպական (հե.), այնպես էլ մյուս ընտանիքների լեզուների համեմատական և տիպաբանական ուսումնասիրությունը ցույց տվեց, որ հայերենը, թեև ժամանակագրորեն համեմատաբար ուշ է գրի առնվել, քան ցեղակից այլ լեզուներ (հին անատոլիական կամ խեթալուվական, հնդիրանական լեզուներ, հունարեն և այլն), սակայն ներկայացնում է այնպիսի առանձնահատկություններ, որոնք խիստ գնահատելի են լեզուների ցեղակցության բնույթի վերահաստատման, այլև նրանց մերձավորության աստիճանի ճշգրտման տեսակետից:

Հայերենը պարունակում է հնչյունական համակարգի, արմատի կազմության և քերականական կառուցվածքի այնպիսի հնագույն (արխաիկ) տվյալներ, որոնք հաճախ վճռական նշանակություն են ունենում հնդեվրոպական ընդհանուր վիճակի ոչ միայն ավելի հստակ ուրվագծման, ցեղակից լեզուների ճյուղային («բարբառային») կամ առանձնակի տրոհման, այլև տիպաբանական մի շարք գուգադիպումների հետ կապված առանցքային խնդիրների լուծման գործում:

2. Ըստ այսմ առավել մեծ ուշադրության առարկա են հնդեվրոպական արմատի վերականգնման հետ կապված այն սկզբունքային հարցերը, որոնք վերաբերում են արմատի տարբերակայնությանը:

Համեմատաբար նոր ուսումնասիրությունների տվյալները ցույց են տալիս, որ հնդեվրոպական ընդհանուր վիճակի համար գրեթե անհնարին է վերականգնել այս կամ այն արմատն առանց հաշվի առնելու հիմքում ընկած հասկացության հասարակական, մշակութային, դիցաբանական և այլ պատկերացումների տարբերակվածությունը: Ուստի հնդեվրոպական ծագման հայերեն արմատների տարբերակային վերա-

կանգնման և տիպաբանական հավաստագրման (վերիֆիկացիայի) վերաբերյալ քննարկումը դառնում է արդի գիտության զարգացման հանգուցային խնդիրներից մեկը:

3. Հնդեվրոպական ծագման հայերեն արմատների տարբերակային քննությունը հիմնվում է կոնկրետ փաստերի, վերջիններիս ժամանակային, գործառական և տարածքային տարբերությունների վերհանման ու գնահատման վրա:

Այս հարցը դարձել է առանձին ուշադրության առարկա, հատկապես վերջին տարիներին [*Hambardzumyan, 1999. Համբարձումյան, 2002, 3, էջ 242-260*]: Նման ուսումնասիրությամբ կարող են լուծվել մի շարք խնդիրներ՝ կապված ինչպես ոչ միայն առկա մեծ թվով «անհայտ ծագման» արմատների և բառերի ծագումնային պարզաբանման, այլև մինչև այժմ ոչ բավարար չափով ստուգաբանվածների համեմատական-տիպաբանական ճշգրտման հետ:

Հայերենի արմատաբանությունը (արմատների ուսումնասիրությունը) առհասարակ ենթադրում է ցեղակից լեզուների թե՛ հնչյունական համակարգի և թե՛ քերականական կառուցվածքի ուսումնասիրման բնագավառում երևան եկած նոր փաստերի օգտագործում, ինչպես նաև հնարավորության սահմաններում դրանց ճշգրտում՝ ելնելով հատկապես հայերենի բոլոր կարգի տվյալներից:

4. Նախկին խորհրդային և արտասահմանյան մի շարք լեզվաբաններ, ոչ անկախ նախորդ ուսումնասիրողներից [*Pedersen, 1951. Martinet, 1953, 49, fasc. 1, p. 67-78*], առաջ են քաշում հնդեվրոպական պայթական բաղաձայնների համար ավանդաբար վերականգնվող համակարգի վերանայման խնդիրը՝ նկատի ունենալով այն, որ հնդեվրոպական նախալեզվի ոչ ձայնեղ բաղաձայնները պիտի ունեցած լինեն ծերպաձայնային («գլոտալ» կամ «էյեկտիվ», «կոկորդապայթական») արտաբերություն [*Ààì éđâéèâçâ, Êââí î â, 1972, c. 15-18. Gamkrelidze, Ivanov, 1973, p. 150-156. Hopper, 1973, p. 141-166. Ōî'î'î'âđ, 1988, c. 160-172*]:

Պ. Ջ. Հոպերը գտնում է, որ «արևելահայերենում այդ պայթականները ոչ շնչեղներ են և թեթևակի ծերպաձայնա-

ցած» [Hopper, 1981, p. 133-142. *Ör'î'î'âđ*, 1988, c. 174, 173-182]: Իսկ Թ. Վ. Գամկրեղիձեն և Վյաչ. Վս. Իվանովը կարծում են, որ հայերենի պայթականների համակարգը, թերևս, առավել հնագույն (արխաիկ) գծերով է պահպանում ընդհանուր հնդեվրոպականից ժառանգած վիճակը, և դա նկատելի է ոչ միայն ներկայիս բարբառներից մի քանիսում, այլև պիտի արտացոլված լիներ հին գրական հայերենում [*Āāi ēđāēēäçâ, Êââ-îîâ*, 1984, c. 17, 41 ]:

5. Նորագույն հետազոտություններում առաջադրվում են այնպիսի խնդիրներ, որոնք վերաբերում են պայթականների համակարգից շնչեղ խուլերի (\*ph/\*th/\*kh) բացառմանը, հետնալեզվային պայթականների եռարժեք բաշխվածությանը (\*g/\*gʷ/\*g□, \*k/\*kʷ/\*k□), հնդեվրոպական կոկորդային (\*H<sub>1</sub>/\*H<sub>2</sub>/\*H<sub>3</sub>) և ձայնորդային հնչյունների (\*s<sub>1</sub>/\*s<sub>2</sub>/\*s<sub>3</sub>) որակական կազմի նորովի մեկնաբանությանը և այլն:

Վերջիններս, ինչ խոսք, այս կամ այն չափով անդրադառնում են նաև հայերենի տվյալների վրա, ուստի անհրաժեշտություն է առաջանում նախ՝ այդ փաստերն ուսումնասիրել նոր մոտեցմամբ՝ մշակելով քննության համապատասխան սկզբունքներ, սահմանելով հնչյունական անցումների առավել հավանական օղակներ, երկրորդ՝ ըստ այդմ մոտենալ ոչ միայն մինչև այժմ որևէ ստուգաբանություն չունեցող («անհայտ ծագման» համարվող), այլև ոչ բավարար չափով ստուգաբանված փաստերին:

ա) Մինչև վերջին ժամանակներս հայ. *հետ(p)* «(ոտնա-) հետք», այլև *ոտն* «ոտք», *յետ* «հետո, ուշ, ետ, ետև», *ետ* (նույնը) տարբերակային արմատների համար վերականգնվում էր հե. \*pedo- «ոտք» ձևը [*Աճառյան*, 1977, էջ 82-84. *Ջահուկյան*, 1987, էջ 142, 185, 214, այլև 2010, էջ 458, 605]: Այնինչ՝ ելնելով նորագույն ուսումնասիրությունների տվյալներից՝ առանձնացվում են հնդեվրոպական տարբերակային \*p<sup>[h]</sup>et' -//\*p<sup>[h]</sup>ot' - արմատները, և որոնցում ծերպաձայնային («զլոտալ») \*t' - բաղադրիչը լավագույնս իր արտացոլումն ունի հայերենում (մեսրոպյան խուլ *տ* գրությամբ արտահայտված): Հմմտ. հայ. *հետ(p)* < հե. \*p<sup>[h]</sup>et' -//\*p<sup>[h]</sup>ot' - [խեթ. *pedan* «տեղ», հուն. *πέδον* «զե-

տին», լատ. *pēs* (սեռ. հոլ. *pedis*), այլև իտեթ. *pata-* «ոտք», գոթ. *fōtus* «ոտք», հուն. *πούς* (սեռ. հոլ. *ποδός*) «ոտք»]:

Հնչյունական այս երևույթը հայերենում բավականին տարածված է. բերենք ևս մի քանի օրինակ:

Հայ. *տուն* < հե. \**t'om* (հինդկ. *dāma-*, *dāmaḥ* «տուն», հուն. *δῶμος* «տուն», «բնակարան», լատ. *domus* «տուն», հւլավ. *domū* «տուն») և այլն):

Հայ. *տամ* «տալիս եմ» < հե. \**t'ō-* (հինդկ. *ádām* «տալ», հուն. *δίδομαι* «տալիս եմ», լատ. *dō* (*dāre*) «տալ», հւլավ. *damī* «տալիս եմ, հանձնում եմ») և այլն):

Հայ. *ուտել* «ուտել» < հե. \**et'/\*ot'-* [իտեթ. *etmi* «ուտում եմ», հինդկ. *ádanam* «ուտելիք», *átti* «ուտում է», ավեստ. *adāiti* «թող ուտի», հուն. *ἔδομαι* «ուտում եմ», լատ. *edō* (*edēre*) «ուտել», գոթ. *itan* «ուտել», հրգերմ. *ezzan* «ուտել» (գերմ. *essen*), հանգլ. *etan* (անգլ. *eat*) «ուտել», հւլավ. *jamī* «ուտում եմ», լիտվ. *ėdu* «ուտում եմ» և այլն] [*Āàì ēđáéèäçǎ*, 1984, c. 41, 50, 698]:

Ըստ այսմ՝ պատմականորեն ունենք ընդհանուր՝ «կիսել, պոկել» իմաստով արմատի *ուտ-/ստ-* տարբերակայնություն, որ գրավոր շրջանում արդեն առանձին է ըմբռնվում:

Նույն արմատից հե. \**-nt<sup>[h]</sup>* մասնիկով կազմվող հիմքով ունենք հայ. *ստամն* «ատամ» [իտեթ. *adant-* «կերած», «կեր ընդունած», հինդկ. *dán* (սեռ. հոլ. *dántam*) «ատամ», հուն. *ὀδών* (սեռ. հոլ. *ὀδόντος*) «ատամ», լատ. *dēns* (սեռ. հոլ. *dentis*) «ատամ», հիդլ. *dét* «ատամ», գոթ. *tunþus* «ատամ», հրգերմ. *zand* (գերմ. *Zahn*), հանգլ. *tōž* (անգլ. *tooth*), լիտվ. *dantis* «ատամ») և այլն] [*Āàì ēđáéèäçǎ*, 1984, c. 698]:

բ) Նկատի ունենալով հնչյունական այս օրենքի կանոնավոր արտացոլումը հայերենում, ինչպես նաև հե. \**p* (//*\*p'*) հնչույթի հայ. *h*, *z* կամ զրո (ø), այլև հնարավոր *u* արտացոլումը՝ կարելի է նաև մտածել, որ հայերեն *սպտակ* «(ձեռքի ափով) հարված» բառի (*u*)*սպտ-* արմատը ևս պետք է բխեցնել հնդեվրոպական հիշյալ արմատական տարբերակներից՝ վերջիններիս զրո (ø) աստիճանի ձայնավորմամբ, մանավանդ եթե նկատի ենք ունենում հնդեվրոպացիների ամենամախիմնական պատկերացումներում, այսպես կոչված, առաջին («ձեռք») և

հետին («ոտք») վերջույթների չտարրորոշված (ամորֆ) վիճակը, որից հետագայում է, որ անցում է կատարվում գործառնապես բաշխված (սոցիալապես ձևավորված) վիճակին:

Ընդամին հաշվի ենք առնում նաև այն, որ նախ՝ հայ. *սայտակ* բառը մինչև այժմ չունի հավաստի ստուգաբանություն, այնուհետև՝ ցեղակից և ոչ ցեղակից լեզուների տվյալները հավաստում են, որ հե. *\*p<sup>[h]</sup>et' - /\*p<sup>[h]</sup>ot'* - արմատը եղել է (համեմատաբար լայն ըմբռնումով) «ոտք» իմաստի կրող, որ նախնական (պրիմիտիվ) ըմբռնումով ներառում էր «սոջևի ոտք կամ հետևի ոտք» կոնկրետ իմաստները:

Եվ եթե սա ընդունում ենք, ապա անհավանական չէ կարծել, որ հայ. *սայտակ* (< *\*ա-պտ-ակ*) բառի արմատն է *-պտ-* մասը, և այն ևս ծագումով կապվում է հե. *\*p<sup>[h]</sup>et' - /\*p<sup>[h]</sup>ot'* - տարբերակի հետ. հմնտ. հինդկ. *upa-bdā-* «դոփյուն, ոտքը գետնին խփելը», ավեստ. *fra-bda-* «սոջևի ոտք», *a-bda-* «ոտք դնելու արգելված տեղ», հուն. *ἔπι-βδά* «տոնին հաջորդող օր» (կոնկրետ իմաստով՝ «մի ոտքի վրա») և այլն [*Ãàì êðãèèçǎ*, 1984, c. 154-155]:

զ) Հայ. *համբոյր* բառը նախկինում դիտվել է անհայտ ծագման: Չահուկյանը այն կապում է իրան. *ham-bōd* ձևի հետ [*Աճառյան*, 1977, էջ 25. *Չահուկյան*, 1987, էջ 530, այլև 2010, էջ 442]: Աճառյանը հայ. *ըմպեմ* բայը կապում է *ումպ* արմատի հետ, այնինչ Չահուկյանը «ենթադրում է թեմատիկ կրկնավոր ներկայից» առաջացած՝ գտնելով, որ «նախաձևի վերականգնումը դժվարություններ է հարուցում», «*ումպ*-ը կազմվել է հայկական հողի վրա» [*Աճառյան*, 1973, էջ 124, այլև 1977, էջ 599-600. *Չահուկյան*, 1987, էջ 187, այլև 2010, էջ 247]:

Այսուհանդերձ, հակված ենք կարծելու, որ հայ. *համբոյր* (*h-ամ-բո-յր* < *\*h-ան-բո-յր*), *ըմպեմ* (*ըմ-պե-մ* < *\*ըն-պե-մ*), ինչպես նաև *բերան* (*\*բե-րան*) ձևերի *բո-//պե-*, այլև *բե-* բաղադրիչները տարբերակային արմատներ են, որոնք էլ հնչյունական արտացոլման և իմաստային ընդհանրացման տեսակետից գտնվում են բավականին սերտ առնչության մեջ: Դրանք հանդիսանում են հե. *\*p<sup>[h]</sup>oH-* (վերջինիս կրկնավոր տարբերակ համարվող *\*p<sup>[h]</sup>i<sup>[h]</sup>oH-*, կամ էլ ըստ Մայրիոֆերի՝ *\*peh<sub>3</sub>-* և

այլն) արմատի արտացոլումներ. հմմտ. հինդկ. *píbatī* «խմում է, ըմպում է» (<\*p<sup>h</sup>ibH-), հիռլ. *ibid* «խմում է, ըմպում է», լատ. *bibō* (անորոշը՝ *bibere*) «խմում եմ, ըմպում եմ», այլև հուն. *πῖθι* «խմի՛ր», լատ. *pōtus* «խմիչք» և այլն [*Āài éðāēēāçā, Ēāāí î ā*, 1984, c. 220, 402]<sup>1</sup>:

դ) Ըստ Աճառյանի՝ հայ. *կուռն* «մեջք, թիկունք» բառն անհայտ ծագման է, ըստ Ջահուկյանի՝ «թերևս բնիկ հ.-ե. \*gur-no- «ձռել, կամար կազմել» արմատից. հմմտ. լիտվ. *gurñas* «կրունկ, կոճ»: -Pok., IEW 1, 397» [*Աճառյան*, 1973, էջ 663, *Ջահուկյան*, 2010, էջ 428]: Ըստ Ջահուկյանի՝ համեմատելի են հայ. (բրբռ.) *կուռ* «ձեռք» և հինդկ. *kora-* «շարժվող հող» ձևերը [*Āæððēýí*, 1967, c. 68]:

չայ. (բրբռ.) *ճուռն* «ազդր, ոտք» բառը, ըստ Աճառյանի, դարձյալ անհայտ ծագման է: Նշվում է, որ *ճուռն* բառը «յիշում է նաև Բռ. երեմ. էջ 335 (իմա՛ Եր. Մեղրեցի, «Բառզիրք հայոց» - Վ.Հ.) *ողոք* բառի բացատրության մեջ՝ այսպես. *օլօխ* (իմա՛ *ողոք*) «ճուռ» [*Աճառյան*, 1977, էջ 214]: Մեղրեցու բնագրում այդ բառահոդվածն ունի հետևյալ տեսքը. «*օլուխ* - ճուռ»՝ տողատակում ձեռագրերից մեկի տվյալի հետևյալ նշումով՝ «*օլուխ. ճուռ, ճոթոն*» [*Բառզիրք հայոց*], 1975, էջ 338]: Ժամանակին հայ. *ճուռն* բառը Ջահուկյանը բխեցնում է հե. \*gēu- արմատից, իսկ հետագայում Ջահուկյանը նշում է, որ «ծագումն անհայտ է» [հմմտ. *Āæððēýí*, 1967, c. 167. *Ջահուկյան*, 2010, էջ 497]:

Այսուհանդերձ, ունենք հայ. *կուռն*//*ճուռն* ձևերը՝ իբրև *կ//ճ* տարբերակման արտացոլում, որն, ի դեպ, ժամանակին նշվել է նաև Ջահուկյանի կողմից, ընդ որում *կուռն* «ձեռք» և *ճուռն* «ազդր, ոտք» իմաստներով [*Āæððēýí*, 1967, c. 303]:

---

<sup>1</sup> Ի դեպ՝ հեղինակները միաժամանակ նշում են, որ իտալակելտական արեալում համեմատելի են՝ հիռլ. *ab* (սեռ. հոլ. *abae*) «զետ», լատ. *amnis* (< \*abnis, պրուս. *ape* ձևի հետ միասին), լիտվ. *ùpè* «զետ», հինդկ. *āp-* «(ջրի) հոսք», և որի հետ թե՛ հնչյունական առումով, թե՛ նախնական իմաստի տեսակետից, կարծում ենք, լիովին համեմատելի է հայ. *ափ* «ջրի եզր» բառը, որի իմաստային փոխանցումը հետագա ձեռքբերում է [Տե՛ս նաև *ĭ àèððī* *Ōāð*, 1988, c. 127]:

Հայերենում ունենք նաև (բրբռ.) *կոնակ* «մեջք. թիկունքի կողմը, *ճռնիկ* «գոտեմարտելիս ոտքը հակառակորդի ազդրին դեմ տալով գետնելը» ձևերը: Հայերենի այս և ցեղակից մյուս լեզուների նման ձևերի նկատառումով է, որ հնդեվրոպական ընդհանուր վիճակի համար ավանդաբար վերականգնվում է \*k//g տարբերակայնություն:

Այսպիսով, ունենք ոչ միայն «ոտք» և «ձեռք», այլև սրանց մոտ «կուռն» և «ճուռն» իմաստային հարաբերակցություն՝ նախնական մտածողությամբ:

6. Հայերենի բնիկ արմատների կառուցվածքի ուսումնասիրությունը մինչև վերջին ժամանակներս հիմնականում իրականացվել է Հ. Հյուբշմանի դպրոցի կողմից հաստատված սկզբունքների կիրառումով: Հնդեվրոպական լեզուների համեմատական-տիպաբանական նորագույն աշխատություններում առաջ են քաշվում այդ սկզբունքների վերանայման հետ կապված որոշակի խնդիրներ [*Āai éđāēēāçá*, 1984, c. 31-34. *Mayrhofer*, 1983, p. 5. *Ī āéđōī Ōāđ*, 1988, c. 507-530]: Այսպես՝ հայերենի հնչյունական համակարգի մեջ հնդեվրոպական հնագույն (արխաիկ) գծերի պահպանումը, որը մեսրոպյան տառադարձությամբ ոչ այնքան ամբողջությամբ է արտացոլված, կարևոր հիմք է հանդիսանում ոչ միայն հայերենի նախագրային շրջանի, այլև հնդեվրոպական ընդհանրությանը վերաբերող առանձին երևույթների ավելի լայն և մանրամասն ուսումնասիրման համար [*Ī āéđōī Ōāđ*, 1988, c. 530. *Համբարձումյան*, 2002, էջ 15]:

Ըստ այդմ՝ առաջ են գալիս կարևորագույն հարցեր, որոնց լուծման նպատակով անհրաժեշտ է ելնել միանգամայն նոր սկզբունքներից: Վերջիններս պետք է մշակվեն ավանդական դարձած սկզբունքների հիման վրա, սակայն լեզվական երևույթների ավելի ծավալուն ընդգրկումով, փաստերի համակողմանի քննությամբ՝ հիմնված լեզվականից բացի արտալեզվականի վրա: Նման սկզբունքներից մեկն էլ, կարծում ենք, հայերենի արմատի կազմության, հնչյունական համակարգի և ձևաբանական (նաև շարահյուսական) կառուցվածքի տարբերակային-տիպաբանական ուսումնասիրությունն է, որը հատ-

կապես հայերենի նկատմամբ կարող է կիրառվել ավելի հանգամանալից և հետևողական ձևով:

ա) Հայերենում ունենք ոչ միայն *աւետել*, *առաւօտ* (\**առաւատ*), *յաւետ*//*յաւէտ* (*յաւիտեան*), այլև *յաւան* «արտաբերող» բառը, որը Երեմիա Մեղրեցու «Բառզիրք հայոցի» քննական բնագրում նշվում է առանց ձեռագրական տարբերությունների և ծանոթագրությունների. Ամալյանը հետագայում չի անդրադառնում այս բառին [*Բառզիրք հայոց*], 1975, *Ամալյան*, 2007]:

Բառը չենք գտնում Հ.Աճառյանի «Արմատական բառարանում», ինչպես նաև Գ. Ջահուկյանի «Ստուգաբանական բառարանում», Լ. Հովհաննիսյանը գտնում է, որ «իրան. *hvan* «կանչել»-ը թերևս թույլ է տալիս կապ տեսնել *յաւան*-ի հետ» [*Հովհաննիսյան*, 2000, էջ 217]:

Նկատի ունենալով բառի «արտաբերող» իմաստը, որն այլ բան չէ, քան ձայնական՝ հնչական գործողություն կատարող (*nomen agentis*), կարելի է կարծել, որ *յաւան*-ի արմատն է *աւ*, որ սկզբում ունի *յ* հավելված (ածանց), այլև *-ան* վերջածանց (ածականական, այս դեպքում՝ դերբայական արժեքով՝ «ձայն հանող, ձայնող՝ կանչող»): Ըստ այսմ՝ գործ ունենք բնիկ արմատի հետ. հայ. *աւ* < հե. \**aus-*//\**us-* (\**u-es*) «լուսավորել. լույս տալ» արմատից [հմմտ. հինդկ. *uṣā* «արշալույս», հուն. (*հոմ.*) *ήώς* «(առավոտյան) արշալույս», լատ. *aurōra* «արշալույս», լիտվ. *aušti* «լուսանալ, լույսը բացվել», *aušrà* «(առավոտյան) արշալույս», խեթ. *auš-*, *uš-* «տեսնել» և այլն] [հմմտ. *Ādī ēdāēēāçā*, *Ēādī î ā*, 1984, c. 223, 229. *Ջահուկյան*, 1994, № 1-2, էջ 57], նշանակում է՝ (բուն իմաստով) *առաւատ* «օրվա սկիզբ», (փոխաբերաբար) *աւետել* «(բարի) լուր տալ», *աւետիք* «(բարի) լուր», (բացարձակ իմաստով) *յաւէտ* «միշտ՝ անսկիզբ և անվերջ» և այլն:

Ուստի գտնում ենք, որ հայ. *յաւան* բառը «արտաբերող» իմաստով նշանակում է այն անձը, որը «բարի մի բան՝ լույս,



լուր է տալիս, ազդարարում, արտաբերում է»<sup>2</sup>:

բ) Սայաթ-Նովայի հայերեն «խաղերից» մեկում հայ. (բրբռ.) *սուք* բառը գործածվել է «շքեղություն. հանդիսավորություն. ուրախություն» իմաստով՝ իբրև հնչույթային-արտասանական տարբերակ *շուք* «ստվեր» («լուսավոր, պայծառ») բառի (բնորոշ՝ Թբիլիսիի բարբառին), որն առանձին է մյուս՝ *սուգ* (բրբռ.՝ *սուք*) բառից՝ իբրև համանուն. «Վուրտիղ հարսնիք, վուրտիղըն *սուք*, վուրտիղ սոյբաթ խաղ է ըլում. / Վուրտիղ ժամ, վուրտիղ պատարագ, վուրտիղ սիրով տաղ է ըլում» [*Սայաթ-Նովա*, 1987, էջ 64]:

Առաջին տողում *հարսնիք* «հարսանիք» և *սոյբաթ* «(քաղցր՝ հաճելի) գրույց» բառերի կողքին ասվում է *սուք* (ըստ ընդունված բացատրության) «լացուկոծ, տխրություն՝ մահվան, աղետի պատճառով», որն անշուշտ տեղին չէ, մանավանդ որ հաջորդ՝ 2-րդ տողում հոգևոր երևույթների մասին է ասվում [ժամ՝ «եկեղեցի, սրբատեղի», *պատարագ* «սրբասացություն» և (սիրով) *տաղ* «երգ, երգեցողություն»]: Այլ կերպ ասած՝ առկա է աշխարհիկ և հոգևոր երևույթների զուգակցում՝ իրականության երկյակ («դուալ») հակադրությամբ, որը փոխաբերացման (վիպական խոսքի՝ առասպել, լեգենդ, ասք և այլն) միջոցներից մեկն է, մյուս երկուսի՝ փոխանունության և փոխըմբռնման հետ միասին ոճական առումով ծառայում է ասելիքի («ասույթի») ձևակերպմանը և արտահայտմանը՝ այդ դեպքում եռյակ («տրիվիալ») հակադրությամբ: Այդ *սուք* «շքեղություն. հանդիսավորություն. ուրախություն» բառի հետ համանուն է մեկ այլ՝ գրական հայերենի *սուգ* «տխրություն, վիշտ» բառը (հմմտ. *սուգ ու շիվան*): Այստեղ գործ ունենք *շ/ս* տարբերակայնության հետ:

Ըստ Աճառյանի՝ *շուք* «ստուեր, հովանի» անհայտ ծագման բառ է, իսկ ըստ Ջահուկյանի՝ հե. \*k'Ēōko- [\*k'eu-] «լուսավորել, լուսավոր» արմատից. հմմտ. հինդկ. scati «լուսավորում է, փայլ է տալիս, վառվում է», çukra-, այլև çukla-

---

<sup>2</sup> Այս արմատից է, հավանաբար, նաև հայտնի երգի «Յաուն-յաուն» անվանումը՝ իբրև «լույսի՝ բարու կանչ, ձայն»:

«լուսավոր, սպիտակ. մաքուր» (հմմտ. *սուքար* «հովանոց». Եր. Մեղրեցի, էջ 292) [*Աճառյան*, 1977, էջ 541, *Ջահուկյան*, 1987, էջ 57, 132, 2010, էջ 595]<sup>3</sup>:

Այսպիսով՝ գործ ունենք գրական և բարբառային տարբերակների հետ, որոնք իմաստային առումով տեղիք են տալիս բառային համանունության:

գ) Հայ. *փասքուս* «շատախոս» բառը Մեղրեցու բառարանում չունի գրչագրական որևէ տարբերակ, իսկ ծանոթագրության բաժնում նշվում է՝ «№№ 3468, 533 և այլ ձեռագրերում՝ «փասքուս. շոքոնոք, կամ քուս, կամ խոովարար» [*Բառգիրք հայոց*], 1975, էջ 324, 440]: Այստեղ *քուս* բաղադրիչի առանձնացումը պարունակում է ոչ ճիշտ ստուգաբանության տարր՝ կապված «քուս, քստմնելի (մի բան)» բացատրության հետ, որը գտնում ենք «Նոր հայկազյան բառարանում», այլև հետագա ուսումնասիրություններում:

Նախ՝ «Նոր հայկազյան բառարան» ունի ոչ միայն *փասքուս* (*քուս* և *փաս* մասերից. առաջինից՝ *քուս*, երկրորդից՝ *բանբաս*). հմմտ. հուն. *փսիթերոս*, այլև *ֆասքո* «շաղակրատ, շաղփաղփ, ընդվայրաբան և այլն», ինչպես նաև *փասքսեմ* «շաղփաղփել, շատախոսել և այլն», և բերվում են բնագրային վկայություններ դասական և ուշ շրջանի մատենագրությունից [*Աւետիքեան, Միրսէլեան, Աւգերեան*, 1837, էջ 955-956]: Նկատենք, որ բառի նման բաղադրիչների առանձնացումը, դրանց իմաստների մատնանշումը, այլև հունարեն համարժեքներ բերելը և բնագրային տվյալներով հաստատելը ամուր կռվան են բառի մեկնության հարցում: Այնուհետև՝ հետագա աշխատանքներում այս մոտեցումը լիովին պահպանվում է, և բառի ծագումը մինչև այժմ մնում է անհայտ:

Ըստ Աճառյանի՝ *փասքուս* «քուս, բամբասող»՝ անհայտ ծագման բառ, «կազմուած է *փաս* և *քուս* բառերի բարդութեամբ, առաջինը անծանօթ է, երկրորդը *քուս, քսել* բառերի արմատն է» [*Աճառյան*, 1979, էջ 484]: Ըստ Ջահուկյանի՝

<sup>3</sup> Նշվում է նաև բառի «սովեր» իմաստը (հարցականով), որն այլ բան չէ, բան իմաստային բաղարկման (կոնտամինացիայի) արդյունք՝ «լույս» ~ «սովեր» հարաբերակցմամբ:

«Փասքուս «բամբասող, զագրախոս»: Կազմված է անծանոթ *փասս*- արմատից և *քուս* «քսու» բառից (տե՛ս): Աճ. ՀԱԲ 4, 484» [*Ջահուկյան*, 2010, էջ 759]: Իսկ նախկինում զուգահեռ է անցկացվելիս եղել խեթ. *paškuṣāi* «արհամարհել (°), մոռանալ (°)» ձևի հետ [*Ջահուկյան*, 1970, էջ 148]:

Կարծում ենք, որ *փասքուս* բառն ունի ոչ թե բաղադրյալ, այլ պարզ կազմություն, և նախնական իմաստն էլ չի կարող լինել այն, որ դուրս են բերում «Նոր հայկազյան բառարանի» հեղինակները՝ հիմնվելով բնագրերի առկա (կոնկրետ) իմաստների վրա, որոնք կարող են ավելի ուշ շրջանի լինել, և որոնց այդ հարցում հետևում են հետագա ուսումնասիրողները:

Հաշվի առնելով այդ բնագավառում նորագույն ուսումնասիրությունների տվյալները՝ գտնում ենք, որ բառը բնիկ է, ծագում է հնդեվրոպական տարբերակային արմատից. հայ. *փասք-ուս* < հե. \**pósk-ei* // \**psk-nti*. հմմտ. խեթ. *pašku*<sup>-zi</sup> «ժխտել, մերժել. զանց առնել. հեռացնել», լուվ. [*pa-aš*]-*ku-ti* (ներգործ. ներկ. եզ. 3-րդ դ.), *pa-aš-ku-ṣa-an-zi* (ներգործ. ներկ. հոգն. 3-րդ դ.) (նույնը) և այլն, հլուվ. *pasku-* (ներգործ. ներկ. եզ. 3-րդ դ.) «բաց թողնել, արհամարհել. բանի տեղ չդնել. քամահրել» և այլն, որոնք հանգում են խեթ. *pāšḱ<sup>-i</sup>/pašḱ-* [*pa-aš-ka-aḱ-ḱi*, *pa-aš-ḡa-mi* (ներգործ. ներկ. հոգն. 1-ին դ.), *pa-aš-ki*, *pa-aš-ki-ez-zi* (ներգործ. ներկ. եզ. 3-րդ դ.)] «պինդ՝ ամուր նստել. կապել՝ ամրացնել. սերմել՝ ցանել. կարգի բերել և այլն» ընդհանուր արմատին: Իսկ առհասարակ այդ խմբի լեզուների համար վերականգնում են հիմնանատ. \**pask<sup>u</sup>*- արմատը: Նկատենք նաև, որ իմաստի տեսակետից հայերենին առավել մոտ է \**pasku-* (ներգործ. ներկ. եզ. 3-րդ դ.) «բաց թողնել, արհամարհել. բանի տեղ չդնել. քամահրել» արմատը<sup>4</sup>:

7. Հնդեվրոպական արմատի տարբերակային վերականգնումը, բնական է, եղել է նաև նախորդ ուսումնասիրող-

---

<sup>4</sup> Ի դեպ՝ Ջահուկյանը, հենվելով է. Լարոշի տվյալների վրա, հարցականով զուգահեռ է անցկացնում հայ. *Պասքամ*՝ անձնանվան և խեթ. *Paškuṣa-* դիցանվան միջև՝ վկայակոչելով նաև խեթ. *paškuṣāi* «սնուշադրության մատնել, արհամարհել», այլև խեթ. *pašḱ-* «ամրացնել» ձևերը [*Ջահուկյան*, 1987, էջ 338]:

ների ուշադրության առարկան, և այդ առումով կա որոշակի ավանդույթ: Մակայն ներկայումս նոր մոտեցման կամ սկզբունքի մշակումն ու իրագործումը կարող են դառնալ ուսումնասիրության ուրույն բնագավառ, որն առաջին հերթին նպաստելու է հայերենի առանցքային կողմին (հնդեվրոպական ծագմանը և բնույթին) վերաբերող երևույթների ավելի մանրամասն քննությանը, ինչպես նաև դեռևս չբացահայտված շատ խնդիրների ինչ-որ չափով պարզաբանմանն ու լուծմանը:

Այդ և նման շատ երևույթներ մինչև այժմ մեզանում քննության են առնվել զուտ լեզվաբանական տեսանկյունից՝ հիմնականում շրջանցելով նրանց իմացաբանական-իմաստաբանական կողմը, մասնավորապես հնդեվրոպական ժառանգություն հանդիսացող այն պատկերացումները (մշակույթը, կողմնորոշումը, նիստուկացը և այլն), որոնք այս կամ այն կերպ արտացոլված են հայկական բանավոր հաղորդումներում՝ դիցաբանության և առասպելաբանության մեջ, գրավոր հուշարձաններում և այլն:

## ՀԱՅԵՐԵՆԻ ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԽՈՒՄԲ ԿԱԶՄՈՂ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԲԱՌԱՔՆՆԱԿԱՆ ԵՎ ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ՃՇԳՐՏՈՒՄՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ

Հայերենում կան բառեր, որոնք նախապատմական (հնագույն և վաղնջական) ժամանակաշրջանում, իբրև միևնույն արմատի տարբերակներ, ժամանակի ընթացքում իրարից բավականին հեռացել են և ներկայացնում են հնչյունական (արտահայտության պլանի), ինչպես նաև իմաստային (թեմատիկ՝ բովանդակության պլանի) փոփոխություններ, և գրավոր շրջանում դրանք միմյանցից հեռացած, գրեթե առանձին միավորներ են:

Նման միավորների բառաքննական և ստուգաբանական վերլուծությունը կարևոր է հայերենի բառապաշարի ընդհանուր պատմության տեսակետից, մանավանդ որ այդ դեպքում հաշվի ենք առնում լեզվաբանական տվյալ բնագավառի նորագույն ուսումնասիրությունների ձեռքբերումները:

Այսպես, ունենք բառերի մեկ ամբողջական խումբ, որի մեջ ամփոփվող բառերը կամ բառարմատները ամենայն հավանականությամբ ունեն հնդեվրոպական ծագում: Դրանք մեկուկես տասնյակից ավելին են, որոնք վերաբերում են համեմատաբար իրար մոտ կոնկրետ իմաստային (թեմատիկ) խմբերի («կրոն և նախապաշարմունք», «ֆիզիկական աշխարհ» և այլն), որոնց էլ անդրադառնում ենք ստորև՝ առանձին-առանձին:

1. Հայ. *աւատ* (այլև *հաւատ*) «հավատի՝ կրոնի նվիրվածություն, վստահություն, ստուգություն» բառը «Նոր հայկազյան բառարանը» տալիս է *աւատ* և *հաւատ*/*հաւատք* տարբերակմամբ, ընդ որում առաջինը «հավատարմություն» իմաստով գործածված է Սուրբ Գրքում, իսկ երկրորդը ոչ միայն «հավանություն, հաստատ դավանում» և «հա, այո՛, հավետ», այլև ամանցյալ այլ իմաստներով բերվում է բավականին լայն գործածության հիման վրա [*Աւետիքեան, Միւրմէլեան, Աւգերեան*, 1836, էջ 391, այլև 1837, էջ 76]: Այստեղ ուշագրավ է *հաւատ*/*հաւատք* բառի երկրորդ՝ «հա, այո՛, հավետ» բացատ-

րությունը, որն անշուշտ կապվում է *աւատ/հաւատ(ք)* բառի ընդհանուր (*h*)*աւ-* արմատի հետ:

Աճառյանը, անկախ նրանից, որ Տերվիշյանը, Մեյեն և Կարստը այն կապում են *հաւան* «համոզում, հաճություն» բառի հետ, այն դիտում է իբրև «անստույգ բառ» [*Աճառյան*, 1971, էջ 355, այլև 1977, էջ 70]:

Ջահուկյանն ունի այս արմատը միայն *հաւատ* ձևով: Ընդ որում նախ՝ վերջինիս *-ատ* բաղադրիչի վերաբերյալ նշվում է հետևյալը. «Առայժմ դժվար լուծելի է հին հայերեն *աղբատ, անքատ...հաւատ* (?) բառերի *-ատ*-ի հարցը. այն համեմատում են հինդկ. *dr̥sād* «ջրաղացաքար» և հուն. *φρυάξ, φρυάδος* «վագող, փախչող» բառերի հետ, որն իմաստապես քիչ հարմար է», այլև արմատի *h-* բաղադրիչը դիտվում է «բառասկզբի ձայնավորից առաջ հավելուրդային (թերևս հին կոկորդայինից)՝ *հաւատ* և *աւատ* (հ.-ե. \**au* «ընկալնել, ըմբռնել»)»: Այնուհետև, գտնում է, որ «կասկածելի է *հաւատ, աղանդ, երկին-* (որպես պաշտելի առարկա), *այս* «չար ոգի» բառերի հնդեվրոպական ծագումը» [*Ջահուկյան*, 1987, էջ 113, 237, 254, 274]:

Իսկ հետագայում, ոչ անկախ Հ. Բեյլիից, գրում է, որ՝ «*հաւատ (աւատ), -ոյ* «հավատ, կրոն, հավատարմություն, վստահություն, ստուգություն» բառը «փոխառություն (է) իրանական աղբյուրից. հմմտ. խոտան.-սակ. *hot* «կարողանալ, ի վիճակի լինել» (<\**fra-vat-*), սողդ. *awat* «հավատ»», և ավելացնում հետևյալը. «Ջահուկյանը նախապես ենթադրել է բնիկ հնդեվրոպական ծագում՝ \**hau-* [\**au-*] «զգալ, հասկանալ» արմատից, բայց հետո (ՊԲՀ 1995) հանգում է իրանական ծագման վարկածին» [*Ջահուկյան*, 2010, էջ 454]:

Արմատի ստուգաբանության հարցում, ինչպես կարելի է նկատել, կա որոշակի երկակիություն, որն, անշուշտ, բացատրվում է նրա ծագմանը և այլ լեզուների հետ հնարավոր գուգահեռների անցկացմանը վերաբերող առավել ամբողջական քննության բացակայության հանգամանքով: Կարծում ենք, որ ավելի հավանական է *աւատ (հաւատ)* բառի բնիկ լինելը, այսինքն՝ ծագում է հե. \**Hay(i)-* արմատից, որը լծորդն է \**Hye(i)-* «թռչուն» արմատի, իսկ *-ատ* բաղադրիչի հարցը տվյալ դեպ-

քում այլ է, ուստի այն առանձին ուշադրության առարկա կարող է լինել [Հմմտ. *Āàì êðǎëèäçǎ, Êâàì î â*, 1984, c. 233, 239, 867]:

2. Հայ. *աւետ* (նաև *աւէտ*) «(ուրախ) լուր» բառը «Նոր հայկազյան բառարանը» դնում է *աւետիք* բառի տակ՝ համարելով զուգահեռ պրսկ. *nuvid-* «նոր լուր», արաբ. *havadis* «ավետիս», լատ. *ave, avete* «ողջ կամ ուրախ լեր՝ լերուք» բառերին [Մետիքեան, Միրսէլեան, Աւգերեան, 1836, էջ 394, 396]: Ըստ Տերվիշյանի այն կարելի է բխեցնել կա՛մ \**vid-* «գիտենալ», կա՛մ \**avid-* «զոյել» արմատից [Տերվիշեան, 1885, էջ 66, 108, 130]: Աճառյանը սուկ նշում է այս հանգամանքը, և ի վերջո այն համարվում է «անստույգ բառ» [Աճառյան, 1971, էջ 358-359]:

Չահուկյանը հայ. *աւետ*//*աւէտ* «ուրախ՝ բարի լուր» բառը [այլև *աւետել, աւետարանեն, աւետիք, առհաստչեայ, աւետչեայ, աւետումն* (\**հրաւետումն*) և այլն] ծագած է համարում հե. \**aued-*//\**aucid-* [\**au-*, \**aued-*] «խոսել» արմատից, որը զուգահեռներ ունի ցեղակից մի շարք լեզուներում. հմմտ. հինդկ. *vādati*, հուն. *αύδη* «խոսք, ձայն, լուր», «զուշակություն, փառաբանություն», թոխ. *ƒ watk* «հրամայել», միաժամանակ նշում, որ «*աւետ* (*աւէտ*) բառի ստուգաբանությունը պատկանում է Է. Աղայանին», այլև ավելացնում է հետևյալը. «Առայժմ մենք ավելի հավանական ենք համարել *ատեան, աւէտ ...* բառերի բնիկ հնդեվրոպական, քան իրանական ծագումը: Նրանց համար առաջարկված իրանական զուգահեռները բավականաչափ համոզիչ չեն» [Չահուկյան, 1987, էջ 145, 159, 552, այլև 2010, էջ 101]:

Աղայանը գտնում է, որ *աւետ(իք)* «բարի՝ ուրախալի լուր, բարև, ողջույն» բառը ծագում է հե. \**aud* «խոսել» արմատի \**āyēd*, \**aucid* աճած (իմա՝ ածանցական - Վ.Հ.) ձևերից, «որոնցից օրինաչափորեն ստացվում են *աւետ* (< *auēd*) և *աւէտ* (< *aucid*)... հմմտ. հուն. *ΰδω* «փառաբանել», հինդկ. *vadati* «խոսում է, ողջունում է», *vandate* «զովք, պատկառալից ողջույն», հուն. *ἀείδω* (< *ἀΐειδο*) «երգել», թոխ. *AB wätke, B watk* «հրամայել» և այլն» [Աղայան, 1974, էջ 35]:

Սույն ստուգաբանությունը ընդունելի է, սակայն հետևյալ լրացումով. նախ՝ բառի *-ես*//*-էտ* ածանցի հետ կապված՝ նախալեզվում *\*-ed*//*\*-eid* ածանցի առանձնացումն այլ խնդիր է, այնուհետև՝ «կոկորդային» \*H- նախահավելվածով արմատի (\*Hալ-) վերականգնումը հավանական է դարձնում այդ արմատի հետ առնչել նաև հայ. *յաւէտ* (այլև *յաւիտեան*, *յաւիտենական* և այլն) տարբերակը, որ իմաստային առումով լիովին հնարավոր է:

3. Հայ. *գոգ* (նաև *գոչ-եմ*) բառը, իբրև հրամայականի ձև (հմմտ. *գոգզիր*, *գոգցես*, *գոգցո՛ւք*), «Նոր հայկազյան բառարանը» դիտում է «պակասատր բայ՝ սաստկականն *ոգելոյ*, այն է՝ ասել. որպէս նոյն ընդ *գոչել*» [*Աւետիքեան*, *Սիրմէլեան*, *Աւգերեան*, 1836, էջ 565-566]:

Աճառյանը *գոգ* «ասել» ձևը բխեցնում է հե. *\*vog<sup>w</sup>h-* արմատից, և հենվելով Պոկոռնու և ուրիշների տվյալների վրա՝ համեմատում է լատ. *voveō* «հանդիսավոր կերպով խոստանալ, ուխտել, փափագել», *votus* «խոստում, ուխտ», հինդկ. *vāghát-* «ուխտավոր, աղոթք անող, զոհ խոստացող», ավեստ. *aog* (<հե. *\*evog<sup>w</sup>h-*) «ծանուցել, ասել, խոսել» և այլն, հուն. *εὐχομαι* (< հե. *\*evog<sup>w</sup>h-*) «աղոթել, ուխտել, խոստանալ, հայտարարել, ասել», *εὐχῆ* «ուխտ, աղոթք, մաղթանք», *εὐχῶλη* «ուխտ, աղոթք. հպարտ խոսքեր, հաղթական երգ» և այլն ձևերի հետ [*Աճառյան*, 1971, էջ 570]:

Գրեթե նույնը տեսնում ենք Ջահուկյանի նախկին աշխատության մեջ, որում *գոգ*-ը ծագած է համարվում հե. *\*uog<sup>w</sup>h-* (*\*evog<sup>w</sup>h-* «հանդիսավոր կերպով խոսել») արմատից, այլև *ոգես*-ը՝ նույն արմատի *\*ouog<sup>w</sup>h-* (*\*evog<sup>w</sup>h-*) տարբերակից [*Վառլանյան*, 1967, շ. 91, 227]: Իսկ հետագայում Ջահուկյանն անդրադառնում է միայն *գոգ* «ասել, գոչել» (որից՝ *գոգես*) ձևին (ոչ *ոգես*-ին) [*Ջահուկյան*, 1987, էջ 84, 124 և այլն, այլև 2010, էջ 165]:

*Գոգ* բայաձևը, ամենայն հավանականությամբ, կապ ունի *գովես* բայի *գով-* հիմքի հետ: Աղայանը, ի դեպ, այս արմատի (և մեկ այլ բառի) հետ կապված, նշում է հետևյալը. «ինչպես *paragauda* բառը, այնպես էլ *gauda* բաղադրիչը իրանական



փոխառությունն է հայերենից. այդ փոխառյալ բառից իրանականում կազմվել է *varagauda* բառը, որից է հայկական *վարագոյր*-ը: Այստեղ էլ ունենք այնպիսի երևույթ, ինչպես որ, առնելով իրանական *գով* «գովասանք» բառը, հայերենը կազմել է *գովասան* և տվել իրանականին, որ պահլավերենում դառնալով *gōsan*, կրկին վերադարձել է մեզ՝ *գուսան* ձևով» [*Միայան*, 1974, էջ 15, 134-135]<sup>5</sup>:

Գամկրելիձեն և Իվանովը հայ. *գոգ* «ասա՛» բայաձևը բխեցնում են հե. \**Hyeg*<sup>[h]o</sup>- ձևից. հմմտ. հինդկ. *vāghát* «աղոթք արած», լատ. *uoueo* «խոսք եմ տալիս, խոստանում եմ», սօտում «ուխտ, խոստում», ումբր. *bufetes* «պահանջ, ցանկություն»: Նկատենք, որ այս արմատը ոչ այլ ինչ է, եթե ոչ երկրորդ՝ լծորդ տեսակը (տիպը) \**Heug*<sup>[h]o</sup>- արմատի՝ իբրև լիահունչ հիմքի զրո (ø) աստիճան. հմմտ. հուն. *εὔχοσ* «փառք», *εὔχομαι* «փառաբանել», «աղաչել, աղոթել», հինդկ. *óhate* «փառաբանում է», ավեստ. *aojāite* «ասաց», *aogəda* «հայտնեց, հայտարարեց»: Նկատենք նաև, որ սրանց հետ սպասելի էր հայ. *գովեմ* «գովում եմ, գովաբանում եմ» բայաձևը՝ իբրև ձևափոխառյալի համարժեք: Այսուհանդերձ, կարծում ենք, որ այս դեպքում նույնպես ունենք հնդեվրոպական ընդհանուր արմատի \**Heug*<sup>[h]o</sup>-// \**Hyeg*<sup>[h]o</sup>- տարբերակայնություն, ընդ որում ընդհանուր *g*<sup>[h]o</sup>- ածանցով [*Āai éðáéèäçá, Ēááí í á*, 1984, c. 236]:

4. Հայ. *գոհ* (որից՝ *գոհանամ*) բառը «Նոր հայկազյան բառարանում» բերված է «գոհացած, հաճ և հաւան՝ շնորհակալութեամբ հանդերձ» իմաստով, որին զուգակից է նաև *հաւ(-ան)* արմատը [*Աւետիքեան, Միւրմէլեան, Աւգերեան*, 1836, էջ 566]:

Աճառյանը դիտում է իբրև «անստույգ բառ»:

Չափուկյանը բառի ծագմանն անդրադառնում է համեմատաբար ավելի ուշ՝ նշելով հետևյալը. «թերևս փոխառություն իրանական աղբյուրից, բայց բուն աղբյուրը չի հաստատված».

<sup>5</sup> Ի դեպ՝ հայ. *գով*- արմատի իրանական փոխառություն լինելը այնքան հավանական չէ, որքան այն բնիկ դիտելը, իսկ *վարագոյր* բառի վերաբերյալ հնարավոր է ավելի հավաստի բացատրություն, որը հետագա խնդիր է:

իրանական ծագման վկայություն պետք է համարել *ղժգոհ* ձևը, որ հավանաբար բուն իրանական կազմություն է (\*duž-góh?): - Ջահ. ՀԼՊ, 358» [*Ջահուկյան*, 2010, էջ 166]:

Նկատենք, որ այս դեպքում կա առարկության տեղիք տվող երկու հանգամանք: Նախ՝ ծագման մասին խոսվում է թեականով, իսկ իրանական «չհաստատված աղբյուրից» գալը, այլև համապատասխան կազմության մատնանշումը տրվում են հարցականով: Այնուհետև՝ «Հայոց լեզվի պատմություն» աշխատության մեջ այս առումով նշվում է, որ իրան. *ղժ*- մասնիկով բազմաթիվ կազմությունները հիմք են տալիս այն անկախ մասնիկ դիտելու, այսինքն՝ դրանից կարող էին նաև հայերեն կամ բնիկ՝ ոչ փոխառյալ բառերի հիմքով կազմություններ լինել՝ հետագայում. «Իրանական բառերի զանգվածային փոխառությունը հիմք է տալիս իրանական ծագման ժխտական նախամասնիկների անկախ գիտակցման համար: Դրանցից *ղժ*-ը *ղժգոհ* - *գոհ*, *ղժկամ* - *կամ* տիպի զույգերում ակնհայտորեն գիտակցվել է իբրև այդպիսին» [*Ջահուկյան*, 1987, էջ 358]:

Մենք հակված ենք այն մտքին, որ հայ. *գոհ* «գոհացած, բավականացած» և *գոգ* «ասա՛, համարյա թե, կարծես թե» (եթե ոչ նաև՝ *գէն* «խնդրեն»․ հմմտ. *գեթ*//*գեթ*, *գէմ* «իրոք, իսկապես») բառերի միջև գոյություն ունի իմաստային ընդհանրություն՝ «հոգեմտավոր վերաբերմունք՝ վերաբերություն», ուստի գտնում ենք, որ դրանք, հավանաբար, ծագում են հե. \*H<sub>2</sub>eg<sup>[h]</sup>o- ձևից:

5. Հայ. *հազազ* «շունչ», «ձայն արտաբերող շունչը» կրկնավոր կազմություն է \**հազ* արմատից [հմմտ. *հեզ*, որից *հեզել* «արտաբերել», *հազաչել* «հաչել (շան)»]:

Ըստ «Նոր հայկազյան բառարանի»՝ \**հազ* արմատին կից են *հաչ*, *հառաչ*, *ոգել*, *գոգ*, *ոգի*, *հոգի* բառերը: Իսկ Տերվիշյանը նախալեզվի համար վերականգնում է \**vak* արմատը, որից՝ «*գոչել*, *խօսիլ*, սնս., զնդ. *vač*, լատ. *vocāre*, *vox* (\**voc-s*), հուն. *εἶπον*, *ὄψ*, նպրսկ. *bānk*, նաև հայ. *վանկ*//*վանգ*, դարձեալ *գոչել*, նոյնպես *գոգցես*, *գոգջիր*. հոս կրնայ բերուիլ մմանապես *հեզել*, *հազազ* (*հազ-հազ*), եթե սենական ծնունդ չեն. տե՛ս

արար. haĵā», վերջապէս *nqել, nqեղ (nqեղարարբառ* բարդին մէջ), եթէ սառնք *nqհ, hnqհ* բառերուն հետ լծորդութիւն չունին» [*Աւետիքեան, Միրսէլեան, Աւգերեան*, 1837, էջ 1. հմմտ. *Տէր-վիշեան*, 1885, էջ 105]:

Աճառյանը գրում է, որ *հազազ*-ը «կրկնուած է պարզական *\*հազ* արմատից, որ առանձին չէ՛ գործածուած» [*Աճառյան*, 1977, էջ 3]:

Իսկ Չահուկյանը բառին անդրադառնում է տարբեր առիթներով: Նախ՝ գտնում է, որ հայ. *հազազ* (կրկն. *\*հազ-հազ*) «շնչառություն» բառը ծագում է հե. *\*aլ-* «փչել, քամհարել, շնչել» արմատից. հմմտ. հուն. *ἄος* «շնչառություն», մկիմը. *awyδ* «քամու ուժեղ պոռթկում», հկռնն. *awit* «օդ» և այլն: Եվ այս առումով տողատակին ունի հետևյալ կարևոր դիտարկումը. «հմմտ. նաև *hnվ* «քամի, գով», *hnqհ* «շունչ» և, հնարավոր է, *znqհ* «գոլորշի» (*hmnչ* «ձայն» և *znmnչ* «շնչելը» դեպքում) և խեթ. *huṣanza*, թեև *hnվ, hnqհ* սովորաբար բխեցնում են *\*rou-*, *\*rouiŋo*» ձևերից: Ըստ վերջին ստուգաբանության *\*kʷ*-ին և *\*skh*-ին (>*\*šx* > *š*) հանգող շ-ի առկայությունը մնում է չպարզված: Այս հանգամանքը հուշում է *\*sə₃* > *š*, *\*ə₃* > *h* (*\*sx* > *š*, *\*x* > *h*?) նախաձևի մասին» [*Äxäðéyʻ*, 1967, c. 240]: Այնուհետև, *hmnչ*-ը (հարցականով) ծագած է համարվում հե.*\*son-* (*\*sun*?) [*\*s*(*y*)*en-*] արմատից, իսկ ավելի ուշ՝ գալով Աճառյանի տեսակետին, այն դիտվում է «բնաձայն կազմություն» [*Չահուկյան*, 1987, էջ 152, 218, այլև 2010, էջ 468]:

Հետագայում *հազազ* «շունչ, շնչափող» բառը հարցականով բխեցվում է հե. *\*pəլ-* [*\*p*(*e*)*u-*, *\*phu-*] արմատից [*Չահուկյան*, 2010, էջ 145], որը տարբեր կարգի գուգահեռներ ունի ցեղակից մի շարք լեզուներում, ընդ որում նաև կելտականում: Իսկ ավելի ուշ՝ Չահուկյանը *հազազ* «շունչ, առոգանություն, շնչափող» բառը դիտում է՝ «բնիկ հնդեվրոպական՝ *\*rouiŋo-* [*\*pəu-*] «փչել» արմատից, որից նաև *հեւ, hnqհ* (տե□ս)» [*Չահուկյան*, 2010, էջ 437]:

Կարելի է կարծել, որ հայ. *հազ-* (<*\*հազ-հազ*, այլև *հեզ* «վանկ», «հնչյուն») պարզ արմատը ևս ծագում է հե. *\*Heug<sup>[h]o-</sup>* լրիվ աստիճանի ձայնավորմամբ արմատից. հմմտ. հինդկ. *óha-*

te «փառք է տալիս», ավեստ. aōjaite «ասաց», aogədā «հայտնեց, հայտարարեց», հուն. εὔχος «փառք», εὔχομαι «փառք են տալիս», «աղոթում են» և այլն, որի զրո աստիճանի \*Hueg<sup>[h]o</sup>-ձևից, ի դեպ, ծագած են համարվում ոչ միայն հայ. գո՛գ «ասա՛, խոսի՛ր» բայաձևը, այլև հինդկ. vāghát «խնդրված, աղաչած», լատ. uoueo «աղաչում են», սժտա «աղոթք» և այլն [*Āḍi ēḍā-ēēāçā, Ēāāī ī ā, 1984, c. 236*]:

6. Հայ. *hwi* «թռչուն» բառը «Նոր հայկազյան բառարանը», վերջինիս հետևությամբ նաև Պետերմանը համեմատում են լատ. avis բառի հետ, իսկ Լազարըրը նախ՝ բխեցնում է հե. \*pā- արմատից՝ ի համեմատություն հսլավ. pieti, piewati «երգել», pictlǫ «աքլոր» ձևերի, իսկ ավելի ուշ՝ դիտում է լատ. pavus «սիրամարգ» բառին ցեղակից [*Աւետիքեան, Միրմէշեան, Աւգերեան, 1837, էջ 1. հմմտ. Petermann, 1837, p. 26, Աճառյան, 1977, էջ 65-66*]: Տերվիշյանը «վերինների հետ դնում է հնիս. vi, avi «թռչուն» բառից» [*Տէրվիշեան, 1885, էջ 108*]:

Հյուրշմանն ընդունում է համեմատությունը լատ. pavus, pavo ձևերի հետ, սակայն վերապահությամբ, այն է՝ եթե սրանք նախապես ունեցած լինեն «թռչուն» իմաստը: Աճառյանը, ոչ անկախ Հյուրշմանից, գտնում է, որ այն ծագում է հե. \*auei- «թռչուն» արմատից. հմմտ. լատ. avis «թռչուն», avicula «թռչնիկ», հինդկ. vi-, vé, vayas- «թռչուն», ավեստ. vīs, vay- «թռչուն», հուն. οἰωνός (<\*αFἰωνός?) «զիշատիչ թռչուն», αἰετός (<\*αFἰ-ετός) «արծիվ», իռլ. ai, aoi «կարապ», կիմր. hwyad (<\*auei-?) «բադ» և այլն [*Hübschmann, 1897, 465*]: Աճառյանը բերում է նաև այն, որ ըստ Պետերսոնի (էջ 249-250)՝ հայ. *hwi*-ը ծագում է հնիս. \*pōu, pou, pau «փոքր», «ձագուկ» արմատից. հմմտ. հուն. πῶλος «ձագ, քուռակ», παῖς «տղա, երեխա», հինդկ. potas «ձագ», լատ. puer «տղա, երեխա», լիտվ. putytis «թռչնի ձագ», լատվ. putns «թռչուն», հսլավ. pŭta, pŭtica «թռչուն», ընդ որում Պոկոռնին «այս մեկնութիւնը յիշում է նախորդի հետ (հնիս. \*auei-)» [*Աճառյան, 1977, էջ 66*]:

Չահուկյանը գտնում է, որ հայ. *hwi* «(էգ) թռչուն» բառը ծագում է հե. \*Hau- (\*auei-) թռչուն» արմատից, միաժամանակ նշում, որ «Պոկոռնին հնարավոր է համարում դուրս բերել հե.

\*բօս- (\*pōs-) «ձագ» արմատից՝ *h*-ի նկատառումով, և որն ունի գուգահեռներ ցեղակից լեզուներում. հմմտ. լատ. avis «թռչուն» [*Āæððēýí*, 1967, c. 226, ծանոթ. 25, c. 242. *Պահուկյան*, 1987, էջ 114, 208, այլև 2010, էջ 453]: Հետագայում, ոչ անկախ Հ. Հյուբշմանից և Հ. Աճառյանից, բառը ստուգաբանվում է հետևյալ կերպ. «Բնիկ հնդեվրոպական՝ \*h<sub>2</sub>avei «թռչուն» արմատից. հմմտ. հինդկ. vi, ավեստ. vay, լատ. avis «թռչուն», հուն. οἰωνός «արծիվ»» [*Պահուկյան*, 1987, էջ 453]<sup>6</sup>:

Ըստ Գամկրելիձեի և Իվանովի՝ հնդեվրոպական «եռաբաղաձայն» (Schwebeablaut-ով՝ «շարժուն ձայնդարձով») արմատի առաջին տիպից՝ \*Hau- արմատից ունենք հայ. *հու* «թռչուն». հմմտ. լատ. auis «թռչուն», հուն. αἰετός «արծիվ», բրետ. houd «բաղ», իսկ երկրորդից՝ \*Hue- «փչել» արմատից՝ հինդկ. véh, (հոգն. ք.) váyah «թռչուն», vāyasá- «թռչուն», «ագռավ» [*Āāi ēðāēēāçā, Ēāāi ī ā*, 1984, c. 233]:

Այնուհետև, հայ. *հու* «թռչուն», «հավ» արմատը հեղինակները բխեցնում են նաև հե. \*Hue- (նախնական իմաստով) «փչել» (որից՝ «օդ», «քամի», այլև «Վերին ոլորտի՝ աշխարհի» անվանումը) արմատից. հմմտ. հինդկ. ví-/vé- «թռչուն» (Ռիգվեդայում նաև «ձի», «աստվածներ», «նետ»), ավեստ. viš «թռչուն», պահլ. way, wāyendag «թռչուն», հուն. αἰετός «արծիվ», լատ. auis «թռչուն», ումբր. (հոգն. հայց. հոլ.) avif «թռչունների», վալլ. hwyad «բաղ» [*Āāi ēðāēēāçā, Ēāāi ī ā*, 1984, c. 537]: Ընդ որում գտնում են, որ հե. \*Hau-//\*Hue- տարբերակներում, նայած արմատի ձայնդարձի այս կամ այն աստիճանի, զանազանվում են տարբեր՝ \*Hau(1)-//\*Hue(1)-, այլև \*Hue(1)- հիմքեր [*Āāi ēðāēēāçā, Ēāāi ī ā*, 1984, c. 233, 489 և այլն]:

Ըստ այդմ՝ որոշակի առնչություն կա «փչել», «քամի», «թռչուն» (այլև՝ «արծիվ», «նետ», «օդ, ոլորտ՝ սթնուլորտ»)

<sup>6</sup> Նկատենք, որ հունարենում οἰωνός բառն ունի ոչ միայն «գիշատիչ (թռչուն)», այլև «գուշակող, լուր բերող (թռչուն)», «նախանշան, նախանշանակ» իմաստները, որը հետաքրքիր է հնդեվրոպական արմատի բուն՝ սկզբնական իմաստի վերականգնման առումով [տես *Āāi ēðāēēēē*, 1958, c. 1162]:

իմաստների միջև, որ հայերենում կարելի է հանգեցնել ոչ միայն *հաւ(ք)*, այլև *հով, գով, հովեմ, հեւայ* և այլ արմատներին:

7. Հայ. *հաւան* «հավանություն՝ համոզում, հաճություն» բառը «Նոր հայկազյան բառարանը» դիտում է իբրև արմատ *այո՛, հա* «այո. համաձայն լինելը» բառային տարբերակների՝ արմատի ձայնավորման դիրքի առումով (հմմտ. *սա, այս, սոյն* և այլն) [*Աւետիքեան, Միւրմէլեան, Աւգերեան*, 1837, էջ 72]:

Նախորդ ուսումնասիրողներից Տերվիշյանն այն բխեցնում է հնիւ. \*av- «յագիլ, հաճիլ, հաւանիլ» արմատից, որից սանս. av, հուն. ἄω «կշտանալ»՝ գտնելով, որ «մեր մէջ պահուած է *ագ-* և *աւ-* ձևերով. առաջինէն *յագել, յագենայ*, և երկրորդէն՝ *հաւանել, հաւատք, հաւաստիք՝ յ և հ* նախորդով» [*Տերվիշեան*, 1885, էջ 65-66]: Աճառյանը նշում է, որ *հաւատ* և *հաւան* առնչության առումով տեսակետ են հայտնել նաև Պեղերսենը, Կարսոը, Մեյեն: Այդուհանդերձ, նա ոչ անկախ Հյուբշմանից, *հաւան*-ը համարում է «անստույգ բառ» [*Աճառյան*, 1977, էջ 68]:

Առավել ուշագրավ է Մեյեի կարծիքը, ըստ որի հայ. *հաւան* և *հաւատ* բառերը կապ ունեն ոչ միայն միմյանց, այլև *հաւ* «թռչուն» բառի հետ, ինչպես որ հուն. ὄϊμοι «հաւատալ, կարծել» և οἶσός «թռչուն» բառերը: Ընդ որում նկատի է առնվել *հաւ* բառի մնան իմաստի կրող լինելը, այսինքն՝ «հնդեվրոպական է համարում՝ կապելով հավահմայութեան արուեստին», որ գոյություն ունեւ հին աշխարհում: Իսկ որ այդ չի ընդունում Հյուբշմանը, կարելի է ասել, բոլորովին այլ հարց է, եթե ոչ գիտական նոր փաստերի նկատառումով այժմ անընդունելի [տե՛ս Meillet, 1892, p. 164-165, Hübschmann, 1897, p. 465. հմմտ. *Աճառյան*, 1977, էջ 68]:

Չահուկյանը *հաւան* «հավանություն, հավանող» բառի ծագման վերաբերյալ նշում է հետևյալը. «Թերևս փոխառություն իրանական աղբյուրից, բայց բուն աղբյուրը չի հաստատված» [*Չահուկյան*, 2010, էջ 453]:

Այդ ամենով հանդերձ՝ կարելի է կարծել, որ հայ. *հաւան* (նաև *հաւատ, հաւատայ* և այլն) բառերի *հաւ-* արմատը ծագում է հե. \*Hau(1)- ձևից, որն ավելի հավաստի է դառնում իմաս-

տային-գործառական կողմով, այսինքն՝ եթե նկատի ենք ունենում ոչ միայն «հավահմայության արվեստը», որը նշում է Մեյեն, այլև «առավոտվա՝ լույսի ավետումը, հավի (աքաղաղի) կանչը»՝ իբրև «հավախոսության» գործառույթի դրսևորում:

8. Հայ. *հեգ* «վանկ», «(գրի) հնչյուն» բառը, ըստ Աճառյանի, փոխառություն է՝ ասոր. *hayā* «կարդալ», նասոր. *häget‘ä* «հեգել», արաբ. *hajā* «վանկ, հեգել» (քրդ. *hiçe* «վանկ»): Այդպես է գտնում նախ Հյուբշմանը, որին էլ հետևում է Աճառյանը: Վերջիններս այդ արմատին են առնչում *հեգենայ* «գիր», «այբուբեն(ը)» բառը՝ դարձյալ իբրև փոխառություն՝ ասոր. *heyyānā* «կարդալ, հեգել», «ընթերցելը, արտասանելը», որ զուգահեռներ ունի այդ խմբի մյուս՝ բավականին թվով լեզուներում [*Hübschmann*, 1897, p. 309, *Աճառյան*, 1977, էջ 73]:

Իսկ նախորդներից «Նոր հայկազյան բառարանը» *հեգ*-ը լծորդում է հայ. *ոգել, ոգի, հագագ, վանկ* բառերին, այլև հուն. *ήχη* «աղմուկ», «ձայն. հնչում, խոսք», *ήχος* «արձագանք», «լուր, համբավ», արաբ. *hāǧā*, պրսկ. *sügin* ձևերին: Տերվիշյանը այն կապում է հայ. *հագագ* բառի հետ [*Տերվիշյան*, 1885, էջ 105]: Փաստորեն Հյուբշմանի դիտարկումը առաջինը չէ:

Չահուկյանը, ինչպես որ Հյուբշմանը և Աճառյանը, գտնում է, որ հայ. *հեգ* «վանկ», *հեգենայ* «գիր. այբուբեն» բառերը փոխառություն են՝ բերելով ասորերենի նույն ձևերը, որ նշում էին նախորդները [*Չահուկյան*, 1987, էջ 458, 478, 481, 484, այլև 2010, էջ 455]:

Այդ դեպքում, հավանաբար, կարելի է անել նոր հարցադրում: Հնարավո՞ր է այդ բառերի, մասնավորապես *հեգ*- արմատի ծագումը կապել հնդեվրոպական որևէ ձևի հետ՝ տարբեր լեզվաընտանիքների միջև հեռավոր ցեղակցային հարաբերության նկատառումով, թե՞ այն պարզապես ուշ սեմական փոխառություն է: Ի դեպ՝ նման հիմք տալիս է *հեգ*-//*հել*-լծորդելիությունը՝ հիմնված ոչ միայն *q*//*t* տարբերակայնության վրա, այլև նկատի ունենալով լծորդելի միավորների ընդհանուր իմաստային կողմը, այն է՝ «հևալը, ծանր շունչ քաշելը՝ հնչեցնելը» և «հնչյուն, վանկ» նշանակությամբ:

9. Հայ. *հեւ* «հեւալը», «հեք, հեոց» [այլև *հեւ-ամ* (\**hmi-*) «(ծանր) շնչել, շունչ քաշել»] արմատը, ըստ Աճառյանի, բնիկ է, ծագում է հնիւ. \**peu-* «փչել» արմատից, այլև «որ անշուշտ բնածայն պետք է համարել»: Նա միաժամանակ գտնում է, որ «այս արմատը երևում է նաև *pū*, *pu*, *phu*, *bu*, *bhu* ձևերով».  
 հմմտ. լիտվ. *pučù*, *pūsti* «փչել», *pūkščù*, *pūkšti* «հեւալ», լատվ. *pūtu*, *pūst* «փչել, շնչել», ռուս. *пучить* «հեւալ», լեհ. *puchnąć* «ուժեղ շնչել», հիսլ. *fjúk* «ձյան բուր», սրբգերմ. *pfüchen* «հեւալ» և այլն»:

Վերջինիս առնչակից են դիտվում հայ. *փուք*, *փչել*, այլև *հոզի* ձևերը: Ըստ այդմ՝ հայ. *հեւալ* < հնիւ. *pu*, *peu*, հայ. *փուք*, *փչել* < հնիւ. *phu-*: Աճառյանը նշում է, որ «վերի մեկնությունը (իմա՝ հայ. *հեւ* < հե. \**peu-*) տուաւ Պետերսոնը... որ և ընդունում է Պոկորնին» [*Աճառյան*, 1977, էջ 89-90. հմմտ. *Pokorny*, 1959, p. 847]:

Զահուկյանը գտնում է, որ հայ. *հեւամ* բայարմատը ծագում է հե. \**peuā-* [\**p(e)u*, \**phu-*] արմատից, որն ունի զգալի թվով զուգահեռներ հնդեվրոպական մյուս լեզուներում. հմմտ. հինդկ. *phupphukāraka-* «շնչահեղձ (եղող)», *purphula-* «փքված լինելը», *phuphusa-* «թոք», *purphusa-* «թոք, (ջրածաղկի սերմի) պարկուճ», *phūt-karóti* «փչել, ծանր շնչել, ճիչ արձակել», միդլ. *ūan* «փրփուր, քափ», կիմր. *ewyn*, բրետ. *eon* (հոգն. *eien*) [*<\*pou-ino-*] «ակունք, աղբյուր», հբրեա. *eunoc* «փրփրուն», լատվ. *pūlis* «խումբ, կույտ», *pūšot* «թարախածորել», *pūl'i* «անձրևաբեր ամպ», ռուս. *púlja* «զնդակ» և այլն: Ընդ որում ընդհանուր հե. \**peuā-* [\**p(e)u*, \**phu-*] արմատից են ծագած դիտվում նաև ոչ միայն հայ. *հուվ* (*հուվ-ոյ* < \**pouo-*), *հոզ* (*հոզ-ոյ* < \**pouo-*), *հոզի* (*հոզու-ոյ* < \**pouio-*), այլև *հազազ* (*հազ-ա՞զ* < \**pəu-*), *փուք* [*փու-ք*, *փք-ամ* (*փք-անամ*) «ուռչել» < \**phu-k*], *փչեմ* (*փուչ* «փչելը» < \**phukje*), *հոյլ* [*հոյլ-ի* < \**peu(s)-l-*] [*Ջահուկյան*, 1970, էջ 136-137, այլև 1987, էջ 145, 209, 216]: Հետագայում, ոչ անկախ նախորդ ուսումնասիրողների ունեցած տեսակետից, գտնում է, որ *հեւ*-ը («բաղադրություններ՝ *հեւալ*, *հեւք*») ծագում է «բնիկ հնդեվրոպական՝ \**pəu-* «փչել» արմա-



տից, որտեղից նաև *հոսվ, հոզի, փուքս, փչել*» [*Չահուկյան*, 2010, էջ 459]:

Մենք հակված ենք կարծելու, որ եթե 1) ընդունելի է հայ. *հովեմ* <\*Hye/ont<sup>h1</sup>- ծագումը (տե՛ս ստորև), այլև 2) *հով*-արմատը զուգահեռ է վերը նշված *հոզ(ի), հազազ* բառերին, ապա հայ. *հեւամ* (այլև *հեւք > հեւոց*) բառը ևս բխում է նույն արմատից, վերջինիս ձայնավորման լրիվ աստիճանի \*He/ou- ձևից [հմմտ. *Āāi êḏāēèäçā, Êāāi î â*, 1984, c. 206, 583]:

10. Հայ. *հինհնամ/հինանամ* ունի «(արագ-արագ) շունչ առնել՝ քաշել. հեծել, հևալ» իմաստները: Ընդամին «Նոր հայկազյան բառարանը» տալիս է միայն *հինհնամ* ձևը, իսկ «Առձեռն բառարանը»՝ նաև *հինանամ* [*Աւետիքեան, Միրմէլեան, Աւգերեան* 1837, էջ 99]: Աճառյանը բերում է *հինհնամ*՝ նշելով նաև «Առձեռն»-ի *հինանամ*-ը: Նա միաժամանակ գտնում է, որ այս բառի նախալեզվյան ձևը «որոշված չէ դեռ», թեև առաջարկվելիս է եղել \*pneu-//\*pn- տիպի արմատ, որի բուն իմաստն է դիտվում «շնչել, հևալ». հմմտ. հուն. πνέω, πνεΐω, πνεΐσαι «փչել, շնչել, հևալ», πνεΐμα «շունչ, քամի», πνοή, πνοά «շունչ, թեթև ձայն, արտաշնչելը», հրգերմ. fnechan, մրգերմ. phnechan «շնչել, ուժգին փչել», phnūsen «հևալ, փռնգտալ», հիսլ. fnýsa «հևալ» և այլն՝ նշելով հետևյալը. «Այս բոլորը համարուելով բնածայն՝ ենթարկուել են կամայական ձևափոխութեանց. այսպէս նաև հայերէնը» [*Աճառյան*, 1977, էջ 95-96]:

Չահուկյանը *հինհնամ* բառի ծագմանն անդրադառնում է ավելի ուշ, նախ՝ գտնելով, որ այն (հարցականով) բխում է հե. \*poi-pnās-? [\*pneu-, \*pnās-] արմատից, զուգահեռ ունի միայն փոյուզերենում, և որի համար կա հետևյալ լրացուցիչ մեկնաբանումը. «*Հինհնամ* «հևալ» բայի ստուգաբանությունը պատկանում է Աճառյանին [ՀԱԲ, 3, 95-96], որը, սակայն, հայերենի նախաձևը չի ճշտում: Նրա մատնանշած բարբառային *հնհնալ, հնիկ-հնիկ անել* ձևերը ենթադրել են տալիս \*pen- նախաձև, *հինհնամ*-ը՝ \*pein- (կրկնությամբ), որպիսիները այլ լեզուներում չեն հանդիպում: Թերևս հայերենի համար բանալի են տալիս մի կողմից՝ հուն. կրկնավոր ποι-πνόν «դետուդեն են ընկնում», մյուս կողմից՝ գերմ. \*fnās-, \*fnōs-, fnas- ձևերը, որոնց հիման

վրա մենք վերականգնել ենք \*poi-pnās- կրկնավոր նախածևր» [*Չահուկյան*, 1987, էջ 144, 187, 209]:

Իսկ հետագայում Չահուկյանը բերում է ոչ միայն *հինհնամ*, այլև *հինանամ* ձևը, թեականով նշում, որ այն բնիկ է, և ոչ անկախ Աճառյանից՝ բխեցնում է մեկ այլ արմատի տարբերակից (որն, ի դեպ, չի նշվում). «Թերևս բնիկ հնդեվրոպական՝ \*pneu- «շնչել, հևալ» արմատի տարբերակային ձևից. հմմտ. հուն. πνεῖω «փչել, շնչել, ֆսֆսացնել», πνοή «քամի, շունչ», հիսլ. inysa «փնչալ» [*Չահուկյան*, 2010, էջ 461]:

Նման երկակիությունը և թեական բացատրությունը հիմք են տալիս բառի ծագումը բխեցնելու այլ արմատից (հմմտ. հայ. *հունչք* «ձայն» բառի՝ «Նոր հայկազյան բառարանի» առաջարկած *հինչք* տարբերակը): Թերևս անհավանական չի կարելի համարել այն, որ *հինհնամ*/*հինանամ* բառի *հի-* արմատը բխում է հե. \*H<sub>2</sub>- «փչել» ամատից:

11. Հայ. *հի* «շունչ» արմատն առանձին չունի Աճառյանը, և քանի որ այն հնարավոր է կապել *հիանդ* բառի հետ, ուստի կարելի է այն քննարկել այդ համատեքստում: Ըստ այսմ՝ *հիանդ* կազմությունը դիտվում է իբրև «անստույգ բառ»:

Չահուկյանը *հի-* արմատը հարցականով բխեցնում է հե.\*pep-*դ*-to- [\*pē(i)] ձևից, ընդ որում աղյուսակում պլյուս (+) նշանը դրվում է միայն հին հնդկերենում գուգահեռ ունենալու համար (առանց այդ գուգահեռ ձևը նշելու) [*Չահուկյան*, 1987, էջ 142]: Իսկ անդրադառնալով արմատի ծագման վերաբերյալ եղած փորձերին՝ գրում է հետևյալը. «*Հիանդ*-ի նախածևներից \*pēp-*դ*-to-ն վերականգնելու համար հիմք են ծառայել հինդկ. կրկնավոր pāpa- «չար», pāpmán «աղետ, վնաս, ցավ» ձևերը (ըստ Լևիի. հմմտ. Pok., 1, 793), \*pē<sub>2</sub>to-ի համար՝ Բրուգմանի \*p'unto- և Հյուբշմանի ճշտած \*pe<sub>2</sub>to- վերականգնումները [ՀԱԲ, 3<sup>2</sup>, 98. հմմտ. հուն. ἄ-πῆμαντος «ոչ հիվանդ»]: Թերևս կարելի է ենթադրել \*pēim<sub>2</sub>-to- նախածև, բայց լիովին պարզ չեն \*m > z անցման պայմանները: Աճառյանը [ՀԱԲ, 4<sup>2</sup>, 634-635] համենատուր է հուն. πόνος «աշխատանք, ջանք, գործ, ցավ, տանջանք» բառերի (փիս. բառի- Վ.Հ.) հետ՝ առանձ-

նացնելով այն \*(s)pen- «ձգել, լարել, հյուսել» արմատից, որ, սակայն, անհամոզիչ է» [*Չահուկյան*, 1987, էջ 185]:

Այնուհետև, ուշագրավ է Չահուկյանի հետևյալ դիտարկումը. «հ.-ե. \*p-ի դիմաց սովորական *h*-ի կողքին նաև *ψ* (<ph?)՝ *htp* (*htq*, *hhiանդ*) և *ψtp* «հեզ, խեղճ» [հ.-ե. \*pá(i)- «ցավեցնել, վնասել, արհամարհել»], *hnqh* «շունչ, ոգի» և *ψmք*, *ψչեմ* [հ.-ե. \*p(h)(e)u- «փչել, սառեցնել»]» [*Չահուկյան*, 1987, էջ 253]:

Հետագայում *hhiանդ* բառի ստուգաբանությունը տրվում է հետևյալ ձևակերպմամբ. «Բնիկ հնդեվրոպական páprto- [\*pá(i)- «ցավեցնել, վնասել» արմատից. հմմտ. հինդկ. papa- «հիվանդ», լատ. paenūria «պակաս», թերևս նաև *htq*՝ հղելով Աճառյանի և Պոկոռնու բառարաններին, այլև իր «Հայոց լեզվի պատմություն» աշխատությանը [*Չահուկյան*, 2010, էջ 461]:

Եթե ընդունենք հայ. *հեւ* // *հիւ*- արմատական տարբերակայնությունը, որը հավանական է ոչ միայն իմաստային, այլև հնչյունական տեսանկյունից, ապա պետք է ծագած համարել ոչ թե հե. pēprto- [\*pē(i)- «ցավեցնել, վնասել», այլ հե. \*Hye(i)- «փչել» արմատից:

12. Հայ. *hnq* բառի համար Աճառյանը նախ՝ նշում է երկու կարգի իմաստ՝ «ցաւ, մտածութիւն, տրտմութիւն, վիշտ» և «խնամք, փոյթ, հոգատարութիւն», այնուհետև՝ համարում է ծագած հնիւ. \*rouo- արմատից, ընդ որում նշելով հետևյալը. «ցեղակիցները տե՛ս *հեւ* < հնիւ. \*peu- «փչել» արմատի տակ, որ ներկայացնում է նոյն բարձր (իմա՛ վերին – Վ.Հ.) աստիճանի ձայնդարձը: Նախնական իմաստը եղել է «ախ քաշել», որից էլ «ցաւ, վիշտ, տրտմութիւն», և յետոյ «ուրիշի համար ցաւիլ, խնամք, հոգատարութիւն»: Այսպէս է նաև ուրիշ լեզուների մէջ», և ավելացնում, որ «*հեւ* և *hnq*, ինչպէս նաև *hnqh* բառերի ձայնական յարաբերութիւնը ճիշտ ա՛յնպէս է, ինչպէս *արեւ* և *արեզ*, *կով* և *կոզի*» [*Աճառյան*, 1977, էջ 106-107]:

Այս բառին, այլև սրան ձևով և իմաստով այս կամ այն չափով առնչակից բառերին բավականին լայն ուշադրություն է դարձրել Չահուկյանը: Նա նախ՝ որոշակի կապ է տեսնում ոչ միայն հայ. *hnq(h)* «հոգի» և *hnվ* «հով, գով», այլև *hnվ* և *qnվ*

(\*q-hnq) բառերի միջև՝ գտնելով, որ դրանք ընդհանուր առմամբ ծագում են հե. \*rouo-, այլև \*rouio- [\*p(e)u-, \*phu-] արմատից [Äxäðéÿf, 1967, c. 89, 226, 240, 276, 305. *Ջահուկյան*, 1987, էջ 145, 231, 243, 270 և այլն]:

Հետագայում, ոչ անկախ Աճառյանից, հայ. *hnq* «հոգս, խնամք, հոգածություն», այլև *hnqh* (*nqh*) «հոգի, շունչ, ոգի, եռանդ ուրվական» բառերը ծագած են դիտվում միևնույն արմատից, սակայն նկատելի է այն, որ *hnq*-ի դեպքում նշվում է՝ «թերևս բնիկ հնդեվրոպական՝ \*rouio- [\*pəu-, \*pau-] «փչել» արմատից, որտեղից նաև *hnq*, *hnqh*, *փուքս*, *փչել*: Աճ. ՀԱԲ 3, 105-107», իսկ *hnqh*-ի դեպքում՝ «բնիկ հնդեվրոպական՝ \*rouio- [\*pəu-, \*pau-] «փչել, ուռչել» արմատից, հմմտ. հայ. *հեւ*, *փուքս*, *փչել*, հինդկ. p(h)uphusu- «թոք», լատ. pussula «պղպջակ», ռուս. і́оді́одü «ուռչել»: Աճ. ՀԱԲ 3, 107-108» [*Ջահուկյան*, 2010, էջ 464]:

Կարելի է մտածել, որ հայ. *hnq*- «ցավ, մտածություն, տրտմություն, վիշտ» և «խնամք, փույթ, հոգատարություն» արմատը ավելի հավանական է ծագած համարել հե. <\*Hue/ont<sup>[h]</sup>- «հով անել, փչել» ձևից, որ ավելի իրական է ոչ միայն հնչյունական առումով, այլև իմաստի տեսակետից (հմմտ. *hnqեմ* «հով եմ անում, փչում եմ»):

13. Հայ. *hnqh* «հոգի» (բուն իմաստով), «անձ, մարդ, շունչ, սատանա, սիրտ, կյանք, կենդանություն» (փոխաբերական իմաստով) բառի համար «Նոր հայկազյան բառարանը» նշում է «արմատ բառիցս *hnqh*, *շոզի*, *հազազ*, *ոզել*, *հոզալ*, լծորդ՝ ոյծ» [*Աւետիքեան, Միրմէլեան, Աւգերեան*, 1837, էջ 113, 503]: Ըստ Պետերմանի՝ լծորդ են *hnqh* և *շոզի* բառերը (հմմտ. *հազանել/զզենուլ*, *հով/զով*) [*Petermann*, 1837, p. 62]: Տերվիշյանը գտնում է, որ առնչակից են *սփոփել* և *փոփոզել*, իսկ *hnqh*-ն *փոփոզել*-ի ոչ կրկնավոր ձևն է՝ իբրև *փոզի*, որից *hnqh* և այլն [*Տերվիշեան*, 1885, էջ 46, 93]:

Ըստ Աճառյանի՝ «բնիկ հայ բառ՝ հնիս. rouo- ձևից, որ ծագում է pəu- «փչել, շնչել» արմատից. ցեղակիցները տե՛ս *հեւ* և *hnqh* ձևերի տակ: Հոգի նշանակում է բուն «փչիւն, շունչ»: Նախնական մարդու համար «*hnqh*, *քամի*, *շունչ*, *օդ*, *փչիւն*»

մինչոյն գաղափարներն էին» (քերվում են բնագրային օրինակներ՝ Ս.Գիրք, Եզնիկ և այլն) [*Աճառյան* 1977, էջ 107-108]:

Այս դեպքում նույնպես հակված ենք կարծելու, որ բառը ծագում է հե. \*H<sub>2</sub>e/ont<sup>[h]</sup>- արմատից:

14. Հայ. *հովեմ* «հովահարել, զովացնել» բառը կա «Նոր հայկազյան բառարանում»՝ եզակի վկայությամբ. «հրեշտակ տեսան կայր մերձ, և *հովեր* զերեսս նորա» [*Աւետիքեան, Միրմէշեան, Աւգերեան*, 1837, էջ 123]<sup>7</sup>: Բայական այս ձևը Աճառյանը բերում է *հով* «ցուրտ, զով» արմատի տակ, Ջահուկյանը չի անդրադառնում այդ բառին: Բառի ստուգաբանությունը պատկանում է Աճառյանին, որ տրվում է հետևյալ կերպ. «Բնիկ հայ բառ՝ հնիս. \*rou- «փչել, փչիւն» արմատից, որի վրայ տե՛ս *հև, հոզ* և *հոզի*»: Այնուհետև իբրև «նախնական «փչումն» գաղափարից «ցուրտ, հով» գաղափարին անցնելու օրինակ», ոչ անկախ Պոկոռնուց, քերվում են համեմատելի զուգահեռներ՝ ավեստ. ao-ta-, հինդկ. ūdhar, ōman-, լիտվ. aũksts, իռլ. ūar և այլն, «որոնք բոլոր նշանակում են «ցուրտ, ցրտութիւն», բայց ծագում են հնիս. \*aue- «փչել» արմատից: Կարելի է սակայն ընդունիլ, թէ *հով* հին հայերէնի մէջ էլ ունէր «քամի» իմաստը, որ պահում են մինչև այժմ զանազան գաւառականներ» [*Աճառյան*, 1977, էջ 116]:

Գամկրելիձեն և Իվանովն ունեն *հովեմ* «փչել, հով անել, զովացնել» բայը, որը բխեցվում է հե. \*H<sub>2</sub>e/ont<sup>[h]</sup>- արմատից. հմմտ. խեթ. *huyant-* «քամի» (սեռ. հոլ. *huyandaš*, հոզն. ուղղ. հոլ. *huy-a-an-te-eš* ), լատ. *uentus* «քամի», գոթ. *winds*, հինդկ. *vāti* «փչում է»: Գտնում են, որ հուն. ἄνεμος «փչում է», ἄελλα «քամի», «փոթորիկ» ձևերի նախահար (պրոթեսիկ) ձայնավորի առկայությունը թույլ է տալիս ենթադրելու այդ դիրքում վանկարար «կոկորդային» այլահնչակ (ալլոֆոն) \*H-ի հնարավորություն, իսկ ոչ վանկարար «կոկորդայինի» նույնպիսի դիրքը (\*H<sub>2</sub>e-) արտացոլված է խեթ. *hues-* «ապրել, գոյություն ունենալ» (եզ. 3-րդ դեմք *h<sub>2</sub>e-eš-zi* «ապրում է, գոյություն ունի»),

<sup>7</sup> Կա մեկ այլ վկայություն, որում գործածված *հովեսու*-ը բնագրային ուղղման է առնվում՝ «թուի գրելի է *հոժեսու*»:

հլեճոս- «վերակենդանացնել», «թողնել. ապրեցնել» ձևերում. հմմտ. հինդկ. *vásati*, գոթ. *wisan* «լինել, գոյություն ունենալ», հուն. *ἰάω*, ներկա ժամ., աոր. *ἴσθαι* «գիշերն անցկացնել. գիշերել», «քնել» (հմմտ. հայ. *գիշերել* «գիշերն անցկացնել» ?) [*Āāi ēdāēēāçā*, *Ēāāīīā*, 1984, c. 206]:

Այնուհետև, նկատենք, որ հեղինակները գտնում են, որ «H «կոկորդային» հնչույթը նախորդող դիրքում՝ ք ձայնորդից առաջ հանդես է եկել, ըստ երևույթին, իր ոչ վանկարար տարբերակով՝ արտացոլված խեթերենում *h*-ի տեսքով, սակայն անհետացած մյուս բարբառներում» [*Āāi ēdāēēāçā*, *Ēāāīīā*, 1984, cc. 206]: Ըստ այդմ, հայ. *հովեմ*-ի *h*-ն կամ չի համարվում «կոկորդային» հնչույթի արտացոլում (ինչպես խեթ. *huyant*-«քամի», սեռ. հոլ. *huyandaš*, հոգն. ուղղ. հոլ. *huy-a-an-te-eš*), կամ էլ հետագա՝ հայերենի ինքնուրույն զարգացման ընթացքում ձեռքբերում է, որն առանձին քննության խնդիր է:

15. Հայ. *հունչ(ք)* «ձայն» բառի մեկնությունը, «Նոր հայկազյան բառարանի» առաջարկած *հինչ(ք)* տարբերակի բնագրային ոչ այնքան հիմնավոր ճշգրտմամբ հանդերձ [*Աւետիքեան, Միւրսէլեան, Աւգերեան*, 1837, էջ 124], տվել է Աճառյանը, որը ստացել է հետևյալ ձևակերպումը. «Բնածայն բառ. կազմուած է *h* ձայնից. արմատի համար հմմտ. *հաչել, հոչակ, հոնչիւն, հառաչել, հոնդիւն*, իսկ ձևի համար հմմտ. *շնչել, բնչել, գնչել, կնչել, պնչել, փնչել, մնչել, խնչել*, բոլորն էլ աճած *ն, չ* մասնիկներով» [*Աճառյան*, 1977, էջ 96, 123-124]:

Չափուկյանը նախ՝ գտնում է, որ հայ. *հազազ* (կրկն. \**հազ-հազ*) բառը ծագում է հե. \**ay-* «փչել, քամհարել, շնչել» արմատից (նշվում են զուգահեռ ձևեր ցեղակից լեզուներից, ընդամին հկիմր. *awyð* «քամու ուժեղ պոռթկում»), հմմտ. հայ. *հով* «քամի. հով, գով», *հոզի* «շունչ» (հնարավոր է նաև *շոզի* «գոլորշի». *հունչ* «ձայն» և *շունչ* «շնչելը»), «որ սովորաբար բխեցնում են \**rou-*, \**rouiŋo*» [*Āæððéýí*, 1967, c. 240]: Հետագայում *հունչ*-ը (հարցականով) ծագած է համարում հե. \**son-* (\**sun*?) [\**s*(*u*)*en-*] արմատից, իսկ ավելի ուշ՝ վերադառնալով Աճառյանի տեսակետին, այն դիտվում է «բնածայն կազմություն» [*Չափուկյան*, 1987, էջ 152, 218]:

Այս արմատը, հավանաբար, համեմատելի է վալլ. *gwynt* «քամի» (< հե. \*H<sub>2</sub>- «փչել»); հինդկ. *vāti* «փչել», ավեստ. *vāiti*, հուն. ἄησι, գոթ. *waian* «փչել», հվգերմ. *wāen*, գերմ. *wehen*, հայլավ. *vējati* և այլ ձևերի հետ:

Ընդ որում՝ այս արմատից է դիտվում՝ հե.\*H<sub>2</sub>e(1)- «թռչուն» [կոնկրետ՝ «արծիվ»]. հմմտ. խեթ. *haraš*<sup>MUŠEN</sup> «արծիվ»<sup>8</sup>, ռուս. *î ḏāē* «արծիվ», լիտվ. *erilis* «արծիվ», գոթ. *ara* «արծիվ», հմմտ. հայ. (*h*)*wi-p* «թռչուն»], այլև հե. \*H<sub>2</sub>ent[h]- «քամի. փոթորիկ». հմմտ. խեթ. *huyant* «քամի», թոխ. *U want, wānt* «քամի», Բ *yente* «քամի», լատ. *uentus* «քամի», վալլ. *gwynt* «քամի», գոթ. *winds* «քամի», հրգերմ. *wint* (գերմ. *Wind*), հանգլ. *wind* [*Āāi ē-ḏāēēāçā, Ēāāi ī ā*, 1984, c. 489, 537, 677]:

16. Հայ. *շոգ* «տաքություն, տոթ» (որից *շոգի*), ըստ Աճառյանի՝ «անստոյգ բառ» է, և միաժամանակ նշվում է հետևյալը. «*Շոգ* և *շոգի* բառերի նշանակութանց զարգացման համար հմմտ. *գոլ* և *գոլորշի*», այլև չի ընդունում ո՛չ Հ. Պեդերսենի դիտարկումը *շնչել* և *հոգի* բառերի հնարավոր կապի մասին, ո՛չ էլ Է. Լիդենի նկատառումը *հոգի* բառից *շոգի* դուրս բերելու վերաբերյալ (հմմտ. *հունչ* > *շունչ*) [*Աճառյան*, 1977, էջ 528. հմմտ. *Āæððēyī*, 1967, c. 240]:

Ջահուկյանը նախկինում գտնում էր, որ հայ. *շոգ* «շոգ» բառը ծագում է հե. \*k<sub>2</sub>eu-k- «լույս տալ, վառվել» (\*k<sub>2</sub>eu- «լույս տալ. լուսավոր», եթե ոչ՝ հե. \*k<sub>2</sub>uo-gh- արմատից). հմմտ. հինդկ. *sōcati, sūcyati* «լույս է տալիս, փայլում է, վառվում է, կիզում է», *śocáyati* «բռնկում է, վշտացնում է», *śuci-* «լուսավոր, փայլուն, մաքուր», ավեստ. *saočint* «այրող, տաք», *ātra-saoka* «խամձող», նպրսկ. *soxtan* «այրել, վառել», *šōg* «սուգ, վիշտ» (<հայ. *սուգ* «սուգ, վիշտ») և այլն [*Āæððēyī*, 1967, c. 195]:

Իսկ հետագայում բառի ծագմանն անդրադառնում է որոշակի վերապահությամբ. «թերևս բնիկ հնդեվրոպական՝ \*k<sub>2</sub>uogh [\*k<sub>2</sub>eu-] «լուսավորել, լուսավոր» արմատից, որից նաև *շոք, շոռ, նշոյ*» [*Ջահուկյան*, 2010, էջ 591]:

<sup>8</sup> Հմմտ. հայ. *խորդ* // *խորթ* «կռունկ»: Ջահուկյանը նշում է՝ «թերևս բնաձայն բառ՝ կապված *խորդալ* բնաձայն բայի հետ» [*Ջահուկյան*, 2010, էջ 344]:

Նկատենք, որ այստեղ լծորդվում են նաև հայ. *շուք, շող, նշող* բառերը, իսկ նախկինում՝ միայն *սուգ* բառը, որն առաձին հարց է բառային միավորների ամբողջ խմբի ընդհանուր իմաստային և ծագումնային քննության համար:

17. Հայ. *շունչ* «շնչառություն, ոգի, հոգի» բառն, ըստ Ջահուկյանի նախկին ստուգաբանության, ծագում է < հե. \*kʷonkio- (<\*kʷ-/\*kʷeu-, որից էլ՝ \*kʷes-/\*kʷus- «հևալ, մշմշալ, ախ քաշել») նախաձևից. հմմտ. լիտվ. šv-añkšti «շնչել, մշմշալ, հևալ», ընդ որում տողատակում արվում է հետևյալ դիտարկումը. «Թերևս հնարավոր է նաև \*kɫ > g անցում (հմմտ. *քանցեմ* «տանջել, լկել, տվայտել» <\*kɫkiō <\*kenk «այրել, ցավ պատճառել», որից՝ լիտվ. kankà «ցավ, տանջանք», kankinti «տանջել, լկել, ցավ պատճառել», keñkti «վնասել, վնաս տալ» և այլն) [*Āxàðêjŷ*, 1967, c. 172]:

Նույնը գտնում ենք հետագայում, սակայն մեկ էական լրացումով, այն է՝ հե. \*kʷes-/\*kʷus- «հևալ, մշմշալ, ախ քաշել» ընդհանուր արմատի \*kʷeu-lo- (հարցականով) տարբերակից է բխեցվում հայ. *սող* (*սուլեմ* «սուլել, շվշվացնել») ձևը, որը գուցա հեռներ ունի ցեղակից լեզուներից մեկ-երկուսում [*Ջահուկյան*, 1987, էջ 133. հմմտ. *Pokorny*, 1959, p. 632]:

Իսկ ավելի ուշ բառի ստուգաբանությունը տրվում է թեականով, ոչ հնդեվրոպական հիմքի վրա՝ նշելով «թերևս բնաձայնական կազմություն», հղելով Աճառյանին և ավելացնելով, որ Պոկորնին «բխեցնում է \*kʷonkio-նախաձևից» [*Ջահուկյան*, 2010, էջ 594. հմմտ. *Pokorny*, 1959, p. 631-632]:

Այս դեպքում, եթե *h//z* լծորդությամբ տարբերակներ ենք դիտում հայ. *հոգի//շոգի, հունչ//շունչ* բառերը, որ իմաստով (բովանդակության պլանում) միանգամայն արժանահավատ է, ապա *շունչ* բառը պետք է ծագած համարել հնդեվրոպական այն նույն արմատից, որից ունենք *հունչ* բառը (տե՛ս վերը):

18. Հայ. *ոգել* «խոսել, երգել, նվագել» բառը ըստ Եր. Մեդրեցու բառարանի՝ ունի «ասել» իմաստը, որից՝ *ոգելական* «բարբառական») [*Բարբառաբան*, 1975, էջ 253]:

Աճառյանը համարում է «անստոյգ բառ», թեև բերում է նախորդ ուսումնասիրողների ոչ պակաս ուշադրության ար-



ժանի մեկնության փորձերը, որոնցից ավելի հավանական կարելի է համարել այն, որ «Նոր հայկազյան բառարանը» այն բխեցնում է հայ. *հազազ* կամ *ոզի* բառից [*Աւետիքեան, Միրմէլեան, Աւգերեան*, 1837, էջ 502]:

Իսկ ըստ Տերվիշյանի՝ կապ ունի մի կողմից՝ *վանկ//վանգ, գոչել (գոզցես, գոզջիր)*, մյուս կողմից՝ *հեզել, հազազ (\*հազ-հազ)*, այլև *ոզել, ոզեղ* (հմմտ. *ոզեղաբարբառ*) բառերի հետ (եթե բացառվի վերջիններին՝ սեմականի հետ առնչություն ունենալը)՝ այն ծագած համարելով հնիս. \*vak- «գոչել, խոսել» արմատից. հմմտ. սանս. vač, լատ. vocāre «կանչել, ձայնել», vox «կոչ, ձայն», հուն. εἶπον (<\*ἔπο) «ասել, խոսել», ὄψ, ὄπος «ձայն, խոսք», պրսկ. āvāz, bānik (տե՛ս նաև վերը) [*Աճառյան*, 1977, 3, 549. *Տերվիշյան*, 1885, 105]<sup>9</sup>:

Իսկ Ջահուկյանը, ոչ անկախ Պոկոռնուց, գտնում է, որ հայ. *ոզել* «ասել, խոսել, երգել, նվագել» բառը ծագում է հե. \*yog<sup>h</sup>- (\*yeg<sup>h</sup>) «հանդիսավոր կերպով խոսել» արմատից. հմմտ. հինդկ. vāghát «աղոթավոր, ուխտավոր», լատ. voveō (< vovēre) «ուխտել», սօտում. uōtum «ուխտ, երդում», *ոզ* «ասա՛, ասել» [*Ջահուկյան*, 2010, էջ 599. հմմտ. *Pokorny*, 1959, pp. 348]<sup>10</sup>:

Գամկրելիձեն և Իվանովը գտնում են, որ հե. \*Hueg<sup>[h]o</sup>- արմատից է ծագում ոչ միայն հայ. *ոզ* «ասա՛, խոսի՛ր» (հմմտ. խեթ. hūek- «աղոթել, կախարդել», «աղոթք անել՝ ասել», այլև հինդկ. vāghát «աղոթք արած», լատ. uoueō «խոսք եմ տալիս, խոստանում եմ», սօտում. uōtum «ուխտ, խոստում», ումբր. bufetes «պահանջ, ցանկություն») բայաձևը, այլև նույն արմատի մյուս՝ ածանցի գրո ձայնավորմամբ \*Hue-g<sup>[h]o</sup>-

<sup>9</sup> Անհավանական չէ համեմատության մեջ դնել նաև հայ. *յոյզ* «վեգ, խաղալու կոճ» բառը, մանավանդ որ իրանական փոխառություն են ոչ միայն *վեճ* «վեճ, խոսքակռիվ (հմմտ. *բանավեճ*)» և *վեգ* «վեճ, կռիվ» բառերը (հմմտ. ավեստ. vaēya «հարված, զարկ»), այլև *վեգ* «վեգ, կոճ, ճան» (եթե ոչ նաև *վեժ* «վիժում, թափվելը, արտահոսք») բառերը [հմմտ. *Ջահուկյան*, 2010, էջ 710]:

<sup>10</sup> Անհավանական չէ այս նույն արմատից ծագած համարել նաև *ոզոչել* «գոռալ, դոփել», *ոզոզել* (նաև *ոյոզել*) «վրեժ ունենալ, նախանձել» բառերը, այլև դրանք միացնել *ոզորիլ* «կռվել, մարտնչել, դիմակայել» բային, որն իր հերթին դիտվում է «անհայտ ծագման»:

տարբերակից՝ *յուզեմ* «փնտրել, խնդրել» [հմմտ. խեթ. *յուկ*-  
(նույնը), այլև մյուս լեզուների տվյալները] բայը  
[*Āāi ēdāēēāçā, Êāāī ī ā*, 1984, с. 236, 803]:

Այնուհետև, եթե նկատի ունենանք մի կողմից՝ *նզել* «խոսել, երգել, նվագել» բառի հետ սանս. *vač*, այլև ավեստ. *vaāya* «հարված, զարկ» հնարավոր առնչությունը, այլև եթե հաշվի առնենք հայ. *վեզ* «վեգ, կոճ, ճան» բառի խաղաքար («մի տեսակ խաղի միջոց») լինելու գործառական կողմը՝ լեզուն կրողների ավանդական պատկերացումներում, մյուս կողմից՝ *յոյզ* «վեգ, (խաղալու) կոճ», *յոյզ* (*յուզեմ* «փնտրում եմ», «որոնում եմ»)/*ուզեմ* (*\*ոյզ*) «ուզում եմ»<sup>11</sup> բառերը, ապա այս խմբի միավորների իմաստային (քովանդակության պլանի) ընդհանրությունը միանգամայն պարզ է և հավաստի<sup>12</sup>:

---

<sup>11</sup> Ըստ «Նոր հայկազյան բառարանի»՝ «*ուզել*, բառ ռամկական՝ առեալ ի գրատրէս *յուզել*, իբր խնդրել, այսինքն՝ կամիլ, պահանջել, և որոնել» [*Աւետիքեան, Միւրմէլեան, Աւգերեան*, 1837, էջ 539]:

<sup>12</sup> Չսահուկյանը գտնում է, որ իրանական փոխառություն են ոչ միայն *վեժ* «վեճ, խոսքակռիվ» (հմմտ. *քանավեժ*) և *վեզ* «վեճ, կռիվ» բառերը (հմմտ. ավեստ. *vaēya* «հարված, զարկ»), այլև *վեզ* «վեգ, կոճ, ճան» (եթե ոչ նաև *վեժ* «վիժում, թափվելը, արտահոսք») բառը, որի (որոնց) «բուն աղբյուրը (իրանական<sup>օ</sup>) չի հաստատված», այլև *յոյզ* «վեգ», որ թեականով դիտվում է «*վեզ* բառի տարբերակային մի ձև» [հմմտ. *Չսահուկյան*, 2010, էջ 554, 710, *Միւրմէլեան*, 2008, էջ 3-6]:

**ՀԱՅԵՐԵՆԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԸՆԴԳՐԿՈՒՄԸ ՆՈՍՏՐԱՏԻԿ  
ԼԵԶՈՒՆԵՐԻ ՀԱՄԵՍԱՏԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆԻ ՄԵՋ ԵՎ  
ՀԵՏԱԳԱ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ**

Լեզուների հեռավոր ցեղակցության հարցը ոչ պակաս չափով եղել է պատմահամեմատական, մանավանդ համեմատական-տիպաբանական լեզվաբանության մասնագետների ուշադրության կենտրոնում, թեև այն ավելի բուռն ձևով երևան է գալիս միայն 20-րդ դ. կեսերից հետո, որը շարունակվում է մեր օրերում:

Այդ հարցը արժարժվել է «լեզվաընտանիքների» միջև մեծ մասամբ բառային, մասամբ նաև ձևային հարաբերակցության բացահայտման նպատակով: Ներկայումս խոսվում է, այսպես կոչված, «մեծ ընտանիքների» (մակրոընտանիքների) մասին: Տարբերում են *արևելանոստրատիկ* (ուրալյան, դրավիդյան, ալթայյան) և *արևմտանոստրատիկ* (աֆրասիական, հնդեվրոպական, քարթվելական) լեզուներ: Սրանից բացի առաջարկվում են նաև այլ «մեծ ընտանիքներ» (մակրոընտանիքներ)՝ *պալեոեվրասիական (չինկոլկասյան)*, որ ներառում է չինտիբեթական, հյուսիսկոլկասյան (նախյան-դաղստանյան, արխագադղեանական, խուռաուրարտական) լեզուները, իսպերենը (իսպերենի ենթաշերտ լեզուն), ենիսեյան լեզուները (եթե ոչ նաև բասկերենը և բուրուշասկի լեզուն), և *ամերինդկական (հնդկացիական)*, որ ընդգրկում է Ամերիկայի բնիկների լեզուները՝ բացառությամբ էսկիմոսալեուտյան լեզուների:

Այսպես, եթե մի կողմ թողնենք հեռավոր ցեղակցության գաղափարի առաջաշումը՝ ուրալալթայյան, հնդեվրոպական կամ աֆրասիական լեզուների տվյալներով (Հ. Պեդերսեն, հետագայում նաև ուրիշներ), այլև առհասարակ միմյանց նկատմամբ աշխարհի լեզուների այս կամ այն չափով ցեղակցության դրսևորման գաղափարի առաջադրումը (Ա. Տրոմբետի և ուրիշներ), ապա այս բնագավառում հայտնի են նաև այնպիսի ուսումնասիրություններ, որոնցում քննության առարկան են լի-

նում մի կողմից՝ հնդեվրոպական, իսկ մյուս կողմից՝ սեմական (Հ. Մյուլեր, Ա. Կյունի և ուրիշներ), ուրալյան (ֆիննաուգրական) (Բ. Կոլինդեր և ուրիշներ), քարթվելական (Ֆ. Բուպ և ուրիշներ), խոռատուրարտական, այլև կովկասյան (Հ. Պեդերսեն, Գ. Բ. Ջահուկյան, Ա. Ֆուռնե և Ա. Ռ. Բոմհարդ և ուրիշներ), ուրալյան և թյուրքական (Օ. Մովաժո, Ա.Մ.Օ. Ռյասայանեն և ուրիշներ) և այլ տիպի լեզուների երևույթներ:

Լեզվական նյութի համեմատությունը կատարվում է մեծ մասամբ հնչյունաբանության և արմատաբանության, մասամբ նաև քերականության մակարդակում՝ առավել ուշադրության առարկա դարձնելով հնչյունական համակարգը և արմատի կառուցվածքը (ձևությային կազմը):

Հ. Պեդերսենը, ի տարբերություն նախորդ ուսումնասիրողների, առաջին անգամ (1903 թ.) առաջ է քաշում ոչ թե երկու, այլ մի քանի լեզվաընտանիքի լեզուների ուսումնասիրության գաղափարը՝ մասնավորապես նկատի ունենալով ուրալալթալյան, հնդեվրոպական, աֆրասիական լեզվաընտանիքի լեզուները: Ըստ այսմ հիմք է դրվում բառի բուն իմաստով լեզուների ուսումնասիրության նոստրատիկ տեսությանը [տե՛ս *Pedersen, 1903*]:

Անցյալ դ. 60-ական թթ. ռուս տաղանդավոր լեզվաբան Վ. Մ. Իլիչ-Սվիտիչը նպատակ է դնում վերականգնելու նոստրատիկ նախալեզուն, որն անշուշտ գիտական մեծ էրուդիցիայի վկայություն է: Այնուհետև, նա կազմում է սեմաքամյան (սեմ.-քամ.), քարթվելական (քարթվ.), հնդեվրոպական (հե.), ուրալյան (ուրալ.), դրավիդյան (դրավ.) և ալթայան (ալթ.) լեզուների բառային (բառարմատային), ինչպես նաև ձևությային (բառաձևային) միավորների համեմատական քարտարանը [*Ēëëè÷-Ñâèòú÷, 1967, c. 321-374, այլև 1968*]: Եվ վերջինիս տվյալների օգտագործմամբ նա գրեց իր հայտնի աշխատությունը՝ նվիրված հնդեվրոպական և սեմական լեզուների շփումներին, որն ունեցավ բացառիկ նշանակություն այդ բնագավառում հետագա ուսումնասիրությունների ձեռնամուխ լինելու տեսանկ-

յունից [*Ēēēē--NāēōŪ*, 1964]<sup>13</sup>:

Իսկ ավելի ուշ լույս է տեսնում հեղինակի համեմատական բառարանը (երկու հատորով, միասին՝ 297 էջ, չհաշված ցանկերը) [տե՛ս *Ēēēē--NāēōŪ*, 1971, այլև 1976]:

Մեր հաշվումներով՝ բառարանի երկու հատորում տեղ գտած 353 բառահոդվածից 175-ի դեպքում կարելի է առանձնացնել հայերենի գուգահեռներ: Վերջիններիս որոշակի մասը, ոչ անկախ Յ.Պոկոռնու բառարանից, ընդգրկված է ինչպես հեղինակի, այնպես էլ գրքի հատորների լույս ընծայման վրա աշխատած գիտական կոլեկտիվի ջանքերով, որն էլ ժամանակին քննված և լրացված է Գ. Ջահուկյանի կողմից [*Ջահուկյան, 1987, 69-72*]:

Հետագայում հեղինակի քարտարանի հիման վրա պատրաստվում է 3-րդ հատորը, որը պարունակում է 25 բառահոդված (101 էջ, չհաշված ցանկերը) [տե՛ս *Ēēēē--NāēōŪ*, 1984, Ը.136]: Դրանցից առնվազն 12-ի դեպքում ևս հնարավոր է բերել հայերեն գուգահեռներ:

Բառարանի առաջին երկու հատորի հայերեն նյութը, ինչպես նշեցինք, տեղ է գտել Գ. Ջահուկյանի աշխատություններից երկուսում [տե՛ս *Ā.Ā.Āæðōēŷ*, 1972. *Ջահուկյան 1987*]: Իսկ 3-րդ հատորինը, թեև այն լույս է տեսել 1984 թ., դուրս է մնացել<sup>14</sup>:

Այս ամենով հանդերձ, կարծում ենք, որ հնարավոր է կատարել նոր հավելումներ, որոշ ճշգրտումներ, մանավանդ եթե նկատի ենք ունենում հայերենի բառապաշարի այն մասը, որը կա՛ն առհասարակ չկա հրապարակի վրա եղած համապատասխան բառարաններում, կա՛ն գտնում ենք հայերենի բարբառներում:

Սույն աշխատանքում անդրադառնում ենք Իլիչ-Սվիտիչի «Ստուգաբանական բառարանի» այն բառահոդվածներին,

---

<sup>13</sup> Ա.Դոլգոպոլսկու, Ա.Բոմհարդի և ուրիշների նույն բնույթի աշխատանքներին անդրադառնալու ենք հետագայում՝ առանձին:

<sup>14</sup> Նկատի ունենք հեղինակի «Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան» (Երևան, 1987) գիրքը, որի գրականության ցանկում նշվում են Իլիչ-Սվիտիչի աշխատության միայն 1-2-րդ հատորները:

որոնցում այս կամ այն կերպ տեղ են գտել հայերենի տվյալները՝ իբրև հե. ցեղակցության մի լեզվի համեմատելի միավորներ, ընդ որում ավելացնելով 3-րդ հատորի նյութերը: Այնուհետև, դրանք փորձել ենք լրացնել հայերենի նոր տվյալներով: Նման բնույթի համեմատաբար ամբողջական քննություն մինչև այժմ չի կատարվել մեզանում առհասարակ, մասնավորապես հայոց լեզվի նախագրային շրջանի պատմությանը, ինչպես նաև համեմատական-տիպաբանական քննությանը նվիրված աշխատություններում:

Ուստի առանձին հարց է այն, թե ինչպիսի լրացումներ կարելի է կատարել հայերենի նյութի հետ կապված՝ նկատի ունենալով վերջինիս ոչ միայն ընդհանուր գրական տարբերակը, այլև բարբառները:

Մույն բառարանում հնդեվրոպական լեզուների, ընդամին նաև հայերենի տվյալները, ինչպես նշեցինք, հիմնականում վերցված են Յ. Պոկոռնու ստուգաբանական բառարանից: Սա նշանակում է, որ այստեղ նույնպես հայերեն շատ բառեր կամ արմատներ քննության են առնված գիտության այն մակարդակով, որ ուներ համեմատական լեզվաբանությունը մինչև անցյալ դարի 50-60-ական թվականները: Իսկ դրանից հետո այդ բնագավառում, ինչպես հայտնի է, շատ բան է փոխվել՝ շնորհիվ գիտական նոր ձեռքբերումների, տարբեր կարգի վերանայումների, լրացումների, ճշգրտումների և այլն:

Տվյալ դեպքում հաշվի ենք առել նաև նորագույն տվյալները:

Ըստ այդմ առաջ են գալիս նոր խնդիրներ՝ կապված ոչ միայն լեզվական նյութի մակարդակային քննության, այլև վերջինիս հիմքում դրվելիք սկզբունքների և մոտեցումների մշակման և կիրառման հետ: Ուստի նախ՝ կատարում ենք արմատաբանական վերլուծություն՝ համեմատության եզր ընդունելով Իլիչ-Սվիտիչի կողմից վերականգնված նոստրատիկ նախաձևը (*նոստր.* նշումով), այնուհետև՝ հղում ենք վերջինիս բառարանին և Գ. Ջահուկյանի աշխատություններին: Եթե հղումը տրվում է միայն Իլիչ-Սվիտիչի բառարանին, նշանակում է, որ գործ ունենք հայերենի նյութի լրացուցիչ ընդգրկման հետ:

Ստորև անդրադառնում ենք նոստրատիկ բառարանի այն բառահոդվածներին, որոնցում տեղ են գտել նաև հայերենի տվյալները, և ըստ այդմ կարելի է անել որոշ լրացումներ և ճշգրտումներ<sup>15</sup>:

1. Նոստր. baHli «վերք, ցավ» (°). հե. bhehl- «վերք, ցավ» ~ այթ. [bāli «վերք»] (°) [*Ēëëë÷-ÑâêðÛ÷*, 1971, c. 74-175]: Հմմտ. հայ. *բող-ջ* «վերք. պալար», (բրբռ.) *բող-ջ-ոց* «վերք. պալար», *բող-ջ-ոցվիլ* «վրան վերքեր դուրս տալ» և այլն:

5. Նոստր. balqa «շողալ, փայլել». սեմ.-քամ. brq «փայլել. կայծակ» ~ քարթվ. berçq- «շողալ, փայլատակել» ~ հե. bhelg- / bhleg- «շողշողալ, փայլել» ~ այթ. [balk□- «շողալ, փայլատակել»] [*Ēëëë÷-ÑâêðÛ÷*, 1971, c. 174-175]: Հմմտ. հայ. *փայլ-ել* «լույս տալ, ճառագել», այլև (բրբռ.) *բլ-խտ-ալ* «(ուժեղ) փայլել. փայլատակել, բռնկվել», *փիլ-կստալ* «փայլել, փայլփլել»:

7. Նոստր. bara «մեծ. լավ». հե. bher- «լավ. մեծ» ~ ուրալ. para «լավ» ~ դրավ. [par- «մեծ»] ~ այթայ. [bara «շատ»]: Հմմտ. հայ. *բար-ի* «լավ», *բարոտք* «հարմար, բարվոք» (*ար* <\*r) [*Ēëëë÷-ÑâêðÛ÷*, 1971, c.175-178. հմմտ. *Չահուկյան*, 1987, էջ 72]<sup>16</sup>:

8. Նոստր. bari «վերցնել». սեմ.-քամ. br «բռնել, որսալ» ~ հե. bher- «վերցնել, բերել, կրել» ~ դրավ. per- «ի մի բերել, հա-

<sup>15</sup> Բառահոդվածների սկզբում պահպանում ենք հիշյալ բառարանի համարակալումը՝ բառարանագրական ընդհանուր կարգը չխախտելու նպատակով:

<sup>16</sup> Իլիչ-Սվիտիչը տարբերում է ոչ միայն հե. \*bher- «լավ, մեծ» (> հայ. *բարի* «լավ», *բարոտք* «հարմար, բարվոք») [նոստր. bara «մեծ, լավ»] և հե. \*bher- «վերցնել, կրել, բերել» (> հայ. *բերեմ* «բերել, կրել») [նոստր. bari «վերցնել»] (հմմտ. *Չահուկյան*, 1987, 72), այլև հե. \*bher- «երեխա. գավակ» (> հայ. *բեր*. հմմտ. (հուն. φέρμα «պտուղ») [նոստր. bεrλ «երեխա. գավակ»] [*Ēëëë÷-ÑâêðÛ÷*, 1971, cc. 175-77, 194-95]: Նոստրատիկ համեմատությունը հնարավորություն է տալիս առանձնացնելու հե. ծագում ոչ միայն հայ. *բեր* «գավակ, պտուղ» (նաև *բեր-ք* «արդյունք, ծնունդ, բերք» և այլն), այլև *բար* «պտուղ, գավակ» (նաև *բար-իք* «արդյունք, ստացվածք, բարիք». հմմտ. *բերք ու բարիք* «ստացվածք, արգասիք» և այլն):

վաքել» (°) ~ այթ. bari- «(բռի մեջ) առնել»: Հմմտ. հայ. *բերել* «բերել, կրել» [*Ēëëë÷- NâêòÛ÷*, 1971, 176. հմմտ. *Ջահուկյան*, 1987, էջ 72, այլև 2010, էջ 125-26]:

9. Նոստր. berg(i) «բարձր». սեմ.-քամ. brg «բարձր» ~ քարթվ. brg-e «բարձր» (°) ~ հե. bhergh- / bhregh- «բարձր» ~ ուրալ. [p(e)r-/kʌ/ «բարձր»] ~ դրավ. pēř- «բարձր» (°): Հմմտ. հայ. *բարձ-ր* «բարձր», *բերձ* «(բարձրա)բերձ» [*Ēëëë÷- NâêòÛ÷*, 1971, c. 77. հմմտ. *Ջահուկյան*, 1987, էջ 72, այլև 2010, էջ 121, 126]:

11. Նոստր. biĈa «փոքր(իկ)». ուրալ. [piĈa «փոքր(իկ)»] ~ դրավ. pīc- / picc- «փոքր(իկ), կարճ» ~ այթ. biĉa «փոքր(իկ)» [*Ēëëë÷- NâêòÛ÷*, 1971, c. 178-179]: Հմմտ. հայ. *փոք-ր* «ոչ մեծ. փոքր», այլև (բրբռ.) *պիճ-իկ*, *պուճ-ուր* «փոքր(իկ). մանր(իկ)», թերևս նաև (բրբռ.) *փիճ-խա* «փոքր(իկ)», *փթ-խել* «մանրել, փշր(վ)ել», *փթթել* (<*փթիթ* <\**փիթ-փիթ-ել*) «բացվել, մաս-մաս լինել. ծաղկել», *փթուր* «մանր կտոր, փշուր» և այլն:

12. Նոստր. biĉʌ «կոտրել». սեմ.-քամ. bs- / bd- «կոտրել, մանրել» ~ քարթվ. bic- «կոտրել, բրդել» ~ հե. peis- «փշրել, ճգմել» ~ դրավ. pīc- «մանրել, կճպել, տրորել»: Հմմտ. հայ. *փուխ-ր*, *փխ-րուն* «մանր. նուրբ», *փշ-ուր* «կտոր, մանր(մաս)», *փս-որ* «մանր(ացած)»:

14. Նոստր. bilʌ «գոռալ». քարթվ. bir «երգել» ~ հե. bhel- «խոսել. մոնչալ, ոռնալ» ~ դրավ. piʌ- «բղավել. գոռալ»: Հմմտ. հայ. *բղ-ալել* «կանչել, գոռալ», թերևս նաև (բրբռ.) *բլ-բլ-ալ* «թոթովել, խոսել»:

16. Նոստր. bolʔi «աճել (բույսի համար ասված)». սեմ.-քամ. ʔbl «տերև, (աճած) բույս» ~ հե. bhelh- / bhleh- «բույս, տերև, ծաղիկ» ~ դրավ. [poli- «աճել, բուսնել»]: Հմմտ. հայ. *բող-բող* (<*բող-*) «ծիլ, ընձյուղ, սերունդ» (արմատի կրկն.), թերևս նաև (բրբռ.) *բող-ուն* (իմա՛ր *բողուն քշել* «հուռթի աճել») [*Ēëëë÷- NâêòÛ÷*, 1971, c. 181-182, այլև *Ջահուկյան*, 2010, էջ 134]:

17. Նոստր. bongä «հաստ. ուռչել, փքվել». հե. bhengh- «հաստ, պինդ» ~ ուրալ. puŋka / poŋka «հաստ. փքված» ~



դրավ. րօհֿկ- «փքվել, եռալ» ~ ալթ. [բօղԼ «հաստ, մեծ»]: Հմմտ. հայ. *բու՛ն-ք* (իմա՛ *հու՛նք ու բու՛նք* «ամբողջը. լրիվ եղածը»):

18. Նոստր. bor'a «գորշ, մուգ դարչնագույն». հե. bher-, bhe-bhru- (bhreu-) «գորշ, դարչնագույն» ~ ալթ. bor'a «մոխրագույն, գորշ»: Հմմտ. հայ. *բորբոս* (*բոր-բոս*. հմմտ. *բոր* և *բոս*) «մգլած. մգլոտություն»:

19. Նոստր. buHi «աճել. ծագել». հե. bheuH «աճել. լինել» ~ ուրալ. *բսԷ* «ծառ» ~ ալթ. *բնի* «լինել»: Հմմտ. հայ. *բուս-սնիք* (<*բոյ-ս*) «աճել, վերընձուղվել. բուսնել» [*Ēēēē÷- NâêĊŪ÷*, 1971, c. 184-185. հմմտ. *Ջահուկյան*, 1987, էջ 72, այլև 2010, էջ 135]:

21. Նոստր. bura «ծակել. շաղափել». սեմ.-քամ. b(w)r «շաղափել. քանդել. (բացված) անցք» ~ քարթվ. [br(u)- «պտտել. խաղացնել» (°)] ~ հե. bher- «շաղափել, փորել, քանդել» ~ ուրալ. *բուր* «գործիք (շաղափելու). շաղափել, ծակել» ~ դրավ. *բօր* «անցք. բացվածք» ~ ալթ. [bura- «պտտել, փորել»]: Հմմտ. հայ. *բիր* «փորիչ», *բրեմ* «քանդել, փորել», *բրիչ* «թոխր, թակուջակ», *բերան* «ուտելու անցք» [*Ēēēē÷- NâêĊŪ÷*, 1971, c. 186-187. հմմտ. *Ջահուկյան*, 1987, էջ 72, այլև 2010, էջ 126, 129]:

23. Նոստր. burԼ «ձյան (ավազի) փոթորիկ, բուք». սեմ.-քամ. bwr- «(ավազի) փոթորիկ, քամի» (°) ~ հե. bher- «փոթորիկ. փոթորկել» ~ ուրալ. *բուրԼ*- «պտտելով (ձյուն) բարձրացնել», *բուրԿԼ* «բուք, բորան» ~ ալթ. burԼ / bora «բուք, փոթորիկ»: Հմմտ. հայ. *բուռն* «ուժգին, սաստիկ. հախտուն» [*Ēēēē÷- NâêĊŪ÷*, 1971, c. 188-189]: Հմմտ. նաև *բու-ք* «ձյան սաստիկ քամի», *բոր-ան* (*բուք ու բորան*) «ձյունախառն փոթորիկ» (*ւր* տարբերակմամբ):

24. Նոստր. bur'a «եռալ, փոթորկել». սեմ.-քամ. br- «եռալ» (°) ~ հե. bhreu- «եռալ, փոթորկել» ~ ուրալ. *բուրԼ-բուրԿԼ* «փոթորկել, եռալ» ~ դրավ. [բուր- «եռալ»]: Հմմտ. հայ. *բրբրբալ* «եռալու ձայն հանել» (արմատի կրկնություն՝ *բ* աճականով), *բերևս* նաև *բրբրբալ* // *խրխրխալ* (նույնը) (°):

29. Նոստր. bԼHԼ (այլև bԼԼ'Լ) «փչել. ուռցնել». քարթվ. bēr- / bēl- «փչել. ուռցնել. (փչելով) բարձրացնել» ~ հե. bhelh-/

bhleh- «փչել. ուռցնել. բարձրանալ» [*Ēëëè÷-Ñâèòù÷*, 1971, c. 193-194. տե՛ս նաև էջ 193-ի տողատակի ծանոթագրությունը]: Հմմտ. հայ. (բրբռ.) *բլ-կ-նալ* «(լցվելով) ուռչել, բարձրանալ» [հուն. *φάλλος* (-λλ- <\*-ln-) «memb. vir.»] (<sup>o</sup>):

30. Նոստր. *blatā* «կապել, միացնել». սեմ.-քամ. *bnč* «կապել, փաթաթել» ~ հե. *bhendh-* «կապել. ագուցել» [*Ēëëè÷-Ñâèòù÷*, 1971, c. 194]: Հմմտ. հայ. *պինդ, պնդել* «ամուր. ամրացնել, կապել» [*Ջահուկյան*, 2010, էջ 637]:

32. Նոստր. *bera* «երեխա, մանուկ». սեմ.-քամ. [*\*bir/\*bin*] «երեխա, մանուկ» ~ քարթվ. [*ber-* «երեխա, մանուկ»] (<sup>o</sup>) ~ հե. *bher-* «երեխա, մանուկ»: Հմմտ. հայ. *բեր* (հուն. *φέρμα* «պտուղ») [*Ēëëè÷-Ñâèòù÷*, 1971, c. 194-195]: Այլև՝ *բեր-ել* «ծնել», *բեր-ք* «(երեխա՝ զավակ) բերելը, ունենալը. ծնունդ». (հմմտ. *բերքից ընկնել՝ կտրվել* «ծնելու ընդունակությունից զրկվել, անլանալ»)»<sup>17</sup>:

33. Նոստր. *calu* «ճեղքել. կիսել». սեմ.-քամ. *sl-* «ճեղքել. կիսել. սայր» ~ քարթվ. *cel-* «հնձել» ~ հե. (s)*kel-* «ճեղքել» ~ ուրալ. *sale-* «կիսել. ճեղքել» ~ դրավ. *cal-* «ճեղքել. կիսել» ~ ալթ. *čalu-* «կիսել»: Հմմտ. հայ. *ցելում* «ճղել, ճեղքել», *ցեղ* «մաս. տոհմ, ազգ» ( *g* < \*sk): Թերևս նաև՝ *ծիղ* «ոստ, մաս, բաժին», *ճեղ-ք* «արանք, բացվածք», (բրբռ.) *ճղել* «պատռել. գատել, առանձնացնել», *շեղք* «(դանակի) կտրող մաս», *շիղ/շիղ* (հմմտ. *ծիղ // ծիղ, ծեղ* «ծլել, բողբոջել») «ոստ, դալար ճյուղ» և այլն [*Ēëëè÷-Ñâèòù÷*, 1971, c. 195-197. հմմտ. *Ջահուկյան*, 1987, էջ 72, այլև 2010, էջ 491, 493-94]:

<sup>17</sup> Ի տարբերություն Յ.Պոկոռնու (տե՛ս *Pokorny*, 1959, p. 128-129)՝ գտնում են, որ «հե.-ում *\*bher-* («երեխա, զավակ») հիմքը, ըստ երևույթին, բաղադրվել (կոնտամիկնացվել) է *\*bher-* («վերցնել → կրել») հիմքի հետ (տե՛ս Բառ. 8): Նման բաղադրությունը հեշտ է «կրել» → «պտուղը կրել, հղի լինել» → «ծնել. ծննդաբերել» (բոց. «բերել») իմաստային տեղաշարժի հնարավորության դեպքում. այն արտացոլված է հայ. *բեր*, հուն. *φέρμα* «պտուղ», միռլ. *birit* «մայր խոզ», գերմ. *\*beran* «բերել. ծնել», «առաջ բերել՝ արտադրել, ծննդաբերել» տիպի կազմություններում» [*Ēëëè÷-Ñâèòù÷*, 1971, c. 194]:

34. Նոստր. *cujha* «բույսի փուշ». քարթվ. *cxw-* «բույսի փուշ. սայր» ~ հե. *skuci(H)-* «բույսի փուշ» ~ դրավ. *cī-* «փուշ» (?) ~ աթ. *čŭjā* «բույսի փուշ. սայր»: Հմմտ. հայ. *քի-ստ* «հասկի ամեն մի հատիկի գլխին աճող բարակ փշանման կարծր մազիկ» (*p* < \*sk-):

35. Նոստր. *curΛ/ corΛ* «կաթել. թափվել». քարթվ. *cwar- / cur-* «կաթել, կաթիլ» ~ ուրալ. *corΛ* «կաթել, հոսել» (°) ~ դրավ. *cōr-* / *cūr-* «կաթել, հոսել» ~ աթ. *čur(Λ)* «կաթել, հոսել»: Հմմտ. հայ. *ծոր* «(հեղուկի) շիթ. (հնձածի) շերտ. լաս», *ծորել* «շիթով շերտով թափվել» (< հե. °), այլև (բրբռ.) *ճիրել* «շիթով հոսեցնել, չրալ» «հորդ հոսել», *շո-ինդ/շո-ինջ* «ուժեղ ձայն», *շառ-աչ(յուն)* «ուժեղ աղնկալից ձայն» (< հե. °):

37. Նոստր. *čājha* «շողալ». սեմ.-քամ. *s(j)h* «լուսավոր» ~ հե. *skéih* «շողալ, թույլ լույս տալ. ստվեր» ~ ուրալ. *šájā* շողալ, լույս տալ ~ դրավ. [*čāj* «փայլ»]: Հմմտ. հայ. *ցայ-ել* «մաքրաջրել. պարզաջրել» (°) (*g* < \*sk-):

38. Նոստր. *cawΛ* «կանչել, գոռալ. խոսել» (°). սեմ.-քամ. *sw-* «գոռալ» ~ քարթվ. [*cw-* «ասել»]: Հմմտ. հայ. (բրբռ. °) *ճվալ* «ճչալ, կանչել», *ճվճվալ* «աղաղակել»//*ծվծվալ* «ծվվալ. բարակ ճչալ», *սվսվալ* «թույլ ձայն հանել», այլև *գվգվալ* «աղավնու մի տեսակ ձայն հանելը» և այլն:

41. Նոստր. *čap<sup>a</sup>* «խփել. կտրել». սեմ.-քամ. [*sP-* «խփել. հարվածել»] ~ հե. *skep-* «ճեղքել, ճղատել» ~ ուրալ. *čappa-* «կտրել, խփել» ~ դրավ. [*cava-* «կտրել»] ~ աթ. *čap(a)-* «խփել. կտրել»: Հմմտ. հայ. *կոփեմ* «խփել, հարվածել» (հմմտ. «*Կռել կոփել* գրուռնն Երուանդայ արքայի» - «Երվանդ արքայի դուռը թակելը». Խոր., 2, ԿԵ):

43. Նոստր. *čuhΛ* «նայել». քարթվ. *c<sub>1</sub>ew-/c<sub>1</sub>aw-/c<sub>1</sub>w-* «աչքը վրան պահել. հսկել» ~ հե. (s)keuH- «նայել» ~ դրավ. *cū-(r)-* «նայել»: Հմմտ. հայ. *ցոյց* (*ցուց-ան-եմ*) «ցույց տալ» (ենթադրյալ \*skeu-skō «նայել») [*Ēëëë÷-Ŋâèòú÷*, 1971, c. 202-203. հմմտ. *Ջահուկյան*, 1987, էջ 72, այլև 2010, էջ 744]:

44. Նոստր. *čelΛ* «ցատկել». սեմ.-քամ. *šl-* «ցատկել» (°) ~ հե. (s)kel- «ցատկել» ~ ուրալ. *čelΛ-* «ցատկել» ~ դրավ. [*čEl-ai*

«աղբյուր, ջրվեժ»)(<sup>o</sup>) ~ ալթ. [č(e)l- «կաղալ. գայթել»]: Հմմտ. հայ. *քայլ* «ոտքի մեկ շարժում. քայլվածք» (<sup>o</sup>):

48. Նոստր. -Ći (սաստկ.-բազմ. ածանց). հե. -sĕ- (նույնը) ~ ուրալ. -će- (նույնը) ~ ալթ. -či- (նույնը): Հմմտ. հայ. -(*նյ*)*ց*- // -(*նյ*)*ց*- (պատճառ. ածանց) [հմմտ. խեթ. - šk-, օրինակ՝ ar-šk- «(հաճախակի) շարժել»]:

50. Նոստր. čiru «թարախ, շարավ. խյուս». սեմ.-քամ. t̥(j)r «թաց, կղկղանք» ~ հե. (s)ter- «խյուս. թարախ, կղկղանք» ~ ալթ. čirü- «հոտել, նեխել»: Հմմտ. հայ. *թոր*- (*թորել*) «ծորել՝ հոսել (մի բան)», *թար-ախ* «շարավ, թարախ» [*Ēëëè÷-ŊâèðÛ÷*, 1971, c. 207]: Այլև *շար-ալ* «թարախ», թերևս (բրբռ.) *ցեռ* «(հեղուկ) կղկղանք»(<sup>o</sup>):

53. Նոստր. čArA «կտրել». սեմ.-քամ. tr- «կտրել, ճեղքել. սուր՝ կտրող քար» ~ քարթվ. čer-/čar- «կտրել, սղոցել» ~ դրավ. car- «ճեղքվել, կիսվել. երկատվել». եթե հե. (s)ker- «կտրել» // նոստ. čArA «կտրել» (<sup>o</sup>) [*Ēëëè÷-ŊâèðÛ÷*, 1971, c. 209]: Հմմտ. հայ. *քեր-եմ* «քերել», *քեր-թ(ել)* «մաշկել», *շեր-տ(ել)* «կիսել, շերտել», *ջար-դ(ել)* «կտոր-կտոր անել»(<sup>o</sup>), թերևս նաև *շոր-թ(ել)* «փախցնել», *ճռռ-թ(ել)* «բաժանել, հեռացնել» և այլն:

58. Նոստր. ČalHa «լայն». հե. stelh- «լայն» ~ ալթ. [čāl(a) «լայն, ընդարձակ»]: Հմմտ. հայ. *սուս-սուսող* (<\*stl-no-) «տանիք», *լայն* «լայն» (բաղադր. \*lai- < \*stlā-to) [*Ēëëè÷-ŊâèðÛ÷*, 1971, c. 212]<sup>18</sup>:

61. Նոստր. daKa «մոտ(իկ)». սեմ.-քամ. dĕ «մոտ(իկ)» ~ ուրալ. taka «հետևի (կողմ)», taka-na «հետևից» ~ ալթայ. daka- // daga- «մոտ, մոտենալ. հետևել (մեկին)»: Հմմտ. հայ. *տակ* («մոտ. տակը, տակի՝ ներքևի կողմը») < իրան. tak «տակ. ներքևի կողմ» [*Hübschmann*, 1897, p. 250. *Չահուկյան*, 2010, էջ 718]:

62. Նոստր. dalq(u) «ալիք». սեմ.-քամ. dlĭ «ալեկոծվել, պղտորել» ~ հե. [dhelH- «ծով»](<sup>o</sup>) ~ դրավ. tallā- «ալլալվել, անհանգստանալ» ~ ալթ. d(ā)lu- // dōli- «ալիք»: Հմմտ. հայ.

---

<sup>18</sup> Միաժամանակ գտնում են, որ հայերենը հնարավորություն է տալիս նաև վերականգնելու հե. \*stl-no- նախաձև:

(բրբռ.) *թալ-ցնել* «(նորածնի) լեզուն կուլ գնալը՝ շնչարգել լինելուց, ալլալվելը»<sup>(°)</sup>:

64. Նոստր. dEwHi «տատանել, փչել». հե. dheuH- «տատանել, ցնցել, փչել» ~ ալթ. dEbi- «թափահարել, փչել»: Հմմտ. հայ. *դե-դե-իս* (\**դե-դե-իս*) «տարուբերվել, ճոճվել» [*Ēēēē÷-NâēōŪ÷*, 1971, c. 217-218. հմմտ. *Ջահուկյան*, 1987, էջ 72, ալլև 2010, էջ 191]:

65. Նոստր. -di (անցյ. ժամ. կազմիչ). քարթվ. -di (անկատ. ժամ. կազմիչ) ~ դրավ. -tt-/t- (պրետերիտի կազմիչ) ~ ալթ. -di (պրետերիտի կազմիչ): Հմմտ. հայ. -j- (ըստ Աճառյանի) *երթա-յ-ի* «գնում էի», *բերեի* (<\**բերե-յ-ի*) «բերում էի» [հմմտ. *Ջահուկյան* 1987, էջ 70-71]:

66. Նոստր. did «մեծ» (°). սեմ.-քամ. d(j)d «մեծ. հաստ» ~ քարթվ. did «մեծ»: Հմմտ. հայ. *տի-* (*տի-կին. տի-եզերք, \*տի-այր*) > *տէր* և այլն) [հմմտ. *Ջահուկյան*, 1987, էջ 70-71, ալլև 2010, էջ 728]<sup>19</sup>:

67. Նոստր. diga «ձուկ». սեմ.-քամ. [d(j)g «ձուկ»] ~ հե. dhǵh-u-H «ձուկ» ~ ալթ. [/d/iga- «ձուկ»]: Հմմտ. հայ. *ձու-կն* «ձուկ» (ինչպես որ *մու-կն* և այլն) [*Ēēēē÷-NâēōŪ÷*, 1971, c. 219. հմմտ. *Ջահուկյան*, 1987, էջ 71]:

68. Նոստր. dila «արևի լույս». քարթվ. [dila «առավոտ»] (°) ~ հե. dhel- «արև, լուսավոր» ~ ալթ. \*dila «արև, արևի տարի»: Հմմտ. հայ. *դեղին* (սեռ. հոլ. *դեղ-նոյ*) «դեղին, գունատ՝ դալուկ» [*Ēēēē÷-NâēōŪ÷*, 1971, c. 219-220]:

69. Նոստր. diqa «գետին, հող». քարթվ. diqa «գետին, կավ» ~ հե. dhǵhem- «գետին, հող»: Հմմտ. հայ. *տիղ-մ* // *տեղ-մ* «ջրի բերած մսովածք, տիղմ», (բրբռ.) *տիլ* «ցեխ, տիլ», *տլ-ողկ* «ջրոտ, ոչ սրտուռ (կարտոֆիլ և այլն)»:

<sup>19</sup> Ինչպես տեսնում ենք, բացակայում է համեմատությունը հնդեվրոպականի հետ, սակայն Ջահուկյանը, հավանաբար նկատի ունենալով Իլիչ-Սվիտիչի մեկ այլ աշխատության տվյալները, իր գրքում անցկացնում է այդ համեմատությունը՝ տողատակին նշելով հետևյալը. «Իլիչ-Սվիտիչը տալիս է միայն բաթիական ձևերը՝ չիմանալով հայերենի մասին» [տես *նույն տեղում*]:

72. Նոստր.  $\text{dud}$  «ծայր, վերջույթ». քարթվ.  $\text{dud-}$  «ծայր, վերջույթ» ~ ուրալ.  $\text{tuδ'ka}$  «ծայր, վերնամաս» ~ դրավ.  $\text{tut}$  «վերջույթ, ծայր»: Հմմտ. հայ. *տուտնի (տտունի)* «ծայր, վերջույթ՝ պոչ» (<հե. \* $\text{dud-}$ ) և այլն [հմմտ. *Ջահուկյան*, 1987, էջ 71, այլև 2010, էջ 735]:

73. Նոստր.  $\text{d\u00fcnga}$  «հանգիստ լինել, լռել». սեմ.-քամ.  $\text{d(w)m}$  «հանգիստ լինել, լռել» ~ քարթվ. [ $\text{dum-}$  «լռել» ] ~ ալթ.  $\text{d\u00fcng\u00fc}$  «հանգիստ նստել, լռել»: Հմմտ. թերևս հայ. (բրբռ.) *դուս* «մունջ. լուռ», *դիմջ (\*դի-մջ)* «հանգիստ. անտարբեր»:

75. Նոստր.  $\text{d}_{\text{L}\text{C}}\text{A}$  «տեղավորել». սեմ.-քամ.  $\text{d}^{\text{C}}$  «տեղավորել» ~ քարթ.  $\text{d-}$  «տեղավորել» ~ հե.  $\text{dheh-}$  «տեղավորել, դնել»: Հմմտ. հայ. *դնեմ [դի(ն)եմ]* «դնել», *եդ-ի, եդ* (անցյ. կտր. եզ. 1-ին, 3-րդ դ.) «դրեց», *դի'ր* (հրամ. եզ. 2-րդ դ.) [*Ēēē÷-NâēōŪ÷*, 1971, c. 224. հմմտ. *Ջահուկյան*, 1987, էջ 72, այլև 2010, էջ 201]:

76. Նոստր.  $\text{d}_{\text{LW}}\text{A}$  «հիվանդանալ. մեռնել». սեմ.-քամ.  $\text{dw-}$  «հիվանդ լինել. մեռնել» ~ հե.  $\text{dheu-}$  «մեռնել. ուշաթափվել»: Հմմտ. հայ. *դի* (սեռ. հոլ. *դի-ոյ.*) «դիակ», թերևս նաև *գու* «հիվանդություն» [*Ēēē÷-NâēōŪ÷*, 1971, c. 224-225. հմմտ. *Ջահուկյան*, 1987, էջ 72, այլև 2010, էջ 198, 742]:

78. Նոստր.  $\text{gara}$  «ծակող ճյուղ. փուշ». հե.  $\text{gher-}$ ,  $\text{gherh-}$ / $\text{ghreh-}$  «փուշ, սայր, ճյուղ» ~ ուրալ.  $\text{kara}$  «փուշ, ճյուղ, փշատերև բույս» ~ դրավ.  $\text{kar(a)}$  «փուշ, սայր» ~ ալթ.  $\text{gara}$  «սայր, ճյուղ, փշատերև բույս»: Հմմտ. հայ. (բրբռ.) *կառ* (թերևս նաև *կանգառ*) «մի տեսակ փշոտ՝ ոչ շատ բարձր բազմամյա բույս, կլորավուն մանուշակագույն թավ ծաղկով»:

79. Նոստր.  $\text{g\u00e4ndu}$  «արու, որձ». դրավ.  $\text{kar\u015b-}$  «արու, որձ» ~ ալթ.  $\text{g\u00e4nd\u00fc}$  «արու, որձ»: Հմմտ. հայ. թերևս (բրբռ.) *քոնթ* «արու, որձ», *քոնթ(ի)* «արուի՝ որձի կարիք ունեցող» (< հե.<sup>o</sup>):

80. Նոստր.  $\text{g\u00e4\u015b}$  «ձեռք». հե.  $\text{ghes-}$  «ձեռք» ~ դրավ.  $\text{kac-}$  «ձեռք» ~ ուրալ.  $\text{k\u00e4te-}$  «ձեռք»: Հմմտ. հայ. *ձեռ-նի* (հոգն.՝ *ձեռք*) [*Ēēē÷-NâēōŪ÷*, 1971, c. 227. հմմտ. *Ջահուկյան*, 1987, էջ 71, այլև 2010, էջ 475]:

82. Նոստր.  $\text{gE(hr)a}$  «արշալույս». սեմ.-քամ.  $\text{ghr}$  «արևի լույս, օր» ~ հե.  $\text{gherh-}$ / $\text{ghreh-}$  «արշալույս. լուսանալ» ~ ալթայ.

\*gĒra «արշալույս. ցայգ»: Հմմտ. հայ. *ճառագ*- «արշալույս», *ճառագ-(ել)* «լույս տալ» (թերևս նաև *ճրագ*):

84. Նոստր. gi(ł)hս «հարթ. փայլուն». սեմ.-քամ. [głh «ճաղատ»] ~ քարթվ. [glu «հարթ»](<sup>o</sup>) ~ հե. ghelh<sup>h</sup>-/ ghleh<sup>h</sup>- «սպիտակավուն, փայլուն», ghleh<sup>h</sup>-dh- «հարթ, փայլուն» ~ ուրալ. [kɪʎ/ʎ «հարթ և փայլուն» ~ ալթ. gilü-/ gila- «հարթ և փայլուն»: Հմմտ. հայ. (թերևս՝ բրբռ.) *գիլա(յ)* «(ոչ սև խաղողի) հատիկ» (<sup>o</sup>):

87. Նոստր. gop<sup>o</sup>a «դատարկ, սնամեջ». սեմ.-քամ. gwP «դատարկ, սնամեջ» ~ քարթվ. kwab- «քարայր, փոս»(<sup>o</sup>) ~ հե. geup- «սնամեջ տեղ, փոս» ~ ուրալ. korpa «դատարկ, սնամեջ. գանգ» ~ ալթ. goba-/gobi-«դատարկ, սնամեջ. խորք»: Հմմտ. հայ. *գուր* «փոս. փոսորակ», (բրբռ.) *կուր-ի* «դագաղ» (*q/ly* տարբերակում) (<sup>o</sup>):

91. Նոստր. gur<sup>h</sup> «կուլ տալ». սեմ.-քամ. g(w)r- «կուլ տալ, կում» ~ հե. g<sup>h</sup>erh<sup>h</sup>- (նաև \*g<sup>h</sup>er-) «կլանել. կոկորդ» (<sup>o</sup>) ~ ուրալ. kurk<sup>h</sup> «կում» ~ դրավ. kur<sup>h</sup> «կում, կոկորդ»: Հմմտ. հայ. (առբ.) *կեր-ի* (*ե-կեր*) «կերա», *կեր*, *կերակուր* «ուտելիք», *կոկորդ* (< \**կոր-կոր-դ*. հմմտ. *սոսորդ* < \**սոր-սոր-դ* «մակկոկորդ». *կ/ս* տարբերակում) «կոկորդ» [*Ēëëë÷-Ñâëòú÷*, 1971, c. 235-236. հմմտ. *Ջահուկյան*, 1987, էջ 72, այլև 2010, էջ 400, 416, 688]:

94. Նոստր. gUI<sup>h</sup> «կլոր. գունդ». սեմ.-քամ. g(w)l կլոր. գունդ. գլուխ» ~ քարթվ. gwar-/gur- «կլոր. գլորվել» ~ հե. ghel- «կլոր ելուստ, գլուխ» (<sup>o</sup>): Հմմտ. հայ. *գլուխ* «գլուխ» [*Ēëëë÷-Ñâëòú÷*, 1971, c. 237-238]:

95. Նոստր. gUr<sup>h</sup> «շիկացած ածուխ». սեմ.-քամ. g(w)r «կրակ. ածուխ» ~ հե. g<sup>h</sup>her- «այրել, տաք, շիկացած ածուխ» ~ ալթ. gur(ʎ) «շիկացած ածուխ, բռնկվել» (<sup>o</sup>): Հմմտ. հայ. *ջեռ* (*ջեռ-ն-ույ*) «տաք, ջերմ» [*Ēëëë÷-Ñâëòú÷*, 1971, c. 239]:

97. Նոստր. garĕu «կեռանալ, կորանալ» (<sup>o</sup>). քարթվ. ȳrek(w)-«կեռանալ, կորանալ. ոլորվել» ~ հե. herk<sup>h</sup>- «կոր, կեռ. ճկուն»: Հմմտ. հայ. *կորճ* «բնկույզի կեղև» (<sup>o</sup>):

100. Նոստր. haw<sup>h</sup> «(բուռն) ցանկանալ». սեմ.-քամ. hw(j) «(բուռն) ցանկանալ» ~ հե. heŷ- «(բուռն) ցանկանալ» ~ դրավ. [ʁv- «(բուռն) ցանկանալ»]: Հմմտ. հայ. *ախիւն* «ցանկություն».

հակում» [*Ēēēē÷- NāēōŪ÷*, 1971, c. 241-242], այլև *hawai* «հավանություն, հավանող», *wawai* «խելագար, ցնորված» [հմմտ. *Չահուկյան*, 1987, էջ 113, այլև 2010, էջ 453]:

101. Նոստր. *haju* «ապրել, կենսական ուժ». սեմ.-քամ. *hijw* «ապրել» ~ հե. *heju* «կենսական ուժ» ~ այթ. *öjü* «կենդանի, կյանք» (°): Հմմտ. հայ. թերևս *hwa(j)* «այո՛. այդպե՛ս (է)», *wj(n)* «հա՛. այդպե՛ս (է)» (°):

103. Նոստր. *Haja* «հալածել, հետապնդել». հե. [*Hei*- «հալածել. չարիք պատճառել»] ~ ուրալ. *aja-* «հալածել, հետապնդել. հեռուն գնալ» ~ այթ. *aja-* «որս անել, գազանին ձեռքը զցել»: Հմմտ. հայ. *huj-hnj-ել* (արմ. կրկն.՝ *w/n* ձայնավորմամբ) «անարգել, վիրավորել. չարախոսել, հիշոց տալ»(°):

106. Նոստր. *Henka* «վառվել». հե. *Heng-* «վառվել» (*Hngn-i-* «կրակ» և այլն) ~ ուրալ. *eŋkA-* «վառվել»: Հմմտ. հայ. (բրբռ. *\*անծ-ող*) *անձող* «ածուխ. կրակ» [*Չահուկյան*, 1987, 141, 183 և այլն]: Տե՛ս նաև հե. *\*ŋk'ni-* «կրակ». հինդկ. *Agni-* «կրակ», «կրակի աստված», լատ. *ignis* «կրակ. երկնային լուսատու. կայծակ», հուլավ. *ogni* «կրակ» և այլն [*Āāi ēdāēēāçā, Ēāāi ī ā*, 1984, c. 274 և այլն]:

107. Նոստր. *Herä* «փուլ գալ, քանդվել». հե. *her-* «փուլ գալ, քանդվել» ~ ուրալ. *erä-* «փուլ գալ, քանդվել. մաս» ~ դրավ. *ir(a)- /er-* «կոտրվել ~ այթ. [*ärü-* «փլուզվել. հալչել»]: Հմմտ. հայ. *հեն-ի // հեն-ու* «զատված, հեռացած, մաս եղած», թերևս նաև հայ. (բրբռ.) *հիռի* (կոչ.) «ոչխար(ներ)ին հեռացնելու՝ քշելու ձայն» (°) և այլն:

108. Նոստր. *Herä* «արու (կենդանի)». դրավ. *ēr* «արու» ~ այթ. *ērä* «արու, տղամարդ»: Ի հավելումն նաև հե. *\*hers-* / *hrs-* «արու», որից հայ. *անն* (սեռ. հոլ. *անիս*) «արու (վայրի) ոչխար» («արական» իմաստային հատկանիշով) [*Ēēēē÷-NāēōŪ÷*, 1971, cc. 247-248. հմմտ. *Չահուկյան*, 1987, էջ 71, այլև 2010, էջ 75]:

111. Նոստր. *Hi* (անցյ. ժամ. մասնիկ). սեմ.-քամ. (*Hj*) (նույնը) ~ քարթվ. *-c/-i* (տոր. մասնիկ) ~ հե. *he-* (տոր. մասնիկ՝ աուզմենտ) ~ ուրալ. *-i-* (անցյ. ժամ. մասնիկ) ~ դրավ. *-i-* (նույ-



նր): Հմմտ. հայ. *ե-//է-* (*ե-բեր* «բերեց» // *է-ան* «առավ») [հմմտ. *Ēëëè÷-ÑâèòÛ÷*, 1971, c. 249-250]:

113. Նոստր. *HoKi* «սուր. ծայր, սայր». հե. *Heč* - «սուր. ծայր, սայր» ~ ալթ. *oki* «սլաք, վերջույթ»: Հմմտ. հայ. *սս-եղն* «ասեղ», թերևս նաև *սս-յր* (\*«թրի բերան») // *ծա-յր* «եզր, վերջ» (արմատի շրջումով) [*Ēëëè÷-ÑâèòÛ÷*, 1971, c. 251-252. հմմտ. *Ջահուկյան*, 1987, էջ 72, 131, 268, այլև 2010, էջ 76, 358-359, 666]:

114. Նոստր. *Homsa* «միս». հե. (H)mēms- «միս» ~ ուրալ. *omsá* «միս» ~ դրավ. *üñc-* «միս»: Հմմտ. հայ. *միս* «միս» [*Ēëëè÷-ÑâÛòè÷*, 1971, c. 252-253. հմմտ. *Ջահուկյան*, 1987, էջ 71, այլև 2010, էջ 527]:

116. Նոստր. *Horä* «վեր ելնել». հե. *h<sup>□</sup>er-* «վեր ելնել, շարժ(վ)ել» ~ դրավ. *ēr-* «վեր ելնել» (°) ~ ալթ. *or(a)-/örä* «վեր ելնել, հառնել, մտնել»: Հմմտ. հայ. *յ-ան-նեմ* «վեր ելնել, հառնել», *յորյորեմ* «հորյորել», այլև *ար-մ-ատ* «ծառի ընդգետնյա մաս» (հայ. *ան-* <\*r) [*Ēëëè÷-ÑâèòÛ÷*, 1971, c. 254-255. հմմտ. *Ջահուկյան*, 1987, էջ 71, այլև 2010, էջ 93, 548, 555]:

117. Նոստր. *HosΔ* «հացենի, հացի» (°). հե. *h<sup>u</sup>es-* «հացենի, հացի» ~ ուրալ. *oška* «հացենի, հացի»: Հմմտ. հայ. *հաց-ի//հաց-ենի* «մի տեսակ ծառ» [*Ēëëè÷-ÑâèòÛ÷*, 1971, c. 254-255. հմմտ. *Ջահուկյան*, 1987, էջ 72, այլև 2010, էջ 453]<sup>20</sup>:

118. Նոստր. *HuKa* «աչք. տեսնել». հե. *h<sup>u</sup>ek<sup>u</sup>-/heuk-* «աչք. տեսնել» ~ ալթ. *uka-* «նկատել, հասկանալ»: Հմմտ. հայ. *սկն* «աչք» (սեռ. հոլ. *սկան* «աչքի») [*Ēëëè÷-ÑâÛòè÷*, 1971, c. 255-256. հմմտ. *Ջահուկյան*, 1987, էջ 71, այլև 2010, էջ 30-31]<sup>21</sup>:

121. Նոստր. *a* (ցուց. դեր.՝ հեռու առարկա նշող) (°). սեմ.-քամ. *l'/a* (ցուց. դեր.) ~ քարթվ. (h)a (ցուց.դեր.՝ մոտ առարկա նշող) ~ հե. *he-n-* (ցուց. մասն.)<sup>22</sup> ~ ուրալ. *a-/o-* (ցուց. դեր՝ հեռու

<sup>20</sup> Նշվում է, որ «ճայնավորական համակարգը պարզ չէ. հնարավոր է ծագում հե. \*əs-k-ից՝ երկրորդային *h*-ով» [*նույն տեղում*]:

<sup>21</sup> Նշվում է, որ «պարզ չէ *h*-ն՝ սպասելի *p*-ի փոխարենն» [*նույն տեղում*]:

<sup>22</sup> Հե. \*n-ն դիտվում է «ասատկացուցիչ տարր». հմմտ. հուն. *όν* «գուցե, թերևս», «մյուս անգամ», լատ. *an* «այո», «գուցե. թերևս» [*նույն տեղում*]:

առարկա նշող) ~ դրավ. ǎ (ցուց. դեր.՝ հեռու առարկա նշող) ~ (°) ալթ. [a-/o- «այն. նույն»]: Հմմտ. հայ. (h)ա-ն- //ա-ն-//ը-ն- (օր.՝ հան-դէպ, ան-ձեռոցիկ, ըն-ձիւղ և այլն) (°):

122. Նոստր. a (բայ. հիմք. մասնիկ) (°). սեմ.-քամ. ' - /-' (բայանվ. կազմիչ) ~ քարթվ. (h)a- / -a (բայանվ. կազմիչ) ~ հե. - o- (բայանվ. ածանց) ~ դրավ. -a (բայանվ. և դերբ. ածանց): Հմմտ. հայ. - n- (բեր-n-յ «բերածի, ստացածի» և այլն: Ի հավելումն նշվում է, որ հե. \*o-ն այդ խմբի լեզուներում ամենատարածված բայանվանական մասնիկն է. հե. \*bher- «տանել, բերել» > \*bhor-o- (հմմտ. հինդկ. bháras «որս. ավար», հուն. φόρος «եկամուտ. օգուտ» հայվ. сѣ-борѣ «հավաքում, հավաքելը» և այլն) [տե՛ս *Ēēēē÷-ÑâēōŪ÷*, 1971, c. 258-259]:

124. Նոստր. amu «առավոտ, ցերեկվա լույս»(°). սեմ.-քամ. 'mr «օրվա լույս, տեսնել» ~ հե. hēm- «օր» ~ ուրալ. amA-/oma- (<\*amo-) «առավոտ»: Հմմտ. հայ. աւր (սեռ. հոլ. աւուր < \*aumr < \*amur) «օր» [*Ēēēē÷-ÑâēōŪ÷*, 1971, c. 260-261. հմմտ. *Չահուկյան*, 1987, էջ 71]:

125. Նոստր. anqA «շնչել»(°). սեմ.-քամ. [ʾnh «շունչ առնել՝ քաշել»] ~ հե. henH- «շնչել»: Հմմտ. հայ. (բրբռ.) հան-զ «շունչ. շունչ առնելը», թերևս նաև հուն-չ «շունչ, շնչելը»:

127. Նոստր. aSa «կրակ»(°). սեմ.-քամ. 'š «կրակ» ~ հե. hes- «օջախ. չորացնել» ~ ալթ. [aSa- «այրվել»]: Հմմտ. հայ. աճիւն (հայ. ճ <\*-sg-) «մոխիր», այլև ազ-ազ-իմ «չորանալ» (արմատի կրկն.) [*Ēēēē÷-ÑâēōŪ÷*, 1971, cc. 262-263. հմմտ. *Չահուկյան*, 1987, էջ 72, այլև 2010, էջ 22]:

ժա) Միլ. i ~ հայ. *ի/(ն)*. հմմտ. խեթ.-լուվ. \*i (< հե. \*i): Օրինակ՝

միլ. ziw- «աստված» ~ հայ. *տիւ-//տու-* (հնչ.՝ \**տիւ*/ \**տու*) «լույս, ցերեկ». հմմտ. խեթ.-լուվ. d<sup>ʷ</sup>iw- (< հե. \*diu-, նոր

<sup>35</sup> Խեթ. ձևերի համար տե՛ս “An Etymological Dictionary of the Hittite Inherited Lexicon”, p. 681-682:

նշանակմամբ՝ \*t'iy- «օր, ցերեկ») [հմմտ. *Pokorny*, 1959, p. 219, *Āā̀l̄ ēdā̀ēēäçã, Ēā̀ā̀l̄ ī ā̀*, 1984, c. 791, *Ēā̀ā̀l̄ ī ā̀*, 2007, ñ. 282-290].

միլ. kiki «պատժել, դատապարտել» ~ հայ. *ծեծ* «ծեծ, գամ. ծեծել» (°). հմմտ. խեթ. ki-nu- «(ուժով՝ կոտրելով) բանալ» (< հե. \*ǵhēi- «խոր բացվել. բաց լինել») [տե՛ս *Pokorny*, 1959, p. 419, *Āā̀p̄l̄*, 1980, c. 14. հմմտ. *Ջահուկյան*, 1987, էջ 125, այլև 2010, էջ 361]:

ժք) միլ. i ~ հայ. *ի*//(\*t'°) (<հե. \*ē): Օրինակ՝

միլ. ni «ոչ, չ-» ~ հայ. *մի* «ոչ, չ-». հմմտ. լուվ. ni-s (< հե. \*nē).

միլ. kride «հավաստ(ք)» ~ հայ. *սիրտ (անել՝ դնել)* «հավաստ(ալ)». հմմտ. խեթ. ki-ir «սիրտ», հուն. κῆρ «սիրտ», կելտ. cretim «հավաստում եմ» (< հե. \*k<sup>[h]</sup>er-t'-) [հմմտ. *Āā̀l̄ ēdā̀ēēäçã, Ēā̀ā̀l̄ ī ā̀*, 1984, c. 100, 800]:

ժգ) Միլ. ē ~ հայ. *իմ, են- (ըն-)*. հմմտ. խեթ.-լուվ. en (<հե. \*eN): Օրինակ՝

միլ. mē-mi «բառ, խոսք» ~ հայ. *իմ-անամ* «իմանալ. հասկանալ, խորհրդածել» (°). հմմտ. խեթ.-լուվ. men-mi, լատ. emō «զնել, ձեռք բերել», հիռլ. em «վերցնել, ընդունել», լիտվ. imti «վերցնել» (< հե. \*men- «մտածել, ենթադրել») [հմմտ. *Pokorny*, 1959, p. 726-727. *Ջահուկյան*, 2010, էջ 285].

միլ. ēntr- «ներքին. ներսի կողմ» ~ հայ. *ենթ (ընթ <\*ընդ °)* «տակը, ներսը. *ենթ(ա)-, ստոր(ա)-*». հմմտ. հուն. ἔντερα «ընդերք, փորոտիք», սլավ. вѣн-отръ «դեպի ներս, մեջը» (< հե. \*entr-).

միլ. ēmu ~ հայ. *եմ* «եմ (բայ. 1-ին դ.՝ *եմ*)». հմմտ. խեթ. ammuk- «իմ, ինձ», լուվ. amu- (նույնը), լիդ. amu (նույնը) [< հե. \*em(e)] [*Pokorny*, 1959, p. 702. *Āā̀p̄l̄*, 1980, c. 14. հմմտ. *Āā̀l̄ ēdā̀ēēäçã, Ēā̀ā̀l̄ ī ā̀*, 1984, c. 286, 383]:

ժդ) Միլ. ã ~ հայ. *(ը)ն- (ան-, ամ-°)*. հմմտ. խեթ.-լուվ. \*an (< հե. \*oN): Օրինակ՝

միլ. -ātu ~ հայ. *(ը)ն (ըն-կեր, ըն-թամ. ան-ձեռոցիկ, ամ-բողջ, արհ-ամ-արհ-եմ* և այլն). հմմտ. խեթ.-լուվ. \*-an-tu (< հե. \*-on-tu-):

ծե) Միլ.  $\tilde{u} \sim$  հայ.  $-(\underline{p})\acute{u}$  (վերջնահանգ  $-u \acute{}$ ). հմմտ. խեթ.-լուվ. \*un (< հե. \*uN//\*oN): Օրինակ՝

միլ.  $-\tilde{u}$  (եզ. ք. հայց. հոլ.)  $\sim$  հայ.  $-u$  (գոյ. վերջնահանգ  $-u \acute{}$ ՝ *գեղմն, ոտն* և այլն, որը հավանաբար եղել է եզ. ք. հայց. հոլ. վերջ.). հմմտ. խեթ.-լուվ. \*-an (< հե. \*om) [հմմտ. *Āā̀l̄ ēđā̀ēēā̀çā̀, Ēā̀ā̀l̄ ī ā̀*, 1984, c. 360]:

ծզ) Միլ.  $\tau \sim$  հայ.  $-(h)\acute{u}$  (վերջնահանգ  $-u \acute{}$ ). հմմտ. խեթ.-լուվ. \*in (< հե. \*iN): Օրինակ՝

միլ.  $-\tau$  (եզ. ք. հայց. հոլ.)  $\sim$  հայ.  $-(h)\acute{u}$  (եզ. ք. տր. հոլ.  $-h\acute{u}$ ՝ *հարսին, մատին, ոտին* և այլն, անցած երբեմնի հայց. հոլովից). հմմտ. խեթ.-լուվ. \*-in (< հե. \*im):

2) *Չայնորդները* միլերենում, ընդհանուր առմամբ՝ լիկերենում շատ չեն՝ m, n, l, r, որոնք կարող են հանդես գալ վանկակազմական/ոչ-վանկակազմական գործառույթով: Սրանց վերաբերյալ առայժմ հնարավոր է միայն մեկ-երկու գուգադիպում նշել: Տվյալ դեպքում ամենավստահելի փաստը, թերևս, հայ. *մ* ձայնորդի հետ միլ. m-ի գուգադիպումն է:

Միլ. m  $\sim$  հայ. *մ*. հմմտ. խեթ.-լուվ. m (< հե. \*m): Օրինակ՝

միլ. māmre «մեռածներին, մեռած մարդկանց»  $\sim$  հայ. *մեռանիմ* «մեռնել». հմմտ. խեթ. mer- «կորսվել» (< հե. \*mer-/\*mor-) [տե՛ս u Pokorny, 1959, p. 735]:

3) *Պայթական բաղաձայնները* միլերենում ներկայացնում են երկաստիճան (շնչեղագուրկ) համակարգ՝ b/p, d/t, -/k (հետնալեզվային ձայնեղի բացակայությամբ), այսինքն՝ չունի հայերենին բնորոշ շնչեղ խուլեր՝ ph, th, kh (հմմտ. հայ. *փ, թ, ք*):

Այս դեպքում կարելի է դիտարկել հետևյալ կարգի ծագումնային գուգադիպումները:

ա) Միլ. p  $\sim$  հայ. *h/պ, ø* (զրո). հմմտ. խեթ.-լուվ. \*p (խեթ. p, լիդ. f) (< հե. \*p): Օրինակ՝

միլ. pre-te «քշեց, վանեց. խփեց»  $\sim$  հայ. *հար(կ)-անել, պր(ծ)-նուլ* (°), *որոտ(ամ)* «որոտալ. ամպրոպել» (°). հմմտ. խեթ. parh- «քշել, վանել», հինդկ. pūrta, pūrti «հատուցում. մաս. բաժին», լիտվ. periu, peiti «խփել, հարվածել», սլավ. pūrati «նույ-

նը» (< հե. \*per-, այլև \*p<sup>[h]</sup>rH- «խփել») [*Pokorny*, 1959, p. 818-819. հմմտ. *Āàì êðǎèèäçǎ, Ēââí î â*, 1984, c. 200]<sup>36</sup>:

բ) Միլ. p ~ հայ. p (< հե. \*b<sup>[h]</sup>- «խփել»): Օրինակ՝

միլ. arm̄pa «ձող» ~ հայ. *p/hp* «մահակ. (հաստ) գավազան» (*pp/hz, pp(z)tv* «փորել»), այլև *puh* (<\*pawp-h) «փորելու գործիք». հմմտ. խեթ. <sup>(GİS)</sup>arimpa- «ծխական առարկա (փայտյա)», հինդկ. rambhá «նեցուկ, ձող, անթացույ» (< հե. \*b<sup>[h]</sup>er-), եթե ենթադրելի է խեթալուսականում (նաև հինդկականում) արմատի կազմիչ տարրերի ոչ ստանդարտ դրափոխություն (°) [հմմտ. *Uđawnjawá*, 1971, էջ 392-393, 452. *Qwhmlyjwá*, 1987, 72, 116, 212 և այլն. *Kronasser*, 1956, p. 39. *Tischler*, 1983, p. 57. *Aâbî*, 1980, c. 16. *Āàì êðǎèèäçǎ, Ēââí î â*, 1984, c. 707, 884. *Watkins*, 1985, 7 և այլն]:

միլ. prū-wa «բարձր, մեծ» ~ հայ. *բարձ-ր* «բարձր, մեծ» (եգ. սեռ. հոլ. *բարձու*), *-բերձ* [(*երկնա*)-*բերձ* «մինչև երկինք բարձրացած»]. հմմտ. խեթ. parku- «բարձր», ավեստ. bərəzi- «բարձր», հինդկ. brhánt- «բարձր», թոխ. U/P pärk- «բարձրանալ», հրգերմ. berg «սար» և այլն (< հե. \*b<sup>[h]</sup>erǵ<sup>[h]</sup>-) [հմմտ. *Āàì êðǎèèäçǎ, Ēââí î â*, 1984, c. 174, 217 և այլն]:

գ) Միլ. b ~ հայ. z. հմմտ. խեթ.-լուվ. \*bh (սեպագիր՝ p) (< հե. \*bh): Օրինակ՝

միլ. alb «սպիտակ», «պայծառ», «մաքուր» ~ հայ. *ալա-տունք* (\**ալ(ա)լ-ունք*), այլև *ալալտունք* («աստղաբույլ, բազմաստեղք»), *աղալնի* «աղավնի (թռչունը)». հմմտ. խեթ. alpa- «ամպ», հուն. ἄλφοζ «սպիտակ փառ (աչքի վրա և այլն)», լատ. albus «սպիտակ», ումբր. alfu «սպիտակ», «սպիտակ (զգեստ)», հրգերմ. albiz «կարապ», հւլավ. lebedī «կարապ», ռուս. ё́дъдъдъ (նույնը) (< հե. \*alb<sup>[h]</sup>o- «սպիտակ», «պայծառ») [*Pokorny*, 1959,

<sup>36</sup> Հայ. *հար(կ)-անել*, *սր(ծ)-նուլ* ձևերում *կ*, *ծ* բաղադրիչների համար նկատենք, որ հե. \*per- կամ \*p<sup>[h]</sup>rH- արմատը կարող է լրացվել հետնալեզվային խուլ (\*k) կամ ձայնեղ (\*ǵ) բաղադրիչով (աճականով), ընդ որում ձայնդարձի տարբեր աստիճանով, այն է՝ \*p<sup>[h]</sup>er-ǵ[h]-, \*p<sup>[h]</sup>er-k[h]- և այլն. հմմտ. լիտ. peršu «(ձեռքը) խնդրել, (աղջիկ) ուզել», լատ. poscō «պահանջել, խնդրել, հարցնել» [տե՛ս *Āàì êðǎèèäçǎ, Ēââí î â*, 1984, c. 176, 240. *Pokorny*, 1959, p. 819-822. հմմտ. *Баян*, 1980, c. 15, прим. 30]:

p. 83. *Āāī ēđāēēāčā, Ēāāí í ā*, 1984, c. 783. *Āāpí*, 1990, c. 14, *Չահուկյան*, 2010, էջ 25, 35]<sup>37</sup>:

դ) Միլ. b ~ հայ. լ. հմմտ. խեթ.-լուվ. ք (< հե. \*ք): Օրինակ՝ միլ. *alba-* «կախարդել, թովել, դյութել», «աղաչել, աղերսել, պաղատել» ~ հայ. *աղաւթ(ք)* (< *աղաչել*). հմմտ. խեթ. *alūanza-* «կախարդում, կախարդելը», *alūa-nz-atar* «կախարդություն, մոգություն», լուվ. *alūa* (հմմտ. հուն. *ἀλύω* «հառաչել, տնքալ», «դեստոյեն ընկնել, շուռումուռ գալ» (< հե. \**alu-/aleu-*) [*Pokorny*, 1959, p. 27-28. *Āāpí*, 1980, c. 16. *Āāī ēđāēēāčā, Ēāāí í ā*, 1984, c. 808].

միլ. *zballi* «աստվածային» ~ հայ. *տիլ* «օր, ցերեկ. լույս» (հմմտ. *դի-ք* «աստվածներ»). հմմտ. խեթ. *šiyalli* (< *šiya-* «աստված») (< հե. \**t'yeu-*) [*Āāī ēđāēēāčā, Ēāāí í ā*, 1984, c. 791, 860. *Համբարձումյան*, 2007, էջ 32-37 և այլն]:

ե) Միլ. t ~ հայ. տ. հմմտ. խեթ.-լուվ. \*t (< հե. \*t'): Օրինակ՝ միլ. *tube-* «պատժել» ~ հայ. (բրբռ.) *տըփել* «գետնով տալ. գետնին գցել»<sup>38</sup>. խեթ.-լուվ. \**tupai-* «խփել», հուն. *τύπτω* «խփել», «կտրել, հատել. կոտորել», հինդկ. *tópati* «խփել» (< հե. \* *teup-/tup-*)<sup>39</sup>:

<sup>37</sup> Այս առումով Գ. Չահուկյանը նշում է հետևյալը. «Սպիտակի անվանումները կապված են գերազանցապես փայլելու գաղափարի հետ, և այդ գաղափարի հնդեվրոպական առատ արտահայտման պայմաններում դժվար է ասել, թե հայերենը ո՛ր տարբերակը կարող էր ընտրած լինել. հավանական են, օրինակ, \**աղք* կամ \**աղալ* (\**albh-* կամ \**aləu-* «սպիտակ»). այստեղից են *աղանի*, թերևս նաև *ալա(լ)տունք* «համաստեղություն» [*Չահուկյան*, 1987, էջ 270]: Բացի այդ, միլ. (լիկ.) *alb-* բառը, իբրև *ubē* (< \**uba*. լիկ. *wawa* «ցուլ») ձևի հետ՝ *albm ubē* կապակցություն, նշանակում է «կենդանի, որ զոհաբերվում է տասաներկու աստվածներին» (հմմտ. հայ. առասպելներում սպիտակ ցուլերի կամ արջառների զոհաբերման երևույթը), որն այլ բան չէ, քան էթնամշակութային գուգադիպում:

<sup>38</sup> Հայ. (բրբռ.) *տըփել* «գետնով տալ. գետնին գցել» բառի արմատը բաղարկվել (կոնտամինացվել) է *տափ* «գետին» (*տափել, տափան, տափարակ* և այլն) արմատի հետ:

<sup>39</sup> Կան այս գուգաբանությանը հակառակ օրինակներ, երբ միլ. t-ին համապատասխանում է խեթ.-լուվ. d (< հե. \**dh* ). հմմտ. միլ. *ta-* «դնել,



զ) Միլ. d ~ հայ. *տ*. հմմտ. խեթ.-լուվ. \*d'(< հե. \* d): Օրի-  
նակ՝

միլ. da- «տալ» ~ հայ. *տալ* (նույնը). հմմտ. խեթ.-լուվ. \*d'a-  
«տալ», «վերցնել» (< հե. \*dō):

է) Հնարավոր է նաև՝ միլ. d ~ հայ. *դ, յ*. հմմտ. խեթ.-լուվ.  
\*dh (< հե. \*dh): Օրինակ՝

միլ. (d)di- «դնել», «տեղը դնել. տեղավորել, պատկերցնել» ~  
հայ. *դնեմ* (\**դհ-ն-եմ*). հմմտ. հինդկ. dhāman- «(սուրբ) դրվածք.  
սովորույթ», հուն. (հուն.) δνά-θημα «ծես. կարգ», θέμις «օրենք.  
վճիռ», հանգլ. dōm «վճիռ» և այլն (< հե. \*d<sup>[h]</sup>e-H-) [*Pokorny*,  
1959, p. 235-237. *Áàpí*, 1980, c. 16. *Āàì éðáèèäçâ, Êââí î â*,  
1984, c. 810].

միլ. d (միջձայնավորային) ~ հայ. *յ* [ներկ. ժամ. եզ. 3-րդ  
դ.՝ *բերե* (< \**բերեյ*)]. հմմտ. միլ. -di, խեթ.-լուվ. \*-ti (< հե. \*  
-ti):

ը) Հետնալեզվային պայթականներից առայժմ քիչ թվով  
գուգահեռ կարելի է մատնանշել, մանավանդ որ միլերենում  
դրանք ներկայացնում են ոչ լիարժեք շարք:

միլ. k ~ հայ. *ք*. հմմտ խեթ.-լուվ.) k<sup>u</sup> (< հե. \* k<sup>u</sup>): Օրինակ՝

միլ. ker-, kirada «մաս, բաժին» ~ հայ. *քեր(թ)ել* «մասնա-  
տել, բաժանել» [նաև *քեր(ծ)ել, քոր-ել, (բրբռ.) խոռ* «կիսատ.  
պակաս. ծայրը թռցրած» (°)]. հմմտ խեթ.-լուվ. k<sup>u</sup>er- (նաև kur-)  
«կտրել, կտրատել. մասնատել, անջատել» (< հե. \*k<sup>[h]o</sup>er-)  
[հմմտ. *Áàpí*, 1980, c. 17. *Āàì éðáèèäçâ, Êââí î â*, 1984, c. 200,  
706]:

միլ. k ~ հայ. *ճ*. հմմտ. խեթ. k (լուվ., լիկ. ø) (<հե. \*k<sup>[h]o</sup>):  
Օրինակ՝

միլ. kiki «պատժել, դատապարտել» ~ հայ. *ճնշել* [*ճ(ի)-ն-  
շ-ել* °] «ճզմել, սեղմել». հմմտ. խեթ. ki-nu- «(ուժով՝ կտրելով)  
բանալ» [<հե. \*k<sup>[h]o</sup>ei-(nā) «վճար(ում), հատուցում, վրեժ-

---

գետեղել», խեթ. dai- «դնել». հմմտ. հայ. *տա-մ* «տալ, հանձնել» (< հե.  
\*dhe-H-) [տե՛ս *Áàpí*, 1980, c. 16]:

(խնդրութուն)»] [հմմտ. *ԱծԹԽ*, 1980, Կ. 17. *Մի ԵժձԵԵՅՅՁ, ԷձձԻԻձ*, 1984, Կ. 809-810]<sup>40</sup>:

4) *Շիականները* բուն իմաստով մի քանիսն են՝ *w* (/-, *s/z*, *x* (գրությամբ՝ *q*)/*γ*, որոնք հայերենի հետ ի հայտ են բերում ոչ այնքան տարածական, ծագումնային զուգադիպումներ: Առայժմ հնարավոր է նշել նման կարգի որոշ դեպքեր:

ա) Միլ. *w* ~ հայ. *p*, *g* (*կ*). հմմտ. խեթ.-լուվ. \**w* (< հե. \**g*<sup>u</sup>): Օրինակ՝

միլ. *-we* (բառ-մասնիկ) ~ հայ. *բա-* [*բա-մ* (բրբռ.՝ *բբբ* «որ ասու՞մ են»), թերևս նաև *բա-ռ* (\**բառ-բառ-ել* > *բար-բառել*) (°)]. հմմտ. խեթ. *-ua(r)* «որպես թե, իբր(և) թե», *ueriḡa* «կանչել», լուվ. *-ua* «ձայնել», պալ. *yer-* «կանչել» (< հե. \**yer-* «խոսել. բարբառել», «կանչել. ձայն տալ»). հմմտ. նաև հուն. *εἶπο* [*ἔειπο* (<\* *yer-ḡoa*)] «ասում են. կանչում են, ձայն են տալիս», լատ. *uerbum* «բառ. խոսք», գոթ. *waúrd* «բառ», գերմ. *Wort* «բառ», անգլ. *word* «բառ», ռուս. *а́а* (*а́ааа*) «ասում է, խոսում է» [հմմտ. *ԱծԹԻ*, 1980, Կ. 17. *Մի ԵժձԵԵՅՅՁ, ԷձձԻԻձ*, 1984, Կ. 216, 231, 361, 367]:

միլ. *wawa* «ցուլ» ~ հայ. *ցուլ* (հնչ.՝ \**ցու-լ*) «ցուլ» (°), *կուլ* «կուլ». հմմտ. խեթ. *huḡarsa* «ցողել. շաղ տալ. սրսկել», *ḡarsa* «կաթիլ» [< հե. \**k*<sup>o</sup>(*o*)*u-*] (տե՞ս վերը՝ ձայնավորների վերաբերյալ *du* կետը) [հմմտ. *Մի ԵժձԵԵՅՅՁ, ԷձձԻԻձ*, 1984, Կ. 191, 755, 868 և այլն]<sup>41</sup>:

<sup>40</sup> Ըստ Բայունի՝ խեթ. *ki-un-* < հե. \* *ḡhēi-* «խոր բացվել՝ բաց լինել, դատարկվել», որ իմաստի առումով քիչ հավանական է [*նույն տեղում*]: Ըստ Չահուկյանի՝ հայ. *ճնշել* < հե. \**gen-* (որ երբեմն նշվում է հարցականով) [*Չահուկյան*, 1987, էջ 125, 213, 589, այլև 2010, 495]:

<sup>41</sup> Ընդ որում միլերենում և խեթերենում քմային շնչեղ կամ կոկորդային («լարինգալ») \**g*<sup>u</sup> + *w* > *w* տարբերակվածությունը համարվում է հավանական: Ըստ այսմ հայ. *ցուլ* բառը բուն՝ ամենամասնական իմաստով նշանակում է «ցայտեցնող. բեղմնավորող» (հմմտ. խեթ. *huwarsa* «ցողել. շաղ տալ. սրսկել», *warsa* «կաթիլ. շիթ»): Միաժամանակ ենթադրվում է, որ հե. \**k*<sup>o</sup> > միլ. *w* անցումը տեղի է ունեցել *γ* *w* միջին օղակով. հմմտ. հայ. *գինի* ~ քարթվ. \* *γwino-* (վրաց. *γwino*) «գինի» (< հե. \**uoino-*) [*Բայուն*, 1980, Կ. 17. *Մի ԵժձԵԵՅՅՁ, ԷձձԻԻձ*, 1984, Կ. 647-655]: Մյուս կողմից, եթե ընդունում ենք միլ. *w* ~ հայ. *ց/կ* զուգադիպումը, և ըստ այդմ՝ հայ. *ցու-լ*

բ) Միլ. *s* ~ հայ. *ø* (գրո). հմմտ. խեթ.-լուվ. \**s* (< հե. \**s*): Օրինակ՝

Միլ. (e)*s*-tte «եղավ. (նա) էր» ~ հայ. *էր* (<\**էյր*). հմմտ. խեթ.-լուվ. *es*- «լինել» (< հե. \**es*-):

գ) Միլ. *z* (հնչումով՝ *ts / dz*) ~ հայ. *ծ/ձ*. հմմտ. խեթ.-լուվ. *š/t* (< հե. \**d*. նոր նշանակմամբ՝ *t'*): Օրինակ՝

միլ. *ziwi* «աստված» ~ հայ. *տիւ/տու-(ւծ)* (հնչ.՝ \**տիու/ \*տոու-ւծ*) «աստված». հմմտ. խեթ. *Šiu-* «(արևի) աստված», լուվ. *tiwatt-* «ցերեկվա (լույսի) աստված», *Tiya-* «(արևի) աստված», պալ. *Tiya* (նույնը), լիդ. *†iv / tiv* «աստված» (< հե. \**d̥ēu-*. նոր նշանակմամբ՝ \**t'ǰeu-*) [հմմտ. *Համբարձումյան*, 2002, այլև 2007, էջ 32-37]:

Քմային շփականների դեպքում ևս առայժմ հնարավոր է բերել միայն սահմանափակ տվյալներով զուգադիպումներ:

դ) Միլ. *q* ~ հայ. *h* (բրբռ. *խ*). հմմտ. խեթ.-լուվ. *H* (առաջին շարքի ձայնավորներից առաջ): Օրինակ՝

միլ. *qtti-* «սպանել. զոհել» ~ հայ. *հատ-* «կիսած. հատակտոր» (բրբռ. *խատ-նել* «շունչը փչել. մեռնել»). հմմտ. խեթ. *hattai-* «խփել, կտրել, կիսել» (< հե. \**H<sub>1</sub>et-i-* «սպանել, զոհաբերել՝ զոհ մատուցել») (հմմտ. *Ջահուկյան*, 2010, էջ 450).

միլ. *qidri* «խփել» ~ հայ. *խաթար-ել* (բրբռ.՝ *խաթրել*) «տեղաշարժել. խճողել» («վերադասավորել»<sup>42</sup>). հմմտ. լուվ. *hattari-* «խփել, հարվածել» (<հե. \**H<sub>1</sub>et-r-*):

---

*/կոմ/* տարբերակայնությունը, ապա վերջիններիս հետ նույնպիսի հարաբերության մեջ է նաև հայ. *բուլ(ւ)* [ավելի ուշ՝ *բուդ(ւ)*] բառը [*բ/կ* տարբերակայնության համար հմմտ. հուն. βίος «կյանք» ~ հայ. *կեանք* (նույնը)], որպիսով թերևս կարելի է վերանայել վերջինիս փոխառություն լինելը. և ըստ այսմ ենթադրել, որ այն բնիկ *բուդ* (\**բուլ*) արմատն է, որը հետագայում բաղաբյուրվել (կոնտամինացվել) է *-ւյ* վերջածանցով փոխառյալ *բսյա* «ցուլ» բառի հետ [հմմտ. *Աճառյան*, 1971, էջ 483. *Ջահուկյան*, 2010, էջ 139]:

<sup>42</sup> Գ. Ջահուկյանը, ոչ անկախ նախորդ ուսումնասիրողներից, հայ. *խաթարել* «քանդել, ավերել, քայքայել» (նաև *խաթել* «նվազել, թուլանալ»), այլև *խացակ* (բրբռ. *խածուկ*) «բժավոր, պտավոր, արատավոր, հիվանդ, տկար», *խացակել* (նաև *խացկել*) «ծախսել, սպառել, պակասեցնել» և սրանցից բաղադրված ձևերի համար, իբրև ընդհանուր արմատի *խաց-*

ե) Միլ. x ~ հայ. *h* (°). հմմտ. խեթ.-լուվ. *h(a)*- (մեծ մասամբ՝ հետին շարքի a և u ձայնավորներից առաջ) (< հե. \*H): Օրինակ՝

միլ. *xlu-sa* ~ հայ. *հայ-ածել* «հեռացնել, վանել, քշել», թերևս նաև *հայ-* (կրկնական՝ *հայ-հոյ-*, *հայհոյել* «կռվել, վիրավորական խոսք ասել») «ծաղրական բացականչություն» (°). հմմտ. խեթ. *halluwai-* «վիճաբանել. գժտվել, կռվել, հայհոյել» (<հե. \*H<sub>2</sub>alu-).

միլ. *xuma-* ( նաև *kuma-*) ~ հայ. (բրբռ.՝ Մուշ, Ալշ.) *հումա* «չեփված, չմշակված՝ հում (կաթի) սեր». «հում սեր» (°) [<հե. \*koum- / \*kum- «մաքուր», ավելի նախնականը՝ հե. \*seu-/\*su- «մզել, ճզմել (հեղուկ). հյութ (քամել), դուրս հանել՝ բերել»]. հմմտ. հինդկ. *sunóti* «մզում է, ճզմում է», ավեստ. *hunaoitī*, այլև հինդկ. *sutá-* «քամած, ճզմելով դուրս բերված», հիբլ. *suth* «հյութ. կաթ», հվգերմ. *sou*, հանգլ. *sēaw* «հյութ». իբրև պաշտամունքային (աստվածային) խմիչք՝ հմմտ. հինդկ. *sóma-* «սոմա (խմիչք)», ավեստ. *haoma-* «հաոմա (խմիչք)» [հմմտ. Pokorny, 1959, p. 912. *Áâbî*, 1980, c. 18. *Āâi êðâêêäçâ, Êââî î â*, 1984, c. 653]<sup>43</sup>.

միլ. *qaja* «զոհարան. զոհասեղան» ~ հայ. *հա՛* (\**hu-* °) «հավանության նշան՝ բառ», *հո՛*, (բրբռ.) *խո(ւ)* «զարմանքի՝ հարցման բառ-նշան» (°). հմմտ. հիեթ. լուվ. *haiani*, խեթ. *hā-* «հավատալ» (*hāmi* «հավատում եմ»), այլև լատ. *ōmen* «(նախա)նշան. հանդիսություն, ծես» (<հե. \*Ho-) [*Áâbî*, 1980, c. 18. *Āâi êðâêêäçâ, Êââî î â*, 1984, c. 805]<sup>44</sup>:

զ) Միլ. x(x) ~ հայ. *ø* (զրո). հմմտ. խեթ. *h*, լիկ. *χ/hh* (< \*-aH<sub>2</sub>-): Օրինակ՝

---

*/խաթ-/խած-/խոց* տարբերակներ, թեականով (հարցականով) դիտում է ծագած հե. \* *khōth-* (\**skēth-*, \**skōth-*) արմատից [*Ջահուկյան*, 1987, էջ 149, 215, այլև 2010, էջ 308, 323]:

<sup>43</sup> Չի բացառվում հայերեն բառի՝ իրանական լեզուներից փոխառություն լինելը:

<sup>44</sup> Հայ. *հա՛* «ահա, ահավասիկ» բառը, սովորաբար դիտվում է իբրև «բնաձայնական բառ» [*Ջահուկյան*, 1987, էջ 608, այլև 2010, էջ 437]:

միլ. mlu-xx- (<\*m<sub>l</sub>d-u-aH<sub>2</sub> «աղոթել. երկրպագել») ~ հայ. *մաղթել* (<\*m<sub>l</sub>-th-<sup>o</sup>) «աղոթել». հմմտ. խեթ. maldai- «աղոթք անել, մաղթել. երկրպագել աստվածներին՝ զոհ մատուցելով», լիտվ. meldžiù «աղոթում են», հւլալ. moliti «աղոթել», հռուս. ì î è è Ò Ù «աղոթել՝ զոհաբերմամբ», հրգերմ. meldōn «տեղ հասցնել. հայտնել», գերմ. melden «տեղեկացնել. հաղորդել», անգլ. meld «ձանոթացում» (<\*meld<sup>[h]</sup>- «աղոթել՝ զոհաբերմամբ») [Pokorny, 1959, p. 722. *Áàþí*, 1980, c. 18. *Áàì é-ðáèèäçä, Èäàí í â*, 1984, c. 803. *Ջահուկյան*, 1987, էջ 84, 138, 2010, էջ 25, 35]<sup>45</sup>:

2. *Բառա(ճևա)կազմական զուգադիպումներ*: Սրանք մեծ մասամբ վերաբերում են անվանական և բայական հիմքերի կազմությանը, մասամբ՝ բառերի կամ արմատների ածանցմանը:

ա) Գոյականական հիմքի -a/-i անցում կամ պահպանում (<sup>o</sup>) ~ հայ. -h/-w (<sup>o</sup>): Օրինակ՝

միլ. xaba «ոչխար», ընդհ. լուվ. \*H<sub>2</sub>awi- (նույնը) ~ հայ. *հովհ-ւ* (<հե.\*Hov-i-) [*Áàþí*, 1980, c. 21. *Áàì éðáèèäçä, Èäàí í â*, 1984, c. 159, 577 և այլն].

միլ. qla- «սրբավայր. տաճար» ~ հայ. *կլայ* «բերդ. ամրոց» (հմմտ. *Հոսկլայ*). հմմտ. լուվ. hila «(տաճարի եկեղեցու) դուռ», այլև հուն. (դոր.) κλαῖς «բանալի», լատ. clāuis «բանալի», claudō «փակել, կողպել», հւլալ. ključī «բանալի» և այլն. սեմ. \*k-l-՝ «պահել, կասեցնել. բաց չթողնել». ակկադ. kalû «պահել, կանգնեցնել», արամ. k<sup>o</sup>lā՝ «խանգարել, խոչընդոտել», արաբ. kala՝a «պահել, հսկել» և այլն (< \*k<sup>[h]</sup>laH<sub>2</sub>- «փակել, կողպել. բանալի») [*Áàþí*, 1980, c. 18. *Áàì éðáèèäçä, Èäàí í â*, 1984, c. 874-875].

բ) Ուղղական հոլովի ընդհ. խեթ.-լուվ. \*-s (< հե. \*s) վերջավորության կորուստն անդրադառնում է ոչ միայն միլերենի, այլև հայերենի վրա. միլերենում բառը վերջանում է ձայնավորով: Օրինակ՝

<sup>45</sup> Գտնում են, որ հե. \*-aH<sub>2</sub>- բայածանցը տալիս է լուվ. -x(x) [Եսոն, 1980, c. 18]: Ի դեպ՝ համեմատությունը միլերենի հետ կարող է վերացնել բառի ծագման վերաբերյալ հարցականը [Ջահուկյան, 1987, էջ 138]:

միլ. ěni «մայր» ~ հայ. *հան(հ)* «(ծնողի) մայր. տատ». հմմտ. խեթ. *hanaš*, (տր.-ներգոյ. հոլ.) *hanni* «տատ» [իմա՛ Էհաննա՛հաննա- «խեթ. կանացի դիցանուն». հմմտ. հայ. *Քանաքարա* <\**Քանաքանայ* (°)], լուվ. *anni-s* «մայր», լիկ. *չնա* «մայր» (°), հուն. *άνυς* «տատ», լատ. *anus* «ծեր կին», հրգերմ. *ana* «տատ» և այլն [< հե. \**Hann-(s)* (°)] [հմմտ. *Āāi ēđāēēāçā, Ēāā-í î â*, 1984, c. 766. *Ēāāí î â*, 1987, c. 210].

միլ. *xali* «օր» ~ հայ. (բրբռ.) *հալ* «վիճակ» (< «օր») (օրինակ՝ «ի՞նչ *հալի* ես» - «ի՞նչ օրի ես»). հմմտ. հիեր. լուվ. *hali* «օր. ժամ(անակ)», լուվ. «օր» (< հե.°) [*Āāpí*, 1980, c. 21. *Tischler*, 1983, p. 129]<sup>46</sup>:

գ) Գոյականական և ածականական վերջածանցման հետ կապված գուգադիպումներն առանձնացվում են ըստ համապատասխան ածանցների գուգորդելիության:

*Գոյականական (անվանական)* գուգադիպումներից են հատկապես հետևյալները:

ա. Միլ. *-la* (գործողի անուն ցույց տվող բայանվան կազմիչ). հմմտ. հայ. *-(ա)ղ* (°) [< հե.\**-l(o)-*]: Օրինակ՝

միլ. *qidrala* «զինվոր, զորական» (< *qidri* «խսիել»). հմմտ. հայ. *թակաղ* (< *թակ* «փայտ», «մուրճ»), *կենցաղ* (*կեանք* «կյանք»), *խանդաղ(-ատ)*, *խանդաղ(-անք)* «գորով. սեր» [*Āāpí*, 1980, c. 21. *Āāi ēđāēēāçā, Ēāāí î â*, 1984, c. 394-395. *Չահուկյան*, 1994, էջ 55, այլև 2010, էջ 795]:

բ. Միլ. *-ē(n)i* (բայանվան կամ անուններից ածանցված բառերի կազմիչ). հմմտ. հայ. *-են(հ)* [< հե.\**-e(n)i*]: Օրինակ՝

միլ. *zrētēni* «ներժված, հերձվածող. թշնամի». հմմտ. հայ. *վայրենի* (*վայրի*) «օտար, այլ տեղացի», թերևս նաև *հայրենի*, *այժենի*, *ուռ(են)ի* (< հե.\**er-* + *e<sub>2</sub>-*), *ուլ(-են)ի* [< հե.\* *-po-lo* (<\**pōu-*) և այլն. հմմտ. հինդկ. (սեռ. հոլ.) *agnēh* (< *agníh*) «կրակ» [<\* հե. *-e(n)i*] [*Āāpí*, 1980, c. 21. *Āāi ēđāēēāçā, Ēāā-í î â*, 1984, c. 218. *Չահուկյան*, 1994, էջ 64, այլև 2010, էջ 751, 805]:

<sup>46</sup> Հայ. *հալ* բառ(արմատ)ը չունի որևէ ստուգաբանություն: Ըստ Տիշլերի՝ լուվերենի համար ևս հնդեվրոպական որևէ ձև չի վերականգնված:

գ. Միլ. x/q [գործողի անուն (nomen agentis) նշանակող մասնիկ]. հմմտ. հայ. *թ/հ* (?). հմմտ. խեթ. z (°): Օրինակ՝

միլ. alβānalax (< alba «աղաչել, աղերսել»). հմմտ. հայ. *աղաչեմ* (\**աղալ-թ-եմ*) «աղաչել, աղերսել. աղոթք անել». հմմտ. խեթ. aruāizzi «աղոթում է. դիմում է», հուն. (հուն.) ἄραομαι «աղաչում եմ. աղոթք եմ բարձրացնում՝ առաքում», ἄρη «աղոթք. անենք» (< \*αρϝ) (< հե. \*arū- «աղաչել. աղոթք բարձրացնել՝ առաքել») [հմմտ. *Áâþí*, 1980, c. 21-22. *Āài êðǎëèäçǎ, Êââ-í î â*, 1984, c. 802]:

դ. Միլ. -ija. հմմտ. հայ. *-եայ* (-t): Օրինակ՝

միլ. trǎmilija «լիկիացի, լիկիական (\*լիկ-եայ °)», tulijelije [tulijeli «ժողովի՝ խորհրդի (վերաբերյալ)»] «ժողովական, խորհրդական (ընդ-ժողովեայ)». հմմտ. հայ. *այծ* (\**այծի* < հե.\*aig'i-) - *այծեայ* «այծի (մազից պատրաստված)», *սիրս* (\**սրսի* < հե.\* k<sup>[h]</sup>er-t'-) - *սրսեայ* «սրտապինդ, քաջ». հմմտ. հինդկ. (սեռ. հոլ.) agnéh (< agnīh) «կրակ», լատ. ignis «կրակ», հայլավ. ognī (նույնը) [*Áâþí*, 1980, c. 22. *Āài êðǎëèäçǎ, Êââ-í î â*, 1984, c. 218, 225, 257 և այլն. *Êî ðî éââ*, 1976, c. 88. *Ջահուկյան*, 1994, էջ 63, այլև 2010, էջ 803]:

ե. Միլ. -k-. հմմտ. հայ. - (*ու*)կ. հմմտ. խեթ. չուվ. -k (< հե. \*k): Օրինակ՝

միլ. utaki «առաջնորդ(ող), տանող» (< ute- «տանել»), sabaka «ուղղորդ(ող) (< saba- «ուղարկել»°). հմմտ. հայ. *եղուկ* «խեղճ, թշվառ. ողորմելի. ավա՛ղ, ափսո՛ս» (նաև՝ *եղկ* «զաղջ, գոլ, տաք»°) [*եղ-* (< հե. \*el-). հմմտ. *ող-թ* «ողբ», *ող-ողմ* «զուրթ. խիղճ», *ող-ող-անալ* «զալ, ողբալ» (<հե. \*ol-), *ուլ-ուլ-ալ* «զալ, ողբալ» (<հե\* ul-ul-) և այլն] և *-ուկ* (հմմտ. *մսնուկ* «երեխա») [< հե. \*-(u)k(on)-°] [*Áâþí*, 1980, c. 22-23. հմմտ. *Ջահուկյան*, 1987, էջ 121, 136, 164, այլև 1995, էջ 140, 2010, էջ 215, 600-601, 748]:

զ. Միլ. -b- (վերացական անունների կազմիչ՝ անվանական և բայական հիմքերից). հմմտ. հայ. *բ*. [<\*bh, (\*p) (°)]: Օրինակ՝

միլ. xñtaba «ղեկավարում, ղեկավարելը» (< xñta «ղեկավարել, գլխավորել», wixsaba «ղրական (որևէ բան)» (< waxsa). հմմտ. հայ. *խեղ-թ* (*խիղ-թ*) «ծիլ, ընձյուղ. (արմատի) մազմզուկ՝

թելեր» // *խիդ-բ* «շատ, ստվար. որոշակի քանակի» [ $< * (s)kel-$  (e)p- «կտրել»], *ող-բ* «ողբ» [ $< հե. *ol-bh-$  ( \*el-, \*ol- )], *շեղ-բ* «(դանակի մետաղյա) մաս, (դանակի) բերան» [ $< *skel-p-$  (\*skel-) «կտրել»]. հմմտ. խեթ. *h̄el̄pi-* «մատղաշ. թարմ (կանաչ)», հուն. *σκολοψ* «ցից, (կարթի) ծայր, ծեղ և այլն», հանգլ. *scielf* «(ժայռի) ծայր», այլև գոթ. *halbs* «կես (մաս)» [*Байон* 1980, с. 23. հմմտ. *Աղայան*, 1974, էջ 77-78, 126-127. *Ջահուկյան*, 1987, էջ 192, 317, այլև 2010, էջ 326, 330]:

*Ածականական (դերբայական)* գուգադիպումներից առայժմ հնարավոր է նշել մեկ-երկուսը:

ա. Միլ. -s(i) («հարաբերություն՝ պատկանելություն ցույց տվող մասնիկ»). հմմտ. հայ. *-(ա/ե)ցի*. հմմտ. լուվ. *-(s)si*: Օրինակ՝

միլ. *tedessi* «հայրական» ( $<tedi$  «հայր»). հմմտ. հայ. *բանացի* «բառ առ բառ. բառական», *հայեցի* «հայկական», *հարևանցի* «հարևանական, կողմնակի» [հայ. *-ցի*  $< հե. *skīo-$  ( $< *sko-$ ,  $*-īo-$ )]. հմմտ. խեթ. *pir*, (սեռ. հոլ.) *parnaš* «տուն», լուվ. *parnassi-* «տանը (վերաբերող)» ( $<parna$  «տուն»). հմմտ. հուն. *Παρνάσ(σ)ος* «Պառնաս (լեռ). փխբ.՝ աստվածների տուն» [*Laroche*, 1959, 139. *Անթրի*, 1980, с. 23. *Ãàì èðãèèäçá, Êâàí í á*, 1984, с. 900. *Ջահուկյան*, 1994, էջ 61, այլև 2010, էջ 751, 805]:

բ. Միլ. -l(i) (ածականների կազմիչ՝ որակական և հարաբերական իմաստով). հմմտ. հայ. *-(ա)լ(ի) // -(ե)լ(ի)* (°). հմմտ. խեթ.-լուվ. *-la-*, թոխ. *-lye*, սլավ. *-l(ǫ)*: Օրինակ՝

միլ. *zbali* [ $< * d'iwali-$  «աստվածային» ( $< * t'ɛy-$  «աստված»)]. հմմտ. հայ. *սիրելի* «սիրելի», թերևս նաև *(թալ)ալ* «թավալում, գլորում, տապալում. մի կողմ ընկած, տապալված», *(տալ)ալ* «տապալված, թավալված» (իմա՝ *-ալ*) (°). հմմտ. խեթ. *daluk/gnula-* «երկարացնելի», *barganula-* «բարձրանալի», թոխ. *yokalle* «ըմպելի», *śwālle* «ուտելի», սլավ. *neslŭ* «տանելի, կրելի» [*Laroche*, 1959, 139. *Անթրի*, 1980, с. 23. *Ãàì èðãèèäçá*,



*Ēââî î â*, 1984, cc. 339, 393-394. *Ջահուկյան*, 1987, էջ 153, 214, այլև 1994, էջ 54, 2010, էջ 721]<sup>47</sup>:

գ. Միլ. -m- (միջին սեռի անկատար դերբայի կազմիչ՝ անցողական բայերից). հմմտ. հայ. *-(m)մ(ն)* (<sup>o</sup>): Օրինակ՝

միլ. zireima «զարդարված. զարդարուն» (< zirei), kuprimi «օրհնված, օրհնյալ» (< kupri) ~ հայ. *կողմն, ջերմն, սերմն* (< հե. \*-men- /-mn-), *իմացումն, լքումն, հոլովումն, մաստուցումն* [< հե.\*-men- / -mո («նախորդող -m հիմքային տարրով՝ հե. -cu-/u-») և այլն] (< հե. \*mo-) [*Āâþî*, 1980, c. 23. հմմտ. *Āâî êðǎëèǎ-çǎ, Ēââî î â*, 1984, cc. 394-395. *Ջահուկյան*, 1995, էջ 138, 140]:

4. *Բառ(արմատ)ային զուգադիպումներ*: Այս դեպքում նկատի ունենք այն համընկումները, որոնք իբրև ցեղակցային ժառանգություն, ծագում են մեկ ընդհանուր աղբյուրից՝ հե. նախալեզվից, այլև կարող են համեմատության մեջ դրվել ոչ ցեղակից՝ այլ լեզվաընտանիքի պատկանող լեզուների հետ::

ա) Միլ. asāna-mla ~ հայ. *աշխ(-ոյժ)*, (բրբռ.) *էշխ, (h)եշխ* «եռանդ. ջանք. կարողություն». հմմտ. խեթ. ešhar- (սեռ. հոլ. ešhanaš) // išhar-, լուվ. ašhar «արյուն», ašhanuqantiš «արյունոտված, արնաշաղախ», այլև հինդկ. ásṛk, (սեռ. հոլ. asnáh), թոխ. U ysār, Բ yasar «արյուն», հուն. ἔαρ, εἶαρ «արյուն», հլատ. aser (asser) «արյուն», հայ. *արիւն* (նույնը) և այլն [*Kronasser*, 1956, p. 39. *Ēî ðî êââ*, 1976, ñ. 83. *Puhvel*, 1984, p. 305-308. *Āâî êðǎ-èèǎçǎ, Ēââî î â*, 1984, c. 206, 816 և այլն ]<sup>48</sup>:

<sup>47</sup> Ջահուկյանը գտնում է, որ «դերբայական այս ածանցը կազմված է հիմքային ձայնավորներից (ընդ որում *-h*-ն փոխարինվում է *-t*-ով, իսկ *-m*-ն սղվում է) և *-jh* տարրից, որ հավանաբար գալիս է հ.-ե. \*-lijo- [\*-i(o)-, \*ijo] բաղադրյալ ածանցից», որն իր զուգահեռներն ունի ոչ միայն թոխարականում, այլև, ինչպես տեսնում ենք, խեթականում, սլավոնականում [*Ջահուկյան*, 1994, էջ 54]:

<sup>48</sup> Հայ. *աշխ*- արմատը Ջահուկյանը չունի առանձին, տալիս է *աշխատ* «հոգևորություն, չարչարանք, աշխատանք»՝ իրան. փոխառություն, *աշխտոյժ* «ուժեղ, զորեղ, արի, կտրիճ» արմատը՝ չստուգաբանված բառ կամ «իրան. փոխառություն՝ բուն աղբյուրը չհաստատված», իսկ հայ. *էշխ* արմատը «սեր» իմաստով դիտվում է արաբ. փոխառություն [*Աճառյան* 1971, էջ 219. *Ջահուկյան*, 2010, էջ 64. *Լոշոյան*, 1963, էջ 71-72]: Եթե ընդունելի է համեմատությունը խեթալուվական լեզուների հետ, ապա

բ) Միլ. xaja (°) «(ժայռափոր) տաճար. այրիվանք» (°) ~ հայ. (բրբռ.) *խայա* «(հաստաբեստ) քար, ժայռ» (°). հմմտ. խեթ. *ḫā-* ( եգ. 1-ին դ. *ḫami*) «հավատալ», «համարել ճիշտ՝ հավաստի», հիեր. լուվ. *ḫaiani-* «տաճար. այրիվանք», լատ. *ōmen* (հլատ. *osmen*) «նշան, նշանակ. ցանկություն, հավանություն. (հանդիսավոր) հավաստում» [Ēī ḏī éāā, 1976, թ. 85. *Tischler*, 1983, p. 120-121. *Āāī éḏāēēāçā*, *Ēāāī ī ā*, 1984, cc. 805, 807, 884]<sup>49</sup>:

գ) Միլ. *qidri* (այլև *qidrala*) [nom. agentis. հմմտ. *Κιδρα-* (անձնանուն)] ~ հայ. *խաթարել* (բրբռ.՝ *խաթր-ել*) «տեղաշարժ անել, տեղափոխել. վերաշարել՝ վերադասավորել». հմմտ. խեթ. *ḫatrai-* (այլև *ḫatta-*°) «գրել», «հաղորդել, տեղեկացնել», «գործողել», «հասու լինել, հասկանալ», ավեստ. *āθaiti* «փչացնել (ինչ-որ բան). վնասել (ինչ-որ մեկին)», վենետ. *atraest* «(թեական իմաստով) ճանկել, քերծել» [Տիշլերի նշանակման) [հմմտ. *Ēī ḏī éāā*, 1976, c. 85. *Tischler*, 1983, p. 226-227]<sup>50</sup>:

դ) Միլ. *cetu* (հրամ. *ձև*), այլև *ciciti* (սահմ. ներկայի *ձև*) ~ հայ. *-կիտ* (հմմտ. *սկանակիտ* «մաքուր, վճիտ» [նխն. իմաստով՝ «(մաքուր, թափանցիկ) եղած, դրված» (°)]. հմմտ. խեթ. *ki-* «պառկել. գոյություն ունենալ», *kikki-* «պառկել, պառկած լինել. դնել, տեղավորել», այլև *kittari* (եգ. 3-րդ դ.) «պառկում է», հինդլ. *śte* «պառկում է. հանգչում է», «պառկած», ավեստ. *śayā* «պառկած», հուն. *κείται* «պառկում է» (< հե. \*k<sup>[h]</sup>e<sub>1</sub>- «պառկել»)

թերևս կարելի է վերանայել *աշխ-/էշխ*, (*h*)*էշխ-* «եռանդ. ուժ, կորով» արմատի ծագումնային առնչությունը ոչ միայն հե., այլև մյուս լեզուների հետ:

<sup>49</sup> Եթե հնարավոր լինի ենթադրել պաշտամունքային առարկայի (օբյեկտի)՝ «քար, ժայռ. տաճար» և բուն պաշտամունքի (արարողության) «հավատալ. հավանություն տալ. նշանակում» առնչություն:

<sup>50</sup> Չահուկյանը, ինչպես և նախորդ ուսումնասիրողները, սակայն հարցականով, հայ. *խաթարել* (\**խաթ-ար-ել*) բառը բխեցնում է հե.\**khəth-* [\**skēth-*] ձևից [*Pokorny*, 1959, c. 950. *Չահուկյան*, 1987, էջ 149, 215, այլև 2010, էջ 453]:

[հմմտ. *Ēî ḏî êââ*, 1976, ր. 85. *Āàì êḏâêêäçâ, Êââî î â*, 1984, c. 94, 295]<sup>51</sup>:

ե) Միլ. ci (հոգն. տր. հոլ.), cize (զործ. հոլ.), ալլև ci-be ~ հայ. *քա* [(կանանց լեզվում) «սիս, և (սաս. ճի՞շտ) (°). օրինակ՝ «*Քա* ինչ եղավ», «*Քա* ու՞ր է» և ալլև] հմմտ. խեթ. ka- /ki- (ցուց. դեր.) «նա. սա, այս», ka-, kiat «այստեղ», լուվ. za- «այս տեղում», հինդկ. -ca «և», հույն. -τε (միկ. -զե) «և», լատ. -que «և, նաև (այլև, բայց և)» (<հե. \*-k<sup>[h]o</sup>e) [*Ēî ḏî êââ*, 1976, ր. 85. *Tischler*, 1983, p. 456-459, 564-565, 567. հմմտ. *Āàì êḏâêêäçâ, Êââî î â*, 1984, c. 353-354, 365-366]:

զ) Միլ. lebi, ալլև lelebi «հափշտակիչ, զավթիչ» (°) ~ հայ. (բրբռ.) *լուփ/լափ* «ձեռքի ափ» (°), ալլև *լիլիալ* «անհասրեր դառնալ. հապճեպանալ» (°). հմմտ խեթ. lap- (< հե. \*leb- «բռնել, խլել, ճանկել») [*Ēî ḏî êââ*, 1976, ր. 85. հմմտ. Pokorny, 1959, p. 655-657]:

է) Միլ. laβra- «քարե սալիկ» ~ հայ. (բրբռ.) *լեպան* «(հարթ՝ ողորկ, տափակ) (զլա)քար (նոսրով առաջ տանելով խաղալու համար)» (°). հմմտ. լուվ. lawar- «կոտրել, ջարդել», լիդ. λαβρος «կազին, սակր. հատիչ», հույն. λάβρα «(կիրճի՝ ժայռի) մուտք, ծերպ» [հմմտ. հույն. λαβύρινθος «քավիդ, լաբիրինթոս» (°)] (< հե. \*l̥eu-, l̥eu-) [հմմտ. Pokorny, 1959, p. 683. *Ēî ḏî êââ*, 1976, ր. 85]:

ը) Միլ. luga- «հրկիզել, այրել, վառել» ~ հայ. *լոյս* «լույս». հմմտ. խեթ. lukk- «վառել. լույս տալ», lukk-eš «վառվել, լույս տալ. պայծառանալ», հինդկ. roká «լույս», rúsant «լուսավոր, փայլուն», հույն. λευκός «սպիտակ. պայծառ», լատ. lūx «լույս», թիլ. Բ luk-s- «լուսավորել. լույս տալ» (< հե. \*l(e)uk<sup>[h]</sup>- «լույս տալ. լուսավորել») (հմմտ. էլամ. luik- «կրակ») [*Ēî ḏî êââ*, 1976, ր. 85. *Āàì êḏâêêäçâ, Êââî î â*, 1984, c. 114, 178, 225,

<sup>51</sup> Ըստ Աճառյանի՝ «անստույգ բառ»՝ մերժելով «Նոր հայկազյան բառարանի» բացատրությունը՝ *կիտ*- «կիտեալ» (իմա՝ «կիտված, դրված»), իսկ Չահուկյանը նախ՝ թեականով գտնում է, որ այն «ձայնդարձով կապված է *կիտ* բառի հետ», այնուհետև՝ ծագած է համարում «հե. \*geid- [\*geid-] «կծել, խայթել, խուտուտ ածել» արմատից» [*Աճառյան*, 1971, էջ 592-593. *Չահուկյան*, 2010, էջ 406]:

229, 512, 883. *Ջահուկյան*, 1987, 136, 207, այլև 2010, էջ 300-301]:

բ) Միլ. *medi, metu* «սահմանել, (նախ)որոշել» (°) ~ հայ. *մէտ* «(կշեռքի) միջին կետ. հակում, միտում» (իմա՝ *հակամէտ* «հակված և միտված դեպի որևէ բան»)։ հմմտ. խեթ.-լուվ. *ma*, հլատ. *re-medium* «միջոց» (< *medeor* «բուժել, ապաքինել») (< հե. \**me-* «ձգտել. առաջ գնալ՝ սլանալ») (< հե. \**mē-*, \**m-e-t-*) [*Pokorny*, 1959, 703. *Êî ðî éââ*, 1976, թ. 85. *Āâðöâî áâðâ*, 1982, թ. 17. *Ջահուկյան*, 2010, էջ 525]։

ժ) Միլ. *mle*, *-mle* «ընձյուղ, շիվ. սերունդ, ժառանգ» ~ հայ. *մուղ* (*մղ-եմ* «առաջ տանել, հրել» // *-մուղ* (հմմտ. *տրմուղ* «անփորձ, անվարժ») (°) «մղում, քաշում, հրում», *մուղ* «վարժ»։ հմմտ. խեթ.-լուվ. *mala-* (*mle-*) «շարժել, սղել» (°) [< հե. \* *mu-l-* (\**meu-*) «հայտնվել, ի հայտ գալ. լույս ընկնել», «ծնվել, սերվել. սերունդ լինել» (°)] [*Êî ðî éââ*, 1976, թ. 85. *Tischler*, 1990, p. 100-103. *Ջահուկյան*, 2010, էջ 537-538, 737]<sup>52</sup>։

ժա) Միլ. *māmre* «մեռնել» (°) ~ հայ. *մեռ(-անիս)* «մեռնել. վախճան»։ հմմտ. խեթ.-լուվ. *mer-* «մեռնել» (այլև *meirta* «կորսվեց»), հինդկ. *mriyáte* «մեռնում է», լատ. *morior* «մեռնում եմ», հայլավ «մեռնել» (< հե.\**mer-* «մահ, մեռնել. վերանալ») [*Êî ðî éââ*, 1976, թ. 85. *Āâî éðâéèâçâ*, *Êââî î â*, 1984, c. 475. *Ջահուկյան*, 1987, էջ 138, 209, այլև 2010, էջ 523]։

ժբ) Միլ. *puce-* «խփել, դիպչել» ~ հայ. *պակնուլ* (*պակչիլ*) «վախենալ» (°). հմմտ. խեթ. *puggāi* «ատել» (< հե. \**peu-* *g/k* - «խփել. հրել») [*Pokorny*, 1959, p. 828. *Êî ðî éââ*, 1976, թ. 86]<sup>53</sup>։

ժգ) Միլ. *da-* «տալ» (°) ~ հայ. *տալ* «տալ, հանձնել», (աոր.) *ետ* «տվեց»։ հմմտ. խեթ. *dā-* «վերցնել», լիդ. *dā-* «տալ», այլև հինդկ. *dādāmi*, «տալիս եմ», (աորիստ) *ádām* «տվեց», հայրսկ. *dadātaw* «(նա պիտի) տա», հուն. *δίδομι* «տալիս եմ»,

<sup>52</sup> Ջահուկյանը հայ. *մուղ*, *մղեմ*, այլև (բրբռ.) *մուլ*, *մլել* բառերի բխցումը հե. \* *mōl-* արմատից տալիս է հարցականով. համեմատությունը միլեթեմի հետ, թերևս, վերացնում է այդ հարցականը [*Ջահուկյան*, 1987, էջ 139]։

<sup>53</sup> Ըստ Ջահուկյանի՝ «արմատը փոխառություն է *պախ-* արմատի հետ միասին, բայց բուն աղբյուրը (իրանական<sup>°</sup>) չի հավաստված [*Ջահուկյան*, 2010, էջ 616]։

(աորիստ) ἔδωκα «տվեց», լատ. dō «տալիս եմ», լիտ. dúomi «տալիս եմ», պրուս. dāst «տալիս է», հւլավ. damī «տալիս եմ» և այլն (< հե. \* dō- «տալ», կամ \* t'oh- «տալ. վերցնել») [Pokorny, 1959, p. 223-225. *Ēī ḏī ēāā*, 1976, թ. 86. *Āāi ēḏāēēäçā, Ēāā-ī ī ā*, 1984, c. 41, 50, 753, ]:

ժդ) Միլ. de- «նախ(ա)-, վաղ(ա)-, մինչ(և)» ~ հայ. *թէ* (\**թե*) «թե, եթե, որ». հմմտ. լիկ. Ա (d)de- (նույնը) (°) , խեթ. \*da- «դե-այի. մինչև», լիդ. da- (նույնը) (°) (< հե. \*do «վրա. մոտ») [հմմտ. Pokorny, 1959, p. 225-226. *Ēī ḏī ēāā*, 1976, թ. 86. *Ջահուկյան*, 2010, էջ 265-266]:

ժե) միլ. tali «քուրմ» (°) [հմմտ. talika «սպասավորել»(°)] ~ հայ. *տաղ* «տաղ, երգ, քերթված, բանաստեղծություն» [նխն.՝ «ձոն, նվիրաբերում (աստվածներին)»]. հմմտ. tallija «աստված կանչել, դիմել աստվածներին», այլև հիսլ. þulr «սրբասացություն բանավոր կատարող (անձ)» (< հե. \*tel-, «բարձրացնել. վեր հանել») [Pokorny, 1959, p. 1060-1061. *Ēī ḏī ēāā*, 1976, թ. 86. հմմտ. *Āāi ēḏāēēäçā, Ēāāi ī ā*, 1984, c. 808]:

ժզ) Միլ. ddelupeli- «կավե» ~ հայ. *տիղ-մ* (նույնը), (բրբռ.) *տիլ* «ցեխ», *տաղախ* «ցեխ, շաղախ», թերևս նաև *թաղար* (*թաղար*) «խեցե մի տեսակ աման». հմմտ. լուվ. taluppi- «կավ» (< հե. \*d<sup>[h]</sup>eig<sup>[h]</sup>- «կավ» [«(բրուտագործության) նյութ»] [հմմտ. *Āāi ē-ḏāēēäçā, Ēāāi ī ā*, 1984, c. 707, 884. *Ջահուկյան*, 1987, էջ 591, 596, այլև 2010, էջ 579, 719, 729]<sup>54</sup>:

ժէ) Միլ. trppali (այլև trbbdi ) «պտույտ է անում, շուռ է գալիս. դառնում է» ~ հայ. *տարախ* «(անձրևի) թափվելը» (այլև՝ «խառն ինչ», «հորդ անձրև»). հմմտ. լիկ. Ա trbbi «դեմ, դիմաց. հանդիման», tarbi-, trbbci- «ստիպել, հարկադրել. հաղթել, հաղթահարել», լուվ. tarpalli- «փոխարինում. փոխարինելը», հիեր. լուվ. tarpi, tarpāi- «հակառակվել. դեմ կանգնել», խեթ. tarpī- «(չար) ոզի, դև» (< հե. \* terp- «շուռ տալ, շրջել», այլև \*terp-

<sup>54</sup> Հայ. *տաղախ*-ը համարվում է հարավկովկասյան փոխառություն, որն ավելի հավանական չէ, քան համեմատությունը խեթալուվական լեզուների հետ [տե՛ս *Աճառյան*, 1979, 4, էջ 363]: *Ջահուկյան*ը հայ. *թաղար*-ի համար նշում է, որ «սխալ է բխեցումը հնդեվրոպական աղբյուրից», որ գտնում ենք Պոկոռնու բառարանում [*Ջահուկյան*, 2010, էջ 256]:

«գալ, վրա հասնել. սկսվել») [հմմտ. Êî ðî ëââ, 1976, ñ. 86. «Բառզիրք հայոց», 1975, 310. *Չահուկյան*, 2010, էջ 724]:

ժը) Միլ. dewi- «տնել» (°) ~ հայ. տնւ- «տնել, ձգվել» (*տնել* «բաւել, տանել»//*տնել* «տանել, համբերել», ըստ «Բառզիրք հայոցի»). հմմտ. խեթ. tau- (նաև tuqa «հեռվից»), լիդ. tavsa- «ուժեղ, հզոր», կար. tavse (°), ալլև հինդկ. dūrā «հեռու», dáviyas- (համեմատ. աստիճ.) «ավելի հեռու», հիոլ. doë (\*dōwo-) «դանդաղ, տևական», հւլավ. davč, davīnū «վաղուցվա, վաղեմի. հին» (< հե. \*t'eu-) [Êî ðî ëââ, 1976, ñ. 87. հմմտ. *Āâi êðâëëäçâ, Êââí í â*, 1984, c. 230. «Բառզիրք հայոց», 1975, էջ 312. *Չահուկյան*, 2010, էջ 727]<sup>55</sup>:

---

<sup>55</sup> Չահուկյանը, ոչ անկախ նախորդ ուսումնասիրողներից, հայ. տնւ «տևողություն» արմատը բխեցնում է հե. \*deyc- (\*deu-) «առաջ գնալ, հեռանալ, տևողություն» ձևից [ *Չահուկյան*, 1987, էջ 118, 217, ալլև 2010, էջ 727]: Հե. \*t'ü-aH- արմատից է բխեցվում նաև հայ. երկար (<\*dwāro-) «երկար(ատև)» բառը [*Āâi êðâëëäçâ, Êââí í â*, 1984, c. 230]:

## ՀԱՅԵՐԵՆ ԸՄՊԵՄ ԲԱՌԻ ԱՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանում» *ըմպել* «խմել» բայը հանգեցվում է *ումպ* «խմելը, խում» արմատին, որը հայ հին գրական հուշարձաններում հանդիպում է նաև *ըմբել*, *ընպել*, *ընբել* տարբերակներով, այլև *ընբան*// *ընպան* «կոկորդի վերին մասը, (farynx)», *թերումպ*//*թերումբ* և այլն ձևերով. առկա է *բ//պ* և *ն//մ* հնչյունական տարբերակայնությունը [տե՛ս *Աճառյան*, 1977, էջ 599-601]:

Անվանի լեզվաբանը բերում է նաև նախկինում կատարված ստուգաբանական փորձերը, որոնցից թերևս առավել ուշադրության են արժանի Պետերմանի, Լագարդի, մասամբ Հյուբշմանի և Շարպանտիեի կարծիքները, որոնք իրենց մանրամասնությունների մեջ ամբողջական չեն, ուստի բառի ծագումն, ըստ Աճառյանի, մնում է անհայտ [հմմտ. *Petermann*, 1837, p. 17]<sup>56</sup>:

Նշվում է, որ Պետերմանն առանձնացնում է արմատի *ըն*-մասնիկը և մնացած մասը բխեցնում սանս. pa- «ըմպել, խմել» արմատից, որպիսով հետագայում Լագարդը և ուրիշներ այն համեմատում են սանս.-ավեստ. pa- և հուն. πίνω «խմում են» ձևերի հետ:

Մրանք, ըստ Աճառյանի, այլ բան չեն, քան հե. \*po-//\*pi-տարբերակային արմատից առաջացած ձևեր: Հմմտ. սանս. pa-, սահմ. ներկ. 1-ին դ. pibami «խմում են», հայ. (քռչ.) *բիել* // *պիել* «խմել», հուն. πίνω, էոլ. πώνω, կատ. ձևը՝ πεπώκα «խմել», ποσισ, πώμα «արբեցում», լատ. bibō (< \*pibō) «խմել», pōtus «ըմպելիք», հիռլ. ibim «ըմպեն», հկիմր. iben «ըմպենք», կռն. evaf «խմել», հպրուս. pouit «խմել», հսլավ. piti, ռուս. пить «խմել», արբ. pī «խմել» և այլն: Այնուհետև՝ նշվում է հետևյալը. «Այս հարուստ ընտանիքի մեջ հայերենն է միայն, որ համապատասխան բառ չունի. *ըմպել* ձևն է, որ իր *պ* ձայնով (իմա՛ հնչյունական արժեքով – Վ.Հ.) բառական յիշեցնում է հնիս. pō-

<sup>56</sup> Ի դեպ՝ Պետերմանը ոչ թե բխեցնում է սանսկրիտից, այլ համեմատում է սանսկրիտի համապատասխան ձևի հետ, ընդ որում հայ. *պ* տառի արտասանության հետ կապված (“literae *պ* fere semper respondet *բ*”):

// pōi- // pī- արմատը, բայց մանրամասնութեանց մէջ չի յարմարում» [*Աճառյան*, 1977, էջ 599]:

Նկատենք, որ այդ «մանրամասնություններն» են, որ դառնում են հետագա քննարկման առարկա:

Բերվում է նաև Հյուբշմանի համեմատությունը ընդհանուր հե. \*pō-// \*pī- արմատի հետ, սակայն քանի որ վերջինս այդ անում է ոչ վստահաբար, այլ ինչպես Աճառյանն է գրում, «կասկածով», ուստի ինքը նույնպես ձեռնպահ է մնում [հմմտ. *Hübschmann*, 1883, հայ. թարգմ.՝ *Հյուբշման*, 2004, էջ 197, այլև *Hübschmann*, 1897-1898, հայ. թարգմ.՝ *Հյուբշման*, 2003, էջ 447]:

Այնուհետև, Ս. Տերվիշյանը ժամանակին մասամբ ճիշտ է կողմնորոշվել *մմս*-ի ստուգաբանության հարցում՝ գտնելով, որ այն ծագում է հե. \*pō-// \*pī- արմատից՝ շրջամբ (ինվերսիա), այլև *մ* ածականով (\**պու* > \**ուս* > *մմս*): Աճառյանը չի ընդունում նաև Ա.Սեյեի (իր բնորոշմամբ) «մի ճարպիկ բացատրությունը», մանավանդ որ այն մերժում է Հ. Հյուբշմանը: Շարպանտիեն ևս *մմս*-ը կապում է հե. \*pō-// \*pī- արմատի հետ, սակայն գտնում է, որ նախ տեղի է ունեցել արմատի կրկնություն՝ \**pop-* և -*mo* մասնիկի հավելում՝ \**popmo*, այնուհետև շրջում՝ \**poppo*, որից էլ ունենում ենք *մմս*, որն անհավանական է [*Աճառյան*, 1977, էջ 600]:

Աճառյանն ուշադրություն է դարձնում նաև այս արմատի բարբառային, այլև մանկական լեզվի դրսևորումներին: Այսպես, բարբառներից մի քանիսում ունենք՝ *մմբ* (Խարբերդ, Նոր Նախիջևան), *ըմբիզ* (< *ըմպիկ*. Արաբկիր) «մի փոքր կաթիլ», մանկական լեզվում՝ *բու*, *բուս*, *բիվա*, *պու*, *ըմպու* «ջուր», *ըմբզ* (վերջինս Սվեդիայի բարբառի մանկական բառ): Ավելին, նույն տեղում նշվում է, որ կարծիք կա առ այն, որ այլ լեզուների բարբառներում առկա սոմս «ջուր» ձևը փոխառություն է հայերենից:

Գ. Ջահուկյանը, թերևս ոչ անկախ Գ. Ռ. Չուտայից, փորձում է *ըմպեմ* բառի ստուգաբանության հարցում այլ լուծում գտնել, ուստի ամենից առաջ առանձնացնում է *ըմ* և *պեմ* բաղադրիչները՝ դրանք համապատասխանաբար հանգեցնելով



հե. \*anti «առջև, դիմաց» կամ \*ndhos «տակ» և հե. \*pō(i)-// \*pī- «խմել» ձևերին [տե՛ս *Չահուկյան*, 1987, էջ 52, 144, 187, 244, 245 և այլն. հմմտ. *Solta*, 1960, p. 90-91]<sup>57</sup>: Նա միաժամանակ գտնում է, որ՝ «*ըմպես*-ի նախաձևի վերականգնումը դժվարություններ է հարուցում: Մենք ենթադրում ենք թեմատիկ կրկնավոր ներկա, ինչպես հինդկ. *pibati* = հիռլ. *ibid* «խմում է», լատ. *bibō* (\**pi-bō*) «խմում եմ» ձևերում՝ \**pibeti* > \**hipeti* անցմամբ և *ընդ*-ի հետագա հավելմամբ՝ \**ընդ-հիպե* > *ըմպե*: *Ումպ*-ը կազմվել է հայկական հողի վրա՝ *ու*-ի համաբանական (անալոգիական) վերականգնմամբ՝ *ունդ* - *ընդարբույս*, *ունչ* - *ընչացք* տիպի գույգերի հիման վրա» [*Չահուկյան*, 1987, էջ 187, այլև *Áæðóéÿí*, 1982, ճ. 61]:

Իսկ հե. \*anti «դիմաց, առջև», \*ndhos «տակ» ձևերի համար նշվում է հետևյալը. «Վ.-հ. \**andi-* (\**ændi-*?) (հ.-ե. \**anti-* «դիմաց, առջև» և \**ndhos* «տակ»). վերջինս հոլովված ձևով գործածված) > հ. հ. *ընդ*-, հազվադեպ *ընտ*-՝ *դ*-ի և *տ*-ի շփոթությամբ (ձայնավորներից առաջ). որպես նախդիր արտահայտում է և հ.-ե. \**anti*-ից եկող («դիմաց, փոխարեն»), «հետ, միասին»), և \**ndhos*-ից («տակ») եկող իմաստներ՝ վերջինս մասնավորապես գործիական հոլովով» [*Չահուկյան*, 1987, էջ 244]:

Բառի ստուգաբանական քննության դրվածքն այսպիսին է եղել ավանդական համեմատաբանության մեջ:

Սակայն վերջին ժամանակներս բավականին մեծ աշխատանք է կատարվել համեմատվող լեզուների ստուգաբանական-տիպաբանական ուսումնասիրության բնագավառում, որոնցում որոշակի տեղ է տրվում նաև հայերենի փաստերին: Իսկ վերջիններս ավելի լայնորեն կարող են գործադրվել, քան որ գործադրվելիս են եղել, եթե նկատի ենք ունենում լեզվի բոլոր տարբերակներում առկա փաստերը: Մեր ուշադրության առարկա *ըմպես* բառի ստուգաբանությունը նման մի քայլ է՝ հիմնված նորագույն ուսումնասիրությունների տվյալների վրա,

<sup>57</sup> Նկատենք, որ չի բացառվում այն, որ Չոլտան նման մոտեցում է հանդես բերում՝ ելնելով ոչ միայն Պետերմանի և ուրիշների, այլև հատկապես Աճառյանի տվյալներից (որոնց անդրադարձանք վերևում):

որով բնականաբար մեծանում է հայերենի տվյալների ավելի լայն գործադրման հավանականությունը:

Այսպես, հետագա ուսումնասիրողները գտնում են, որ «խմել» և «(հեղուկը) կում անել» իմաստների համար ընդհանուր հնդեվրոպականում առանձնանում է երկու հիմք՝ \*ek<sup>[h]o</sup>- և \*p<sup>[h]o</sup>H(i)-:

Ընդ որում առաջինի դեպքում՝ հմմտ. խեթ. ekuzzi «խմում է», հոգն. ք. 3-րդ դ. akuzanzi «խմում են», լուվ. aku-, հիեթ. լուվ. aku-, պալ. ahu «խմել», քոխ. Ա, Բ yok- «խմել», այլև «ջուր» իմաստի համար՝ լատ. aqua «ջուր», գոթ. aha «զետ», հիսլ. æger «ծովի աստված»:

Իսկ երկրորդ դեպքում՝ հմմտ. խեթ. paš «կուլ տալ», հուն. πίνω «խմում եմ», πώθι «խմիր», ինչպես նաև հուն. πώμα «արբեցում, խմելը», հինդկ. pibati «խմում է», լատ. bibō (< bibēre) «խմում եմ», հիռլ. ibid «խմում է», պրուս. poieiti «խմում է», հսլավ. pijo «խմում եմ», ալբ. pi «խմել», հայ. *ըմպել* [տե՛ս *Mayrhofer*, 1963, p. 286-287. *Āài êđāēēāçā, Êââî î â*, 1984, c. 702-703]:

Ենթադրվում է նաև, որ սկզբնապես \*ek<sup>[h]o</sup>- արմատը նշանակում էր «խմել (ջուր)», իսկ \*p<sup>[h]o</sup>H(i)- արմատը՝ «ըմպել (հյութ՝ մեղր, գինի, օշարակ և այլն)» [տե՛ս *Āài êđāēēāçā, Êââî î â*, 1984, c. 703]: Նկատենք, որ այս տարբերակումն առանձնապես լավ է արտահայտված, օրինակ, հայերենում. հմմտ. *խմել* (ջուր) և *ըմպել* (գորացուցիչ՝ ոգելից հեղուկ)<sup>58</sup>:

Ըստ այդմ՝ բավականին իրական հիմքեր են ստեղծվում հայերենի նախկինում ստուգաբանված, ինչպես նաև դեռևս հավաստի ստուգաբանություն չունեցող և առհասարակ չստուգաբանված զգալի թվով բառարմատների ստուգաբանական-տիպաբանական վերլուծության համար: Վերջիններս այլ բան

---

<sup>58</sup> Հայ. ջուրը հագեցնող է, իսկ մեղրը, քաղցուն, գինին, օղին և այլն, որոնք լայն իմաստով հյութեր են, ոգելից են. հմմտ. մի կողմից՝ *ջուր խմել* և *գինի ըմպել*, մյուս կողմից՝ *բաժակ* և *ըմպանակ* (*գաւաթ, կթղայ*) և այլն: Ավելին՝ ջուրը սովորական, իսկ մյուսները՝ ծիսական, գորացուցիչ խմելիք (խմիչք) են, և հայերենի գրեթե բոլոր փուլերում կա այս տարբերակումը:

չեն, քան ընդհանուր հայերենի գրական և խոսակցական (բարբառային), ինչպես նաև «մանկական» և բնածայնական բառապաշարին վերաբերող ձևեր:

Ըստ այդմ՝ հե. \*ek<sup>[h]o</sup>- արմատից են ծագում պայթական և շփական *կ* // *խ* խուլ բաղաձայններով արտացոլված հետևյալ արմատներն ու արմատական ձևերը հայերենում: Հմմտ.

ա) *խում*- «խմել. խմելը», *խոխում* «ծոր», *խոխումել* «ոռոգել. ջրել», *խոխումն*, *խոխոջ*- (այլև *խողխոջ*//*խողխոնջ*) «ջրի ձայն», *խոխոտիլ* «հանդգնել, համարձակվել», *խխում* (բրբռ.), *խխմել* (բրբռ.) «կուլ տալ, կլանել (ուտելիքը) և այլն» [հմմտ. *Աճառյան*, 1973, էջ 368-387. *Джаукян*, 1967, с. 119. *Ջահուկյան*, 1987, էջ 314, 591 և այլն]: Սրանցում նախնականը *խո*//*խու*- արմատն է, իսկ *մ*-ն այլ կարգի բաղադրիչ է:

բ) *Կում*- «(մեկ) կում. ումպ», *կմկմալ* «անվարժ՝ անջատանջատ խոսել», եթե ոչ նաև՝ *մկկալ* (\**մրկ-մրկ-ալ*)՝ դրափոխությամբ) «(այժի՝ ուլի) ձայն՝ մկկոց հանելը», *կմուկ* (բրբռ.) «կոկորդի վերին մասը՝ մինչև քիմքը» [հմմտ. *Աճառյան*, 1973, էջ 658. *Джаукян*, 1967, с. 148. *Ջահուկյան*, 1987, էջ 591 և այլն]: Այստեղ էլ նախնականը *կու*- արմատն է, իսկ *մ*-ն նույն բաղադրիչն է:

Այս առումով հարկ ենք համարում նշել հետևյալը:

1) Բերված բառերի մեծ մասը մինչև այժմ չունի հավաստի կամ առհասարակ որևէ ստուգաբանություն, իսկ մյուս մասը համարվել է կա՛ն բնածայնական բառ(արմատ), ըստ այդմ ոչ այնքան ուշադրության արժանի, որքան մյուս կարգի բառ(արմատ)ները, կա՛ն փոխառություն ուրիշ լեզուներից:

2) Մեր կողմից կատարվող տարբերակային համեմատությունը հնարավորություն է ընձեռում խոսելու ինչպես բերված, այնպես էլ նման հնչյունական կազմ ունեցող հնարավոր այլ բառարմատների բնիկ լինելու մասին:

3) Ըստ այդմ՝ կարելի է ենթադրել, որ համեմատության մեջ դրված միավորները ծագում են հե. \*ek<sup>[h]o</sup>- արմատից, որի վերականգնումն ավելի հավանական է ցեղակից մյուս լեզուների, առավել ևս հայերենի տվյալների հիման վրա, և որը կատարվում է միայն վերջին ժամանակներս, հատկապես տարբե-

րակային-տիպաբանական վերլուծության սկզբունքների կիրառումով:

Հե. \*p<sup>[h]</sup>oH(i)- «ըմպել (հյութ՝ մեղր, գինի, օշարակ և այլն)» արմատից է ծագում հայ. *ըմպեմ* բառը, որի մեջ, իրոք, առանձնանում են *ըմ-* (<\*ըմ) և *պե-(մ)* բաղադրիչները, որոնք իրենց բավականին մեծ թվով տարբերակներն ունեն նաև հայերենում, ընդ որում ոչ միայն գրականում, այլև բարբառներում: Աճառյանը բերում է նաև օրինակներ հայ. բարբառներից, այլև մանկական լեզվից. *ումք* (Խարբերդ, Նոր Նախիջևան), *ըմքիզ* (< *ըմպիկ*) (Արաբկիր) «մի փոքր կաթիլ», *բու, բուա, բի-վա, պու, ըմբու* «ջուր, խմել» (բոլորը՝ մանկ.), այլև *ընքոզ* «խմելիք» (Սվեդիա), իսկ հայ բոշաների լեզվում, դարձյալ ըստ Աճառյանի մատնանշման՝ ունենք *բիել, պիել* «խմել» [հմմտ. *Աճառյան, 1977, էջ 599-600*]:

Նախ՝ հայտնի է, որ հայերենում *ամ-* բաղադրիչը «դեպի, վրա (նկատմամբ)» իմաստով հանդես է գալիս նաև՝ *ամ-, ըմ-, ըն-* տարբերակներով, որոնք ունեն դիրքային պայմանականություն՝ կապված հաջորդ վանկի սկզբնաբաղադրիչի արտասանական որակի հետ: Հմմտ.

ա) Հայ. *ծեռն* «(մարդու) մարմնի վերին վերջույթ» բառից *անծեռոցիկ* «ձեռքի վրա գործածվող՝ թաշկինակ, թուղթ և այլն», իսկ *կող-* բնիկ արմատի ենթադրյալ \**կողին* (<*կողն*) սերող հիմքով *անկողին* (այլև *անգողին, ընկեղին, ընգողին*) «պառկելու տեղ». հմմտ. նաև բրբռ. *գողին-ք* (Կարին, Ալշ.), *գ՛ողին-ք* (Ախալցխա), *գողենք* (Տփլիս) և այլն:

բ) Հայ. *բառնամ* «բարձրանամ, բարձրացնեմ. ելնեմ, վեր հանեմ» բառից (*հ)ամբառնամ* «(ամբողջովին) բարձրանամ, բարձրացնեմ. ելնեմ, վեր հանեմ», իսկ *բերեմ* «բերել, առաջացնել» բառից՝ (*հ)ամբերեմ* «տոկալ. սպասել», *համբերութիւն* «տոկունություն» և այլն<sup>59</sup>:

<sup>59</sup> Այս *ամ-*ը սովորաբար դիտվում է *համ-* «շատ գործածական նախամասնիկի» մի տարբերակ՝ առանց *հ-*ի» [*Աճառյան, 1977, էջ 17-18*] իբրև իրան. փոխառություն (ավեստ. *hama-*, հայրս. *hama-* «նույն, նման, ամբողջ» և այլն), որի համար էլ օրինակ է բերվում *ամբառնայ, ամբարձումն* և այլն բառերը, այդպես նաև *համ-* «փարմատարի» (*նույն տեղում*,

զ) Հայ. *ծիւղ* (հմմտ. *ծիլ, ծեղ, ծիղ* և այլն) «խռիվ, ցախ» բառից *ըն-ծիւղ* (<*ըն-ծիւղ*) «ծիլ, բողբոջ», որի թերևս *ձու-* [հմմտ. *ձու* «հավկիթ», *ձագ* «(թռչնի և կաթնասունի) ձագ» և այլն, ընդ որում *n//ա, ւ//գ* տարբերակայնություն] «արդյունք, հետևորդ» տարբերակից *ըն-ձու-իմ* (< *ըն-ձու-իմ*) «ծլել, ծագել, առաջ գալ», իսկ հե. ծագման *կալ-* (<\*g<sup>u</sup>-ձl-) «բռնելու գործողություն» արմատից *ըն-կալուլ* «ընդունել», *ըն-կալուչ* «ընդունող, ընդունելի»։ (*փխբ.*) «փեսացու» և այլն<sup>60</sup>։

դ) Հայ. *բռնեմ* «ձեռքի՝ բռան մեջ առնել» բառից *ընքռնեմ* «(մտովի) բռնել, հասկանալ»։ (*փխբ.*) «լավ, ամբողջովին՝ հիմ-

էջ 18) դեպքում՝ իբրև օրինակ տալով *համբառնալ, համքերել* և այլն։ Կարելի է կարծել, որ այս դեպքում գործ ունենք բնիկ (< հե. \*an- «վրա, դեպի. միասին») մասնիկի հնչյունափոխական տարբերակների հետ, որոնք էլ իբրև առանձին արտացոլում՝ ընդհանուր ժառանգություն են իրանականում և հայերենում։

<sup>60</sup> Կա ավանդաբար եկող այն տեսակետը, թե այս *ըն-* մասնիկն առաջանում է *ընդ-*ից, երբ այն նախորդում է հիմնականում պայթական բաղաձայնով, երբեմն ձայնավորով սկսվող արմատի կամ բառի. հմմտ. *ընկեր* < *ըն(դ) - կեր, ընկղմել* < *ըն(դ) - կղմել, ընթեր* < *ըն(դ) - թեր (առընթեր, ընթերակա)* և այլն, որն իր ձևակերպման մեջ ամբողջական չէ։

Այս դեպքում գործ ունենք երեք կարգի երևույթի հետ.

ա) բնիկ՝ հե. ծագման արմատի արտացոլում, *ընդ-ը* արմատական բաղադրիչ. հմմտ. *ընթանալ ~ ընթ - անալ* «վազել, գնալ» (< հե. \*sent- «գնալ»), *ընծայ* (նաև *ընծայ*) ~ *ընծ(//ձ) - այ* «նվեր, ձոն» (< հե. \*eng'həti), *ընդեր* (հմմտ. *ընդերք*, նաև *ընտերք*) «փորոտիք, աղիքները» ~ *ընդ(//տ)-եր* (< հե. \*entero- «ընդերք, աղիներ, փորոտիք»), *ընկենուլ* «նետել, ձգել, վայր գցել» ~ *ընկ - ենուլ* (< հե. \*sengt- //(senk-) և այլն.

բ) ոչ թե *ընդ-*ի վերջնահնչյունի անկմամբ առաջ եկած, այլ *ան-*ի տարբերակ՝ *ա-*ի փոխարեն *ը* ձայնավորմամբ *ըն -ի* միացում տվյալ արմատին՝ բնիկ կամ փոխառյալ. հմմտ. *ընկղմել* < *ըն* (ոչ՝ *ընդ*) - *կող (մ)-ել* (< \*կող-) «ջրի տակ գնալ, ջրասույգ անել» (< հե. \*g<sup>u</sup>-al- «խորը գնալ, խորանալ»), *ընթեր* < *ըն* (ոչ՝ *ընդ*) - *թեր* «մոտը, կողքին», *ընթենուլ* ~ *ըն-թենուլ* (< հե. \*ter- «կանչել, ձայնել») և այլն.

գ) *ընդ-*ի միացում բնիկ կամ փոխառյալ արմատին. հմմտ. *ընդգրկել ~ ընդ - գրկել* «ամբողջությամբ վերցնել՝ առնել», *ընդարձակ ~ ընդ-արձակ* «մեծ տարածություն զբաղեցնող», *ընդհանուր ~ ընդ-հանուր* «ամեն տեղ՝ կողմ. հավասար», *ընդունակ ~ ընդ-ունակ* «ընդունիչ, ընդունելի. ի վիճակի» և այլն։

նովին բռնել», *ըմբռնում* «հասկանալը, ամբողջովին բռնելը» և այլն:

ե) Այսպես նաև, մեր կարծիքով, ունենք *ում-* տարբերակը, որն այլ բան չէ, քան *ումս* բառի մեջ հանդես եկող բաղադրիչ (*\*ում- պե-մ*), զուգահեռ *ըմ-*ին (*ըմ- պե-մ*):

Այս տարբերակային սկզբնաբաղադրիչն, ըստ Գ. Ջահուկյանի, ծագում է հե. \*an- «(թեք հարթության) վրայով, վրա» նախածանցից, ընդ սմին թեական է մնում այն, որ «հավանաբար այս ածանցն է առկա նաև (*h*)ամբառնամ համբերեն, հան-ուր բառերում՝ խառնված իրան. ծագման (*h*)ամ-, (*h*)ան- նախածանցի հետ. անհնար չէ նույն մասնիկի մի այլ տարբերակը (*\*nō/nə*) տեսնել *նա-խասնձ* բառի մեջ (հմմտ. *խանդ, խասնձ*), եթե այն իրանական ծագում չունի» [*Ջահուկյան*, 1987, էջ 245]<sup>61</sup>:

Այնուհետև, կարծում ենք, որ հե. \*p<sup>[h]</sup>oH(i)- «ըմպել (հյութ՝ մեղր, գինի, օշարակ և այլն)» արմատից են ծագում հայ. շրթնային պայթական *p* բաղաձայնով արտացոլում ունեցող հետևյալ արմատներն ու արմատական ձևերը: Հմմտ.

ա) Հայ. *համբոյր* < (*h*)-ամ-բո-յր «շուրթերի հպում (մեկի կամ մի բանի)» բառը նախկինում դիտվել է իբրև անհայտ ծագման, իսկ հետագայում Ջահուկյանը կապում է իրան. *ham-bod* ձևի հետ՝ իբրև փոխառություն [*Աճառյան*, 1977, էջ 25. *Ջահուկյան*, 1987, էջ 530. *Համբարձումյան*, 2003, էջ 41]: Կարելի է կարծել, որ այս բառի արմատն է *բո-* բաղադրիչը, որին միացած են (հավանաբար՝ համաձայնացմամբ) մի կողմից՝ *h* սաստկական ածանցը. հմմտ. *լսել* > *լու-* (> *լու-ր*) ~ *հլու*, *գօր-* (> *գօր-անալ*) ~ *հգօր*, *պարտ-* // *պարծ-* (> *պարծենալ*) ~ *հպարտ*, *մուտ-* (> *մտ-անել*) ~ *հմուտ*, *սկայ* «ուժեղ, վիթխարի, հաղթանդամ (մարդ)» ~ *h-սկայ*, *սկել* «տքնել, արթուն մնալ՝ ուշադիր

<sup>61</sup> Նկատենք, որ ոչ միայն այստեղ նշվող *ան-*, *նա-*, այլև *-իճ*, *-ուճ*. *-աճ* (հմմտ. *աղիճ*, *կալիճ*, *բրդուճ*, *պարկուճ*, *գաճաճ*, այլև *պատիճ*, *արճիճ* և այլն) և այս տիպի այլ ածանցների դեպքում ունենք հայ. և իրան. ծագումնային համընկումներ, որոնք ցեղակցային-ժառանգորդական են, քան փոխառություն, մանավանդ իրանական լեզուներից անցած հայերենին, որոնց էլ կարելի է անդրադառնալ առանձին:

լինել» ~ *հսկել* և այլն, իսկ մյուս կողմից՝ *-(յ)ր*, որը հավանաբար ծագում է կա □ մ հե. \*-tero [*< -t(o)-+\*-ero-*] (°) մասնիկից. հմմտ. հայ. *հաստոյր* (*< հաստ*) «ուժգին», *նրոյր* «մաղ» (*< \*neik* «մաղել»), կա □ մ էլ հե. \*-er/-or մասնիկից. հմմտ. *տայգր* «ամուսնու եղբայրը», *քոյր* և այլն [հմմտ. *Չահուկյան*, 1987, էջ 236-237, 239]:

բ) Հայ. *բերան* (*\*պե-ր-ան*) բառը Հյուբշմանը և նրա հետևորդները մասնաճյուղից բխեցնում են հե. \*bher- «ծակել, ճեղքել» արմատից՝ համարժեք արտացոլում համարելով լիտվ. *burna* «բերան», հուն. *φάρυγξ* և լատ. *frumen* «կոկորդ» և այլն ձևերը, նախապես ըմբռնվելով իբրև «անցք, ծակ»: Հյուբշմանը, թեև (Աճառյանի ձևակերպմամբ) «անապահով է համարում», այդուհանդերձ այն համեմատում է հայ. *բահ* «(երկաթե) թի», այլև *բիր* «փայտ» արմատների հետ [տե՛ս *Hübschmann*, 1897, p. 427, 429-430. *Աճառյան*, 1971, էջ 392-393, 441-442, 452]:

Այդ բառի գործածությունը բավականին կենսունակ է եղել ոչ միայն հին, այլև միջին և նոր գրական հայերենում, ընդ որում ոչ միայն որպես այդպիսին, այլև *ըն- բաղադրիչով՝ ըմբերանել* և ուրիշ կազմությամբ. «Քանզի բազումք են անհնազանդք, գրախօսք եւ մտախաբք, մանաւանդ որ ի թլփատութենէ անտի են. գորս պարտ է *ըմբերանել*, որք զամենայն տունս կործանեն, եւ ուսուցանեն՝ գոր չէ արժան, վասն զօշաքաղութան» [*Գիրք Աստուածաշունչք*, 1860, էջ 1192]:

Եթե ընդունենք, որ *\*պե- > բե-* հնչյունափոխությունը տեղի է ունեցել նախագրային ժամանակաշրջանում, ապա միանգամայն հնարավոր է ենթադրել, որ հայ. *բերան* բառն ավելի ստույգ պիտի նշանակեր «շուրթերի՝ շրթունքների բացվածք» և ոչ թե «անցք. ծակ, ճեղք»: Այդ դեպքում բառի ստուգաբանությունը դառնում է ավելի հավաստի, վերանում է այն «անապահով» լինելը, որը հայտնում է Հյուբշմանը, և որին այդուհանդերձ հետևում են հետագա ուսումնասիրողները (Ա. Վալդե, Է. Բուսգար, Ռ. Տրաուտման, Հ. Աճառյան և ուրիշներ)<sup>62</sup>:

<sup>62</sup> Ավելորդ չէ նշել, որ հայ հին գրական հուշարձաններում կա *ըմբերանել* բառի գործածությունը, որը ևս ըստ Աճառյանի նախապես ունեցել է *\*ընդ-բերանել* բաղադրությունը [տե՛ս *Աճառյան*, 1971, էջ 442]:

Ինչպես գիտենք, ժամանակին Հ.Պեդերսենն առանձնացնում էր հե. լեզուներում \*p բաղաձայնով սկսվող շատ քիչ կամ սահմանափակ թվով բառեր (արմատներ), ուստի այդ բաղաձայնը համարվում է իր շարքի թույլ անդամ: Հետագայում այդ տեսությունը համեմատաբար մեծ թվով կողմնակիցներ ունեցավ, թեև եղել են նաև այն չընդունողներ, հատկապես վերջին տասնամյակների ընթացքում, երբ առաջարկվեց վերանայել հնդեվրոպական լեզուների պայթական բաղաձայնական համակարգը՝ որոշակի տեղ տալով, այսպես կոչված, «գլոտալ» (ծերպաձայնային) բաղաձայններին [տե՛ս *Āḥi ēḍāēēāçā, Êāḥīîâ*, 1984, c. 703. *Джаукян*, 1982, c. 59-67]: Նամանավանդ՝ առաջնային նշանակություն է տրվել հայերենի բաղաձայնական համակարգին՝ որպես առավել հնավանդ (արխաիկ) գծեր պարունակող համակարգ [տե՛ս *Āḥi ēḍāēēāçā, Êāḥīîâ*, 1984, c. 6-17]: Հայ. *ըմպեմ* < հե. \*p<sup>[h]</sup>oH(i)- «ըմպել» ստուգաբանությամբ համարվում է նման դիրքում հե. \*p-ի հանդես գալու հնարավորության քանակային կողմը:



**ԵՐԵՄԻԱ ՄԵՂՐԵՑՈՒ «ԲԱՌԳԻՐՔ ՀԱՅՈՑԻ»  
«ԿԱՍԿԱԾԵԼԻ ԵՎ ԱՆՍՏՈՒՅԳ» ԲԱՌԵՐԻ ՄԱՍԻՆ**

1. Սույն վերնագրի «կասկածելի և անստույգ» բառակապակցությամբ բնորոշումը մեծանուն լեզվաբան Հ.Աճառյանինն է: «Հայերեն արմատական բառարանի»<sup>63</sup> Առաջաբանում (հ. 1, 1971, էջ 8-10) նա բավականին խիստ է խոսում Երեմիա Մեղրեցու «Բառգիրք հայոցի» մասին. «Մանրամասն քննելուց յետոյ աշխատութիւնը, տեսայ, որ մեծագոյն մասամբ վրիպակների մի հաւաքածոյ է այն» (էջ 9): Անվանի լեզվաբանն այդպես է կարծել՝ նկատի ունենալով միայն բառարանում տեղ գտած այն թերությունները, որոնք նրա կազմման և լույս ընծայման տեխնիկայի տեսանկյունից, իրոք, վրիպումներ են՝ բառահողվածների սխալ տեղադրում, գլխաբառերի բացատրական մասի շփոթում, շարվածքի միանգամյա անճշտություն և բացթողումներ, բառերի կից կամ անջատ գրություն, տառամայրերի տեղադրման և որոշ մամուլների խմբագրման ու սրբագրության դժվարություններ և այլն:

Նման թերացումների համար բերելով մի քանի գրեթե անառարկելի օրինակներ՝ Աճառյանը վերջում եզրակացնում է. «Պէտք է շատ զգուշութեամբ վերաբերուիլ սոյն բառագրքի հետ և նրա յիշած ձևերը իբր ճշմարտութիւն չընդունիլ: Այսպէս արիես էլ և բառերը ուշադիր քննելուց յետոյ, եթէ կեղծ չգտայ, անցկացրի իմ բառարանի մէջ, այն էլ միշտ իբր կասկածելի և անստույգ» [*Աճառյան*, 1971, էջ 10]: Այս գնահատությունը, տրված առհասարակ բառարանին և ոչ թե մասնավոր, նվազագույն թերացումներին, մեղմ ասած, բավականին մերժողական է, եթե ոչ սուբյեկտիվ ու միակողմանի:

---

<sup>63</sup> Բառարանի վրա աշխատանքն ավարտվել է 1925 թ., տպագրվել է՝ հ. 1-7, Երևան, 1926-1935 թթ. (ապակետիպ), 2-րդ անգամ՝ հ. 1-4, Երևան, 1971-1979 (երկու դեպքում էլ Երևանի պետական համալսարանի հրատարակություն):

Այդուհանդերձ, Աճառյանը «Արմատական բառարանում» մեծ տեղ է տվել «Բառգիրք հայոցի» միջոցով մեզ հասած բառերին՝ դրանք գրեթե ամբողջովին անցկացնելով իր այս բառարանի մեջ, միշտ նշելով՝ «ունի միայն Բառ. երեմ.», կամ «գիտել միայն Բառ. երեմ. [=Բառգիրք Երեմիայի]» և այլն:

Աճառյանի նման վերաբերմունքի գնահատությունը լավագույնս տվել է Գ. Ջահուկյանը. «Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանների ուսումնասիրությունը կարևոր նյութ է տալիս հայոց լեզվի պատմությանն ու ստուգաբանությանը: Այդ տեսակետից Հ. Ամալյանի «Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները» (Երևան, 1974) աշխատության, և ապա «Բառգիրք հայոցի» քննական բնագրի հրատարակության (Երևան, 1975) նշանակությունը շատ կարևոր է: Կարելի է ասել, որ Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանը» մեծապես շահած կլիներ, եթե նման աշխատանք կատարված լիներ նախքան այդ բառարանի հրատարակումը. շատ բառեր կճշգրտվեին և կստանային ավելի հավաստի մեկնաբանություն» [*Ջահուկյան*, 1976, էջ 41]:

Եվ իրոք, ինչպես ցույց տվեցին հետագա բառաքննական և ստուգաբանական աշխատանքները, «Բառգիրք հայոցի» կարևորությունը ավելի էական է դառնում հայոց լեզվի բառապաշարի ամբողջական վերհանման և նկարագրության համար. «ճշգրտվում և հավաստի մեկնաբանություն են ստանում» մի քանի տասնյակից ավելի բառեր ու բառաձևեր:

2. «Բառգիրք հայոցը», լինելով բացատրական բառարան, ինչ խոսք, 17-րդ դ. հայ բառարանագրության ամենակարևոր երևույթն է, որն ամփոփում է նախկինում երևան եկած հայերեն գրեթե բոլոր ձեռագիր բառարանների նյութը՝ մի քանի հազարի հասնող բառաքանակի սահմաններում [*«Բառգիրք հայոց»*, 1698, այլև 1828. հմմտ. *Գասպարյան*, 1968, էջ 45-72. *Ամալյան*, 1971]:

Անկախ բառարանի ծավալի, բացատրական մասի, տպագրական որակի և այլ հանգամանքների առնչությամբ տեղ գտած թերացումներից՝ այն ժամանակին բարձր են գնա-

հատել, օրինակ, Մխիթարյան միաբանության հայրերը, ամենից առաջ՝ Մխիթար արքա Սեբաստացին, երբ ձեռնամուխ է լինում իր ծավալով աննախադեպ, բառարանագրական մշակման տեսանկյունից համապարփակ, ընդ որում ժամանակի եվրոպական բառարանագրության չափանիշներով կազմվող «Բառգիրք հայկազեան լեզուի» աշխատության ստեղծմանը [Մխիթար Սեբաստացի (եւ աշակերտք), 1749-1769]: Ավելին, «Բառգիրք հայոցի» շատ բառահոդվածներ՝ *Հին բռ.* [= *Հին բառարան*] նշումով նրանք առել են իրենց բառարանի մեջ: Օրինակ՝ հայ. *անգեղոս* «հրեշտակ, պատգամավոր» բառը, որը փոխառություն է՝ հուն. *ἄγγελος* (լատ. *angelus*) (նույնը), վկայված է միայն «Բառգիրք հայոցում», որից էլ վերցրել է «Հին հայկազյան բառգիրքը» (այլև հետագա բառարանները) և տվել բառի ճիշտ մեկնությունը [հմմտ. *Աճառյան*, 1971, էջ 183]:

«Բառգիրք հայոցը», ինչպես նկատված է հայ բառարանագրության պատմությանը նվիրված աշխատություններում, ժամանակին խաղացել է իր դերը մեր լեզվի բառապաշարի ամրագրման, մանավանդ կրթական կամ ուսումնական տեսանկյունից, իսկ հետագայում այն ավելի մեծ ուշադրության է արժանացել բնագրագիտության (տեքստաբանության), առավել ևս հայերենի ստուգաբանության բնագավառում: Բառարանի պարունակած մի շարք բառերի անդրադարձել են թե՛ նախկինում՝ բանասիրական, թե՛ հետագայում ստուգաբանական աշխատանքների բերումով, մանավանդ նրա քննական բնագրի լույս ընծայումից հետո:

Նախ անդրադառնանք սույն թեմային վերաբերող մեզ հայտնի լեզվաբանական և հայերենագիտական այն աշխատանքներին, որոնցում այս կամ այն չափով քննության են առնված «Բառգիրք հայոցի» տվյալները:

3. Գ.Ղափանցյանի ընդարձակ հոդվածներից մեկում, որը նվիրված է եղել խեթերենի և հայերենի բառային զուգադիպումների ուսումնասիրմանը, օրինակներ են առնված նաև Երեմիա Մեղրեցու բառարանից [*Ēdī āl ǝyī*, 1936, այլև 1956, c. 329 - 408. *Ղափանցյան*, 1961. հմմտ. *Գասպարյան*, 1968, էջ 70]:

ա) Հայ. *անգոսնել* (արմատը՝ *անգոյս* «կիցք, արացի», ըստ Աճառյանի նաև *անկոսնել*//*անկոշնել*, *անկուսնել*//*անկուշնել* և այլն) «արհամարհել՝ բանի տեղ չդնել, չհարգել» բառի սկզբնական ձևը դիտվում է առանց *ան-* մասնիկի՝ *գոսն* (նաև *կոսն*//*կոշն*, *կուսն*//*կուշն* և այլն) ձևը, որից նաև *կոշնել* «մոտեցնել, նվիրել», *կօշնող* «մոտեցնող, նվիրող», և այն զուգահեռ է դիտվում խեթ. *kuš-* «վճարել» արմատից *kusata* «վճարել հարսի համար», *kušahat* «վճար, վարձ»՝ իբրև ընդհանուր հնդեվրոպական ձեռքբերում երկու լեզուներում, այլ ոչ թե փոխառություն խեթերենից [*Ēāi āi öyī*, 1956, c. 346-347]<sup>64</sup>:

բ) Հայ. *թոռոպ* «ցնցոտի, վատ զգեստ» բառը համեմատելի է դիտվում խեթ. *tarup(p)-* «մանել, հյուսել, գործել» բառարմատի հետ՝ իր մի շարք ձևերով, ինչպես՝ *taruppan* (անցյալ ժամանակի եզ. 1-ին դ.), *truppiz* (նույն ժամանակի հոգն. 3-րդ դ.), *tarup* (հրամ. եղ. եզ. 2-րդ դ.), *taruptari* (չեզոք սեռի եզ. 3-րդ դ.), նաև *tarupressar* (զոյական) և այլն, սրանց հետ է կապում *թարփափել* «կցել, միացնել» (բուն իմաստով՝ «կապկպել, զուգակցել») բայը, որը հանդիպում է Մեդրեցու բառարանում [*Ēāi āi öyī*, 1956, c. 356]:

գ) Հայ. *հայիտ* (այլև *հոսպիտ*) «խեղկատակ, ծաղրածու. թեթևաբարո» բառարմատից են *հայտիլ* «ծամածռվել, խեղկատակի տալ», *հոսպտիմ* (նույնը), *հպտանք* «ծաղրանք. պաճուճանք», *հոսպտեալ* «կեղծ, շինծու. ծածուկ, թաքուն» և այլ ձևերը, որոնց համար «Նոր հայկազյան բառարանը» բուն արմատ է դիտում *հայիտ* ձևը [տե՛ս *Աւետիքեան, Միրմէլեան, Աւգերեան*, 1837, էջ 127. հմմտ. *Փեշտմալճեան*, 1846, էջ 113, 115]: Ղափանցյանը, այնուամենայնիվ, նշում է հետևյալը. «սակայն ինձ համար ամենակարևորը Երեմիա Մեդրեցու բառարանում բերված *հասպտել* «պատճառել. խաբել» և *հպտել* «մոտենալ, պատրաստել, պատճառել, կեղծել, փոփոխել» բա-

<sup>64</sup> Ըստ Աճառյանի՝ չստուգաբանված, իսկ Ջահուկյանը նախ՝ որոշ վերապահությամբ բխեցնում է հ.-ե. *\*ang-/\*ank-* «ծռել, թեթել» (հմմտ. *ավեստ. angušta* «ոտքի մատ», *հրգերմ. ancha, anka* «ծոծրակ» և այլն), երկրորդ՝ գտնում է, որ «հնարավոր է նաև բառի փոխառություն լինելը» [հմմտ. *Աճառյան*, 1971, էջ 184-185. *Ջահուկյան*, 2010, էջ 52- 53]:

ներն են. հմմտ. նաև Հին հայկազյան բառարանի *յապտիլ* «զգեստափոխվել, կերպարանափոխվել, այլակերպվել, կիսով չափ ծածկվել»: Այս ամենը մեզ բերում է այն հաստատ համոզմանը, որ նախնականը եղել է *հրպիտ* կամ էլ, հնարավոր է, *հասպիտ* արմատը: Հնչյունապես *հրպիտ*-ը արտասանությամբ դարձել է *հրպպիտ*, այնուհետև նաև *հրտպիտ*» [*Ēāi'āi'ōyī*, 1956, c. 378. հմմտ. *Աւետիքեան, Միւրմէլեան, Աւգերեան*, 1837, էջ 27. *Աճառյան*, 1977, էջ 129. *Ջահուկյան*, 1988, էջ 72, այլև 2010, էջ 469]:

Այդ արմատը, իր տարբերակներով հանդերձ, Գ. Ղափանցյանը կապում է փոքրասիական մի աստվածության անվանման հետ, որն ունեցած պիտի լինի վերը նշված իմաստներով պայմանավորված գործառություն, այն է՝ փոքրասիական Hepit աստվածուհին, որ (կրճատ ձևով) կոչվում է Hepa (հմմտ. խուռիների Šauška աստվածուհին): «Հունարեն փոքրասիական արձանագրություններում (Մեոնիայից) այն հայտնի է Hipta ձևով, իբրև Sabazios-ի կին: Խեթերի մոտ այն եղել է Արիննա քաղաքի արևի աստվածուհին և խեթական դիցարանում գերագույնը կոչվել է «Տիրուհի»: Բնական է, որ այս Hepat, Hepit, Hipta աստվածուհին, որ հանդես է գալիս նաև այլ տարբերակներով, չէր կարող պահպանվել քրիստոնեական ժամանակում, սակայն կարող էին մնալ միայն նրա հատկանիշները՝ իբրև պճնեցյալ, կերպափոխված, գեղեցկացած, գայթակղիչ (խաբող), ծամածռվող և, հավանաբար, անբարո ղիցուհի» [*Ēāi'āi'ōyī*, 1956, c. 378]:

Այս կետում հարկ կա նշելու, որ Գ.Ջահուկյանը սկզբնապես հայ. *հտպիտ* (ըստ իր նախկին բացատրության՝ «միմոս, խեղկատակ, թուլամորթ, մեղկ», իսկ ավելի ուշ՝ «խեղկատակ, խենեշ, մեղկ») բառը թողնում է չստուգաբանված, իսկ հետագայում, երբ անդրադառնում է այդ բառի նախկին ստուգաբանություններին, վերը բերված մեկնության առիթով գրում է հետևյալը. «Գ. Ղափանցյանը իր աշխատություններում փորձում է բխեցնել փոքրասիական Hepit (Hepat, Hipta) աստվածուհու անունից», և գտնում է, որ «անհավանական չէ ենթադրել, որ բառիս աղբյուրը պարթևական hērpāt (hylpt) (< ēhrpāt), ուշ՝

herbed «քրմական մի կոչում» բառն է (հմմտ. ավ. aēora-pati- «կրոնական) դպրոցի պետ» [*Չահուկյան*, 1988, էջ 72, այլև 2010, էջ 469]:

Գ.Ղափանցյանի ստուգաբանությունը, կարծում ենք, ավելի ընդունելի է, մանավանդ եթե հարցի լուծման մեջ հաշվի ենք առնում երևույթի դիցաբանական (միֆոլոգիական), ավելի կոնկրետ՝ վերջինիս գործառական (ֆունկցիոնալ) կողմը, որին լայն ուշադրություն է դարձվում ժամանակակից համեմատական լեզվաբանության մեջ:

4. Այդ հետաքրքրությունը մեծացավ հետագայում, երբ լույս տեսավ «Բառգիրք հայոցի» քննական բնագիրը: Այդ գործում մեծ ներդրում ունի Հ. Ամալյանը: Անվանի լեզվաբան-ձեռագրագետը նախ՝ գրեց հայ բառարանագրական հուշարձանների պատմությանը նվիրված հատուկ ուսումնասիրություն, որում անդրադարձավ նաև հիշյալ բառարանի գիտական վերլուծությանն ու գնահատությանը, այնուհետև կազմեց վերջինիս քննական բնագիրը՝ անհրաժեշտ ծանոթագրություններով և ընդարձակ առաջաբանով: Վերջինս, ինչ խոսք, մեծ ձեռքբերում է հայ բառարանագիտության բնագավառում [*Ամալյան*, 1972. «Բառգիրք հայոց», 1975]:

Վերջերս լույս է տեսել նաև Հ.Ամալյանի «Հայ միջնադարյան բառարանագրությունը» գիրքը, որում հատուկ տեղ է զբաղեցնում հիշյալ բառարանը՝ ի թիվս ձեռագիր այլ բառարանների, բերվում են վերջինիս քննական բնագրի ծանոթագրությունները նոր մեկնաբանություններով և լրացումներով [*Ամալյան*, 2007]: Այդ ուսումնասիրություններում հեղինակը կատարում է բնագրային-բանասիրական մի շարք ուշագրավ ճշգրտումներ, սակայն «դժվար» մեկնաբանվող, «անհայտ ծագման» բառերի ստուգաբանական քննությունը, իր ձևակերպմամբ ասած, թողնում է այդ բնագավառի մասնագետներին: Ավելին, բնագրային որոշ ճշգրտումների դեպքում հեղինակն ինքն է հաճախ հենվում Հ. Աճառյանի, Գ. Չահուկյանի ստուգաբանական քննության տվյալների վրա:

5. Է. Աղայանի գիտական հանդեսներում տպագրած հոդվածներն ամփոփված են հետագայում լույս տեսած առանձին

գրքում, որում հեղինակն անդադառնում է նաև «Բառզիրք հայոցում» տեղ գտած հետևյալ բառերին [*Աղայան*, 1974]:

ա) Հայ. *աղունք* (եզակի թիվ՝ *աղն*) «աղետ, եղեն», *աղէտ*//*աղետ* «փորձանք. պատուհաս», *աղճատ* «խեղված, ոչնչացված», ինչպես նաև *եղծ* «ոչնչացում, հերքում» տարբերակները, որոնք բաղադրված են ընդհանուր *աղ-*//*եղ-* արմատից, առաջին դեպքում ծագում են հե. \*e1-//\*ol- «փչացնել, ապականել. ոչնչացնել, կործանել»։ հմմտ. հուն. ὄλλομαι (\*<ὄλ-νσ-μαι) «փչացնել, ապականել», ὀλέκω «ոչնչացնել», իսկ երկրորդ դեպքում՝ հե. \*elg'- արմատից, վերջինս \*g' աճականով: Նույն արմատից են ծագում *աղէտ*, *աղճատ* և այլն, որոնցում (նախահունչ a > ə փոփոխմամբ) բուն \*ə1-//\*ol- արմատին հավելյալ է հե.\*-eid մասնիկը [*Աղայան*, 1974, էջ 17-18] :

բ) Հայ. *արգատ* բառն ունի միայն «Բառզիրք հայոցը», հետագայում տեղ է գտել նաև Ն. Բյուզանդացու «Ֆրանսերեն-հայերեն բառագրքում» (Կ.Պոլիս, 1884), ըստ Աղայանի՝ «ծագում է հնիս. \*u(e)rad- արմատի \*urəd- տարբերակից՝ *գրատ* > *րգատ* > *արգատ* հաջորդական փոփոխություններով»։ հմմտ. հուն. ράδιξ «ճյուղ, ոստ, ճիպոտ», ῥάδαμος (եղ. Φροδαμος) «մատաղ ոստ», այբ. rānzē «արմատ», լատ. radix «արմատ», կիմր. gwraidd (<\*urədio) «արմատներ», gwrisg «ոստ, ճյուղ», հկոռն. gruelten «արմատ», գոթ. wourts «արմատ», անգլ.-սաքս. wurz «բույս, արմտիք», հիւլ. urt «արմտիք, սաղարթ», rōt «արմատ» և այլն [տե՛ս Pok., 1959, p. 1167. *Աղայան*, 1974, էջ 30-31] :

գ) Հայ. *բողջ*//*բղջուն* բառը վկայված է միայն «Բառզիրք հայոցում»՝ *խոյլ* բառի դիմաց (էջ 145, ձեռագրական տարբերակ՝ *բող*//*բղճուն*) [տե՛ս «Բառզիրք հայոց», 1975, էջ 381. *Մնայան*, 2007, էջ 234:]<sup>65</sup>, որից կազմված է *բղջուն* «պալարոտ, վրան պալար դուրս եկած» բառը: Աղայանը միաժամանակ նշում է, որ Տիգրանակերտի բարբառում ունենք *բողջոց* «վերք, պալար», այլև *բողջոցվիլ* «վրան վերքեր դուրս գալ» (հմմտ.

<sup>65</sup> Քննական բնագրում ծանոթագրությունը հետևյալն է. «№ 541-ը մեկնում է «բող, կամ բղճուն», իսկ հիշյալ գրքում այն բերվում է հետևյալ կերպ (վրիպակով). «№ 451 ձեռագիրը մեկնում է «բոգ, կամ բղճուն»:

*բղբուջ/բղբուճ* «նույնը» - Մուշ, Ալաշկերտ): Ըստ այդմ «Բառգրքի» *բղջուն* տարբերակը «ենթադրել է տալիս արմատի *բուղջ* ձևը, որի *ու-*ն սղվել է ածանցման մեջ» (նույն տեղում), և այն ծագում է հե. \**bhel-*/\**bhōl-* արմատից, ընդ որում հայ. *ջ* աճականով<sup>66</sup>:

դ) Հայ. *քառանք* բառի մեկնության մեջ Աղայանը փորձում է բնագրային ճշգրտում մտցնել՝ գրելով հետևյալը. «Այս բառն ունի միայն Երեմիա Մեղրեցին, որ բացատրում է «ծանք կամ բարկություն»: Կարծում ենք, որ բացատրության առաջին բառն աղավաղված է, և համարում ենք Մեղրու բարբառի *քառնիլ* «տաք-տաք՝ գայրալից խոսել, վիճել, խոսքով կռվել» բառից կազմված գոյական, որ սակայն բարբառում չի պահպանվել, կամ էլ մեզ ծանոթ չէ» [*Աղայան*, 1974, էջ 153]:

«Բառգրքի» քննական բնագրում նշվում է ոչ թե *ծանք*, այլ *ծագք*, իսկ տողատակին ծանուցվում, որ ձեռագրերից մի քանիսն ունեն *ծանք*, որը ճիշտ չէ, իսկ ծանոթագրություններում հղում է կատարվում Աճառյանի «Արմատական բառարանը» (հմմտ. «*Բառգիրք հայոց*», 1975, էջ 331-442): Վերջինս նույնպես ունի «ծանք» բացատրությունը, որն էլ հավանաբար նկատի է ունեցել Աղայանը, որովհետև «Բառգրքի» քննական բնագիրն ավելի ուշ է լույս տեսել, քան Աղայանի հիշյալ ուսումնասիրությունը:

Ըստ Աղայանի՝ բառի արմատն է *քառն-*/\**քառ-* (թերևս՝ \**քա-*. - Վ.Հ.), որ ծագում է հե. \**sue-* «խոսել» արմատից (հմմտ. լատ. *sermo*, սեռ. հոլ. *sermonis* «խոսք, զրույց», գոթ. *swaram*, *swor* «երզվել», անգլ.-սաքս. *and-swaru* «պատասխան», հւլավ. և ռուս. *свара* «վեճ, թշնամանք» և այլն) [տե՛ս *Walde-Pok.*, II, 255. *Pok.*, 1959, p. 1049]: Վերջում տրվում է հետևյալ ամփոփումը. «Հայերենի *քառն-* արմատը, որ պահպանվել է միայն երկու բարբառում (իմա Մեղրի և Հազգո- Վ.Հ.) ծագում է հնիս. \**suar-* ձևից, իսկ *ք-*ի փոխարեն *ռ* ունենք հավելվածական *ն-*ի պատճառով» [*Աղայան*, 1974, էջ 154]:

<sup>66</sup> Ըստ Ջահուկյանի՝ ծագում է հե. \* *bholdhio* կամ \**bholtio* ձևից [տե՛ս *Ջահուկյան*, 1965, էջ 252]:



6. «Բառգիրք հայոցի» զգալի թվով բառեր քննության է առել Գ. Ջահուկյանը «Ստուգաբանություններ» վերնագրով հոդվածներում, որոնք հիմնականում զետեղվել են հեղինակի՝ հատկապես «Ակնարկներ հայոց լեզվի նախագրային շրջանի պատմության» (ռուսերեն) և «Հայոց լեզվի պատմություն» գրքերում, վերջերս լույս տեսած բառարանում և այլն [*Ջահուկյան*, 1963, էջ 85-98, այլև 1965, էջ 251-261, 1991, էջ 36-44, 1996, էջ 39-46, այլև 1976, 41-51, 1979, էջ 23-34, 1988, էջ 69-75, այլև 1993, էջ 22-30 և այլն. *Մեծ լեզու*, 1967. *Ջահուկյան*, 1987, այլև 2010]<sup>67</sup>:

ա) Դրանցից առաջինում ստուգաբանվում են *արրայ* «աղախին» (< հուն. ἄβρα «տանտիրուհու սիրեցյալ ստրկուհին, սրտակից աղախինը»), *ազդար* «պարապար. իմա՝ հավասար» (< պրսկ. azbar «հավասար. համարժեք»), *եսր* «աղջիկ, անառակ» (< հուն. ἔταρ, այլև էպ. ἔταρη, իոն. ἔταρη, նախ՝ «ընկերուհի», այլև «սիրուհի, հետերա», նաև «անառակ»), *եսրոնին* «ընկեր. պատվակից» (< հուն. ἔταρος, այլև էպ.-իոն. ἔταρος «ընկեր», որը *եսր* բառի հուն. ἔταρη սկզբնաձևի արական սեռն է նշանակում), *ներացիկ* (այլև *ներցիկ*) «ներքին» (սրանց անորոշը՝ *ներալ* «ներսում ունենալ, լցված լինել») (< հե. \*ner- «թափանցել, սուզվել, խորանալ, տակը գնալ») բառերը [տե՛ս *Ջահուկյան*, 1963, էջ 85, 90-91, 93-94]:

Նախ՝ բերվածներից առաջինի, երկրորդի և երրորդի մասին հիշյալ հոդվածի տողատակում Ջահուկյանը նշում է հետևյալը. «*Արրայ*, *եսր* և *եսրոնին* բառերի՝ այս հոդվածում տրվող ստուգաբանությունը ժամանակին ընդունվել է բազմավաստակ հայագետ Հ. Աճառյանի կողմից՝ մեր բանավոր հաղորդման հիման վրա. տե՛ս Հ. *Աճառյան*, Հայոց լեզվի պատմություն, մաս 2, Երևան, 1951, էջ 600-601»<sup>68</sup>: Դրանք, անշուշտ, փոխառություն են հունարենից:

<sup>67</sup> Որոշ բառեր էլ, ոչ անկախ Աճառյանի «Արմատական բառարանից», քննության են առնվել հեղինակի մյուս աշխատություններում [*Մեծ լեզու*, 1967. *Ջահուկյան*, 1970]:

<sup>68</sup> Հ.Աճառյանի հիշյալ գրքում, իրոք, կարդում ենք հետևյալը. նախ՝ «Երեմիա Մեղրեցու 1158 բառերից երեքը (*արրայ* «աղախին», *եսր* «աղջիկ

Այնուհետև, *աբրայ* բառի ծագման մասին կա ավելի հին վկայություն: Ստ. Ռոշքայի «Գանձարան հայոց լեզուի» երկ-լեզվյան ձեռագիր ընդարձակ բառարանում այն ներկայացվում է հետևյալ կերպ. «*Աբրայ*, ի, առ. Յուն. աղախին. Abra, e, f.», այսինքն՝ տրվում է բառի հոլովումը, ծագումը (փոխառյալ լի-նելը), հունարենում ունեցած սեռը և հոլովումը<sup>69</sup>: Այս և նման մի շարք բառերի մասին դեռևս ժամանակին հ. Մ. Ճանաչյանը նշում է հետևյալը. «Այս բառերեն ոմանք գուցե անցնելն նաեւ ՆՀԲ-ին (իմա՛ «Նոր հայկազյան բառարանի» - Վ.Հ.) մէջ, եթէ Ռոշքեան Բառարանին ամբողջական հատուածներ անոր ձեռքին տակ ըլլային, որովհետև կան անոնց մէջ իմաստով եւ ձեւով քիչ թէ շատ ընդունելի բառեր: Այս շարքէն դիտելի է *աբրայ* բառը, որ ըստ Ռոշքեանի յունական ծագում ունի և կը նշանակէ *աղախին*: Չկայ ոչ մէկ վկայութիւն գայն արդարացնող: Աճառյան կը դնէ գայն, առնելով Երեմիա վարդապետի Բառարանէն («Բառգիրք Հայոց Երեմիա վարդապետի յԱլիկօռնայ» 1698), հնագոյն քան Ռոշքեանինը, և գուցէ սա նկատի ունեցած ալ ըլլայ գայն: Աճառեանի լռութիւնը Ռոշքեանի անուան՝ ցոյց կու տայ որ կա՛մ անոր կարևորութիւն չի տար և կա՛մ աչքի տակ չէ ունեցած գայն և իր ծանօթութիւնն ալ այդ գործին լոկ ՆՀԲ-ին միջոցաւ է, որովհետեւ իր Յաւելուածին մէջ (էջ 57) աղբիւրներու շարքին, խօսելով Ստեփանոս Լեւիացիի մասին, կը յիշատակէ ՆՀԲ-ին Յառաջաբանին տողե-

---

կամ անառակ», *եսորոնին* «ընկեր կամ պատվակից») դոցենտ Գևորգ Չահուկցյանը շատ ճիշտ մեկնեց իբրև փոխառյալ հուն. ἄβρα «իր տիրուհուն սիրելի, երիտասարդ աղախին», ἔτιρα «հարճ, ապօրինի կին», ἔτιρος «ընկեր» ձևերից (տե՛ս Bailly, էջ 3 և 818)» [տե՛ս *Աճառյան*, 1961, էջ 600], այնուհետև՝ «Հունական փոխառությունները 915 հատ էին, նրանցից ջնջել *սեմփորի* և ավելացնել *լառնակ* «սճունակալ կամ գերեզման» < λαρονάζ (ըստ Աբուլաճեի) և *աբրայ* «աղախին», *եսոր* «անառակ» և *եսորոնին* «ընկեր» (ըստ Գ.Չահուկցյանի). գումարը լինում է 918» [*նույն տեղում*, էջ 601]:

<sup>69</sup> Բառարանն առ այսօր ձեռագիր է և պահվում է Վիեննայի Մխիթարյանների գրադարանում (Չեռ. № 6), եթե ոչ նաև այլ վայրերում [տե՛ս *Ճանաչյան*, 1956, էջ 129-138, 185-191, 249-255]:

րը, առանց բառ մը իսկ աւելի աւելցնելու իր կողմէն» [*Ճանաչեան*, 1956, էջ 249]:

բ) 1965 թ. տպագրված համանուն հոդվածում Ջահուկյանը, ի թիվս ստուգաբանական վերլուծության առնված երեք տասնյակից ավելի բառերի, անդրադառնում է նաև *խել* (ըստ «Բառգիրք հայոցի» բացատրության՝ «հեշտ» (ձեռագրական տարբերակ՝ «հեշ»), որ Ջահուկյանը համարում է «անհասկանալի բացատրություն») բառը և տալիս հետևյալ մեկնությունը. «Պետք է կարծել, որ *խել*-ը բարբառային *խել* բառն է, որ բացատրում են՝ որպես «շատ, բավական», և բխեցնում պրսկ. *xeyli* (թրք. *hayli*) բառից: Քանի որ այն հաճախ հանդիպում է «խել մը ժամանակ» արտահայտության մեջ, հեշտությամբ կարող է կարծվել որպես *հեղ* «անգամ» բառի հոմանիշ (*հեղ մը* «մի անգամ»), և *խել*-ը կարող էր բացատրվել որպես «հեղ» (վրիպակով *հեշ*): Բարբառային *հեղ* բառը գրաբար տեքստերում հանդիպում է *հաղ* ձևով և ունի հնդեվրոպական ծագում» [*Ջահուկյան*, 1965, էջ 255]:

Այստեղ առարկություն է վերցնում այն, որ «հեշ» բացատրությունը որակվում է «անհասկանալի» կամ «ինչ լինելը ոչ հայտնի»<sup>70</sup>, առավել ևս *հեղ*-ի հետ կապելով՝ այն համարվում է «վրիպակ»: Այնինչ բառը, իրոք, հասկանալի է և նշանակում է «խելք, միտք»: Հակված ենք կարծելու, որ այն կապ ունի հայ. *յիշել* (այլև *ուշ*, *յուշ*, *յիշատակ* և այլն) բառերի հետ, որից ունենք հայ. (բրբռ.<sup>ո</sup>) *հեշ-ար* // *հիշ-ար* «սթափ, խելքը՝ միտքը տեղը. արթուն, ոչ քնով անցած», և որը կապվում է իրան. *hōš*, *hūš*, *uši* ձևերի հետ (հմմտ. պրսկ. *hōšyār* «արթուն», քրդ. *hiš* «խելք, միտք» և այլն) [հմմտ. *Աճառյան*, 1977, էջ 399]<sup>71</sup>:

<sup>70</sup> «Ինչ լինելը հայտնի չէ» բնորոշումը տալիս է Աճառյանը, որը բերում է նաև Ջահուկյանը իր «Ստուգաբանական բառարանի» մեջ. *խալ*-ը բացատրված է «հեզ» [տե՛ս *Աճառյան*, 1973, էջ 355]:

<sup>71</sup> Ի դեպ՝ «Բառգիրք հայոցի» քննական բնագրում, հիմնվելով Աճառյանի ոչ հավաստի ուղղման («սրբագրման») վրա, *խել*-ի բացատրությունը նշված է «հեշտ», տողատակին «ուղղելով» նաև ձեռագրերից մեկի ճիշտ՝ *հեշ* ձևը, այլև հղում է տրված Աճառյանի «Արմատական բառարանը» [տե՛ս «*Բառգիրք հայոց*», 1975, էջ 142, այլև 379]: Այս սխալը թույլ է

գ) Մեկ այլ հոդվածի առաջին բաժնում, որի ենթավերնագիրն է «Ստուգաբանական դիտողություններ միջնադարյան բառարաններում տեղ գտած նորահայտ բառերի մասին» [*Չահուկյան*, 1976, էջ 41-51], անվանի լեզվաբանը նպատակ է ունեցել «պարզելու որոշ բառերի ծագումը, ճշտելու առաջարկված որոշ ստուգաբանություններ և կատարելու բառաքննական այլևայլ դիտողություններ» [*Չահուկյան*, 1976, էջ 41], ըստ այդմ՝ անդրադառնում է մեկուկես տասնյակից ավելի (թվով՝ 17) բառերի, որոնցից *պոսել*, *պօռփիռփիօնոս*, *ջալամուկ*, *սալար*, *սիկիրա* և *սիփհնրա* բառերն առնված են այլ աղբյուրներից, իսկ մնացածը՝ Մեղրեցու «Բառգիրք հայոցից»:

Դրանք են՝ *ազեկայ* «արեգակն» (< հուն. βεζεκ < եբր. bāsāq «փայլակ»), *առօթ* «մինչև երեկո» (*առ-* նախածանց + *օթ* «գիշերում, գիշեր, երեկո»), *աքսա* «պճնված» (< հուն. άξιοσ «արժեքավոր» բառի իգ. սեռի άξια ձևը), *բանջար* «երաժշտական մի գործիք» (< փոքրասիական աղբյուրից՝ հուն. πανδορα, πάνδορον «երեքադյան քնար»), *հիբիդէոս* «փող կամ սրինգ» [<լատ. iubilaeus (< հուն. ιωβήλαιος «հոբելյան», որից նաև հայ. *յորելեան*), որ ծագում է եբր. jōbēl «խոյ» բառից], *լակոնիայ* «ծածկոց՝ չարսավ» (< լատ. lacinia «քղանցք. լաթ, կտոր. հագուստ»), *լուջ* «կանաչ» (< հայ. *լուրջ* «բաց կապույտ» բառից՝ *ր-*ի անկումով. հմմտ. հայ. *խարշել* ~ *խաշել*, *քարշել* ~ *քաշել*, *դուրս* ~ *դուս*), *ոյազիոս* «սուրբ» (< հուն. ó άγιος «սուրբ»), *պաժա* «կապ» (< հուն. παγίς, սեռ. հոլ. παγίδος «ցանց, ծուղակ, որոգայթ»), *պարակղէտոս* «մխիթարող» (<հուն. παρήγορος «մխիթարող, մխիթարիչ»), *պեղագոս* «մեծամեծք» (<լատ. permagnus «մեծամեծ»), *պոսել* «սպրդել, խույս տալ», այլև *պոսպոսել* «կեռ ի կեռ փախչել» (< հայ. *պոս/պոս* «շեղ, ծուռ. կեղծավոր». մերժվում է արաբ. basbasa «շան՝ պոչը երկու կողմ շարժելով շոդորորթելը»<sup>72</sup>, *պօռփիռփիօնոս* «քնարերգ» (< հուն. \*πορφ-

---

տրվում նաև հետագայում, երբ այդ բառահոդվածը բերվում է հետևյալ կերպ. «*Խել. հէշ*: Մեկնությունը պետք է լինի «հեշտ» [տե՛ս *Ամալյան*, 2007, էջ 232]:

<sup>72</sup> Հմմտ. հայ. (բրբռ.) *վասվասա* (այլև *վրավրաս*, *վասվրաս*, *վասրվասր* և այլն) «շատախոս, հաճոյացող. շողորորթ՝ շահամոլ. կեղծավոր, խաբե-

ρόφωτος «պորփյուրաճայն»), *ջալամուկ* «ջալամ» (< հայ. *ջալեամն, ջալամն*, ավելի ուշ՝ *ջալամ*), *սալար* «գաղտուկ» (< *սալ*- < հ.-ե. \*k’al-, հմմտ. լատ. cēlō, cēlāre «ծածկել, թաքցնել», հվգերմ., այլև հանգլ. helan «թաքցնել»), *սիկիրա* «արբեցութուն» (< հուն. σικέρα σίκερα [(հացից կամ պտուղներից պատրաստված) գինի] < եբր.<sup>o</sup>] և *սիփինքա* «Քանկարժեք քար<sup>o</sup>» (< հուն. σφίγγιον, հոգմ. σφίγγια «ապարանջան») [տե՛ս *Չահուկյան*, 1976, էջ 41- 44]:

Այդ դեպքում, ինչպես կարելի է նկատել, բառաքնության կամ ստուգաբանության ենթարկված բառերի մի զգալի մասը՝ *ազեկայ, արսա, բանջար, յագիոս, պաժա, պարակղէտոս, պոփիւփիօնոս, սիկրա* և *սիփինքա*, փոխառություն է հունարենից, երեքը՝ *իւրիղէոս, լակոնիայ* և *պեղագոս*, առնված են լատիներենից, այնուհետև մեկը՝ *սալար*, բնիկ է, այսինքն՝ ունի հնդեվրոպական ծագում, իսկ չորս բառ՝ *առօթ, լուջ, պոսել, ջալամուկ*, բացատրելի կամ հավանական հայկական կազմություն են՝ անկախ իրենց հնչյունական, բառակազմական այս կամ այն կարգի «աղավաղումներից»:

Սրանց կեսից ավելին, ավելացնենք, փոխառություն է հունարենից, որն ամենայն հավանականությամբ վկայություն է այն բանի, որ «Բառգիրք հայոցի» կազմողը կամ հեղինակը հատկապես օգտվել է միջնադարյան ձեռագիր «Բառք յունարենից» (12-րդ դ.) [հմմտ. *Ամալյան*, 2007, էջ 341-342]: Բերվածները, բացի *պեղագոս, պոսել* և *սալար* (նաև *սալարիլ*) բառերից, որոնք ներկայացված են նախորդ ուսումնասիրողների (Հյուբշման, Աճառյան և ուրիշներ) տվյալներով, կամ նշված են իբրև անհայտ ծագման, դուրս են մնացել հեղինակի՝ վերջերս լույս տեսած բառարանից [*Չահուկյան*, 2010]:

---

բա» (օրինակ՝ *վասվասա մարդ, վասվասություն էնել* - Մուշ, Ալաշկերտ), որը եթե բացառվում է հայ. *բաս* «խոսք, գրույց» [հմմտ. բրբռ.՝ մեկի *բասն* էնել «մեկի մասին խոսել», *բասո՞վ* էր «(զարմացական արտահայտություն)՝ մեկի մասին խոսելուց հետո նրա հայտնվելու դեպքում»] արմատի *վաս/վասը* տարբերակից կրկնավոր բաղադրություն լինելը, ապա անհավանական չէ նրա առնչությունը արաբ. basbasa բառի հետ:

դ) Հետագայում նույնպես առանձին հոդվածներում, այլև հայոց լեզվի պատմությանը նվիրված գրքում Գ. Ջահուկյանն անդրադարձնում է «Բառգիրք հայոցից» քաղված մի քանի այլ բառերի ստուգաբանական քննությանը [տե՛ս *Ջահուկյան*, 1979, այլև 1991, էջ 36-44, 1996, էջ 39-46 և այլն]:

Դրանք են՝ *ասագ* «հարկ, տուգանք» (<թյուրք. *yasak* «օրենք, արգելք», մոնղ. *ᠭᠢᠲᠠᠴᠠᠭ* «օրենք»), *բաւիղ* «շինված պատուածոյք» // *բաւեղ* «քիւ տեղի» (< հե. \*bheu- «լինել, սարել», հմմտ. հուն. *φωλέος* «որջ, բուն», *φωλέω* «պառկել, սարել»), *դանդիռն* «դանթին, կամ մութն» (< հե. \*dhndh- «ցնդել, ծխել, ծխալ»<sup>(\*)</sup>), հմմտ. գերմ. *dunkel* «մութ, մռայլ», խեթ. *dankuiš* «մութ, սև») [տե՛ս «Բառգիրք հայոց», 1975, էջ 73, 358. *Աճառյան*, 1971, էջ 621. *Ջահուկյան*, 1987, էջ 313, այլև 2010, էջ 183], *խեղակ* (փխ.՝ *խեղանակ*, ձեռագր. տարբերակ՝ *խեղական*, *խեղյանակ*. բառի արմատն է *խել/խեղ*, տարբերակ՝ *խելն* «բերան և շուրթն», *խէլս* «(նավի) սկզբնամաս», հմմտ. *նասախել*) «հաստատուն, գլխավոր» [<հե. \*(s)khel-, հմմտ. հինդկ. *kalā-* «արվեստ», անգլ. *skill* «վարպետություն, կարողություն»], *կոշնել* // *կոշնել* «ձոնել, ընծայել» (~խեթ. *kuššan* «ռոնիկ, աշխատավարձ, վարձատրություն, գին») [տե՛ս «Բառգիրք հայոց», 1975, էջ 142. *Ջահուկյան*, 1987, էջ 314, այլև 1970, էջ 154. *Ամալյան*, 2007, էջ 256-257], *ճողոպուրտ* «ընկույզ» (< վրաց. *čuburi*) [տե՛ս *Աճառյան*, 1977, էջ 211. *Ջահուկյան*, 1987, էջ 591, 593], *մագիղոն* (կամ՝ *մագիղոն*, *մագիղոն*) «տասներկուլարյա երաժշտական գործիք. տավիղ» (< փոխ. հուն.)<sup>(\*)</sup> [*Ջահուկյան*, 2010, 499], *մաժառոս* «սպասավոր» (< հուն. *μάγειρος* «խոհարար», «γ-ի միջնադարյան ժարտասանությանը»)<sup>73</sup>, *սիս*

<sup>73</sup> «Հայերեն ստուգաբանական բառարանում» նշվում է հետևյալը. «Թերևս ֆր. *majordome* «ձառայապետ» բառի աղավաղված գրություն» [*Աճառյան*, 1977, էջ 224]: Այս բացատրությունը, այսինքն՝ ծագումը ֆրանսերենից, ժամանակին տվել է Կ. Շահնագարյանը Սմբատ Սպարապետի «Պատմության» (Մոսկուա, 1856 թ.) մեջ բառի *մաժառոստան* գրչության մեկնաբանման առիթով, և այս մասին նշում է Ջահուկյանը [*Ջահուկյան*, 1979, էջ 29] *մաժառոս* բառի ստուգաբանության ժամանակ:

«կոթող»(< հե. \*k'em- «ձող, փայտ. եղջյուր») <sup>74</sup> և այլն:

Բերվածներից *խել*, *կօշնել* և *մագիրոն* բառերը չեն ընդգրկվել հեղինակի «Ստուգաբանական բառարանի» մեջ:

7. Լ. Հովհաննիսյանը քննել է «Բառգիրք հայոցի» անհայտ ծագման երկու տասնյակից ավելի բառեր, որոնք հիմնականում փոխառություն են, ինչպես նաև հավաստի միջոց բարբառային, բնագրային ճշգրտումների համար [տե՛ս *Հովհաննիսյան*, 2000, էջ 213-221]:

ա) Իրանական լեզուներից կատարված փոխառություններ. *այենակ* «օրինակ» (< իրան.), *աշխուժուհի* «թագուհի» (< իրան.), *աիժ* «հոսելը» (< իրան., հմմտ. *վէժ*, որից *վիժել*), *բրաշակ* «դարավանդ» (< միջին իրան.), *գրուակ* «գրույց» (< իրան. -vak «խոսք»), *զաւօղ* «չար՝ նենգ խոսք» (< իրան. zav/zov < հե. \*g'hau- «գոչյուն»), *մանի* «խոսող» (< միջ. պրս. gumān «կարծիք, ենթադրություն» < man «մտածել»), *յաւան* «արտաբերող» (< իրան. hvan «կանչել»), *նամեճական* «նախարար. իշխան» (< իրան. nam «անուն»), *նեւանդակ* «տեգ կամ պահունակ» (< իրան. ni + vand/band «կապ» + ak), *շիղշայք* «այսք», *ումանակ* «խումանակ. նման, նմանապես» (< իրան. man-, պրս. mana «թվում է, նման է», այլև numāna «օրինակ, նմուշ»), *վաշին* «խոսակից» (< իրան. vač «խոսել», հմմտ. *գրուակ* «խոսք» < իրան. k ~ c -ն օրինաչափ հնչյունափոխություն է), *վարսզ* «մատը բռնող՝ սեղմող» (իմաստային ճշգրտում), *փիր* «խրատ» (< պրս. pīr «ծեր»):

բ) Ոչ հնդեվրոպական լեզուներում զուգահեռներ ունեցող բառեր. *աղու* «թույն» (< թուրք. ağu, ağı «թույն»), *բենդել* «կազմած» (< թուրք. < իրան. band), *զէաթ* «ժամանակ» (< արաբ. «կտոր, մաս»<sup>74</sup>), *ռափիկ* «սիրելի» (< արաբ. rafī «բարի, սիրուհի»), *ռիմակալ* «ոխակալ» (< արաբ. ramī «մեղադրել, հանդիմանել») (°):

գ) Բնագրային կամ բարբառային ճշգրտման տեղիք տվող բառեր. *ակաղիմական* (փիլիսոփայական տերմին՝ ի տարբերու-

<sup>74</sup> «Հայերեն ստուգաբանական բառարանում» նշվում է. «Ծագումն անհայտ է: Հազիվ թե կապ ունենա հնդեվրոպական \*k'em- «ձող, բուն» արմատի հետ, որից *սամի*» [*Ջահուկյան*, 2010, էջ 679]:

թյուն սովորական իմաստով գործածության), *գոնոզի* «մեզ» (Եղիշեի երկուն գործածված՝ գրադաշտական կրոնի վերաբերյալ խոսքում), *սխ* «խիստ, հոծ» (Գրք. բրբ.՝ «պինդ, ամուր»), *ստնանատրք* «վարձավորներ» (իմաստի ճշգրտում), *փտոր* «վտավառ. աղբ» (թերևս ուղղելի՝ *սպասառ* «նույն իմաստով») <sup>75</sup>:

Բառարանում կան դեռևս բառեր, որոնք կարոտ են նոր լուսաբանման: Ստորև անդրադառնում ենք այդ կարգի բառերից հետևյալներին:

1. *Աղանդումն* «խելագարումն» («Բառգիրք հայոց», 1975, էջ 12), իսկ ըստ Աճառյանի՝ *աղթանդումն*՝ նշելով, որ «գիտեմիայն Բառ. երեմ., էջ 11» [*Աճառյան*, 1971, էջ 127]:

Հ.Ամալյանը գտնում է, որ ճիշտը *աղանդումն* ձևն է, և քննական բնագրում իբրև գլխաբառ դրված է *աղթանդումն*, իսկ վերջինիս տողատակին՝ *աղթանդումն, աղադումն* (*աղամովթից* հետո)՝ որպես ձեռագրական տարբերակ [*Բառգիրք հայոց*, 1975, էջ 346]: Իսկ հետագայում, հավանաբար հետևելով Աճառյանին, նա գլխաբառ է դնում նախկինում սխալ համարվածը՝ տալով հետևյալ ձևակերպումը. «*Աղթանդումն*. խելագարումն: Ձեռագրերի մի մասը չունի այս բառահոդվածը: Մյուս ձեռագրերը (№№ 5596, 8198, 3937 և այլն), որ հնագույն գրչագրեր են, ունեն *աղանդումն*: Միայն № 5925-ում կա՝ «*Աղանդատր. խելագարումն*»: Ուրեմն գլխաբառը պետք է լինի *աղանդումն*» [*Ամալյան*, 2007, էջ 176]: Ստացվում է, որ բառի ճիշտ՝ վերականգնելի ձևն է *աղանդումն*, որ եղել է նախկինում՝ քննական բնագրում, իսկ ավելի ուշ դարձյալ գլխաբառ է դրվում սխալ ձևը:

Հավանաբար գործ ունենք *աղանդումն* «խելագարություն, խելագարվելը» բառի հետ: Եթե պարզվի, որ *աղանդումն* բառի *աղանդ* հիմքն իր հերթին բաղադրված է *աղ-* արմատով և *-անդ* ածանցով, ապա կարելի է կարծել, որ արմատը այլ բան չէ, քան *ալ//այլ* արմատի տարբերակը: Բառը լծորդ է *այդ* արմատին, որն, ի դեպ, ավելի հին է, քան *այլ* արմատը: Իսկ

<sup>75</sup> «Բառգիրք հայոցի» մեկ-երկու բառի քննությանն անդրադարձել է նաև Պ. Բեդիրյանն՝ ի թիվս իր առանձին հոդվածներում քննության առնված բառերի [*Բեդիրյան*, 1956, էջ 40, այլև 1962, էջ 144]:



վերջինս ծագում է հե. \*alyo- (\*ailo-) ձևից. հնմտ. հուն. ἄλλος «այլ, ուրիշ», լատ. alius (նույնը), գոթ. aljis (նույնը), հիբլ. aile (նույնը), կիմր. ail (նույնը) և այլն [*Աճառյան*, 1971, էջ 168-169]:

2. *Աղիփատոս* «հոգաբարձու», այլև *ափիատոս* («*Բառ-գիրք հայոց*», 1975, էջ 12, 43, 346, 352): Աճառյանը նշում է, որ ունի միայն Երեմիայի բառարանը: Ամալյանը հետազայում այլևս չի անդրադառնում դրան:

Բառը, կարծում ենք, փոխառություն է հուն. (դոր.) ἄλιβατος, այլև ἰλιβατος (<ἴλι-βάτος «դյուրանցանելի, հեշտ հաղթահարելի»), «բարձր, գառիվեր. վեր բարձրացած՝ վերամբարձ. բարձրուղեշ. խորը, անհատակ» ձևից [*ՎճճՅՅՅՅ*, 1958, շ. 79, 749]: Ըստ Ջահուկյանի՝ փոխառություն՝ հուն. ἄλιπητος ձևից, որը հնչյունապես այնքան էլ համարժեք չէ, որքան նախորդը [*ՎճճՅՅՅՅ*, 1958, նույն տեղում]:

3. *Աղտամուղտ* բառը *աղջամուղջ* գլխաբառի բացատրության մեջ, այն է՝ *աղջամուղջ* «աղտամուղտ, խաւար» [*Բառ-գիրք հայոց*], 1975, էջ 12]: Հանդիպում են նաև *աղտից* «աղից» (*աղ* բառի *տ* աճականով տարբերակը թեք ձևով), *աղտաղտուկ* «չօռ տեղի, ջմջմայ» բացատրությամբ, բուն իմաստով՝ «մուգ, մթամած» (որպիսին լինում են, օրինակ, աղուտները՝ խոնավ, ջրակալած հողերը) բառերը:

Ըստ «Նոր հայկազյան բառգրքի»՝ *աղտամուղտ*, տե՛ս *աղջամուղջ* (որ աստի ծագի, իբր աղտ և մուղտ, կամ մութն), բերվում է հետևյալ օրինակը Ոսկեբերանից. «Իբրև օրն տարածամեցաւ, և *աղտամուղտ* եղեն, գաղտուկ մուծին զնա աշակերտքն ի քաղաքն» [*Աւետիքեան, Միրսէլեան, Աւգերեան*, 1836, էջ 44]: Այլև՝ «*աղջաղջ*, նոյն ընդ *աղջամուղջ* (որ է իբր *աղջամուղջ* կամ *աղտամուղտ*) և *աղջամուղջ*, որպէս ռամկօրէն փուսումնու, մթնշաղ, մութնիմութն և այլն» [*նույն տեղում*, էջ 43]:

Աճառյանը *աղջ* արմատը հղում է *արջն* «սև» ձևին, միաժամանակ նշում, որ այն հանդես է գալիս երկու ուրիշ ձևերով՝ *աղջ* «մութ, մթութիւն» և *աղտ* «մութ, խաւար», որոնք չունեն առանձին գործածություն, և որոնցից կազմված են *աղջութիւն*

«խաւար», *աղջաղջ* «մշուշ», *աղջամուղջ* «թանձր մութ», *աղջամղջին*, *աղջամղջեալ*, այլև *աղտամուղտ* «մութ, խաւար» (տե՛ս նաև *մուղտ* արմատը առանձին) [հմմտ. *Աճառչան*, 1971, էջ 135, 335]: Այն համարվում է «հյուսիսային կովկասյան լեզուներից փոխառյալ բառ», որ ըստ Ջահուկյանի՝ «ճիշտ չէ» [*Джаукян*, 1967, с. 171. *Ջահուկյան*, 2010, էջ 39]: Այնուհետև, Ջահուկյանը բառի ծագումը նշում է հարցականով, այլև հայտնում հետևյալ թեակնան կարծիքը. «եթե *աղտամուղտ*-ը բարդություն չէ, այլ կրկնություն, ապա առկա է *մ* հավելական ձայնորդով կաղապար, որ հետագայում հայերենում լայն տարածում է ստացել» [*Ջահուկյան*, 1987, էջ 252, այլև 2010, էջ 39]:

Բառը կրկնավոր բարդություն է ոչ թե *մ* տարրի, այլ *ամ* մասնիկի միջարկումով: Այնուհետև, նկատելի է այն (որին, ի դեպ, ուշադրություն չի դարձվել նախկինում), որ «կրկնությանը» կազմված լինելը վերաբերում է ոչ միայն *աղջաղջ* բառին, այլև *աղջամուղջ*, *աղջամղջին*, *աղջամղջեալ* բառերին, ընդ որում *աղջամուղջ* բառը նշանակում է ոչ թե սովորական «մութ, խավար», այլ «թանձր խավար»:

«Արմատականում» *մուղտ* «մշուշ, խավար» արմատը համարվում է «առանձին անգործածական», որից՝ *մղտանալ* «մթնել, մշուշ պատել», *մղտփարատ*, *մղտագոյն*, *մղտութիւն*, *աղտամուղտ* և այլն, որը և չի ստուգաբանվում, թեև նշվում է հետևյալը. «Pokorny 2, 274 և 275 մերժելով Scheffelowitz-ի մեկնութիւնը *ղ*-ի անհամաձայնութեան պատճառաւ, *մուղջ* դնում է հնիւ. mel- «սև» արմատից: Սրանք ընդունում են առանձին արմատ *մուղջ*-, որ գտնում ենք միայն *աղջամուղջ* բառի մէջ, որ *աղջ* բառի կրկնականն է *մ* յաւելուածով (այսպէս է ընդունում նաև Meillet, MSL 18, 253)» [*Աճառչան*, 1973, էջ 357]:

Տվյալ դեպքում կա հակասություն *աղջամուղջ*-ի կրկնավոր և նրանում *մ*-ի հավելված լինելու տեսանկյունից:

Գ. Ջահուկյանը գտնում է, որ մի կողմից՝ հայ. *աղջ* // *աղտ*- «խավար» (որից՝ *աղջաղջ*, *աղջամուղջ*, *աղջութիւն*, *աղջամղջին*, *աղջամղջիկ*, *աղտամուղտ* և այլն) արմատը ծագում է հե. \*alghi- (նախկինում՝ \*alghio-) [\*aghl(u)-] ձևից. հմմտ. *άχλυσ* «մութ, խավար», հայրու. *aglo* «անձրև» [տե՛ս

*Джаукян*, 1967, с. 171, 303. *Ջահուկյան*, 1987, էջ 111, 207, այլև 2010, էջ 39], իսկ մյուս կողմից՝ հայ. (*աղջա-մուղջ* (°) < հե. \*mōl- (նախկինում՝ \*mulghio- < \*mughlio- < \*(s)meugh- // \*(s)mughlio «ծուխ, ծխալ՝ մխալ») [տե՛ս *Джаукян*, 1967, с. 171, 319 և այլն. *Ջահուկյան*, 1987, էջ 138]: Այսպես նաև՝ (*աղտա-մուղտ* «խավար» < հե. \*mōl- [\*mel-] (*նույն տեղում*): Երկու դեպքում էլ ստուգաբանությունը տրվում է հարցականով, որ նշանակում է, թե անհավանական է նախորդ ստուգաբանությունների հիման վրա կատարված վերականգնումը, թեև արվում է բավականին նոր մոտեցմամբ:

Հայ. *աղտամուղտ* բառի *աղտ* և *մուղտ* (նաև *աղջամուղջ-ի աղջ* և *մուղջ*) բաղադրիչների բաժանումը, այլև ստուգաբանության բոլոր փորձերը համոզիչ չեն՝ սկսած նրանից, որ դրանք հիմնված են եղել նախ՝ «Նոր հայկազյան բառգրքի» տվյալների վրա: Այնինչ, այդ և նման շատ բառեր հայերենում ունեն բոլորովին այլ կազմություն, որոնց բաղադրիչները տարբերակային արմատներ են՝ այս կամ այն կարգի ձայնավորմամբ, աճականով (հմմտ. *աղ-ջ-// ուղ-ջ-*, *աղ-տ-// ուղ-տ-* և այլն):

Նշենք դրանցից մի քանիսը:

ա) Հայերեն որոշ բառեր ունեն կրկնավոր կազմություն, ընդ որում կա՛մ միայն պարզ միացումով, կա՛մ նաև *-ամ-* մասնիկի միջարկումով, այնուհետև արմատի *ա//ու*, *ա//ո* ձայնդարձով, կա՛մ էլ առանց ձայնդարձի: Այդպիսին են ոչ միայն հիշյալ *աղջ-աղջ* և *աղջ-ամ-ուղջ*, *աղտ-աղտ(ուկ)* և *աղտ-ամ-ուղտ*, այլև *արհ-ամ-արհ(եմ)*, *այլ-այլ(եմ)* և *աղ-ամ-ող-(իմ)*, (*բազմ*)*աղխ-աղխ* և *աղխ-ամ-աղխ* բառերը և այլն:

Հայ. *արհ-ամ-արհ-* «անարգ, խոտելի» (որից *արհ-ամ-արհ-անք*, *արհ-ամ-արհ-եմ* և այլն) բառն, ըստ Աճառյանի, «կրկնուած է *արհ* պարզ արմատից, որ այլուստ անձանօթ է. կազմութեան համար հմմտ. *աղխ-ա-մաղխ*, *խառն-ա-մառն*» [*Աճառյան*, 1971, էջ 323]: Բերված համեմատելի ձևերից առաջինը մասամբ է տեղին (իմա՛ *աղխ-ամ-աղխ*), իսկ երկրորդը սխալ՝ այլ կարգի օրինակ է:

բ) Ժամանակին միանգամայն ճիշտ մոտեցում է ունեցել Դյուլորինեն, երբ առանձնացրել է *-ամ-* մասնիկ՝ *արհ-ամ-արհել*,

ինչպես նաև *աղիս-ամ-աղիս*, *հեղձ-ամ-ըղձ(ուկ)* բառերում [Dulaurier, 1870, p. 125-129. տե՛ս *Աճառյան*, 1971, էջ 323]:

գ) Կան նաև նույնպիսի կադապարով սերված բառեր, որոնցում *-ամ*-ի փոխարեն առկա է *-ալ*- մասնիկի միջարկում. հմմտ. *այլ-այլ(եմ)*, *աղ-ալ-աղ (եմ)* և այլն: Հայ. *աղալաղ* «փճացած, այլասերված, տկար (մարմին)», ըստ Աճառյանի՝ «կրկնուած է *այլ* բառի երկրորդական *աղ* ձևից, որ առանձին անգործածական է. ըստ այսմ բառի հնագոյն ձևն է *աղելաղ* և նոյն է *այլայլել* (= *այլևայլել* բառի հետ), ուստի ծագում է հե. \*alio- ձևից. հմմտ. հուն. ἄλλος «այլ, ուրիշ», լատ. alius «այլ, ուրիշ», գոթ. aljis «այլ, մեկ ուրիշ» և այլն [Աճառյան, 1971, էջ 122, 168- 169. *Ջահուկյան*, 2010, էջ 48]:

դ) Հայ. *աղիս//ախ* «փականք, օղակ. ունեցվածք» բառի դեպքում ևս Աճառյանը նշում է «*աղիսամաղիս* (կրկնութեամբ և մ յաւելուածով. հմմտ. *արհամարհ* «հակ հուկ ապրանք, բազմութիւն ընչից»՝ միաժամանակ անտեսելով Դյուլորիեի ճիշտ դիտարկումն այդ հարցում (տե՛ս վերը): Այս արմատը ևս Աճառյանը դիտում է չստուգաբանված [Աճառյան, 1971, էջ 131-132]:

ե) Հայ. *հեղձ* «խեղդվելը» արմատից ունենք *հեղձամղձուկ* բարդ ածանցավոր բառը՝ կազմված *հեղձ-ամ-(ը)ղձ(ուկ)* բաղադրիչներով, ըստ Աճառյանի բառարանի՝ չստուգաբանված, թեև նույն է դիտվում հայ. *խեղդ* արմատի հետ. հմմտ. *խանդ//խանձ*, այլև *նախանձ*, *փոխինդ // փոխինձ* «հատիկը բոված և աղացած», *խինդ* «ծիծաղ» // *խնձ(ող)* «խնդացող՝ ծիծաղող», փոխաբերաբար՝ «անառակ, անբարո» և այլն:

զ) Հայ. *աղամող* կրկնական արմատը ըստ Աճառյանի՝ «անստոյգ իմաստով բառ է. հնագոյն գործածութիւն և հարագատ նշանակութիւնը «մոլորիլ, շեղուիլ, ծռիլ, խտտորիլ» երևում է *աղամողիլ* բայից» [Աճառյան, 1971, էջ 119]: Բառի ճիշտ բացատրությունը ժամանակին տվել են «Նոր հայկազյան բառգրքի» հեղինակները՝ մեկնաբանելով իբրև *այղումայղ*, *այլևայլ* «զանազան, պեսպես, տարբեր», որտեղ երևում է մի կողմից՝ միայն *լ/ղ* լծորդություն, իսկ մյուս կողմից՝ *-ու*- միջամասնիկի, ինչպես նաև *-ել*- շաղկապ-միջամասնիկի առանձնացում (տե՛ս

*Աւետիքեան, Միրմէլեան, Աւգերեան*, 1836, էջ 89): Ունենք նաև *ալ-ք* «խորք, խորունկ տեղ. անդունդ, անհատակ» բառը, որից՝ *ալուց* «ավելի ներսը, խորը»:

Աճառյանը «Արմատականում» միաժամանակ նշում է, որ այն գործածված է ոչ միայն Եզնիկի «Եղծ աղանդոցում», որի բնագիրը ժամանակին ինքը պատրաստել է հրատարակության, այլև հանդիպում է Պ. Դուրյանի «Տրտունջք» բանաստեղծության մեջ, թեև այն շարունակվել է *անայի* սխալ ձևով տեղ գտնել նաև հետագա հրատարակություններում [հմմտ. *Համբարձումյան*, 1990, էջ 4, այլև 1991, էջ 2]: Այդ բառը գտնում ենք նաև Ստ. Ռոշբայի ձեռագիր բառարանում. «*Ալ*. մթութին դժոխքի, խորք, որմէ *ալական*, այսինքն որ կը պատկանի դժոխքին: Ի խորս *ալական* մեղապարտքն անկան (Առաք. ողբ.)» [տե՛ս *Ճանաչեան*, 1956, էջ 254-255]:

Աճառյանը չունի բառի որևէ ստուգաբանություն, սակայն կարելի է կարծել, որ այն ծագում է հե. \*alio- արմատից:

Է) Կրկնավոր պարզ կազմություն ունի հայ. *անդ-ունդ* «անհատակ խորություն. խորք» բառը, թեև ընդունված է այն համարել *ան-* ժխտական մասնիկով և ենթադրյալ *դունդ* (Աճառյանը սկզբնադիր աստղանիշով՝ \**դունդ*) արմատով բաղադրություն՝ բխեցնելով հե. \*dhundhos, հմմտ. հուն. ἄ-βυσσος, հլավ. bez-duna, ռուս. áâçäí à, գերմ. ab-grund, գալլ. an-nwfn և այլն, որն ամենևին ճիշտ չէ [հմմտ. *Աճառյան*, 1971, էջ 190]:

Այս առումով նկատենք, որ ունենք հայ. *ունջ* «տակը, խորքը, հատակ», որն այլ բան չէ, քան հայ. *անդ* արմատի տարբերակ՝ *ա//ու* և *դ//ջ* տարբերակվածությամբ: Այն գործածված ենք գտնում հայ հին գրական հուշարձաններում: Օրինակ՝ «Յորժամ յաջ ոտնս յենուի, զաջ լեառն ընդ գետին տանէի. յորժամ ի ձախ ոտնն յենուի, զձախ լեառն ընդ գետին տանէի: Ապա հարցանէր թագաւորն Պարսից Շապուհ և ասէ. աղէ՛ տուր ինձ գիտել. ո՞վ են լերինքն այնոքիկ՝ զորս դու ընդ *ունջ* տանէիր» (*Փաւստոս Բուզանդ*, 1987, էջ 260):

4. *Աղջաման* «ապարանջան, աղթաման» բառը Մեղրեցու «Բառգիրք հայոցում» չունի որևէ ձեռագրական տարբերություն, ոչ էլ բնագրի ծանոթագրություն: Բառի բացատրության

մեջ կա *աղթաման* բառը, որն իր հերթին բառարանային միավոր է և բացատրվում է «ապարանջան», որն էլ ունի ձեռագրական մեկ տարբերակ՝ *ապարանջան* [*«Բառգիրք հայոց»*, 1975, էջ 12-13]: Հետագայում Ամալյանն այս բառին այլևս չի անդրադառնում [*Ամալյան*, 2010]:

Աճառյանի «Արմատական բառարանում» չենք գտնում *աղցաման* բառը, այսինքն՝ Մեղրեցու բառարանի այդ տվյալը բաց է թողնված, սակայն դա չի խանգարում *աղցաման* բառի մեկնության համար, մանավանդ որ վերջինիս՝ *աղց* բաղադրիչի ստուգաբանությունը տալիս է Աճառյանը՝ «պէտք, կարիք, հարկաւորութիւն, ներքին պահանջ» բացատրությամբ, այն դիտելով փոխառություն ասոր. elāš «ճնշել, նեղել, ստիպել, հարկադրել, բռնադատել», իսկ ըստ Ջահուկյանի՝ ասոր. āṣā ḏliḡ [*Աճառյան*, 1971, էջ 136-137, այլև 1926, էջ 8-9. Ջահուկյան, 1987, էջ 455, 478, 481]:

Սակայն մեկնության կարոտ են մնում *աղթաման* և *ապարանջան* բառերը, որոնք հանդիպում են *աղցաման* բառի բացատրության մեջ: Աճառյանն ունի *աղթաման* «ապարանջան»՝ ըստ Հին հայկազյան բառարանի, այլև Մեղրեցու բառարանի: *Աղթաման* բառի համար Աճառյանը, ելնելով Ս. Ամատունու բառարանի տվյալից, նշում է, որ «կենդանի է» բարբառներում, թեև Կոփի բարբառի կրող-տեղեկատու (ինֆորմանտ) Բենսեի ասելով դա էլ է մերժվում [*Աճառյան*, 1971, էջ 127]:

*Աղթաման* բառի վերաբերյալ կարող ենք միայն ենթադրել *g/p* լծորդության հնարավորություն՝ *աղցաման-աղթաման* «գիշերանոթ, պետքի աման»: Իսկ *ապարանջան* բառի տեղ գրավելն այս բառահոդվածում, այնուամենայնիվ, կարելի է առայժմ դիտել վրիպում կամ վիճելի:

5. *Աճապել* բառը, որը կա «Բառգիրք հայոցի» հին տպագրության (Ալիկոռնա, 1698, էջ 12) մեջ, Հ. Ամալյանը քննական բնագիրը կազմելիս դրել է տողատակում՝ նշելով, որ այն ձեռագրերից երկուսում է հանդիպում, իսկ վերևում՝ *աճապարել* «յառաջել, կամ հասանել», որ որևէ ձեռագրով չի վկայաբերվում, հավանաբար Հ.Աճառյանի հետևությամբ, որն այնքան էլ համոզիչ չէ [*«Բառգիրք հայոց»*, 1975, էջ 13]:

Հ.Աճառյանը չունի *ածապել*, այլ միայն *ածապարել* «շտապել, արտորալ, ճեպել», թեև բառահողմածի առաջին մասի վերջում գրում է հետևյալը. «Նոյն բայի աղաւաղեալ ձևն են կարծում *ածապել* «յառաջել կամ հասանել» Բառ. երեմ. էջ 12» [*Աճառյան*, 1971, էջ 138]:

Այս բառի ծագման, այլև *ածապարել*-ի հետ առնչության վերաբերյալ Ջահուկյանը չունի որևէ դիտարկում, թեև ունի *ած(ա)պ* «զարմանք, զարմանալիք», որ դեռևս Հ.Հյուբշմանը ժամանակին համարել է փոխառություն արաբ. ’aǰab (’aǰib) ձևից [*Ջահուկյան*, 1987, էջ 393, այլև 2010, էջ 40-41]:

Կարելի է մտածել, որ տարբեր բառեր են *ածապել* և *ածապարել*, այսինքն՝ առաջինը երկրորդի աղավաղյալ ձևը չէ: Իսկ *ածապել* բայը, թերևս, կազմված է *ածապ* (<*աջաբ*) բառից՝ փոխառություն արաբ. ’aǰab «(այստեղ) արդյոք, իրոք» ձևից (հմմտ. բրբռ. *աջէբ* «զարմանք, ապշություն. չտեսնված» - Մուշ, Ալաշկերտ և այլն) [հմմտ. *Քոչոյան*, 1963, էջ 38. *Ղազարյան*, *Ավետիսյան*, 1987, էջ 36]:

6. *Ամասայ* գլխաբառով «Բառզիրք հայոցի» քննական բնագրում կա երկու բառահողմած՝ իրար հաջորդող, մեկը բացատրվում է՝ «ի ձեռն ալֆայ՝ հզօր կամ քաջ», իսկ մյուսը՝ «ի ձեռն այիմոյ՝ ժողովրդեան ընծայ»: Այնուհետև հաջորդում են՝ *ամասարկովթ* «բուրվառ», *ամասել* «արկանել, քաշել», ինչպես նաև *ամասցես* «արկցես, ձգեսցես», իսկ մի քանի բառահողմած հետո՝ *ամաց* «ելից, էարկ. ձգեաց» (վերջիններս, ի դեպ, *ամասել* բայի խոնարհված ձևեր են) [*Բառզիրք հայոց*», 1975, էջ 13-14]:

Աճառյանը չունի *ամասայ*, իսկ *ամասել*-ը համարում է «սուտ ու շինծու» (դրված ուղղանկյուն փակագծերի մեջ), միայն *ամասարակովթ*-ն է, որ ոչ անկախ նախկին մեկնություններից (Ան. Շիրակացի, հետագայում՝ Մկ. Ավգերյան), համարվում է փոխառություն եբր. hammizrāqōṯ (հոգն. ք.) (<mizrāq «օրհնված ջուր սրսկելու՝ ցանելու սման» < zrq «սրսկել՝ցանել»)» արմատից, հուն. թարգմ. μασμαρώθ) [*Աճառյան*, 1971, 146-147]: Այս բառի ծագման վերաբերյալ Ջահուկյ-

յանը տալիս է նույն մեկնաբանությունը, ինչ Աճառյանը [*Ձա-  
հուկյան*, 2010, էջ 42]:

Բառն ամենայն հավանականությամբ փոխառություն է հուն. *ἀμάω* բայի (դոր.) անց. դերբ. *ἀμάσας* (*ἀμά*) ձևից, որը փոխատու լեզվում ունի հետևյալ իմաստները. 1) «հնձել. հավաքել (քերք)», 2) «կտրատել, վերցնել. ազատության պտուղները քաղել», 3) «դատարկել», 4) «(վրան) լցնել՝ ցանել. հողը տալ գլխին», 5) «վերացնել. ոչնչացնել, բնաջնջել», իսկ փոխաբերաբար նշանակում է՝ 1) «օգուտ ունենալ, հաջողել», 2) «ձեռք բերել» և այլն. հմմտ. հուն. *καλώς ήμησαν* - նրանք հավաքեցին առատ հունձք (փխբ.՝ նրանց հաջողվեց. նրանց բախտը բերեց) [տե՛ս *Áâî ðãöêêé*, 1958, с. 92]:

Ըստ այսմ՝ «Բառգրքում» «ի ձեռն ալֆայ» ձևակերպումը, թերևս, կարելի է հասկանալ հունարեն բառի առաջին կամ բուն՝ սովորական իմաստի, իսկ «ի ձեռն այինոյ» ձևակերպումը այլ՝ փոխաբերական իմաստի նշանակում, եթե ոչ այն, որ առաջին դեպքում բառի բացատրությունը վերաբերում է բառի իզական սեռի ձևին՝-*α* վերջավորությամբ (=«ի ձեռն ալֆայ»), իսկ երկրորդ դեպքում չեզոք սեռի ձևին՝ *-η* վերջավորությամբ (=«ի ձեռն այինոյ». *է-ի* բրբռ. արտասանությամբ) [հմմտ. *Øê-ðî éî â*, 1983, с. 118-122]<sup>76</sup>:

7. *Անարգասիս* «անձև» գլխաբառով հոդվածը «Բառգիրք հայոցի» քննական բնագրում նախորդում է *անարգ* «անգարդ, անշուք» բառահոդվածին, որն անշուշտ այբբենական դասավորության խախտում է [*Բառգիրք հայոց*», 1975, 18]:

*Անարգասիս* բառի համար նշվում է, որ ձեռագրերից երկուսն ունեն՝ «*անարգաստ*. դիպ անձև», իսկ մյուս երկուսը՝ «*անարգաստ*. դիպ, կամ անձրև» կառուցվածքը: Իսկ ծանոթագրություններում նշվում է հետևյալը. «Ձեռագրերում (ABCD) բառահոդվածը աղավաղված է: Այն ճիշտ է (ԲԶ= «Բառք քերթողականք») №№ 451, 450, 528, ինչպես նաև (ԲՅ= «Բառք յունարէն») №№ 8198, 530, (ԲԽ= «Բառք խորանին») № 2335 և

<sup>76</sup> Հմմտ. նաև *ամօս* գլխաբառի բացատրությունը [*նույն տեղում*, էջ 14]:



բազմաթիվ այլ ձեռագրերում: Հմմտ. Արմ. (= «Արմատական բառարան»), *անարգատ* [*նույն տեղում*, էջ 347]:

Հետագա աշխատության մեջ այս ծանոթագրությունը հեղինակը ներկայացնում է հետևյալ կերպ. «*Անարգատ*. դիպ, կամ անձրև: Բառահոդվածն աղավաղված է: Այն ճիշտ է ԲԶ (№№ 451, 450, 528 և այլն), ԲՅ (№№ 530, 8198 և այլն), ԲԽ (№ 2335) բառարաններում՝ «*Անարգատիպ*. անձև» [*Ամսայան*, 2007, 177]:

Աճառյանի «Արմատականում» այն, իրոք, կա *անարգատ* ձևով՝ հետևյալ մշակումով. *Անարգատ* «դիպ<sup>օ</sup> կամ անձրև». ունի միայն բառ. Երեմ. էջ 17. յայտնի չէ, թե ի՞նչ է ուզում ասել». նկատենք, որ *դիպ* բառը նշվում է հարցականով [*Աճառյան*, 1971, էջ 181]:

*Անարգ*-ի վերաբերյալ Գ. Ջահուկյանը գրում է, որ «դժվար է որոշել *ան*- ժխտականով կազմությունների՝ պատրաստի կերպով փոխառնված, թե հայկական հողի վրա հանդես եկած լինելու հարցը. հմմտ. *անագատ*, *անագգ*, *անախտ...* *անարգ*, *անարժան*», այլև *անարգ*-ը դիտվում է գուգադիր *յետին*, *տրուպ* բառերին [*Ջահուկյան*, 1987, էջ 357, 404]: Հետագայում *անարգատ*-ը ստուգաբանվում է հետևյալ կերպ. «*Անարգատ* «դիպ կամ անձրև» (ԲՀ = «Բառգիրք հայոց» - Վ.Հ.): Կեղծ բառ՝ ստացված *անարգատիպ* բառի կրճատ (աղավաղված) գրությամբ: - Ամսայան, ԲՀ 347» [*Ջահուկյան*, 2010, էջ 51-52]: Իսկ *անարգատիպ* կազմության վերաբերյալ չկա որևէ դիտարկում [*Ջահուկյան*, 1987]:

Կարելի է կարծել, որ հայ. *անարգ* «անզարդ, անշուք» և *անարգատիպ* «անձև» բառերը, փոխառություն են հունարենից, ընդ որում՝ բաղադրությամբ իրար բավականին մոտ:

Իսկ մինչ այդ նշենք հետևյալը:

ա) Որոշ ձեռագրերում *անարգատիպ* բառը բացատրվում է ոչ թե «անձև», այլ «անձրև», որը բացատրվում է, քանի որ այստեղ խոսքը «տիպ, ձև» իմաստի մասին է, մանավանդ որ հաջորդ՝ *անարգ* բառը ևս գրեթե նույնպիսի՝ «անզարդ, անշուք» իմաստով է բացատրվում:

բ) Եթե *անարգատ* գիսարառի դեպքում ունենք «դիպ ան-  
ձև», նաև «դիպ, անձրև» բացատրությունը, իսկ *անարգատիպ*-ի  
դեպքում այդ *դիպ*-ը բացակայում է, միայն «անձև» է բա-  
ցատրվում, ապա դա նշանակում է, որ այն հավանաբար շփոթ-  
մամբ միացել-ձուլվել է *անարգատ* բառին (\**անարգատ տիպ*՝  
երկու *տ*-ից մեկն ընկել է):

գ) Այս *դիպ*-ը այլ բան չէ, քան հուն. *τύπος* «նշան, հետք,  
ձև, տիպ» բառը, ընդ որում հավանաբար բարբառային *տ ~ դ*  
ձայնեղացմամբ (սա ևս հետաքրքիր է բառարանի լեզվի տե-  
սանկյունից):

Այսքանից հետո գտնում ենք, որ *անարգ*-ը փոխառություն  
է հուն. *αν-αρκτος* «ոչ մեկին չենթարկվող, անկախ, անձնիշ-  
խան» [*< άρκτηόν «իշխած՝ իշխող» < άρχω «առաջ տանել,  
առաջնորդել, իշխել»*] և այլն (հմմտ. հուն. *άρχω*, *-οντος* «առաջ-  
նորդ, ղեկավար, իշխող, արխոնտ») բառի. որ բաղադրված  
պիտի լինի *τύπος* «նշան, հետք, ձև, տիպ» բառի հետ՝ իբրև մեկ  
բառակապակցություն, որը հայերենում ամենայն հավանակա-  
նությամբ չի հասկացվել որպես այդպիսին, այլ առանձին ձե-  
ռագրերում այն տեղիք է տվել այս կամ այն կարգի թյուրի-  
մացության [հմմտ. *Áâî ðǎöèèé*, 1958, c. 130, 235, 244-245,  
այլև 1654-1655]:

Ուստի «Բառգիրք հայոցի» *անարգատիպ - անձև* բառա-  
հոդվածը, ամենայն հավանականությամբ, պիտի եղած լինի  
\**անարգատ - անտիպ, անձև* (<հուն. *αναρκτος* *τύπος*) «առանց  
իշխող ձևի, անձնիշխան» (փխբ.՝ «սովորական, պարզ», և ըստ  
այսմ՝ համարժեք *անարգ* «անզարդ, անշուք» բառին):

8. *Անարդակ* «գառ ի վեր, անգանակ» բառի դեպքում  
քննական բնագրի տողատակում նշվում է, որ որոշ ձեռագրեր  
ունեն «արգանակ, փխ. անգանակ» [*«Բառգիրք հայոց»*, 1975,  
էջ 19], իսկ գրքի վերջում բերվող ծանոթագրությամբ նշվում է,  
որ ձեռագրերի մի մասում ավելացվում է «կամ անհավասար»,  
մեկ այլ մասում՝ միայն «անհավասար» [*«Բառգիրք հայոց»*,  
1975, էջ 19, 347. *Ամալյան*, 2007, էջ 177]:

Ըստ «Նոր հայկազյան բառգրքի» *անարդակ* բառը գոր-  
ծածվել է Գ-ր. Մագիստրոսի երկում՝ «անզուգական հորինված-

քով. անհամեմատ. աննման, գերազանց» իմաստով (*Ալեանի-քեան, Միրսէլեան, Ալգերեան*, 1836, էջ 115): Աճառչանի «Արմատական բառարանում» չկա այս բառը: Ջահուկյանը նույնպես չի անդրադառնում այս բառի ծագմանը:

Հայ. *անարդակ* բառը պիտի կազմված լինի *անարդ* բաղադրող հիմքով և *-ակ* ածանցով: Իսկ *անարդ*-ը փոխառություն է հուն. *ἀν-άρτιος* (*ան-արտիոս*) «անբարյացակամ, անբարեհաճ. թշնամական», «անհաճո, անոթալի» ածականական ձևի (< *ἀν-άρτῶ* «տակից՝ ներքևից կախել, կախ տալ», փխբ. «կապել, գամել. ամրացնել») [տե՛ս *Áâî ðǎôééé*, 1958, с. 131]:

Ըստ այսմ՝ «Բառգիրք հայոցի» «անգանակ» իմաստով բացատրությունը ճիշտ է, եթե ընդունենք, որ այն կազմված է *անգ-* (հմմտ. *անկ-*, *անկ-անել*, *անկեալ*, ընդ որում *կ ~ գ* ձայնեղացմամբ) բաղադրող հիմքով և *-անակ* ածանցով: Իսկ սրանից էլ հետևում է, որ ձեռագրական տարբերություն հանդիսացող բացատրությունները՝ «արգանակ», «անդանակ» կամ «անհավասար», գրչագրական աղավաղումներ են:

9. *Անդուքն* «թարգմանի ամբարտաւանութիւնք» [*Բառգիրք հայոց*», 1975, էջ 61): Աճառչանը նշում է, որ այն ունի միայն Եր. Մեղրեցիին՝ չտալով բառի որևէ ստուգաբանություն [ *Աճառչան*, 1971, էջ 191]<sup>77</sup>: Գ. Ջահուկյանն ավելացնում է հետևյալը. «*Անդուքն* «ամբարտավանություններ» (ԲՀ. իմա՝ «Բառգիրք հայոց» - Վ.Հ.): Թերևս փոխառություն կամ օտարալեզու բառ, որովհետև գրված է «թարգմանի ամբարտաւանութիւնք»: Սակայն որոշ ձեռագրերում գրված է *անդուքն*, որ թերևս *յանդուզն* բառի սխալագրությունն է» [*Ջահուկյան*, 2010, էջ 657]:

Կարծում ենք, որ այն չի կարելի շփոթել *յանդուզն* «անվախ, փչացած, վստահ, համարձակ» բառի հետ, կամ կարծել, թե պիտի լինի վերջինիս աղավաղված մի ձևը, այսինքն՝ բառը համարել արդյունք սխալագրության, թեկուզ այն պատճառով որ նախ՝ *յանդուզն* բառը ևս ունի բառարանը [ *նույն տեղում*, էջ

---

<sup>77</sup> Ի դեպ՝ «Արմատականում» նշվում է *անդուքն* ձևով, որը սխալ է, հավանաբար բառարանի վերահրատարակության մեջ տեղ գտած վրիպակ:

224], երկրորդ՝ այբբենական կարգի համաձայն այն դրված է ճիշտ իր տեղում:

Կարելի է ենթադրել երկու կերպ. կա՛ն այն կապ ունի *անդ* «խորք, խորունկ (տեղ)» արմատի հետ, մի արմատ, որ չենք գտնում, օրինակ, Աճառյանի «Արմատականում», թեև կա վերջինիս մյուս տարբերակը՝ *ունջ* «տակը, խորքը, հատակ» (որից *ընջովին, անունջ* և այլն. հմմտ. նաև *անդունդ* «ավելի քան խորը, անչափ խորը») [*Աճառյան*, 1977, էջ 604], կա՛ն էլ գործ ունենք փոխառյալ բառի հետ, որովհետև «Բառգիրք հայոցում» այն, իրոք, բացատրվում է «թարգմանի» բառի գործածությամբ:

Մենք հակված ենք կարծելու, որ *անդուքն* բառը փոխառյալ է հուն. *αναδύομαι* (սորիստ *ανέδυν*) բառից, որն ուներ՝ 1) «(խորքից՝ ջրի տակից, լողալով՝ ջրի երես) դուրս գալ, բարձրանալ (մակերեսին)», 2) «հետ քաշվել (դեպի խորքը), ծածկվել, թաքնվել», 3) «(մի կողմ քաշվելով) ազատվել, խույս տալ» և այլն իմաստները, և որը բավականին մոտ է բառարանում նշված «ամբարտավանություն(ներ)» իմաստին, մանավանդ եթե նկատի ենք ունենում վերջինիս ոչ առարկայական, այլ իմացական կողմը, որը միանգամայն հնարավոր է [*Áâî ðâö-êêé*, 1958, c. 115 և 140]: Ավելին, նույն արմատից կա հուն. *αναδύσις, έως* «նահանջ, (որևէ բանից) հրաժարում, շեղում, փչացում, խորամանկություն», որը լիովին համարժեք է լինում Մեղրեցու նշած «ամբարտավանություն(ներ)» իմաստին:

10. *Անտար* բառի համար Հ.Աճառյանը «Արմատականում» նշում է հետևյալը. «*Անտար* «ապրայ, կշռորդ». մեկ անգամ ունի Բառ. Երեն, էջ 237՝ հետևյալ ձևով. «նիժար և նժար. կշռորդ, փարսանկ, ապրայ, անտար»: Այնուհետև, ավելացնում է, որ այն հանդիպում է Վանի բարբառում՝ «ապրա» իմաստով [*Աճառյան*, 1971, էջ 211]: «Բառգիրք հայոցի» քննական բնագրում առանձին բառահոդված են՝ *նժար* «կշռորդ, լուծ Ժ կշռոցն է» և *նիժար* «նժար. կշռորդ, փարսանկ, ապրայ, անտար» [*Բառգիրք հայոց*], 1975, էջ 241]: Գ. Ջահուկյանը բառին անդրադառնում է հետևյալ կերպ. «Անտար «ապրա. կշռորդ» (ԲՀ): Ծագումն անհայտ է» [*Ջահուկյան*, 2010, էջ 62]:

Հայտնի է, որ լծով կշեռքի երկու նժարները («թաթերը») իրար հակոտնյա են (իմա՝ մի նժարին կշռաքար, մյուսին՝ կշռելի ապրանք, որոնք հակակշռում են իրար՝ հավասարվելու աստիճանի): Ուստի *անտար*-ը, իբրև *աբրա* (արաբ. 'abra «տարա»<sup>78</sup>) կամ կշռորդ, ավելացվում է կշռաքարին՝ ապրանքին հակակշիռ, հակառակ<sup>78</sup>: Ըստ այսմ կարելի է ենթադրել, որ *անտար* բառը փոխառություն է հուն. ἀντάραι (ապառնի անց. ἀντέρομαι-ի, ապառնին՝ ἀντερόν, աորիստը՝ ἀντερόμην, հոն. ἀντειρόμην) «դիմադրելը՝ դիմադրում. հետ մղելը՝ հետ մղում» (այստեղ՝ «հակակշռելը՝ հակակշռում»):

Ավելացնենք, որ *անտար* բառի բացատրության մեջ բերվում է նաև *փարսանկ* բառը, որը չենք գտնում, օրինակ, Աճառյանի «Արմատականում» և Ջահուկյանի «Մոռուգաբանական բառարանում», թեև կա Մալխասյանցի բառարանում՝ *փարսանգ* ձևով, որտեղ էլ նշվում է, որ այն ունի «քար, որ դնում են կշեռքի թեթև կշռող թաթի մեջ՝ հավասարակշռելու համար» իմաստը [*Մալխասեանց*, 1945, էջ 492]: Սա, իր հերթին, միանգամայն հավաստի է դարձնում մեր ենթադրությունը *անտար* բառի՝ հունարենից փոխառությունը լինելը:

11. *Բուղարար* «մատանի, կնքոց» բառի դեպքում քննական բնագրի տողատակին բերվում է *բուխարար* տարբերակը, իսկ ծանոթագրության մեջ նշվում է հետևյալը. «Ձեռագրերը մեծ մասամբ ունեն *բուղարբաց* (№№ 8198, 7149, 2335 և այլն), ապա *բուղարար* (№ 5596) և այլ ձևեր, բայց ոչ *բուխարար*: Հմմտ. Արմ., *Բուխարար*» [*Բառզիրք հայոց*], 1975, էջ 59, 355]: Հետագայում Ամալյանն այս ծանոթագրությունը վերանայում է հետևյալ կերպ. «*Բուխարար*. մատանի կամ կնքոց: Ձեռագրերը մեծ մասամբ ունեն *բուղարբաց* (№№ 2335, 4149, 8198 և այլն),

---

<sup>78</sup> Ի դեպ՝ *ապրայ* բառը Մեղրեցին բացատրում է ոչ թե «աման, տարա», այլ «կշռաքարին լրացուցիչ դրվող ինչ-որ առարկա՝ կշիռը հավասարեցնելու համար», որը Աճառյանը նշում է այլ՝ «տարա, աման» իմաստով, ընդ որում նույնը վերագրելով արաբ. 'abra բառին: Թյուրիմացությունը հավանաբար գալիս է Նորայր Բյուզանդացու բառարանից [տե՛ս *Աճառյան*, 1971, էջ 243]:

ապա *բուդարար* (№ 5596) և այլ ձևեր, բայց ոչ *բուխարար*» [Մնայան, 2007, էջ 188]:

Հ.Աճառյանը «Արմատականում» գրում է հետևյալը. «*Բուխարար* «մատանի կամ կնքոց». ունի միայն Բառ. երեմ. էջ 57» [Մճառյան, 1971, էջ 481]: Գ. Ջահուկյանը նշում է բոլորովին այլ կերպ. «*Բուդարար (բուխարար)* «մատանի» կամ «կնքոց» (Բ-Հ): Ծագումն անհայտ է» [Ջահուկյան, 2010, էջ 138]<sup>79</sup>:

Ելնելով բառի իմաստից՝ «մատանի, կնքոց», առանձնացնում ենք *բուդ* (\**բուլ*) բաղադրիչը, որը հայերենում փոխառություն է լատ. *bullo* «կնիք» բառի: Վերջինիս ուղիղ բացատրությունը տվել են «Նոր հայկազյան բառարանի» հեղինակները՝ այն դիտելով ոչ միայն առանձին, այլև *վուլ* ձևի տարբերակ «կոնդակ» նշանակությամբ. «Ետ նոցա բազում շնորհս, զորս *բուլն* պապին ցուցանէ» [Սեփեթեան, Միրժեթեան, Ալգեթեան, 1836, էջ 511]: Իսկ *վուլ* տարբերակի դեպքում նշում են՝ լատ. *bullo*, որից հուն. *βούλλα*, *βούλλη*, իտալ. *bollo* // *bolla* «պալար՝ որպէս զպղպջակ. ուստի նմանութեամբ՝ ճարմանդ, շինգդ, և նշխար կնքոյ. կնիք, կոնդակ». «Եւ զայլ երկիրն զոր կալեալ, ոսկի *վուլով* նմա շնորհեալ». «Առաքեաց զնամակն իւր պապական՝ դորշմեալ *վուլովն* առաքելական» [նույն տեղում, էջ 830]: Հետագայում այն ընդունվել է Հ.Հյուբշմանի, այլև Աճառյանի և Ջահուկյանի կողմից (տե՛ս վերը):

Մատանիով կնիք դնելը, կնիք-մատանի գործածելը բավականին տարածված է եղել հին աշխարհում և միջնադարում, այնպես որ *բուդարար* բառի «մատանի, կնիք» բացատրությունը պատահական չէ:

Ելնելով լատ. *bullo* «կնիք (կնքված վավերագիր՝ վկայագիր. պապական կոնդակ)» (հայ. *բուլ/վուլ*) բառարմատի նախնական իմաստից՝ «ջրի պղպջակ» (այնուհետև «կոճակ», ավելի ուշ «ոսկի կոճակ, որ զանազան բաների վրա իբրև նշան էին գործածում») [տե՛ս *Āâî ðăöêêé*, 1958, с. 138-139. հմմտ. *Մճառյան*, 1971, էջ 480], կարծում ենք, որ այն ծագում է հե.

---

<sup>79</sup> *Բուդարար* ձևը, հավանաբար, տպագրական վրիպակ է, որովհետև նման տարբերակ չի նշվում քննական բնագրում:

\*b<sup>(h)</sup>el-//b<sup>(h)</sup>ol- «փչել, ուղցնել» արմատից, որից ունենք հայ. *պալար*, *պղպջակ* և այլն [տե՛ս *Աճառյան*, 1979, էջ 4-5, 90-91. *Ջահուկյան*, 2010, էջ 615, 640], որոնցով էլ նշանակված են հայերենին անցած *բուլ* կամ *փուլ* բառերը: Առայժմ անբացատրելի է մնում *բողաբար* բառի մյուս բաղադրիչը (*բա՞ր*) [տե՛ս *Համբարձումյան*, 2012, էջ 42-43]:

12. *Գաղգաղ* «անիւ, ժողովումն, յայտնութիւն» բառն ակնհայտորեն ունի կրկնավոր կազմություն [*«Բառգիրք հայոց»*, 1975, էջ 61]: Այն առանձին չենք գտնում Աճառյանի «Հայերեն արմատական բառարանում», հավանաբար, այդպիսին լինելու պատճառով [*Աճառյան*, 1971]: Իսկ *Ջահուկյանի* բառարանում չկա *գաղգաղ*, կա *գաղ(գ)աղել* «խոշորել»՝ հղելով *գաղգազիլ* (վրիպակ, փխ.՝ *գաղգաղիլ*) ձևին, իսկ բառի ծագման կամ կազմության վերաբերյալ չկա որևէ դիտարկում (տե՛ս նաև *գաղեն* բառի հետ կապված) [*Ջահուկյան*, 1987, էջ 155, 199 և այլն, այլն 2010, էջ 146-147]:

Այն *գաղ* արմատով կրկնավոր բարդություն է, որի բուն իմաստն է «պտույտ», և բնագրում այն տրվում է «անիվ» բացատրությամբ<sup>80</sup>:

Նույն իմաստն ունեն նաև *սայլ* («հին անվավոր փոխադրամիջոց», բուն՝ «եզան կոշտ կառք», փոխաբերական՝ «Մեծ և Փոքր արջի համաստեղություն», «հյուսիս կամ հյուսիսային բևեռ», «առանցք, լիսեռ», «երաժշտական մի ձայն» իմաստներով) և *գալգալի* (բրբռ. *q 'ալգ 'ալի* «երկանիվ՝ միաստնի փոխադրամիջոց») բառերը, որոնք ծագում են հե. \*k<sup>[h]o</sup>el- «պտտվել, շարժվել», «անիվ, սայլ», արմատից (հմմտ. հիռ. *cul* «սայլ», հիսլ. *hvel* «անիվ», պրուս. *kelan* «անիվ», լատվ. *du-celis* «երկանիվ», հսլավ. *kolo*, սեռ. *hol*. *kolese* «անիվ», լատ. *colus* «ճախարակ», «մանված թել, մանվածք» և այլն):

Հե. \*k<sup>[h]o</sup>el- արմատից ունենք նաև \*k<sup>[h]o</sup>(e/o)k<sup>[h]o</sup>lo կրկնարմատ ձևը, որը ևս իր ծագումնային արտացոլումն ունի ոչ միայն հայերենում, այլև ցեղակից մյուս լեզուներում (հմմտ.

<sup>80</sup> Եթե *գաղ* արմատի համար ընդունում ենք «պտույտ» ընդհանուր իմաստը, ապա այն թերևս կարող է ներառել ոչ միայն «անիվ», այլև մյուս երկու՝ «ժողովումն» և «յայտնութիւն» իմաստները:

թոխ. Ա kukäl «սայլ», թոխ. Բ kukale «սայլ», հինդկ. cakra «անիվ», Ռիզովեդայում՝ «արևի ակ՝ անիվ», հուն. κύκλος «շրջան», «անիվ», փոյուգ. κίκλον (Հեսիք.) «Բույլք համաստեղություն», «սայլ» և այլն) [տե՛ս *Ādī ēdāēēāçā, Ēāāíîā*, 1984, с. 718-719. *Համբարձումյան*, 1998, էջ 34-38]:

Ավելացնենք, որ հայերենում սովորական է *գ/ւ*, այլև *ղ/լ* (հմմտ. *գայթել* և *սայթաքել*, *ջիղ* և *ջիլ* և այլն), ինչպես նաև հետնալեզվային պայթականի սովորական և քնային արտասանությունը:

*Գաղգաղ* բառին իմաստով («ժողովումն», «յայտնութիւն»), նաև կազմությամբ բավականին մոտ են *գաղգաղայ* («ի բաց երեսումն»), *գեղգեղ* («հողովումն»), եթե ոչ նաև *գաղաղել* (<\**գաղ-գաղ-ել*) («խորշել») բառերը, որոնք կարող են առանձին քննության նյութ դառնալ [*Բառգիրք հայոց*», 1975, էջ 61- 64]:

13. *Գամ* «անգամ, ժամ» (*Բառգիրք հայոց*», 1975, էջ 62): Այս բացատրությունը հետագայում մնացել է մեկուսի, ավելին՝ շրջանցվել է «Նոր հայկազյան բառարանի» նկատառումը, թերևս այն պատճառով, որ այն նշվում է *գամ* «անցք, դեպք, ելք, հնարք և այլն» բառին հարակից, ենթադասված՝ «դեպք ժամանակի, այսինքն՝ անգամ, նուագ, հաղ» (*Աւետիքեան, Միրմէլեան, Աւգերեան*, 1836, էջ 526):

Թերացումը գալիս է Հ. Հյուբշմանից. Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը չունեն *գամ* «անգամ. ժամ» բառը, իսկ *անգամ*-ը և *ժամ*-ը, ընդ որում ոչ անկախ Հյուբշմանից, դիտում են իբրև իրանական փոխառություն. *անգամ* ~ իրան. hangām «ժամանակ, միջոց, տարվա եղանակ», angām (նույնը), վերջին ձևը՝ ըստ Աճառյանի «չէ յիշած Հիւբշման, աւելի ուղիղ է ներկայացնում մեր բառը» [*Աճառյան*, 1971, էջ 182-186. հմմտ. *Ջահուկյան*, 2010, էջ 52], *ժամ* ~ իրան. žamān «ժամ, ժամանակ», որն ըստ Ջահուկյանի՝ «առանձնացվում է իրանական žamān ձևից -ān և հայ. -ան ածանցների բաղարկմամբ» [*Աճառյան*, 1971, էջ 221-224. հմմտ. *Ջահուկյան*, 2010, էջ 279)<sup>81</sup>:

<sup>81</sup> Լ. Հովհաննիսյանը հավանական է գտնում հայ. *ժամ*-ը կապել հայ. *գամ* «ամանակ, ժամանակ. տարի» ձևի հետ [տե՛ս *Հովհաննիսյան*, 1990 ]:



Կարելի է կարծել, որ հայ. *զամ* և *ժամ* (այլև *ժամ* «անգամ, հեղ»․ հմմտ. օրը երկու *ժամ* ուտել «օրը երկու անգամ ուտել» - Ագուլիս, Ալշ., Երևան և այլն, *ժուկ* «ժամանակ»․ հմմտ. *ժուկով-ժամանակով* «մի ժամանակ») բառերը բնիկ են, ունեն իմաստային ընդհանրություն, հանդես են գալիս *զ//ժ* տարբերակվածությամբ (հմմտ. *զ//ջ, ք//չ* տարբերակում. *զայլ ~ գել//ջել, քոյր-քիրա, մոքիր //չիրա, մոչիր*. Աշտարակ, Նորադուզ և այլն), *ջ*-ի փոխարեն *ժ*-ն, հավանաբար, իրանականի հետ բաղադրյալ արդյունք է:

14. *Գլեէին* «ծածկէին, կամ յաղթէին» [*Բառգիրք հայոց*], 1975, էջ 67]: Այս բառի արմատն է *գիլ* («քար»), որից ունենք *ի գիլ գալ* («զլորվել»), *ի գիլ հանել* («զլորել»), *զլեցուցանել* («խոսքով հաղթել, բերանը փակել»), *զլումն* («հաղթություն, հաղթելը») և այլն [ տե՛ս *Աճառյան*, 1971, էջ 555-556], և որը *գել* արմատի տարբերակն է՝ *ե//ի* ձայնդարձով: Աճառյանը, ոչ անկախ նախորդ ուսումնասիրողներից, գտնում է, որ այն ծագում է հե. \*velu- արմատի \*vēlu- (երկար ձայնավորով) տարբերակից, ըստ Գ. Չահուկյանի՝ հ.-ե. \*uēl- (կամ \*uēlā-) [\*uēl(ə)-]. հմմտ. սանս. válatē «դառնում է», valitá «դարձած, ծռած», valayati «շրջել, գլորել», հուն. ἐλύω «ոլորել, գլորել, գլորվել, փաթաթվել», εἰλύω «զլորել, փաթաթել, շրջապատել, մազլցել», ἐλίσσω «դարձնել, ոլորել, գալարվել», ἐλίξ «ոլորում, գալարում. բաղեղ, ճախարակ», լատ. volvo «ոլորել, գլորել, դարձնել», volumen «ոլորք, գալար, հատոր (գրքի)», գոթ. walwjan «ոլորել, գլորել» և այլն [*Աճառյան*, 1971, էջ 530-531. *Джаукян*, 1967, с. 136. *Չահուկյան*, 1987, էջ 155]:

Այս ամենը՝ իր հերթին, սակայն մեզ այստեղ հետաքրքրում է *զլեէին* ձևը, որը տեղ է գտել «Բառգիրք հայոցում»՝ իբրև լատինաբան հայերենի բայական համակարգին յուրահատուկ մի կազմություն: Ընդ որում քննական բնագրում այն չունի ձեռագրական որևէ տարբերություն, որևէ կերպ չի ծանոթագրվում, այսինքն՝ ունի միանգամայն հավաստի և անխաթար դրսևորում: Բայական այդ ձևը, ինչպես գիտենք, լատինաբան հայերենի նորամուծություններից է, որը ցույց էր տալիս սահմանական եղանակի կրավորաձև անկատար անցյալ

ժամանակի իմաստ, տվյալ դեպքում՝ «ծածկվում էին, հաղթվում էին», որ բառարանում բացատրված է հին գրական հայերենի նույն ժամանակի ընդհանուր՝ «ծածկում էին, հաղթում էին» ձևերով: Ուստի կարելի է մտածել, որ հին գրական հայերենի մեջ 14-րդ դ. 10-ական թթ. արհեստականորեն մուտք գործած լատինաբան ձևերը ինքնաբերաբար շարունակում են տեղ գտնել հետագա գրական հուշարձաններում [տե՛ս *Համբարձումյան*, 1982, էջ 63-72, այլև 1990, էջ 86-97, 2008, էջ 159-179, 2008, էջ 136-149, 2010 և այլն]:

15. *Դասուն* «խոսել» բառը քննական բնագրում չունի գրչագրական որևէ տարրնթերցում, իսկ ծանոթագրության մեջ նշվում է հետևյալը. «Թվում է, թե այս և *դասուն*-ի բառահոդվածը նույնը պիտի լինեն, և նրանցից մեկը կամ մյուսը աղավաղված, հետևաբար ավելորդ բառահոդված է: Հավանաբար նախնական և ճիշտ է երկրորդը, որի գլխաբառը, գուցե, ծագում է եբր. *lāsōn* («լեզու», *die Sprache*) բառից՝ սկզբնատառի վրիպակով» [*Բառգիրք հայոց*], 1975, էջ 74, 359]: Հետագայում Հ. Ամալյանը հիշյալ ծանոթագրությունը խմբագրում է հետևյալ կերպ. «Թվում է, թե այս բառահոդվածը նույնը պիտի լինի «Դասան, կոխել»-ի հետ, և նրանցից մեկը, որպես մյուսի աղավաղում ու կրկնություն, ավելորդ է: Սակայն բառահոդվածները ամենայն հավանականությամբ, կապված չեն: *Դասուն* գուցե եբր. *lāsōn* («լեզու», *die Sprache*) բառն է՝ սկզբնատառի սխալ գրությամբ» [*Ամալյան*, 2007, էջ 195]: Բառի՝ եբրայերենից փոխառությունը լինելը ճիշտ է նկատված, սակայն շարունակության մեջ՝ «սկզբնատառի վրիպակ» կամ «սկզբնատառի սխալ գրություն» բացատրությունը կարոտ է ճշգրտման, որն էլ անելու ենք ստորև:

Իսկ մինչ այդ նշենք հետևյալը:

Աճառյանը «Արմատական բառարանում» այս դեպքում գրում է, նախ՝ «*Դասան* «կոխել», ունի միայն Բառ. երեմ. էջ 73», այնուհետև՝ «*Դասուն* «խօսել»». ունի միայն Բառ. երեմ. էջ 73» [*Աճառյան*, 1971, էջ 626, 629]: Ջահուկյանը բառին անդրադառնում է ավելի ուշ. «*Դասուն* «խոսել» (ԲՀ՝ «խօսել»): Աղավաղված բառ. տե՛ս *դասուն*», այնուհետև՝ «*Դասան* «կո-

խել» (ԲՀ): Աղավաղված բառահողված, որ ձեռագրերից մեկում տրված է բայական ձևով՝ *ղասես* «կոխես», ԲՀ-ի հրատարակիչը (Իմա՝ Հ.Ամալյանը – Վ.Հ.) (էջ 359) հնարավոր է համարում նույնացնել *ղասոն* «խօսիլ» բառահողվածի հետ՝ սա բիտեցնելով եբր. *lāsōn* «լեզու» բառից, որ անհավանական է» [*Չսահման*, 2010, էջ 185, 186]: Այն, ինչ մասամբ բացատրվել էր Ամալյանի կողմից՝ իբրև փոխառություն եբրայերենից, Չսահմանը համարում է «անհավանական», որ տեղին չէ:

Կարելի է կարծել, որ հայ. *ղասոն* «խոսել» բառը, թերևս կապ չունի *ղասան* «կոխել» բառի հետ (որն առանձին քննության հարց է): Սակայն ճիշտ է Ամալյանի այն կռահումը, որ բառը կարող է փոխառություն լինել եբր. *lāsōn* «լեզու» ձևից, մանավանդ եթե հաշվի ենք առնում *ղ/լ* տարբերակայնությունը, հնչյունական մի երևույթ, որ նկատում ենք ոչ միայն հին, այլև նոր լեզուներում [հմմտ. խեթ. *tabarna* «տեր. տիրակալ» // *Labarna-* «(տեր) Լաբարնա(յի)», հլատ. *dingua* // *lingua* «լեզու», անգլ. *tongue* // *language* «խոսք. լեզու» և այլն] [տե՛ս *Āāi ēḏā-ēēāçā, Ēāāi î ā*, 1984, 268, 641]:

16. *Ղնոց եւ պատգարակ* կապակցությունը բառարանում բերվում է իբրև գլխաբառ, որը բացատրվում է «մահիճ, դափոխ» [*Բառգիրք հայոց*], 1975, էջ 81]: Ամալյանը քննական բնագրի տողատակին նշում է, որ ձեռագրերից մեկն ունի «ղնոր. դափող (այս բառահողվածից հետո՝ ոչալ. դադրել կամ հանգչել)», մյուսը՝ միայն «ղնոր», մեկ ուրիշը՝ «ղնոր. պատգարակ, մահիճ, դափոխ» (նաև՝ ղնոր և պատգարակ. մահիճ, դափոխ), և մեկ ուրիշը՝ «ղնոր. պատգարակ, մահիճ...» [*նույն տեղում*]: Իսկ ծանոթագրությունների բաժնում ավելացվում է, որ «մյուս գրեթե բոլոր ձեռագրերում՝ *ղնոց* կամ *ղնոցք*» [*նույն տեղում*, էջ 361]: Սակայն հետագայում այդ բառահողվածին անդրադառնում է հետևյալ կերպ. «Ղնոր. պատգարակ. մահիճ. դափոխ: Բոլոր ձեռագրերում, բացի №№ 1495, 3199 և 6568-ից, գլխաբառը *ղնոց* կամ *ղնոցք* է, որը և ճիշտ է» [*Ամալյան*, 2007, էջ 200]:

Աճառյանն ունի՝ «ղնոր «պատգարակ կամ մահիճ կամ դափոխ» (!), այսպես ունի Բառ. երես, էջ 79» [*Աճառյան*, 1971,

էջ 676]: Ջահուկյանը ևս ունի *ղնոր*-ը. «*Ղնոր* «պատգարակ կամ մահիճ կամ դափոխ» (°) (ԲՀ): Կեղծ բառ՝ ստացված *ղնոց* ձևի աղավաղմամբ...» [Ջահուկյան, 2010, էջ 201]:

Այսուհանդերձ, կարելի է ենթադրել, որ տվյալ դեպքում գործ ունենք *-որ* գոյականակերտ ածանցով կազմության հետ՝ *ղնեն* բայի *ղն-* (*ղին-*) արմատից (հմմտ. *բեկոր*, *կտոր*, *հատոր* և այլն): Մյուս կողմից՝ նույն արմատի հիման վրա *-ոց* ածանցով կազմություն է *ղնոց*-ը (հմմտ. *այրոց*, *թիկնոց*, *խայթոց*, *ծակոց*, *սփռոց*, *քորոց* և այլն) [հմմտ. *Էրոյան*, 1963, էջ 235. *Առաքելյան*, *Խաչատրյան*, *Էրոյան*, 1979, էջ 479]:

Բառի բացատրության մեջ հանդիպում է նաև *դափոխ* բառը, որն, անշուշտ, իմաստով մոտ պիտի լինի *ղնոր*//*ղնոց* բառին (եթե այն աղավաղյալ մի ձև չէ), իսկ թե ինչ ծագում ունի, մնում է բացահայտելի:

«Արմատական բառարանում» նշվում է. «Դափոխ «մահիճ կամ պատգարակ». ունի միայն Բառ. երեմ. 79 *ղնոր* բառի բացատրութեան մեջ» [Աճառյան 1971, էջ 643]: Գրեթե նույն մեկնությունն ունի Գ. Ջահուկյանը. «*Դափոխ (դափոռ)* «մահիճ, պատգարակ» (ԲՀ): Անստույգ բառ: Ծագումն անհայտ է» [Ջահուկյան, 2010, էջ 190]: Ի դեպ՝ Ջահուկյանը փակագծում տալիս է նաև *դափոռ* տարբերակը՝ թերևս նկատի ունենալով Մեղրեցու բառարանի գրչագրերից մեկում առկա ձևը: Իսկ սա կարող է հիմք հանդիսանալ ենթադրելու, որ տվյալ դեպքում գործ ունենք *դափ* [ուղղելի՝ *տափ* «գետին. հարթ տեղ և այլն» (°)] բառից *-ոռ* դերբայական մասնիկով կազմության հետ, այսինքն՝ «տանելու՝ տանող մի սարք՝ հարմարանք, պատգարակ», ոչ թե *դա-* (անհասկանալի բաղադրիչ) և *փոխ(ել)* «տեղաշարժել, տեղափոխել» բայարմատի միացման հետ:

Այսպիսով, *դափոխ* (ավելի ստույգ՝ *տափոռ*) բառի ծագումը, անկախ իմաստի հավաստիությունից, մնում է սուկ ենթադրության սահմաններում:

17. *Եկթափիստել* «հիանալ, տխրել, մտայնոյգ, զարհուրել» («Բառգիրք հայոց», 1975, էջ 86, 363): Գլխաբառի բացատրության մեջ պետք է նկատի ունենալ երկու հանգամանք. նախ՝ այստեղ կա նաև *մտայնոյգ* բառը, որը մի տեսակ տեղին չէ, եթե

այն «մտահուզել» չէ, այնուհետև՝ իմաստով միմյանցից հեռու, ավելին՝ հակադիր են ոչ միայն «*հիանալ*» և «*տխրել*» բայերը, այլև երկուսը միասին՝ «*զարհուրել*» բային:

Այս բառահոդվածի քննական բնագրի վերականգնման, առավել ևս մեկնության հարցում, կարծում ենք, Ամալյանը տարիների ընթացքում ունեցել է որոշ տարակարծություն, որը կարելի է ձևակերպել հետևյալ կետերում:

ա) Քննական բնագրի տողատակում նշվում է, որ առանձին ձեռագրերում *հիանալ* բայը հանդիպում է նաև *հանել*, *մտառոյգ*-ը՝ *մտառոյգ*, իսկ *տխրել*-ը՝ *տիրել* տարբերակով, որոնք ըստ էության ճիշտ չեն: Իսկ բնագրի «Ծանոթագրություններ» բաժնում նշվում է հետևյալը. «Հնագույն ձեռագրերում (№№ 4149, 5919, 3937 և այլն)՝ *եկտափիստէ*, *եկթամբիստէ*, *եկթափիստէ* և այլն: Սակայն բառը բայական *ել* վերջավորությամբ այդ ձեռագրերում չի հանդիպում: Կան «հիանալի է», «տխրել». «հիանալ» և այլ մեկնություններ, իսկ A ձեռագիրը միաժամանակ տալիս է այդ բոլոր իմաստները»: Եվ անմիջաբար բերվում է, թե բառը ինչ ծագում ունի. «Թվում է, մեկնություններին համաձայն (ըստ իս՝ մեկնություններից միայն մեկին՝ «հիանալ» իմաստին համաձայն – Վ.Հ.) գլխաբառը ծագած պիտի լինի հն. *ἐκπληξίς* («հիացումն»), *ἐκπλεκτικός* («հիացական») բառերից: Հմմտ. Արմ. (իմա՝ «Արմատական բառարան» - Վ.Հ.) (*նույն տեղում*, էջ 363)<sup>82</sup>:

բ) Այս ծանոթագրությունը գլխաբառի և վերջինիս բացատրության հետ միասին հեղինակի հետագա աշխատանքում ունի հետևյալ ընդարձակ ձևակերպումը. «*Եկթափիստել*. *հանել*. կամ *տիրել*, կամ *մտառոյգ*. կամ *զարհուրել*: Հնագույն ձեռագրերում (№№ 3937, 4149, 5919 և այլն)՝ *եկտափիստէ*, *եկթամբիստէ*, *եկթափիստէ* և այլն: Ինչպես տեսնում ենք, հին ձեռագրերում բառը բայական *ել* վերջավորությամբ չի հանդիպում: Կան «հիանալի է», «տխրել», «հիանալ» և այլ մեկնությունները, իսկ № 1495-ը միաժամանակ տալիս է այդ բոլոր

<sup>82</sup> «Արմատական բառարանում» նշվում է հետևյալը. «*Եկթափիստել* «հանել կամ տիրել կամ մտառոյգ կամ զարհուրե(ա)լ». ունի միայն Բառ. երեսմ. էջ 84 [*Աճառյան*, 1971, էջ 13]:

իմաստները: Գլխաբառն աղավաղված է. թվում է, թե այն ծագում է հն. *ἐκπληξίς* («հիացումն»), *ἐκπλεκτικός* («հիացա-կան») բառերից [*Անայլան*, 2007, էջ 204]:

զ) Ինչպես կարելի է նկատել, բնագրի ծանոթագրության և ուշ գրված աշխատանքի ձևակերպման մեջ գլխաբառի բացատրության առումով կա որոշակի տարբերություն, այն է՝ «*հիանալ, տիրել, մտայոյզ*» իմաստների փոխարեն հանդես են եկել «*հանել, տիրել, մտայոյզ*», միայն «*զարհուրել*»-ն է մնացել նույնը:

Այս բառը ընդգրկված է «Արմատական բառարանում», սակայն «*հանել, տիրել, մտայոյզ, զարհուրել(ա)լ*» բացատրությամբ, ընդ որում առանց որևէ ստուգաբանության [*Աճառյան*, 1973, էջ 13]: Ջահուկյանը մերժում է Ամալյանի կարծիքը հուն. *ἐκπληξίς* («հիացումն»), *ἐκπλεκτικός* («հիացական») փոխառյալ լինելու վերաբերյալ՝ գտնելով, որ դրանք «ձևով հեռու են կանգնած», և առաջարկում է ծագած համարել հուն. *ἐκθαμβέομαι* «զարմանալ, ապշել» ձևից [*Ջահուկյան*, 2010, էջ 212. բառարանում հունարեն բառն ունի վրիպակ, պիտի լինի *ἐκθαμβέομαι*]:

Մենք հակված ենք կարծելու, որ այն ծագում է հուն. *ἐκ-τάπαζις*, *εος* «շփոթ, սաստիկ հուզմունք», «խանգարում, խախտում, վշտացածություն, վատ տրամադրվածություն» (հմմտ. հուն. *ἐκ-τάρασσω*, ատտիկ. *ἐκ-τάραττω* «շփոթ՝ հուզմունք առաջ բերել», «ալելոժել, խռովել, անհանգստացնել») բառից, որն իր բուն կամ նախնական իմաստով հանգում է *ἐκ-τάπεινός* «նվաստացնել, ստորացնել», «պակասեցնել, փոքրացնել», այլև «խոնարհ՝ հնազանդ դարձնել», «հանդարտեցնել, խաղաղեցնել», և այն ավելի է համապատասխանում քննական բնագրի բացատրությանը [հմմտ. *Áâî ðáðêêé*, 1958, c. 499]:

18. *Եկիտ* «ծածուկ» բառի ճիշտ ձևն է համարվում *ետեկ*, որովհետև այն կա «առավել հին ձեռագրերում» [*Բառգիրք հայոց*], 1975, էջ 86, այլև 363]: Միաժամանակ տողատակին նշվում է, որ ձեռագրերից երկուսն ունեն *ետեն*: Ընդ որում այն համեմատվում է նաև «Բառգրքի» *ետին* բառի հետ, որն ունի նույն բացատրությունը՝ «ծածուկ», ավելացված՝ «կամ հալ»

(*նույն տեղում*, էջ 91): Հետագայում ևս Ամալյանը գրում է. «Ճիշտ է *եսեկ* բառը, որ վկայվում է հնագույն ձեռագրերով (№ 4149 և այլն): Հմմտ. Ետին» [*Ամալյան*, 2007, էջ 203-204]:

Այս բառը Աճառյանը բերում է հետևյալ կերպ. «*Եկիտ* «ծածուկ». ունի միայն Բառ. երես. էջ 84» [*Աճառյան*, 1973, էջ 13]: Այնուհետև, թեև խոսելով *եսեկնել* «ծնիլ» բառի մասին, ոչ անկախ Նորայր Բյուզանդացուց, որ բառը համարում է փոխառյալ հուն. *έτεκε*(v) «ծնավ», *τίκτο* («ծնանիլ») բայից, նշում է, որ այն ունի հին գործածություն (Գր. Մագիստրոս), այլն «Հին բռ.=Բառ. երես. էջ 90 ունին *եսիկեն* «ծնալ» [*նույն տեղում*, էջ 33], սակայն որևէ կապ չի տեսնում *եկիտ* և *եսեկնել* բառերի միջև: Գ. Ջահուկյանը համարում է «անստույգ բառ՝ թերևս առնված աստվածաշնչային հատուկ անուններից մեկի մեկնությունից» [*Ջահուկյան*, 2010, էջ 212]:

Կարծում ենք, որ *եկիտ* բառը ծագում է հուն. *τίκτω* «ծնել, առաջ բերել. արտադրել» բայի աորիստի *έτεκον* ձևից, որն ունի տարբերակված իմաստներ՝ կապված կենդանական աշխարհի վերարտադրության անվանման տարբերությունների հետ (հմմտ. «աշխարհ բերել, ծնունդ տալ», «ծնել. զավակ ունենալ», «թուխս նստել», «ձագ հանել՝ ունենալ», «ձվադրել», ձկնկիթ թողնել՝ թափել» և այլն) [*Վձի ձձօճճ*, 1959, c. 1627]:

Նկատենք, որ հայ. որոշ բարբառներում այս համատեքստում գործածվում է նաև «ծածկել» (էվֆեմիզմով ասված, այսինքն՝ «սերմ տալ. բեղմնավորել»), որն անշուշտ *ծածուկ* բառից է, ուստի այն իմաստով լիովին համապատասխանում է *եսեկ* բառին տրված բացատրությանը:

19. *Եմման/եմանու* «եղեալ յումեքէ» (=«եղած ինչ-որ մեկից՝ մեկի կողմից») [*Բառզիրք հայոց*», 1975, էջ 89] բառի դեպքում տողատակին, նկատի ունենալով ձեռագրերից երկուսը, տրվում է գրչագրական տարբերակ՝ *եմմանու*, այլն մեկում՝ *յու*, փխ. *յումեքէ*: Իսկ ծանոթագրության մեջ նշվում է, որ «այդ բառահոդվածը չկա մնացած բոլոր ձեռագրերում: Հմմտ. Արմ., *Եմմանու* (*նույն տեղում*, էջ 364)»: *Եմմանու* ձևն ունի Աճառյանը՝ հավանաբար հիմք ընդունելով «Բառզիրքի» հին հրատարակությունը [*Աճառյան*, 1971, էջ 26]:

«Բառզիրք հայոցում» կան նաև *եմմասն* բառին իմաստով բավականին մոտ *եմաթ* «անտիրք, սպասաւոր, բարկացումն», *եմանուն* «հաւատացեալ», *եմերոն* «խորհուրդ», *եմանովթ* «հաւատ» և *եմմաուու* «երկնչող խորհրդոյ» բառահոդվածները<sup>83</sup>, որոնք կարող են ծագումով նույն աղբյուրից լինել, ինչպես նաև միավորվել բառիմաստային (թեմատիկ) միևնույն խմբի մեջ՝ կապված հավատքի, վերջինիս խորհրդի, նրա նկատմամբ հնարավոր երկյուղի, հարուցած վախի հետ և այլն: Եթե սա կարելի է հավանական համարել, ապա անհնարին չէ, որ *եմմասն* բառի «եղեալ յումեքե» բացատրությունը հասկացվի «զերագոյն ուժից՝ հավատք ներշնչողից եղած, հավատքով տարված» իմաստով՝ փոխանվանաբար ասված:

Այնուհետև, *եսերոն* «խորհուրդ» բառի համար տրվում է հղում *եսերոն* բառին. «*Եսերոն*. խորհուրդ: Տե՛ս *Եմերոն*: Թվում է, թե *եսերոն* և *եմերոն* ծագում են *եսերոն* բառից» [*Ամայլան*, 2007, էջ 206]: Եվ եթե այս *եսերոն* («քաղաք է քահանայից») բառը զուգադրելի է վերը մեր համեմատած *եմաթ* («անտիրք, սպասաւոր, բարկացումն») բառի հետ, ապա վերջինիս «անտիրք» (իմա՛ *Անտիրք* քաղաքանուն) և *եսերոն* բառի «քաղաք է քահանայից» բացատրությունը դառնում է միանգամայն ստույգ և հավաստի:

Չափուկյանը գրում է հետևյալը. «Անստույգ բառ: Հավանաբար առնված Աստվածաշնչի մի հատուկ անվան մեկնությունից (Եմ(մ)ա՞ն, որ, սակայն, այլ կերպ է մեկնվում)» [*Չափուկյան*, 2010, էջ 216]:

Մենք հակված ենք կարծելու, որ հայ. *եմմասնու* բառը փոխառություն է հուն. έμ-μάνης «խելացնոր, խելքը թոցրած. մոլեգնած, կատաղած», έμ-μάνως (զերաղր. աստիճան՝ έμ-μάνερατα) «խեմքորեն, խելացնոր կերպով. մոլեգնաբար, գազազած» [*Áâî ðáðëëë*, 1958, c. 26]:

20. *Եսեն* «դարան, լուսին, աղբիւր» [*Բառզիրք հայոց*», 1975, էջ 91]: Այս բառի կապակցությամբ Աճառյանն առանց

---

<sup>83</sup> Քննական քննադրում կա նաև *եմերոն* բառը, որ հղվում է *եսերոն* «խորհուրդ» բառին, որն այլ քննարկման առարկա է [*նույն տեղում*, էջ 206]:



որևէ մեկնաբանման գրում է հետևյալը. «*Եսեմ* «դարան կամ լռութիւն կամ աղբիւր», ունի միայն Բառ. երեմ. էջ 89» [*Աճառչան*, 1971, էջ 26]: Գրեթէ նույնը հանդիպում ենք Ջահուկյանի բառարանում. «Անստույգ բառ: Ծագումն անհայտ է» [*Ջահուկյան*, 2010, էջ 218]:

Ելնելով բառահոդվածի մեջ «աղբյուր» բացատրությունից, որին կից նշվում են նաև «դարան, լռություն», կարելի է ենթադրել, թե վերջիններս աղբյուրի «թաքուն, դեռ չբխած վիճակ» են նշանակում: Եվ եթե այդպես ենթադրելը ընդունելի է, ապա նաև հավանական ենք համարում *եսեմ* բառի (նախնական ձևը՝ \**էքսեմ* °) փոխառյալ լինելը՝ հուն. *էջին* (սահմ. եղ. անցյ. անկատ. եզ. 3-րդ դ. *էջեյս* բայի) «բխում է, հորդում է, դուրս է գալիս՝ տալիս». հմմտ. նաև հուն. *էջեյս* (< *եյս*) (սահմ. եղ. ապառնի՝ *էջէրչոս*) «դուրս գալ, տարածվել, ձգվել», «մոտ գալ, մոտենալ», «տարածվել, ցրվել», «հորդել, լցվել, թափվել» և այլն [*Ááî ðáöééé*, 1958, с. 570]:

21. *Եստորոզի* «զնմանէ» [*Բառզիրք հայոց*», 1975, էջ 91]: Ամալյանը վերջում ծանոթագրում է . «Ձեռագրերում նաև՝ *եստորակի* (№№ 4149, 5596), *եստորազի* (№ 3202), *եստորազի* (№ 530) (*նույն տեղում*, էջ 364):

Աճառչանը չունի *եստոր* բառը, ոչ էլ *եստորոզի*, այլ *եշտոտի*, որը թեև ձեռագրական սխալ տարբերակ է, սակայն «Արմատականում» նույնպես «թեզանիք» է նշանակում. «*Եշտոտի* «թեզանիք». նորագիտ բառ. մէկ անգամ յիշում է Բառ. երեմ. էջ 218 (տե՛ս և *ազդիր* բառի տակ)» [*Աճառչան*, 1973, էջ 27]: Իսկ *ազդիր* բառի դեպքում նշվում է հետևյալը. «Ազդիր «թեզանի». ունի միայն Բառ. երեմ. էջ 6, որ և էջ 218 դնում է *յազդեր* «եշտոտի կամ թեզանի» [*Աճառչան*, 1971, էջ 86]: Այս *յազդեր* բառը «Արմատականում», իրավամբ, չի դիտվում ելակետային, որովհետև այն *ազդր* բառի հոլովական ձևն է, թեև քննական քնագրում կա. «*Յազդեր* «ի գստի, կամ թեզանի» [*Բառզիրք հայոց*», 1975, էջ 222]: Վերջինիս տողատակին բերվում են գրչագրական տարբերությունները՝ *իշտոտի*, փխ. *ի գստի*, յազդեր. *եշտոտի*, թեզանի և այլն, իսկ ծանոթագրության մեջ նշվում է հետևյալը. «Ձեռագրերում այս բառահոդվածը

շատ է աղավաղված: Կան՝ «թևի տակն է, կամ կուշտն» (№ 3468), «ի կուշտ, կամ ի թեզան» (№№ 533, 545), «ի ներքոյ թևին» (№ 537) և այլ մեկնություններ: Բերված ձևով բառահոդվածը կա № 451 ձեռագրում» [*նույն տեղում*, էջ 409]:

Ըստ այսմ՝ նկատենք, որ բնագրում *եստորոզի* բառի «զմմանէ» բացատրությունը ենթադրել է տալիս, որ նրան նախորդելիս է եղել *եստոր* բառը, հակառակ դեպքում հաջորդող բառի համար չէր ասվի «զմմանէ» (այսինքն՝ «նրա մասին՝ վերաբերյալ»): Ուստի եթե *եստոր* բառը նշանակում է «թեզանիք», որ ըստ «Նոր հայկազյան բառգրքի» այլ բան չէ, քան «զգեստի երկար թև, որպէս բազպան», իսկ ըստ «Արմատականի» նաև «կտաւի լայնքի թելերը» (ի դեպ՝ երկու իմաստն էլ ունի «Բառգիրք հայոցը», տե՛ս էջ 118), ապա *եստորոզի* բառի մեջ *ոզի* բաղադրիչը աղավաղումն է *ազի* «պոչ», տվյալ դեպքում՝ «ծայր, եզր, փեշ և այլն» բառի (հմմտ. *եստորազի*. ձեռագիր № 3202):

Չափուկյանը չի անդրադառնում *եստորոզի* բառի կազմության, առավել ևս ծագման հարցին:

«Բառգիրք հայոցի» *եստոր* բառը, կարելի է մտածել, փոխառյալ է հուն. *έστωρ*, սեռ. հոլ. *έστωρος* «հեղույս, գնդերիթ. դրոշմ, երիթ (լուծը առեղին ամրացնելու)» [տե՛ս *Յձի ծձծծծծ*, 1958, շ. 674]: Իսկ *եստորոզի* (ուղղելի՝ *եստորազի*) բառն ըստ այդմ պետք է հասկանալ «թեզանիքի եզր՝ ծայր՝ երիզ» իմաստով:

22. *Ետրաղիճ* «անառակ. անբարո (աղջիկ)» [*«Բառգիրք հայոց»*, 1975, էջ 91]: Քննական բնագրի ծանոթագրության մեջ ասվում է, որ «Այս ձևով բառահոդվածը կա հնագույն (№№ 4149, 8106 և այլ), ինչպես նաև հետագա (№№ 450, 535 և այլ) ձեռագրերում: Հմմտ. Արմ., Ետր» [*«Բառգիրք հայոց»*, 1975, էջ 364. հմմտ. *Ամայյան*, 2007, էջ 206]:

Հայ. *ետր*, *ետրոնին* բառերի ստուգաբանությունը պատկանում է Գ. Չափուկյանին, որը ժամանակին ընդունվել է նաև Հ.Աճառյանի կողմից [*Չափուկյան*, 1963, էջ 85]: Ավելացնենք, որ *ետրաղիճ* բառի դեպքում ևս ունենք *ետր* (հուն. *έταίρ*, այլև էպ. *έταίρη*, իոն. *έταίρη* «ընկերուհի, սիրուհի», «հետերա»,

«անառակ») բառը, որը բաղադրվել է *աղիճ* (>*\*աղիճ-իկ*) բառի հետ, որն էլ նախկինում նման հավաստիությամբ որևէ քննության չի առնվել<sup>84</sup>:

23. *Ընթարց* «նախդիր, որ գտեռականն պահանջէ. առանց» [*Բառզիրք հայոց*», 1975, էջ 112]: Բառը չենք գտնում «Նոր հայկազյան բառարանում» (1836, էջ 776), այլև Աճառյանի «Արմատական բառարանում», ընդամին ոչ միայն որպես այդպիսին, այլև *թարց* արմատի տակ՝ իբրև ենթադրելի *ըն-թարց* տիպի բաղադրություն: Ուստի այն դուրս է մնացել նաև Գ.Ջահուկյանի բառարանից [*Աճառյան*, 1973, էջ 126, 162. *Ջահուկյան*, 2010, էջ 248]:

Աճառյանը *թարց* «առանց, բացի, գատ» արմատի մասին, իբրև բառի, նշում է, որ «թարց վերցնում է սեռական հոլով», որ այն է, ինչ կա «Բառգրքի» բացատրության մեջ: Աճառյանը բերում է նաև Մեղրեցու բառարանում առկա *թարցել* «առանցել» բայը՝ բաղադրված *թարց*-ից. «Բառգրքի» քննական բնագրում նշվում է նաև *ց*-ի փոխարեն *ճ*-ով ձեռագրական տարբերակ («*թարճել - առանճել*»), որը բնավ չի խանգարում ճիշտ ձևը *թարց*-ը դիտելուն:

Կարծում ենք, որ *ընթարց* բառը բաղադրված է *ըն* լատինաբան նախամասնիկով և *թարց* բառով, որ նախադրություն է: Եվ քանի որ այս *ըն* մասնիկը գործածվում էր սեռական-տրականի հետ՝ կազմելու ներգոյական հոլովի ձև, ուստի *ընթարց*-ը բնագրային (կոնտեքստային) մի ձև է, որը «Բառգրքում» հանդես է եկել իբրև բառարանային միավոր (բառահոլվածի գլխաբառ)՝ ունենալով իր ուրույն բացատրությունը:

24. *Թեսաղ/թեսել* «ժողով, ժողովել» բառի դեպքում քննական բնագրում չկա գրչագրական տարբերություն, ոչ էլ ծանոթագրության մեջ է որևէ բան ասվում [*Բառզիրք հայոց*», 1975, էջ 74, 359]: Աճառյանը գրում է. «*Թեսաղ* «ժողով» և *թեսալ* «ժողովել. ունի միայն Բառ. երեմ. էջ 118» [*Աճառյան*, 1973, էջ 173]: Ջահուկյանն անդրադառնում է հետևյալ կերպ. «*Թեսել*

---

<sup>84</sup> *Ետրաղիճ* բառի երկրորդ բաղադրիչի մասին ավելի մանրամասն տե՛ս Հասնբարձումյան, 1997, էջ 149-152, այլև 1998, էջ 29-33:

«ժողովել» (ԲՀ): Բաղադրություն՝ *թեսաղ* «ժողով» (ԲՀ): Ծագումն անհայտ է» [*Ջահուկյան*, 2010, էջ 264]:

Կարելի է կարծել, որ *թեսաղ*/*թեսել* ձևերի բայարմատը կապ ունի հուն. *τάσσω* (ատտիկ. *τάττω*) «դնել, կանգնեցնել. տեղավորել, դասավորել», «ընդգրկել, ներառել, մեկտեղել», «շարել, շարք կանգնեցնել» ձևերի *τάσσο-* (ատտիկ. *τάττ-*) արմատի հետ, ընդամին եթե ոչ ծագումնային զուգադիպում, ապա փոխառություն հունարենից [հմմտ. *Áâî ðâöêêé*, 1958, с. 1604]: Առայժմ բաց է մնում դրանց՝ եկեղեցական բառաշերտին բնորոշ լինելու հարցը:

25. *Ի մակագոյն* «երկրագոյն» [*Բառգիրք հայոց*», 1975, էջ 129]: Ամայանը ծանոթագրության մեջ նշում է, որ ձեռագրերի մի որոշակի մասում բացատրվում է «երկարագոյն» [*Բառգիրք հայոց*», 1975, էջ 376. *Ամայան*, 2007, էջ 226]:

Վերջին՝ «երկարագոյն» բացատրությունը ճիշտ է:

Այս բառն ընդգրկված է «Արմատական բառարանում», ընդ որում կից գրությամբ, ավելացվում է՝ «որից հետևում է *իմակ* «երկիր», և բերվում է առանց որևէ ստուգաբանության [*Աճառյան*, 1973, էջ 241]:

Ջահուկյանի բառարանում այս կապակցությամբ նշվում է հետևյալը. «*Իմակ* (ի մակ) «երկիր» (թե՞ «երկար») (ԲՀ = «Բառգիրք հայոց» - Վ.Հ.): Անստույգ բառ: Ծագումն անհայտ» [*Ջահուկյան*, 2010, էջ 285]:

Մենք գտնում ենք, որ բառը փոխառյալ է հուն. *μακος*, (դոր.) *μακος* ձևից, որն ունի մի քանի իմաստ՝ 1) «երկարություն, ձգվածություն», 2) «տևողություն, տևական լինելը», 3) (բառացի) «չափս, մեծություն», (փխբ.) «խորք, խորություն» [տե՛ս *Áâî ðâöêêé*, 1958, с. 1047, 1092]: Ըստ այսմ՝ հայերենում այն պիտի ունեցած լինի հետևյալ զարգացումը՝ *\*մակ*, *\*ի մակ(ագոյն)*, *իմակագոյն* («երկարագոյն»):

26. *Իրայոն* «տեսիլ» [*Բառգիրք հայոց*», 1975, էջ 132]: Աճառյանի «Արմատական բառարանում» նշվում է հետևյալ ձևով. «Իրայոն. ունի միայն Բառ երեմ. էջ 130» [*Աճառյան*, 1979, էջ 143], որը քննական բնագրում ուղղված է *իրայոն* ձևով: Ջահուկյանն այս բառին անդրադառնում է հետևյալ կերպ.

«Իրայօն (իրայոն) «տեսիլ»: Ծագումն անհայտ է» [*Ջահուկյան*, 2010, էջ 287]:

Բառը, ամենայն հավանականությամբ, փոխառյալ է հուն. *ίερά*, (հոն.) *ίρά τό 1*) «գոհաբերման տուրք. գոհաբերում, գոհ», 2) «գոհաբերվող անասունի ներքինը (որով քրմերը գուշակում էին)», այլ կերպ՝ «խորհրդանիշ, սուրբ նշան», 3) «սրբազան ծես» ձևից [*Վճիթ Ժձօժեժ*, 1958, շ. 813]:

Ըստ այսմ՝ *իրայոն* բառի *յ*-ն հայերեն *ա*-ից հետո է հնչվել և գրվել, համաձայն հայտնի կանոնի, իսկ *-ոն* մասնիկը հունարեն ածանց կամ վերջավորություն պիտի եղած լինի:

27. *Լեղեալ* «լքյալ, ձանձրացյալ» բառը Մեղրեցու «Բառգիրք հայոցի» որոշ ձեռագրերում *լեղեալ* «լերդացած» տարբերակով է, իսկ քննական բնագրի ծանոթագրության մեջ նշվում է, որ ձեռագրերի մեծ մասում *լեղեալ* է, որն ապացուցվում է նաև մյուս ձեռագրերում «*լեթելոց*. *լքելոց*, ձանձրացելոց» կամ «*լեթել*. *լքել*, ձանձրանալ» ձևով լինելու հանգամանքով [*Բառգիրք հայոց*», 1975, էջ 133, 377]: Հետագայում Ամալյանը այլ կերպ է մեկնաբանում սույն բառահոդվածը. «*Լեղեալ*. *լքեալ*, կամ ձանձրացեալ: Գլխաբառը սխալ է, պետք է լինի *լեղեալ*, ինչպես №№ 451, 533, 535 և բազմաթիվ այլ ձեռագրերում: Որ գլխաբառի ճիշտ ձևը *լեղեալ* է, հաստատում են նաև № 5126 և N 8456 ձեռագրերը, որոնք ունեն՝ «*Լեթելոց*. *լքելոց*, կամ ձանձրացելոց» բառահոդվածը, իսկ № 534-ում՝ «*Լեթել*. *լքել*, կամ ձանձրանալ»: Շատ ձեռագրերում (№№ 533, 545, 3468 և այլն) *լքեալ*-ի փոխարեն թուլացեալ է» [*Ամալյան*, 2010, էջ 229]:

Աճառյանը *լեղեալ*-ը համարել է սխալագրություն, ուստի բառարանում դնում է *լեղեալ* ձևը. «*Լեղեալ* «լքեալ կամ ձանձրացեալ». ունի միայն Բառ. երեն. էջ 132» [*Աճառյան*, 1973, էջ 277]: Սա ոչ ճիշտ սրբագրում է, եթե հաշվի ենք առնում թե՛ բառի իմաստը և թե՛ ձեռագրերի մեծ մասի տվյալները: Ջահուկյանը ևս դնում է *լեղեալ* «լքեալ կամ ձանձրացեալ» ոչ անկախ Աճառյանից, և ըստ «Բառգիրք հայոցի», իսկ շարունակության մեջ գրում է հետևյալը. «Վերջինիս նոր հրատարակության մեջ ուղղված է *լեղեալ*, որը նույնացված է *լեթեալ* ձևի

հետ. այսպիսով առկա է *լեթիլ* բայի դերբայաձևը» [*Ջահուկյան*, 2010, էջ 295]: Ըստ այսմ հարցի լուծումը մնում է երկակիության մեջ:

Մալխասյանցն ունի ոչ միայն բարբառային (կամ խոսակցական) *լեթել* «թուլանալ, տկարանալ, լքվել», այլև *լեթվել* «1. շատ ուտելուց զզվել, տաղտկանալ, 2. երես առնել, լրբանալ, 3. երկար տևել ու չլավանալ (վերքի մասին)» բառերը [*Մալխասյանց*, 1944, էջ 192]: Այստեղ, որքան էլ առանձին են դիտվում *լեթել* և *լեթվել* չեզոք սեռի բայերը, դրանց ամենաընդհանուր իմաստն է «թուլանալ, լքվել. ձանձրանալ»: Ուստի կարելի է ենթադրել, որ այն լատ. փոխառյալ *letāre* «վնասել. սպանել, մեռցնել, ճնշել» բայն է, որը գործածվել է լատինաբան հայերենում, և «Բառգիրք հայոցում» տեղ է գտել ինքնաբերաբար: Ընդ որում հայերեն գրավոր աղբյուրներում այն նշվում է *ledēre* («վնասել») ձևով [հմմտ. «Բազմավէպ», 1873, էջ 323. *Չարքհանալեան*, 1878, էջ 53. *Աճառյան*, 1951, էջ 323. *Համբարձումյան*, 2010, էջ 149 (լատիներեն բառը տպագրված է վրիպակով)]:

28. *Խել* «հեշտ». բերվում է նաև գրչագրական մեկ տարբերակ. «հեշ, փխ. հեշտ», վերջում՝ ծանոթագրվում է հետևյալ կերպ. «Հմմտ. Արմ.» (իմա՝ Աճառյանի «Արմատական բառարան» - Վ.Հ.) [*Բառգիրք հայոց*], 1975, էջ 142, 379]: Իսկ հետագայում այս բառին անդրադառնալիս Ամալյանը գրում է. «Խել. հեշ: Մեկնությունը պետք է լինի «հեշտ»» [*Ամալյան*, 2010, էջ 232]: Ըստ «Արմատական բառարանի»՝ «Խել «հեզ». ունի միայն Բառ. երես. էջ 140. Ի□նչ լինելը յայտնի չէ» [*Աճառյան*, 1973, էջ 355]: Ջահուկյանը գրում է. «Խել «հեշտ» (ԲՀ, այլ ձեռ. «հեզ», որից Աճ. ՀԱԲ 2, 355): Ծագումն անհայտ է» [*Ջահուկյան*, 2010, էջ 325]:

Հակված ենք ընդունելու, որ Ամալյանի վերջին մեկնաբանությունը միակ հավաստին է, ուստի սխալ կամ վրիպակ պետք է համարել «հեզ» իմաստով բացատրությունը: Այնուհետև, ձեռագրական տարբերակներ են *հեշ*/*հեշտ* բառերը, որոնք բոլորովին այլ իմաստ ունեն՝ «արթնացում, սթափեցում. ուշադրության հրավիրում (մի բանի վրա)», որն էլ, հավանաբար, ունենք բարբառային *հեշար*, *հեշ(ա)րանալ* «ուշքի գալ, զգաստանալ»

(Մոկս, Մուշ, Սասուն, Վան և այլն), այլև *հուշտ* (*հուշտ անել* «խրտնեցնել», *հուշտ լինել* «խրտնել») (Արարատյան, Թբիլիսի, Ղարաբաղ, Կարին) բառերում՝ անկախ արմատի բնիկ կամ փոխառյալ լինելուց [տե՞ս «Բարբառային բառարան», 2004, էջ 272, 314]:

Նման հիմք տալիս է մի կողմից՝ բառի «հեշ» կամ «հեշտ» իմաստը, որը կա հայերենի բարբառներում, մյուս կողմից՝ այն նկատառումը, որ *խել(ք)* բառը լեզվի գրական տարբերակում իմաստով ամրակայվել է իմացական կողմի վրա՝ հեռանալով նախնականից, սկզբնականից, որը զգացականն է՝ «զգաստ՝ արթուն լինելը, զգաստանալը՝ արթնանալը, ուշքը վրան պահելը. սթափ լինելը և այլն»: Ըստ այսմ *խել* բառը, հավանաբար, սկզբնապես նշանակել է «զգաստ, արթուն, ուշքը տեղը», որն էլ «Բառգիրք հայոցում» մեկնվում է «հեշ»//«հեշտ» բառիմաստով:

29. *Խշել* «դադարել», բառը չունի գրչագրական որևէ տարբերակ, իսկ քննական բնագրի ծանոթագրությունների բաժնում նշվում է հետևյալը. «Ձեռագրերը մեկնում են նաև «յանկողին հանգչել» (№ 3468), «դադարել, կամ հանգչել» (№№ 533, 545, 8606 և այլն), «հանգչել» (№ 540) [«Բառգիրք հայոց», 1975, էջ 144, 380]: Ամալյանը նույնը տալիս է նաև հետագա աշխատության մեջ [Ամալյան, 2010, էջ 233]:

Ըստ «Արմատական բառարանի»՝ «*խշել* «դադարիլ». ունի միայն Բառ. երես. էջ 142» [Աճառյան 1973, էջ 381], իսկ «Ստուգաբանական բառարանում» նշվում է. «*խշել* «դադար առնել, (անկողնում) հանգստանալ» (ԲՀ): Կապ ունի՞ արդյոք *խիշտ* «անկողին» բառի հետ [Ջահուկյան, 2010, էջ 336]:

Ջահուկյանի հարցադրումը տեղին է, որովհետև հիմնավորվում է ոչ միայն, ինչպես ինքն է գրում, «խիշտ «անկողին» (\*«հանգստավայր». *խշտիք* «խոճուկ անկողին», *խշտել* «հանգիստ տալ, օթևանել») - խեթ. <sup>Է</sup>heštiā-, <sup>Է</sup>hešti- (կամ <sup>Է</sup>hištiā-, <sup>Է</sup>hištī- . – Վ.Հ.) «դամբարան» (°) գուգահեռի անցկացմամբ [Ջա-

*հուկյան*, 1987, էջ 314]<sup>85</sup>, այլն թերևս այն ավելի հիմնավոր դարձնող ոչ միայն լուվ. ի-ճիյա- «կապել, առնչել», հինդկ. *iṣṭhati* «կանգնած է», ավեստ. ի-ճտի «կանգնած է, դրված է», հուն. ἴσταν «դնում եմ», լատ. *si-stō* «դնում եմ», հիոլ. *-si-ssiu* «ինձ պահում եմ» ձևերի հավելմամբ, որով էլ ավելի է փաստարկվում ենթադրությունը [հմմտ. *Āḥi ēdāēēāçā, Ēāāī ā, 1984, c. 220*]: Ցեղակից լեզուների հիշյալ ձևերը բխեցվում են հե. \*s/t<sup>[h]</sup>ist<sup>[h]</sup>aH- արմատից, թերևս նաև հայ. *խշ-//խշտ-* արմատից կազմված *խշել, խշտելի, խշտի* (հմմտ. *գետնախշտի* «գետնին պատկած») և այլն ձևերը:

Ի լրացումն ասվածի՝ նկատենք նաև, որ ունենք բրբռ. *խրշտ* «ցցուն, ցցված. հպարտ. գոռոզ, կանգուն» բառը (Մուշ, Ալշ. և այլն), որ չենք գտնում հայերեն բարբառային բառարաններում: Մյուս կողմից՝ հայերենում «դամբարան, գերեզման» իմաստն արտահայտվում է նաև «հանգստարան» (հմմտ. *աստ հանգչի* «այստեղ հանգչում է՝ թաղված է») բառով, որն էլ *խշել* բառի բովանդակության պլանում լրացուցիչ տարր է մտցնում:

Ուստի կարելի է մտածել, որ տարբերակային արմատ են *խշ-//խշտ-* ձևերը, որոնք զուգահեռներ ունեն հնդեվրոպական մյուս լեզուներում, ընդ որում *տ-*ով և առանց *տ-*ի:

30. *Կալոն* բառն ըստ «Արմատական բառարանի» նշանակում է «սեղեխ, հոմանի», որն էլ մեկնաբանվում է հետևյալ կերպ. «նորագիտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Բառ. երեմ. էջ 285 *սեղեխ* բառի բացատրութեան մէջ. բայց նոյն բառը՝ էջ 283 գրում է *սեղեխ* «հոմանի կամ տլոն» (ս. տպագրութիւն *տլոն*, բ. տպագրութիւն *ալոն*). սրանով բառի ձեւը անստոյգ է մնում» [*Աճառյան*, 1973, էջ 486]: Իսկ «Ստուգաբանական բառարանում» նշվում է հետևյալը. «*Կալոն*. տե □ ս տլոն», այլև «*Տլոն* «հոմանի, սիրեկան»: Ծագումն անհայտ է» [*Ջահուկյան*, 2010, էջ 373, 730]:

Նախ, նկատենք, որ «Բառգրքի» քննական բնագրում չկա *կալոն*, ոչ էլ *տլոն* գլխաբառով հոդված, այն չի հանդիպում նաև

<sup>85</sup> Ջահուկյանի գրքում <sup>É</sup>hešti- է, փխ. <sup>É</sup>heštī-, այն է՝ երկար ձայնավորմամբ  $\bar{i}$ :



*հոմանի, սեղեխ* բառերի բացատրության մեջ, որոնց դեպքում ձեռագրական տարբերակներ չեն նշվում կամ ծանոթագրություններում մեկնաբանում ստանում [տե՛ս «Բառգիրք հայոց», 1975, էջ 155, 188, 286, 397]: Ավելին, ունի լոկ *սեղեխ*, որ բացատրվում է ոչ թե նա՛ն *կալոն* բառով, այլ միայն «հոմանի, տլոն» բառերով: Մնում է հիմք ընդունել Աճառյանի տվյալը *կալոն* բառի վերաբերյալ, մանավանդ որ նա օգտվել է «Բառգրքի» հին հրատարակություններից [Ալիկօռնա, 1698, այլև Կ.Պոլիս, 1729]:

Այնուհետև, հակված ենք կարծելու, որ *կալոն* և *սեղեխ* բառերն այլ բան չեն, քան միևնույն արմատի տարբերակներ՝ *կալ-//սեղ-* (հնչյունական երեք կարգի տարբերակվածությամբ), ծագում են հե. \*k<sup>[h]</sup>-l-e(s)- արմատից. հմմտ. իտեթ. kalleš «կանչել, ձայնել», հուն. κἄλέω «կանչել, ձայն տալ. անվանել» [հմմտ. *Āāi ēdāēēāçā, Ēāāī ī ā*, 1984, с. 220]: Ընդ որում բառը կրել է իմաստային ակնհայտ փոփոխություն (զարգացում)՝ սոցիալական որոշակի պայմանականությամբ:

31. *Կոնդ* «զերեզման» բառի ձեռագրական տարբերակներ են՝ «կոնտ, այլև կոնք, փոխանակ՝ կոնդ» [«Բառգիրք հայոց», 1975, էջ 170]:

Ըստ «Արմատական բառարանի»՝ «*Կոնդ*, ի հոլ. «զերեզման». ունի միայն Բառ. երեմ. էջ 167, որից առնում է նաև ՓԲ յաել (=Փեշտմալճյանի բառարան, Յաելուած. - Վ.Հ.), այլև կապվում է համանուն «անդամալույծ» բառի հետ, որը հիմնավորվում է նրանով, թե փոխաբերաբար «կոճղը ըմբռնուելով կունտ ու կոշտ մի բան, անցել է «կոյտ» իմաստին, որից էլ «գլուխ, 2. բարձրութիւն, 3. թումբ, դար, բլուր» նշանակութեանց... Այս վերջինը արդէն նոյն է «զերեզման» նշանակութեան հետ» [Աճառյան, 1973, էջ 632]: Դժվար չէ նկատել, որ այստեղ գործ ունենք բավականին մանվածապատ, իմաստի անցման առումով գրեթե անհնարին բացատրության հետ, ուստի այն մերժելի է, քան որ կարելի է այլ բացատրություն առաջարկել:

Այնուհետև, Աճառյանը նույն բառահոդվածում օրինակ է բերում բարբառներում *կոնդ* բառի «բլուր» (Երևան, Կաղզվան)

նշանակելը՝ հղելով նաև Մեղրեցու սույն «Բառգրքում» բլուր բառի «կոնտ, փոքր լեռան, հողակոյտ» բացատրությանը: Վերջինս նույնպես հիմնավոր չէ, որովհետև նախ՝ բլուրը «հողակոյտ» չէ, ոչ էլ «փոքր լեռան», այլ «ցածրադիր սար. սարահարթ», այլև այն, որ կոնդ բառը հայերենի շատ բարբառներում նշանակում է «բլուր» (հմմտ. Մուշ, Ալաշկերտ և այլն)<sup>86</sup>:

Եվ քանի որ գերեզմանը այլ բան չէ, քան հողաթումբ, այսինքն՝ հարթ մակերեսից ինչ-որ չափով բարձր հատված, ուստի այն կարող էր դիտվել իբրև կոնդ բառի իմաստի արտահայտիչ: Ըստ այսմ «Բառգիրք հայոցում» հիշյալ բառը բացատրվում է իբրև «գերեզման»:

32. Հաս «տիք» բառը Մեղրեցու բառարանում բացատրվում է նույն կերպ, ինչ հաս «տիք» և հասակ «չափ, տի» բառերը: Ընդ որում այս երկուսից առաջինի իմաստի պարզաբանման համար բնագրի տողատակում, իբրև գրչագրական տարբերություն, նշվում է «տի», իսկ ծանոթագրության մեջ ծանուցվում է հետևյալը. «№ 450 ձեռագրում՝ «հաստի. հասակ, կամ չափ, կամ տի», № 8606-ում՝ «հաս. տիք», № 528-ը մեկնում է չափ»: Հմմտ. հասակ», այնուհետև հղում է արվում Աճառյանի «Արմատական բառարանին», իսկ երկրորդի դեպքում ծանոթագրվում է՝ «Հմմտ. հաս»: Եվ Հաս «տիք» բառի համար կա հետևյալ ծանոթագրությունը. «Այսպես է բառահողվածը № 8606 ձեռագրում: Հմմտ. հաս» [«Բառգիրք հայոց», 1975, էջ 180-181, 395. Ամալյան, 2010, էջ 259]:

Ըստ այսմ՝ ստացվում է, որ բառգրքում նույնարժեք են հաս «տի», հասակ «չափ կամ տի» և հաս «տիք» բառերը: Աճառյանն այս բառերից առանձին անդրադառնում է միայն հաս «տիվ» բառին՝ նշելով, որ «ունի միայն Բառ. երեմ. 177. – Թերևս պետք է կարդալ «տիք», որով և միացնել հասակ բառին» [Աճառյան, 1977, էջ 47]: Իսկ հասակ «տարիք, տիք,

---

<sup>86</sup> «Բառգիրք հայոցի» կոնդ «գերեզման» բառը չենք գտնում Գ. Ջահուկյանի «Հայոց լեզվի պատմության» (Երևան, 1987, էջ 701) ցանկում, ինչպես նաև «Հայերեն ստուգաբանական բառարանում» (Երևան, 2010, էջ 419):

մարմնի երկարությունը» բառը, ինչպես հայտնի է, առնչվում է *հաս* «ժամանում, հասնել» արմատին:

Չահուկյանն այս, այլև *հասակ* բառին չի անդրադառնում լեզվի պատմությանը նվիրված աշխատության մեջ, իսկ «Ստուգաբանական բառարանում» *հասակ* «հասնելը, հասունություն, հասակ» բառը դիտում է առանձին՝ իբրև բնիկ հնդեվրոպական, *հաս* «տի» բառի համար նշվում է հետևյալը. «Հաս «տի» (ԲՀ): Ուղղելի է *տիք*. *հասակ* բառի արմատն է» [*Չահուկյան*, 2010, էջ 448]:

Հակված ենք կարծելու, որ հայ. *հաս*- (բառ)արմատը, ամենայն հավանականությամբ, ծագում է հե. \*Has- «կրակարան, կրակի աղբյուր՝ կրակ» (հիմքում՝ «արև». հմմտ. հայ. *արևո ապրի* «երկար կյանք ունենաս», ավելի հին՝ «օրդ՝ տարիքդ շարունակվի» և այլն) [հմմտ. *Համբարձումյան*, 2002, էջ 30-31, այլև 2007, էջ 36-37]<sup>87</sup>:

33. *Յալան* «արտաբերող» բառը քննական բնագրում բերվում է առանց ձեռագրական տարբերությունների և ծանոթագրությունների [«*Բառգիրք հայոց*», 1975, էջ 227]: Ամալյանը հետազայում այլևս չի անդրադառնում այս բառին [*Ամալյան*, 2007]: Բառը չենք գտնում «Արմատական բառարանում», ինչպես նաև «Ստուգաբանական բառարանում» [*Աճառյան*, 1977, էջ 390. *Չահուկյան*, 2010]:

Նկատի ունենալով բառի իմաստը՝ «արտաբերող», որն այլ բան չէ, քան ձայնական՝ հնչական գործողություն կատարող, կարելի է կարծել, որ բառի արմատն է *ալ*, որ սկզբում ունի *յ* հավելված (աժանց), այլև *-ան* վերջածանց (աժականական, տվյալ դեպքում՝ դերբայական արժեքով՝ «ձայն հանող, ձայնող՝ կանչող»): Հայերենում *ալ* արմատը բնիկ է [ < հե. \*aus-// \*us- (\*u-es) «լուսավորել. լույս տալ». հմմտ. հինդկ. սՏահի «արշալույս», հուն. (հոմ.) ἥώς «առավոտյան արշալույս», լատ. aurōra «արշալույս և այլն» [հմմտ. *Āāī ēḏāēēāçā, Ēāāī ī ā*, 1984, с. 223, 229. *Չահուկյան*, 1994, էջ 57], նշանակում է՝ 1. (բուն իմաստով)՝ *առաւաւտ* «օրվա սկիզբ», 2. (փոխաբերա-

<sup>87</sup> Եր. Մեղրեցու «Բառգիրք հայոցի» *հալան* «հլու» բառի մասին տե՛ս վերը (էջ 30-31):

բար)՝ *աւետել* «(բարի) լուր տալ», *աւետիք* «(բարի) լուր», 3. (բացարձակ իմաստով)՝ *յաւէտ* «միշտ՝ անսկիզբ և անվերջ» և այլն: Երկրորդ իմաստն առնչվում է ձայնական գործողությանը՝ «լույս է առաջ բերում, բարին՝ իբրև լույս ավետվում է»․ հմմտ. «Արդ բարիք է արեգակն և բնութեամբ գեղեցիկ» (Եզնիկ Կողբացի), «Առաւօտ լուսոյ, արեգակն արդար» (Ներսես Շնորհալի)<sup>88</sup>:

34. *Նիմիք* «ումենն» [*Բառզիրք հայոց*», 1975, էջ 13]: «Արմատականը» և «Ստուգաբանական բառարանը» չունեն այս բառը [*Աճառյան*, 1977. *Ջահուկյան*, 2010]: Բառի բացատրությունը միանգամայն ստույգ է, ուստի մնում է պարզաբանել *նիմիք* ձևը որպես այդպիսին:

Այս դեպքում ունենք ոչ թե բառ, այլ բառաձև, այն է՝ *իմն* դերանվան ներգոյականի ձևը՝ լատինաբան հայերենի համակարգում: Նման ձևերը գալիս են ձեռագրերից, որոնք գրվելիս են եղել այն ժամանակաշրջանում, երբ մեզանում գործում էր լատինաբան հայերենը, որպես լեզվական մի վիճակ: Դա նկատելի է ոչ միայն որոշ բառահոդվածների (օրինակ՝ *նիմիք*), այլև վերջիններիս բացատրություններում, մասնաճանաչությունների մեջ և այլն: Այսպես, «Բառգրքի» էջ 12-ի տողատակի ծանոթագրության մեջ նշվում է՝ «կղզի է *նեք* ծովում Վասպուրականում», որ քննական բնագրում ուղղված է «կղզի է *ընդ* ծովում Վասպուրականում»: Սա նշանակում է, որ լատինաբան *նեք* նախդիրը (տարբերակ՝ *ըն, ն-*) փոխարինված է բուն գրաբարյան *ընդ*-ով: Այնպես որ քննական բնագիրը ևս գերծ չի մնացել նման արհեստական ձևերից:

